ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Վեպ

Երևան
«Անտարես»
2013

ՀՏԴ 891.981-31Միքայելյան
ԳՄԴ 84Հ-44
Մ 780

Այս գիրքը նվիրում եմ ընկերոջս՝
Մոշոլի հիշատակին

Նկարազարդումները՝ **Վազգեն Պահլավունի-Թադևոսյանի (ՎԱԶՕ)**

Միքայելյան Աբել
Մ 780 Քաղաքական հարբեցողություն / վեպ: Աբել Միքայելյան:-Եր., Անտարես, 2013, 300 էջ:

Վեպում դեպքերը տեղի են ունենում պատերազմ հաղթանակած նորանկախ Հայաստանում, ուր դեպի կապույտ երկինք է ցնդել ազգային նպատակը՝ տեղը զիջելով սպառողական կրքերին: Այս գրքում ամեն քայլափոխի կողք կողքի պատկերված է անզորությունը, դատարկությունը, ինքնագոհությունը, դաժանությունը, և հաջորդ քայլափոխին հանկարծ արտաքսվում են «չարքերը», երբ հայտնվում է Կատյան՝ սերը՝ ամեն ինչի սկզբնասկիզբը՝ իր ոգելից հևքով, իր բովանդակ ջերմությամբ, իր կենսատու սրտխփոցով, իր ծաղկային թեթևությամբ, իր եղանակային անկանխատեսելիությամբ, իր վայրի կանացիությամբ...

ISBN 978–9939–51–490–1

ՀՏԴ 891.981-31 Միքայելյան
ԳՄԴ 84Հ-44

© Անտարես, 2013
© Միքայելյան Ա., 2013

ՆԱԽԱԲԱՆ

Առաջին միտքը, որ ցավազրկեց ինձ Աբել Միքայելյանի «Քաղաքական հարբեցողություն» վեպը կարդալուց հետո, սա էր՝ մեր օրերի մասին ճշմարտությունը փրկված է: Իմ իրավացիությունը ցույց կտա ժամանակը, իսկ այս նախաբանն ընդունեք իբրև տաք շնչառությամբ ապակու վրա գրված բառեր, որոնք կարող են հաջորդ վայրկյանին անհետանալ:

Մի գլուխ սոխ, մի շիշ օղի, մի լավ ընկեր և մեծ մի սեր: Տեսանելիի սահմաններից այն կողմ՝ համարձակության ու խենթության անանուն մոլորակում, ապրում է մի մարդ՝ ազատ բնության և հպարտ լեռների մեջ դաստիարակված հայ ժողովրդի մի զավակ՝ մեկն այն երամից, ով ճախրել գիտի: Եվ ուրիշ մարդիկ էլ կան: Լավն են և վատն են: Ոմանք վախկոտ են, քչերն անվախ են: Այնտեղ չկա հնարավորությունները սահմանափակող կասկած, հանգիստ կարող ես քայլել ծովի վրայով, հաց կիսել աստվածների հետ, շուրջդ ոմանք պատրաստ են կուլ տալ արևը, իսկ հետո կարող են խաչել՝ քեզ, քեզպեսներին, ում պատահի:

Վեպում դեպքերը տեղի են ունենում պատերազմ հաղթանակած նորանկախ Հայաստանում, ուր դեպի կապույտ երկինք է ցնդել ազգային նպատակը՝ տեղը զիջելով սպառողական կրքերին: Այս գրքում ամեն քայլափոխի կողք կողքի պատկերված է անզորությունը, դատարկությունը, ինքնագոհությունը, դաժանությունը, և հաջորդ քայլափոխին հանկարծ արտաքսվում են «չարքերը», երբ հայտնվում է Կատյան՝ սերը՝ ամեն ինչի սկզբնասկիզբը՝ իր ոգելից հևքով, իր բովանդակ ջերմությամբ, իր կենսատու սրտխփոցով, իր ծաղկային թեթևությամբ, իր եղանակային անկանխատեսելիությամբ, իր վայրի կանացիությամբ…

Մնամեջ մարդկանց և զրոյական արժեքների գերիշխանության ներքո գտնվող մեր երկրում ամեն քայլափոխի բացառված չէ «չարքերի» վերադարձը: Տարբեր պատմություններով հեղինակը բացահայտում է մեզանում առկա բարոյական անկումը և հոգևոր սնանկությունը: Շփացած շրջապատը

հակադրվում է իրական ընկերության, անկեղծ ապրումների հոգսաշատ, բայցև մարդկային աշխարհին:

Այս գիրքը մեր իրականության մութ կողմերի լուսատուն է, որ գեղարվեստական լուծումներով ներկայացնում է իրադարձություններն այնպես, ինչպես կան: Մենք պարտավոր չենք այսպես ապրել, բայց դատապարտված ենք սրան՝ ռաբիզության, ցուցամոլության, կաշառա-փողասիրության, ստրկամտության, իշխանամոլության…

Մենք ենք այս գրքում և մեզ շրջապատողները՝ մերօրյա հանցավոր իրականության մեղավորներն ու վկաները: Մեր կորուսյալ երազանքներն ու բոլորիս խաբվածությունն է պատկերված այստեղ: Մարդիկ ամեն քայլափոխի իրենց կյանքն են տալիս այս անանուն կռիվներում ու չեն հերոսացվում: Մեռածները հայրենի հող են դառնում, ողջերը մտածում են հեռանալու մասին: Ոմանք վախկոտ են, քչերն անվախ են: Շատերը հեռանում են, քչերը մնում են: Թերևս մնում են, որ փոխեն հունն այս ավերիչ իրականության: Մնանք թե գնանք՝ հայ ենք, քանի դեռ կա Հայաստանը. մենք՝ բոլորս, հայ ենք Հայաստանով:

Այս գիրքն արժե կարդալ՝ սեփական իմացություններով բացահայտելու դրա ուժը կամ թուլությունը: Ստորև մենք գործ ունենք ապրող գրքի հետ, իսկ ապրող գիրքը մեր կյանքն է՝ այսօր դեռ ճղճիմ, անբարո, պղտոր: Բայց մի օր մենք էլ կզուլալվենք, պատմության անկասելի այդ ընթացքի դեմ անզոր ենք, ինչպիսին էլ որ լինենք: Մի օր մենք էլ կդառնանք առաջադեմ մարդկության ժամանակակիցը: Անշուշտ, դրան կօգնի լավ գրականությունը:

ՍԻՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Թե ինչպես ես հայտնվեցի օդանավակայանում ու սխալ մարդու դիմավորեցի, ու դրանով էլ, փաստորեն, սկսվեց այս պատմությունը

Գարեջո՞ւր, թե՞ սուրճ: Գարեջո՞ւր, թե՞ սուրճ: Մատուցողուհին կանգնած էր կարծես ոչ թե գլխավերևումս, այլ հենց գլխիս վրա ու անտարբեր սպասում էր՝ մինչ ես կլուծեի այս լրջագույն խնդիրը: Նա անգամ հորանջեց՝ սեղանի շորով փակելով բերանը: Հավանաբար ողջ գիշեր աշխատել էր: Ի՞նչ անենք, ես էլ ողջ գիշեր խմել էի, ու եթե հիմա մատուցողուհին ընդամենը պետք է հանձներ հերթափոխն ու գնար տուն՝ քնելու, ես դեռ պետք է դիմավորեի մի մարդու, հասցնեի նրան քաղաք, հետո դուստրերիս տանեի դպրոց ու գնայի աշխատանքի:

Առավոտյան ժամը յոթն էր, օրն՝ ուրբաթ: Ստույգ ամսաթիվը չեմ հիշում, բայց 2011-ի նոյեմբերն էր: Գուցե չորսը, կամ՝ տասնմեկը: «Զվարթնոց» օդանավակայանի նոր համալիրը բոլորովին վերջերս էր շահագործման հանձնվել ու կարծես բոլորովին էլ վատը չէր: Եթե չեմ սխալվում՝ անձամբ նախագահն էր ներկա գտնվել բացման հանդիսավոր արարողությանը, կաթողիկոսը, վարչապետը... և այդպես շարունակ:

Ասում են՝ օդանավակայանը կարևոր է՝ երկրի մասին պատկերացում կազմելու առումով: Առաջին ու վերջին տպավորությունները հյուրերը ստանում են հենց այստեղ: Այսինքն՝ լավ տպավորություն գալուց, և լավ տպավորություն՝ հեռանալուց: Քիչ բան չէ, ինչ խոսք:

Եվ կարևոր չէր, թե ինչ էր լինում մեջտեղում: Բայց եթե անգամ այդտեղ էլ ամեն ինչ լավ լիներ, այդտեղ էլ լավ տպավորություն ստանային հյուրերը, մի՞թե դա էր գլխավորը: Հյուրերի համար կարելի էր տասը օդակայան կառուցել, հարյուր հյուրանոց, և բոլորի բացմանը ներկա լիներ նախագահը: Իսկ ո՞ւմ համար էր

կառուցվում երկիրը: Նրանց համար, ովքեր մեկնում էին նույն այս օդանավակայանի՞ց:

Ո՞ւմ էինք խաբում: Թող մի օր նախագահը գար ու նայեր դեպի անորոշություն տանող շեմի մոտ հերթ կանգնած այս մարդկանց՝ իր հայրենակիցներին ու թող ընդամենը մեկ հարց տար նրանց՝ ինչո՞ւ:

Այնուամենայնիվ՝ ո՛չ գարեջուր, ո՛չ էլ առավել ևս սուրճ: Հիսուն գրամ օղի: Իսկ հասարակական-քաղաքական հարցերից խոսելու առիթ դեռ կունենանք, խոստանում եմ:

Ու թերևս ժամանակն է բացատրել, թե ինչպես ես հայտնվեցի օդանավակայանում՝ գիշերվա գինարբուքից հետո:

Ինչպես արդեն ասացի՝ օրն ուրբաթ էր, ինչը նշանակում էր, որ նախորդ օրը եղել էր հինգշաբթի, ինչն էլ իր հերթին նշանակում էր, որ ես խախտել էի իմ հիմնական կանոններից մեկը՝ խմել միայն ուրբաթ օրերը: Այսինքն՝ իհա՛րկե սա առաջին դեպքը չէր, երբ խախտում էի և, ինչպես ամեն անգամ, ինձ համոզում էի, որ մեղավորը ես չեմ: Այս անգամ էլ, եթե չլիներ ընկերս՝ Պանդան, ես հիմա դեռ անկողնումս քնած կլինեի, և կինս կփորձեր ինձ արթնացնել, որ դուստրերիս դպրոցից չուշացնեմ:

Ուրեմն, Պանդան հայտնվեց մեր խմբագրությունում երեկոյան յոթի կողմերը, որոշ ժամանակ շրջեց տարածքում, գնահատեց իրավիճակը և եզրակացրեց, որ բոլորն ունեն օրվա հոգնածությունը թոթափելու անբեկանելի ցանկություն: Նա այդպես էլ ասաց՝ «անբեկանելի ցանկություն», ապա գնաց և քիչ անց վերադարձավ՝ մի քանի լեփ-լեցուն տոպրակներով, որոնցից մեկն այնպես էր շխկշխկում, կարծես աշխարհի վերջին հինգշաբթին էր:

Պանդան (նրան այդպես էր անվանել մի հրաշալի աղջիկ, ում առայժմ չեք ճանաչում), իր բոլոր թերություններով հանդերձ (իսկ դրանք բոլորովին էլ քիչ չեն), համարվում էր իմ լավագույն ընկերը, ու թերևս հենց այդպես էլ կար: Ընդհանրապես, ընկերների հարցում կյանքն իմ հանդեպ շռայլ էր գտնվել, ոմանց ես դեռ կանդրադառնամ այս պատմության մեջ ու գուցե նրանցից յուրաքանչյուրի

մասին խոսելիս էլ ասեմ, որ հենց նա է լավագույն ընկերս. չհավատա՛ք, լավագույնը Պանդան է: Նման երկրորդը բնության մեջ պարզապես չկար՝ չնայած ընդունված տեսակետին, որ յուրաքանչյուր մարդ արարած աշխարհում մի տեղ ունի իր կրկնօրինակը: Ո՛չ, Պանդան բացառիկ էր, հենց միայն այն պատճառով, որ չկար ուրիշ մեկը, ով կարողանար այնպես ազդել իմ նյարդերի վրա, ինչպես դա անում էր սույն մարդ արարածը: Ինչպես, օրինակ՝ երեկ, երբ նա հրաշալի իմանալով, որ իմ խմելու օրը չէ, բազմիմաստ ժպտալով՝ տոպրակից հանեց ռոմի շշերը... Պետք է ասեմ, որ ես զարմանալիորեն երկար դիմացա, կարծեմ մոտ քսան րոպե, հետո սկսվեց անխուսափելին. երկու շիշ ռոմ խմբագրությունում, հետո օղի՝ ռեստորանում, հետո նորից ռոմ՝ «Ալեքսանդրի փաբում», հետո կոնյակ մի վայրում, որի անունը ավելի լավ է՝ չտամ: Բայց մի՛ շտապեք խաչ քաշել իմ բարոյական նկարագրի վրա: Դրա առիթը դեռ կունենաք: Հետո էլ, ինչպես ասացի վերևում, ամեն ինչի մեղավորը Պանդան էր, ով հիմա վաղուց արդեն քնած էր՝ մի ձեռքով գրկած կոնյակի կիսադատարկ շիշը, մյուս ձեռքով՝ հակառակ սեռի (ի՞նչ կարիք կար սա շեշտելու) ինչ-որ մեկի վիզը:

Արդեն լուսանում էր: Ես մոտեցա, որ արթնացնեմ ընկերոջս: Հետո հիարկե զղջացի դրա համար, որովհետև Պանդան թեև արթնացավ, բայց չէր պատրաստվում տեղից շարժվել: Իսկ արթնացավ միայն նրա համար, որ ինձ խնդրի իր փոխարեն օդանավակայան գնալ՝ դիմավորելու ինչ-որ մեկին: Այդ մեկի մասին Պանդայի ունեցած տեղեկություններն առանձնապես հարուստ չէին:

– Ամերիկայից է գալիս, Մոսկվայի չվերթով, սփյուռքահայ է, կարծեմ՝ տղամարդ,– ահա այն ամենը, ինչ իմացա Պանդայից:

Ես մի քանի փորձ էլ արեցի նրան տեղից հանելու, բայց ապարդյուն: Դե ինչ, պետք էր օգնել ընկերոջս: Եվ ուրեմն, այդպես ես հայտնվեցի օդանավակայանում:

Մատուցողուհին արդեն բերել էր օղիս, և ես այնպես էի նայում բաժակին, կարծես այն իր մեջ պարունակում էր ինձ հուզող բոլոր հարցերի պատասխանները:

Մինչդեռ այդ պահին ինձ հուզող միակ հարցն այն էր, թե ինչպես եմ ճանաչելու նրան, ում եկել եմ դիմավորելու:

Բազմաթիվ մարդիկ էին համապատասխանում Պանդայի նկարագրածին, այսինքն՝ սփյուռքահայ էին և ակնհայտորեն տղամարդ: Ես կանգնել էի սպասուղու ամենակենտրոնում և բերանս լայն բացած՝ ժպտում էի: Մեծ մասը, սակայն, ուրիշ դիմավորող ուներ, ոմանք՝ վստահ հայացք, մեկն՝ աննկարագրելիորեն մեծ քիթ: Իսկ իմ հյուրը չկար ու չկար: Գուցե Պանդան ինչ-որ բան սխա՞լ էր ասել: Արդեն պատրաստվում էի զանգել կնոջս և խնդրել, որ ինքը տանի երեխաներին դպրոց, քանի որ ես ուշանում եմ, երբ սպասուղուն մոտեցավ մեկը, ով մի տեսակ մոլորվածի տպավորություն թողեց: Ես մոտեցա նրան, տվեցի Պանդայի անունը, հետո՝ իմը: Ապա մեկնեցի ձեռքս: Նա մի թռուցիկ հայացք նետեց վրաս և դժկամությամբ արտաբերեց՝ Վաղինակ: Ասացի, որ պատրաստվում եմ նրան տանել քաղաք: Բայց ավելի հավանական է, որ նա ինձ չէր լսում: Թափառող հայացքով նայում էր շուրջն ու թվում էր, թե ուր որ է՝ կարտասվի: Մոտ քառասունհինգ տարեկան տղամարդ էր՝ միջահասակ, շագանակագույն մազերով, շագանակագույն աչքերով ու մարմնագույն դեմքով: Մի խոսքով արտասովոր ոչինչ, եթե չհաշվենք վերը նշված թափառող, տարօրինակ հայացքը: Դրան թերևս կարելի էր ավելացնել նաև նարնջագույն պիջակը, որն էլ, չգիտեմ ինչու, ստիպեց ինձ դասել նրան սփյուռքահայերի շարքը: Ձեռքին մի փոքր ճամպրուկ էր միայն և «Duty free»-ի մի քանի տոպրակներ:

– Տասնվեց տարի,– չդադարելով շուրջը նայել՝ ասաց ակամա հյուրս ու կարծես նոր միայն անդրադարձավ իմ գոյությանը, մի լավ զննեց ինձ ու շարունակեց,– դե լավ, առանց հուզումների: Գնանք քաղաք:

Ամբողջ ճանապարհին մեքենայիս մեջ նստած՝ նա ոչ մի բառ չարտաբերեց, եթե չհաշվենք այն դրվագը, երբ ծխելու թույլտվություն խնդրեց: Ես նկատեցի, որ նա հաճախ տարօրինակ, նյարդային շարժումներ է անում, որոնք ուղեկցվում են խոր հոգոցներով: Մարդը երկար ժամանակ չի եղել հայրենիքում, երևի կարոտել է՝ մտածեցի: Միայն քաղաքի կենտրոն հասնելով՝ անդրադարձա, որ չգիտեմ, թե ուր եմ տանելու նրան: Պանդան այդ մասին ոչինչ չէր ասել: Ստիպված էի հարցնել:

– Իսկապես որ, ես մոռացել էի այդ մասին,– նա կարծես թե նոր ուշքի եկավ,– ինձ տարե՛ք Աղայան փողոց, իմ տունն այնտեղ է:

Դե ինչ, Աղայան, ուրեմն՝ Աղայան: Ես նայեցի ժամացույցին ու տեսնելով, որ ուշանում եմ, կտրուկ վազանցում արեցի՝ ետևում թողնելով դիմացից ընթացող աղբահավաք մեքենան, ինչպես պարզվեց՝ նորնոր ծառայության դուրս եկած ավտոտեսուչների ճիշտ քթի տակից: Նրանք իհարկե ինձ կանգնեցրին: Եթե հաշվի առնենք այն, որ որևէ փաստաթուղթ մոտս չկար, մեքենան ո՛չ տեխզննում էր անցել, ո՛չ էլ ապահովագրված էր, և այս ամենը դեռ քիչ է, ինքս էլ բուրում էի, ինչպես գինետունը՝ խնջույքից հետո, հանգիստ կարող էի ենթադրել, որ բանս բուրդ էր: Բայց բախտս բերեց. ճանապարհային ոստիկանները զարմանալիորեն բարի գտնվեցին և մի քանի րոպե տևած բանակցություններից հետո համաձայնեցին ինձ թողնել քառասուն հազարի դիմաց:

– «Սֆթեն է»,– ասաց նրանցից մեկը և շուրջը նայելով՝ արագ գրպանեց քսանհազարանոցները:

Դե ինչ, բարեփոխումները ոստիկանական համակարգում այլևս իրենց ակնհայտորեն զգացնել էին տալիս: Կյանքը թանկանում էր, ինչ արած: Իսկ ես արդեն դպրոցից ուշացել էի և ստիպված էի զանգել կնոջս ու խնդրել, որ ինքը տանի երեխաներին:

Պանդայի հյուրը թանկ էր նստում վրաս, փաստորեն: Երբ հասցրի նրան Աղայան փողոց, պարզվեց՝ նրա տունը մի շենքում է, որի հետ կապված լուրջ հիշողություններ ունեի: Բայց չհասցրեցի

դրանց անդրադառնալ: Հյուրը, մինչ մեքենայից իջնելը, ձեռքը տարավ գրպանը և հանեց դրամապանակը: Նա արեց դա կտրուկ մի շարժումով, ինչպես աճպարարը, հետո, հավանաբար ինձ մոռանալով, դանդաղ հաշվեց դրամապանակի պարունակությունը ու նոր միայն ասաց.

– Ինձ մոտ դոլարներ են, ոչի՞նչ:

Ճիշտն ասած՝ սկզբում չհասկացա, թե նա ինչ նկատի ունի, մինչև չշարունակեց.

– Մենք գին չպայմանավորվեցինք: Որքա՞ն պիտի վճարեմ:

Դե ինչ, հասկանալի էր, որ նա ինձ տաքսիստի տեղ էր դրել: Բայց այդ դեպքում ո՞վ էր նա, ո՞ւմ էի ես դիմավորել…

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

Վաղինակը և իր բնակարանը, որ տարավ ինձ դեպի մեր ոչ հեռավոր անցյալը

Այդ ժամանակ ես դա իսկապես չգիտեի: Եվ չէի էլ կարող պատկերացնել, որ խմելուս օրացույցից շեղվելու այս հետևանքը լրջագույն ազդեցություն է ունենալու մեր երկրի ներքաղաքական կյանքի վրա:

– Երևի ճակատագիրն ինքն է քեզ ուղարկել,– ասաց Վաղինակը, երբ իմացավ ողջ թյուրիմացության մասին,– բարձրանանք տուն, բարի լույսով մի բաժակ խմենք հայրենիքի կենացը:

Թե ինչու է ճակատագիրն ինձ ուղարկել, ես ճիշտն ասած չհասկացա, բայց նրա առաջարկի վերաբերյալ երկար չմտածեցի. դպրոցից արդեն ուշացել էի, աշխատավայրում ոչ մի օգուտ տալ չէի կարող (իմ այս խումհարով), այլ շտապ բան կարծես թե չկար և գլխավորը՝ գլուխս սկսել էր ցավալ:

– Դե ինչ, բարձրանանք:

Վաղինակը բացեց դուռը, մենք անցանք շեմը և անմիջապես հայտնվեցինք 1995 թվականում: Բնակարանը մեզ դիմավորեց հին իրերի, փոշու, խավարի ու խոնավության գաղջ մի կոկտեյլով: Շուրջբոլորը թափառում էր ծխի ծեր ուրվականը՝ մեր մութ ու ցուրտ անցյալի մշտական ուղեկիցը: Չնայած առավոտ էր ու բավական տաք եղանակ, բնակարանում դամբարանային ցուրտ էր ու մութ: Միջանցքում դրված էր փայտի վառարանը. ժանգոտած երկար խողովակը, թվում էր, ոլոր-մոլոր գնում էր դեպի մեր ոչ վաղ անցյալը: Օդանցքի ապակու փոխարեն տեղադրված էր կլոր երախը բացած ֆաներայի մի կտոր: Հենց այդտեղից էլ սկզբում դանդաղ, իսկ հետո գլխացավ առաջացնող արագությամբ բնակարան ներս խուժեցին հուշերս:

Տանտերը նույնպես ուշադիր նայում էր տիեզերական սև անցք հիշեցնող այդ երախին, որը կարծես պատուհան լիներ դեպի անցյալ:

Ապա սկսեց դանդաղ շրջել բնակարանով: Մոտեցավ խորհրդային բարեկեցություն խորհրդանշող «Հելգա» պահարանին ու մատով ինչ-որ բան սկսեց գրել փոշու հաստ շերտի վրա: «Հելգան» ճռռաց ի պատասխան՝ հավատարիմ շան նման, և մեղադրող «հայացքով» նայեց երբեմնի տիրոջը:

Ես լուռ կանգնած էի: Նախ, չգիտեի ինչ ասել, և երկրորդը՝ նույնպես հուզված էի: «Եվրովերանորոգումներին» սովոր աչքս փորձում էր հաղթահարել այն մշակութային շոկը, լավ ու վատ հիշողությունների այն տարափը, որն արթնացրեց իմ մեջ նոր ծանոթիս բնակարանը:

Հատակին որբևանտեր ընկած էր ծաղկավոր պաստառները եզրագծող գիպսե հրեշտակներից մեկը: Երկնային արարածը սևացել էր վառարանի ծխից ու նման էր անլվա փոքրիկ չարաճճիի: Վաղինակը վերցրեց այն և չգիտես ինչու փորձում էր տեղն ամրացնել: Հետո հասկանալով արածի անմտությունը՝ մի կողմ շպրտեց: Ձայնի վրա խոհանոցից դուրս եկավ չաղլիկ մի մուկ, լկտիաբար նայեց մեզ վրա և հաստ հետույքը շարժելով՝ դանդաղ գնաց լողասենյակ: Վաղինակը սթափվեց ու ծիծաղելով ասաց.

– Մի տե՛ս, սրա համար մենք օկուպանտներ ենք: Իր տարածքն է...

– Կարծում եմ՝ ձեր բնակարանը նրա համար ավելի շուտ տարանցիկ գոտի է՝ հաշվի առնելով, որ այստեղ ուտելու ոչինչ չկա,– արձագանքեցի ես:

– Լավ հիշեցրիր, ուտելու ոչինչ չունեմ, բայց խմիչքներիս, վստահ եմ, սրանք դեռ չեն հասել: Ձնայած «Duty free»-ից էլ ահագին բան եմ առել:

Փորձեց վառել լույսը, բայց թաղի պարտաճանաչ էլեկտրիկը վաղուց հոսանքազրկել էր բնակարանը: Մոտեցավ ճաշասենյակի սեղանին, վրայից վերցրեց նավթի լամպը, բայց չվառեց այն: Այդպես, չվառվող լամպը ձեռքին՝ քայլեց դեպի խոհանոց, պահարանից հանեց երկու հաստ բաժակ և օղու փոշոտ մի շիշ: Երբ թաշկինակով մաքրեց փոշին, պիտակի վրայից մեզ աչքով

արեց մորուքավոր մի մարդ, նույն ինքը՝ Ռասպուտինը՝ բոլոր ժամանակների ռուսական հանելուկը:

– Այս մարդն իսկապես անմահ է,– փորձեց կատակել տանտերը և լցրեց բաժակները: Նա դա արեց կտրուկ, ջղային շարժումով, ինչի արդյունքում օղու մի մասը թափվեց սեղանին:

Անկեղծ ասած՝ ուզում էի անմիջապես հեռանալ, բայց նրա հայացքում տեսա լուռ աղաղակ՝ մի՛ թող ինձ մենակ այս մութ, ցուրտ ու դատարկ բնակարանում, մի՛ թող ինձ մենակ անցյալիս հետ: Ու մնացի....

Առաջին երկու բաժակները կլանեցինք լուռ՝ յուրաքանչյուրս ընկղմված մեր հուշերում: Երրորդ բաժակը լցնելուց հետո միայն Վաղինակը սկսեց խոսել: Սակայն կրկին տպավորություն էր, թե նա ինքն իր հետ է խոսում, և իմ ներկայությունն առանձնապես կարևոր չէ նրա համար:

– Արդյոք իմ ու շատ ուրիշների հանձնվելը չէ՞ր պատճառը, որ մենք հասանք այստեղ: Չգիտեմ, ուրիշների պարագայում գուցե իրավունք չունեմ այդպես ասելու, բայց կոնկրետ ես հանձնվեցի: Հոգնել, հիասթափվել, զզվել... Այս դեպքում սրանք արդարացում չեն: Ոչ, ճիշտ ձևակերպումը հանձնվելն է:

Ահա այսպիսի անսպասելի նախաբանով սկսեց Վաղինակն իր խոսքը: Մենք նստած էինք նրա հին բնակարանի խոհանոցում՝ փոշոտ սեղանին դրված «Ռասպուտին» օղու 22ի առաջ ու ժամանակ առ ժամանակ խմում էինք՝ առանց կենացի, առանց անգամ բաժակները խփելու: Նա խոսում էր, ես՝ լռում, ու մի տեսակ ծիծաղելի էր այս ամենը:

– Ես գիտեի, որ այսպես է լինելու: Ախր ես առաջիններից մեկը հասկացա, որ շեղվում ենք ճիշտ ճանապարհից: Ե՞րբ էր դա. ինչսունմեկի՞ն, ինչսուներկուսի՞ն: Ե՞րբ ես առաջին անգամ զգացի, որ ժողովրդի երբեմնի կուռքերը դուրս են գալիս ժողովրդի դեմ, որ կոտրում են ժողովրդին, ու պետք է կանգ առնել: Հիմա ստույգ տարին ու օրը չեմ հիշում, բայց այդ ժամանակ դեռ կարելի էր դրա

դեմն առնել: Այդ ժամանակ ես նրանց հետ էի, նրանց կողքին էի ու զգուշացնում էի նրանց: Որքա՜ն ժամեր եմ անցկացրել՝ խոսելով, բացատրելով, համոզելով ու վիճելով: Ես ասում էի, որ ժողովրդի ձեռքերի վրա իշխանության եկած մարդիկ իրավունք չունեն կտրվել ժողովրդից: Սկզբում ինձ լսում էին ցավով, հետո՝ անտարբերությամբ, իսկ վերջում՝ ատելությամբ: Դուք երևի հասկանում եք, թե խոսքն ում մասին է:

Ես գլխով արեցի: Իհարկե հասկանում էի, թե խոսքն ում մասին է: Միայն թե չէի հասկանում, թե ինչու էր նա որոշել ասել ինձ այս ամենը: Ինչու էր որոշել հենց ինձ հետ կիսվել: Այսինքն՝ կիսվել անծանոթ մարդու հետ: Ո՞վ էի ես նրա համար: Չէ՞ որ ոչ ավելին, քան մեկը, ում առաջինն է հանդիպել հայրենիքում՝ տասնվեց տարվա ընդմիջումից հետո: Բայցևայնպես, անդրադարձա, որ նրա տարօրինակ պահվածքն ու հաճախակի նյարդային շարժումները պատահական չէին: Գուցե խոսում էին որոշակի հոգեկան խանգարմա՞ն մասին:

– Չէ՛, դուք չեք կարող ըստ էության հասկանալ, թե ում մասին է խոսքը,– շարունակեց նա,– իսկ խոսքը բոլորի մասին է. թե առաջինի ու առաջինների, թե հաջորդի ու հաջորդների, թե վերջինի ու վերջինների: Նրանց բոլորին ես ճանաչում եմ: Նրանք հավանաբար մոռացել են իմ գոյության մասին, և դա զարմանալի չէ: Տասնվեց տարի է՝ ինձանից ոչ մի լուր չունեն: Մինչդեռ ես այդպես էլ չկարողացա մոռանալ նրանց: Գուցե վիրավորվածությունս էր պատճառը, գուցե ներքին համոզմունք ունեի, որ մի օր վերադառնալու եմ ու վերստին առնչվելու եմ նրանց հետ:

Այստեղ ես առաջին անգամ չդիմացա ու անկախ ինձանից հարց տվեցի զրուցակցիս.

– Առնչվե՞լ: Ինչպե՞ս եք դուք պատրաստվում առնչվել նրանց հետ:

Նա ժպտաց.

– Ախր դուք դեռ չգիտեք գլխավորը, չգիտեք՝ ինչու եմ ես վերադարձել:

– Ո՛չ, չգիտեմ: Բայց ինչո՞ւ եք դուք այս ամենն ինձ պատմում:

Նա ուշադիր նայեց աչքերիս:

– Ոչ մի պատահական բան չի լինում աշխարհում. վստահ եմ, որ պատահական չէր նաև մեր հանդիպումը: Ես ուզում եմ, որ Դուք ինձ օգնեք: Ես ձեր լավության տակ չեմ մնա:

– Դուք ինձ կրկին փո՞ղ եք առաջարկելու:

– Ո՛չ, արկածներ: Դուք դեմ չեք արկածներին, այնպես չէ՞:

– Ո՛չ, արկածներին ես դեմ չեմ: Բայց ինձ համար նախևառաջ կարևոր է գաղափարը: Եվ արդեն իմ գնալու ժամանակն է:

– Սպասիր, մի գնա,– նա չգիտես ինչու անցավ «դու»-ի,– կլինի քեզ գաղափար, խոստանում եմ: Ախր ես վերադարձել եմ, որպեսզի նախագահ դառնամ՝ Հայաստանի Հանրապետության նախագահ:

Ես չկարողացա զսպել ծիծաղս: Իսկ նա մի քիչ մռայլվեց.

– Ի՞նչ է, չե՞ս հավատում:

– Չէ, իհարկե հավատում եմ, ի՞նչ կա որ, մեր երկրում ամեն ինչ հնարավոր է:

– Դե, ես էլ եմ այդպես կարծում:

– Այո՛, բայց այնուամենայնիվ կա մի հանգամանք, որը կարող է քեզ խանգարել,– ակամա «դու»-ի անցա ես էլ:

– Ի՞նչ հանգամանք,– զարմացավ Վաղինակը:

– Որքան որ գիտեմ, մեր Սահմանադրությունն ասում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահ կարող է դառնալ միայն երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող մարդը:

– Եվ ի՞նչ: Ես քառասունհինգ տարեկան եմ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից երբեք չեմ հրաժարվել, անգամ Վաշինգտոնի մեր դեսպանատնից ստացել եմ նոր անձնագիր: Ինչ վերաբերում է վերջին տասը տարում այստեղ մշտապես բնակվելուն, ի սեր Աստծու, ո՞վ գիտի, թե ես որտեղ եմ եղել:

Վաղինակը մի պահ սպասեց, ապա մի խիստ հայացք նետելով վրաս՝ հարցրեց.

– Ուրի՞շ:

Հետո մենք մի քիչ էլ խոսեցինք, և ես հասկացա, որ նա ոչ միայն չէր կատակում, այլև բավական լուրջ էր տրամադրված: Արդեն ուզում էր ինձ ծանոթացնել իր նպատակներին ու ծրագրերին, բայց ես քաղաքավարի ներողություն խնդրեցի ու հեռացա՝ վերջնականապես համոզվելով, որ ակամա հյուրս հոգեկան շեղումներ ուներ…

Նախընտրական աշուն կամ սրճարաններում գրված ելույթներ

Այս պատմությունից ոչ շատ ժամանակ առաջ՝ սեպտեմբերի 21-ին, մեր պետությունը նշում էր իր անկախության 20-ամյակը: Տպավորությունն այնպիսին էր, որ տոնի հիմնական իմաստը ժողովրդին համոզելն էր, որ մեր պետությունն իսկապես անկախ է: Հանրապետության հրապարակում կայացած զորահանդեսի ժամանակ նախագահը տպավորիչ ելույթ ունեցավ: Հարկ է նշել, որ Հայաստանի երրորդ հանրապետության երրորդ նախագահի ելույթները հիմնականում տպավորիչ էին լինում: Ու հիմնականում մնում էին թղթի վրա:

Նախագահի «speechwriter»-ը հավանաբար տաղանդավոր մարդ էր: Եվ շատ կարևոր գործ էր անում: Որովհետև, երբ նրա գրած ելույթները հնչում էին նախագահի շուրթերից, դրանք այն հազվադեպ պահերն էին, երբ հայ ժողովուրդը կարող էր իրեն հպարտ զգալ, իսկ Հայաստանի քաղաքացին՝ քաղաքացի: Ես նրան մի անգամ տեսել եմ աշխատելիս: Պարզ մարդ էր: Նստած էր Երևանի բացօթյա սրճարաններից մեկում, թուղթ ու գրիչը՝ դիմացը, խմում էր ու գրում: Աղմուկ կար շուրջը, բարձր երաժշտություն, անընդհատ անցուդարձ, իսկ այս մարդը նստած գրում էր մի ելույթ, որը պիտի արտասաներ երկրի ղեկավարը: Ակնհայտ էր, որ «speachwriter»-ը այդ պահին ստեղծագործում էր: Ես նրան չէի ճանաչում ու կարծեմ՝ շատ քիչ մարդիկ գիտեին, թե նա ով է: Ընկերս ցույց տվեց նրա կողմը և շշնջաց ականջիս, թե այս մարդը նախագահի ելույթներ գրողն է:

Բայցևայնպես, այդ ելույթներն իրական չէին: Ահավասիկ, մի հատված Անկախության 20-ամյակի զորահանդեսին հնչած նախագահի ելույթից.

«20 տարի առաջ այս օրը անկախության հանրաքվեի բազմաթիվ մասնակիցներ իրենց քվեաթերթիկը քվեատուփի մեջ էին գցում երեխաների՝ իրենց զավակների ու թոռների ձեռքով: Այդ երեխաները, որ այսօր արդեն հասուն մարդիկ են, պետք է ժառանգեին երկիր ու ապրեին ազատ ու անկախ Հայաստանում… Ամենաթանկը, որ ունենք, անկախության սերունդն է: Սերունդ, որ ազատ երկրի քաղաքացի է և իրեն չի պատկերացնում այլ կարգավիճակում: Սերունդ, որ շատ բան ունի տալու իր երկրին ու ժողովրդին, բայց նաև ունի մտահոգություններ ու պահանջներ…»:

Այո՛, այս սերունդը և առհասարակ, բոլոր սերունդների ներկայացուցիչները մեր երկրում ունեին մտահոգություններ և պահանջներ: Հնարավոր է, որ քսան, երեսուն կամ հիսուն տարի հետո, երբ մարդիկ կարդան այս գիրքը, նրանց տարօրինակ ու ծիծաղելի թվան այն մտահոգություններն ու պահանջները, որոնք Հայաստանի քաղաքացիներն ունեին այդ ժամանակ: Ո՛չ, ոչ նախագահը և ոչ էլ նրա հանճարեղ «speachwriter»-ը չէին, որ կարող էին փոխել այդ օրվա իրականությունը. այն իրականությունը, որը ծիծաղելի ու տարօրինակ էր թվալու քսան, երեսուն կամ հիսուն տարի հետո: Դա, անտարակույս, լինելու էր ինքնաբերաբար: Ինքնաբերաբար էին վերանալու մեր իրականությունից այն չարիքները, որոնք առայժմ վարակում էին, ինչպես ժանտախտը: Ամենաթողությունը, լկտիությունը, հովանավորչությունը, կաշառակերությունը, ընտրակեղծարարությունը, ցավոք, մեծամասամբ ծավալվեցին հենց անկախության շրջանում: Այն անկախության, որի սերունդը նախագահը համարում էր ամենաթանկը: Ի՞նչ նկատի ուներ նա՝ թանկ ասելով: Այն հինգ-տասը հազարական դրամնե՞րը, որ իր շրջապատի մարդիկ վճարում էին այդ սերնդի ներկայացուցիչներին՝ նոր-նոր ընտրելու իրավունք ստացած պատանիներին ու աղջիկներին՝ գնելու համար նրանց ձայները: Այլևս ի՞նչ ակնկալիք կարելի էր ունենալ նրանցից այդուհետ:

«Սերունդ, որ շատ բան ունի տալու իր երկրին ու ժողովրդին»,– ասում էր նախագահն իր ելույթում: Բայց արդյոք դուք տվե՞լ էիք այդ սերնդին ամենակարևորը՝ ազատությունը: Անկախ երկրում ազատ ապրելու հնարավորությունը:

Այնուամենայնիվ, ո՞ւր էինք մենք հասել և ո՞ւր էինք այսպես գնում: Կային շրջանառության մեջ դրված տեսակետներ, որոնք չնայած մեծ հաշվով համապատասխանում էին իրականությանը, բայց նաև կաշկանդում էին՝ ավելի խորքային պատկերացում կազմել իրականության մասին: Ավելին՝ շրջանառության մեջ դրված տեսակետները սահմանափակվում էին մեր քսանամյա պետության իշխանություններին և հասարակությանը համակած հիվանդությանը խիստ մոտավոր ախտորոշում տալով: Այսքանը: Վերջակետի փոխարեն դրվում էր հարցական նշանը, որը, սակայն, չէր ենթադրում շարունակություն: «Հիվանդի մոտ առկա է ստամոքսի գերլայնացում». ահավասիկ իշխանություններին տրված ախտորոշումը, որին հետևում էր անպատասխան հարցը՝ «ինչպե՞ս կարելի է նման վիճակում զսպել ախորժակը, եթե արդյունքում քայքայվում է հիվանդի լյարդը»: «Հիվանդի մոտ առկա են խորը դեպրեսիա և հոգեկան խանգարման միտումներ». սա էլ մեր հասարակության մոտավոր ախտորոշումը, որին հետևող հարցն այսպիսին էր՝ «ինչպե՞ս կարելի է նման վիճակում գնալ աշխատանքի»: Այսինքն՝ ինչպե՞ս կարելի էր նման վիճակում պայքարել:

Հասարակությանը տված ախտորոշումը, չնայած մեծամասամբ ճիշտ էր, այսինքն՝ մեզանում առկա էր թե՛ խորը դեպրեսիա, թե՛ հոգեկան բավարար շեղում, բայց թե՛ մեկը, թե՛ մյուսը հաղթահարելի էին, եթե լիներ այն գիտակցությունը, որ հասարակության լավագույն բժիշկն ինքն է՝ հասարակությունը: Հասարակությունն ամբողջությամբ և յուրաքանչյուր քաղաքացի՝ առանձին: Խորը դեպրեսիան կարելի էր հաղթահարել և կարելի էր չհասնել վերջնական հոգեկան շեղման: Քաղաքացին կարող էր դա անել, եթե հավատար ինքն իրեն և հարգեր ու ապավիներ հասարակությանը:

Հասարակությունն իր հերթին կարող էր դա անել, եթե հավատար ինքն իրեն և հարգեր քաղաքացուն: Այս դեպքում անիրական չէր լինի նաև իշխանությունների հիվանդության բուժումը: Ստամոքսն ինքնաբերաբար նեղանում է, երբ կորչում է ախորժակը: Ուրեմն պետք էր ձևեր գտնել՝ իշխանության ախորժակը փակելու:

Մինչդեռ մենք ներսից հոշոտում էինք ինքներս մեզ: Որտեղի՞ց մեզանում այդքան չարություն, այդքան քեն ու նախանձ: Ձեռք մեկնելու փոխարեն մենք ոտք էինք գցում իրար, քաջալերելու փոխարեն՝ հիասթափեցնում, դարման տալու փոխարեն՝ թունավորում…

Տխուր էր մեր իրականությունը, իսկապես, ինչպես որ տխուր էր նախընտրական այդ աշունը…

Իմ քրմուհին, կամ երբ խառնվում են սերն ու գրազը

Ես ամենից շատ վախենում էի նրանից, որ մի օր, ձեռքս տանելով նրա կրծկալի տակ, զգալու էի միայն սիրտը: Թերևս ամենասկզբից հասկացա, որ սա չափազանց դժվար սեր էր լինելու. ամբողջական ու թերի, պայծառ ու դաժան, երջանիկ ու տխուր: Որոշ ժամանակ դիմադրեցի ինքս ինձ ու իմ սատանային, բայց հետո հասկացա, որ կամքն Աստծունն է:

Եվ ահա նորից պիտի տեսնեի Կատյային: Երեկոյան ժամը յոթն էր, օրն՝ ուրբաթ: Ստույգ ամսաթիվը չեմ հիշում, բայց 2011-ի նոյեմբերն էր: Նստած էի «Ալեքսանդրի փաբ»-ում ու սպասում էի նրան: Ինչպես արդեն հասկացաք, խմում էի նախորդ օրվանից, ու ոչ մի վայրկյան չէի հասցրել քնել: Ճմռթված էի այնքան, որ վստահ էի՝ ինձ տեսնելով՝ Կատյան հիասթափվելու է Ադամի ցեղից ընդհանրապես: Եվ որպեսզի էլ ավելի երաշխավորված լինի նրա հիասթափությունը, սկսեցի խմել ռոմ՝ առանց կոլա հավելելու: Նա եկավ երկրորդ բաժակից հետո:

– Որոշել ես խմել մինչև սեքսուալ կողմնորոշումդ կորցնե՞լը,– հարցրեց ու անմիջապես էլ հավելեց,– մի՛ մտահոգվիր, ես դա թույլ չեմ տա:

– Իհարկե թույլ չես տա:

Կատյան մի պահ տարակուսած նայեց ինձ, հետո սկսեց ծիծաղել: Իսկ ես հասկացա, որ վերջ, այլևս անիմաստ է դիմադրելը: Եվ հենց այդտեղ էլ իջեցրի դրոշս: Չգիտեմ՝ ում հանձնվեցի: Հուսով եմ՝ Աստծուն: Ես լկտիաբար, թուլությանս յուրաքանչյուր դրսևորման պահին, հիշում եմ Աստծուն՝ արդարանալով, որ կամքը նրանն է: Կների նա ինձ, թե ոչ, չգիտեմ, բայց կարծում եմ՝ հասկանում է: Այլապես այս էլ որերորդ անգամ

չէր տանի նման փորձությունների՝ տեսնելով, որ միևնույն է, ես դրանց չեմ դիմանում:

Իսկ Կատյան պարզապես հրաշք է: Ես նրան չեմ նկարագրի: Բայց եթե մի օր ինչ-որ մեկը որոշի ֆիլմ նկարել այս գրքի հիման վրա, ես այս պահից պայման եմ դնում, որ Կատյայի դերակատարուհու ընտրությունն ինքս պիտի անեմ: Միայն թե գիտեմ, որ դա դյուրին չի լինելու: Ասենք, մոտավորապես նույնը, ինչ «Օռլովի» փոխարեն վերցնես մի կեղծ ադամանդ:

– Անցած գիշեր չես քնել, խմել ես առնվազն երկու լիտր տարբեր գույների, բայց բարձր թնդության խմիչքներ, խմբակային սեքսով ես զբաղվել և բոլոր գործերդ ձախողել ես. իրավացի՞ եմ,– հարցրեց Կատյան՝ տեղավորվելով կողքիս:

– Ամեն ինչ ճիշտ է, բացառությամբ խմբակային սեքսի,– ես մի շնչով դատարկեցի ռոմի բաժակը,– չնայած, եթե ուզում ես անկեղծ ասեմ, նման վտանգի առջև կանգնած էի, բայց կար մի հանգամանք, որ ամեն կերպ խանգարում էր ինձ:

– Եվ ո՞րն էր այդ հանգամանքը:

– Դո՛ւ:

Կատյան նորից ծիծաղեց, բայց այս անգամ մի տեսակ անվստահ: Որքան տարբեր են կանանց կեցվածքն ու արձագանքը սիրո խոստովանություն լսելիս: Բայց կա մի ընդհանրություն՝ բոլորի համար դա հաճելի է՝ անկախ փոխադարձ զգացմունքի առկայությունից կամ բացակայությունից, և ոչ ոք չի կարող թաքցնել դա: Անգամ Կատյան: Չնայած ես համոզված էի, որ նա իր կյանքում ավելի շատ սիրո խոստովանություն էր լսել, քան, ասենք, շնորհավորանք՝ ծննդյան օրվա կապակցությամբ:

Կան կանայք, ովքեր միշտ հակված են մերժելու, չնայած ուզում են համաձայնել: Կան կանայք, ովքեր միշտ համաձայն են, չնայած ուզում են մերժել: Եվ հազվագյուտ են այն կանայք, ովքեր կարողանում են և՛ ճիշտ մերժել, և՛ ճիշտ համաձայնել: Ընդ որում, թքած ունենալով կյանքի, շրջապատի, անգամ խաղի

կանոնների վրա: Այդպիսի կանայք շատ լավ գիտեն, որ հնարավոր չէ սեփական զգացմունքը կառավարել, բայց նաև գիտեն, որ չի կարելի խաղալ դիմացինի զգացմունքի հետ: Գիտեն նաև, որ սիրո առջև անիմաստ է պատնեշներ դնելը, եթե անգամ դու ունես աշխարհի բոլոր հնարավոր կարգավիճակները: Անիմաստ է, որովհետև սերը միևնույն է՝ ջարդուփշուր է անելու բոլոր այդ պատնեշները:

– Իսկ ի՞նչ կլինի, եթե ես էլ խմեմ քեզ հետ այսօր,– հանկարծակի հարցրեց Կատյան:

– Սովորաբար, երբ որոշում են ինձ հետ խմել, ամեն ինչ ավարտվում է անկողնում,– լկտիաբար հայտարարեցի ես:

Բայց Կատյան թաց անկողնում պառկողը չէր.

– Իսկապե՞ս,– ասաց նա,– ավարտվո՞ւմ, թե՞ սկսվում:

Ես շտապեցի փոխել թեման ու պատմեցի նրան օդանավակայանի պատմությունը: Անկեղծ ասած՝ չէի սպասում, որ այն այդչափ կհետաքրքրեր Կատյային:

– Իսկ ի՞նչ եղավ այն մարդը, ում պիտի դիմավորեիր իրականում,– հարցրեց նա:

– Գաղափար չունեմ: Պանդան մինչև հիմա ուշքի չի եկել և նույնիսկ չգիտի, որ սխալ մարդու եմ դիմավորել:

– Իսկ ինչպե՞ս էր այն մարդու անունը, ում դիմավորեցիր սխալմամբ:

– Վաղինակ:

– Ինչ հին անուն է, կարծես անցած դարից լինի – ասաց ժամանակակից ամեն ինչի սիրահար Կատյան:

– Ինքն էլ է հին: Մեր անցյալից է:

– Իսկ ինչո՞ւ է որոշել վերադառնալ ներկա:

– Ոզում է դառնալ նախագահ, – ասացի իմիջիայլոց:

Կատյան երկար մի սուլոց արձակեց (որը պետք է ասել՝ նրա մոտ բավականին լավ ստացվեց).

– Ահա՛ թե ինչ:

– Մի՞թե հանճարեղ միտք չէ:

– Չգիտեմ: Բայց Աստված նրա հետ: Ի՞նչ ենք անելու այսօր, հոգնեցի այս փաբից,– Կատյան մի վայրկյանում կերպարանափոխվեց,– ես զվարճանալ եմ ուզում: Կյանքը կարճ է: Ինչպե՞ս ես պատրաստվում ինձ այսօր զվարճացնել:

Հասցրեցի լեզուս կծել, որ չասեմ մտքիս եկած առաջին նախադասությունը: Բայց Կատյան անմիջապես կռահեց հայացքիցս, թե զվարճանալու ինչ տարբերակի մասին եմ երազում, բարձր ծիծաղեց ու ասաց.

– Մի՛ նեղվիր, եթե տղամարդիկ իմանային, թե կանայք իրականում ինչ են մտածում, ամոթից կշիկնեին: Նոր ակումբ է բացվել: Գնանք լիցքաթափվելու:

Երբ դուրս եկանք, Կատյան այնպես նստեց իմ ջարդուխուրդ, անվվա «Ռենոն», կարծես այն առնվազն զտարյուն սպիտակ նժույգ էր: Ընդհանրապես, նկատել էի՝ նա կարողանում էր այնպես անել, որ շրջապատող տղամարդիկ իրենց ասպետ էին զգում: Երբ իրեն ասացի այդ մասին, նա հանգիստ պատասխանեց:

– Կանայք լինում են երեք տեսակի՝ վայրի, ընտանի ու քրմուհիներ: Ես ծնվել եմ քրմուհի: Հանկարծ չծիծաղես, ես անկեղծորեն հավատում եմ, որ քրմուհի եմ: Սիրո քրմուհի: Նա դա ասաց այնպիսի համոզված տոնով, որ ես անմիջապես հավատացի ու վայրկյան անգամ չկասկածեցի, որ դա այդպես է: Եվ անմիջապես լռեցրի ուղեղիս հեռավոր ու մութ անկյունից եկող վտանգի ազդակներն այն մասին, որ սովորաբար քրմուհիները զոհեր են պահանջում...

Պարզվեց, որ քրմուհի լինելուց բացի, Կատյան համատեղման կարգով նաև ակումբների և լիցքաթափվելու խոշոր մասնագետ է: Ես դա հասկացա անմիջապես, երբ մտանք նորաոճ մի ակումբ, որտեղ տղամարդիկ ոչնչով չէին տարբերվում կանանցից: Թերևս միայն մի բանով՝ ավելի կանացի էին: Սակայն Կատյան իրեն զգում էր՝ ինչպես ձուկը ջրում հետերոսեքսուալությունից շատ հեռու այդ միջավայրում:


Catherine
Катюша
Кетинка
Kate

– Եթե սկսեմ սեղաններին պարել, մի՛ ամաչիր, ինձ վա՛յր իջեցրու,– կատակեց Կատյան:

– Դու այդպիսի բանե՞ր էլ ես անում:

– Երբեմն:

Գաղափարն ինձ այդքան էլ դուր չեկավ՝ հաշվի առնելով, որ Կատյան կարճ կիսաշրջազգեստով էր:

– Ես ավելի լավ տեղ գիտեմ,– փորձեցի իրավիճակը վերահսկել ես:

– Գնանք, – անսպասելի հեշտությամբ համաձայնեց նա:

«Մարգարիտա» բար-ռեստորանում նա անմիջապես համանուն կոկտեյլ պատվիրեց, վառեց ծխախոտը և անսպասելի նորից հիշեց Վաղինակին:

– Տարօրինակ մարդ է քո Վաղինակը: Խենթ ու ռոմանտիկ: Բայց նա ինձ դուր է գալիս: Կուզեի այդպիսի նախագահ ունենալ:

– Խենթ նախագա՞հ:

– Իսկ ինչո՞ւ ոչ: Տեսանք, թե երկիրն ուր հասցրին լուրջ, կշռադատված ու ողջամիտ այրերը: Գուցե ժամանակն է փոխե՞լ խաղի կանոնները: Միայն հիմարներն են ապրում կյանքի կամ վերին ուժերի թելադրած կանոններով: Հիմարները ու թույլ մարդիկ:

– Կյանքը նախօրոք գրված գիրք է...,– փորձեցի միջամտել ես:

– Ֆատալիստի այդպիսի դեմքով վրաս մի՛ նայիր: Համաձայն եմ, որ կյանքը նախօրք գրված գիրք է: Բայց մարդու ձեռքում է որոշելը, թե այդ գրքի որ էջում, որ հատվածում ու պարբերությունում է ինքն ուզում հայտնվել: Որոշելն ու այդտեղ տեղավորվելը հենց նրա ձեռքում է:

– Մի խոսքով, դու դեմ չէիր լինի, որ Վաղինակը դառնար նախագահ: Ես ճի՞շտ հասկացա:

– Լիովին:

– Հանուն քո ցանկության, իհարկե կարելի էր օգնել նրան: Բայց ստիպված եմ խնայել նյարդերս ու ժամանակս:

– Վախենում ես: Գիտես, որ չես կարող: Պարզապես գլուխ ես գովում:

– Իսկ եթե ապացուցեմ, որ կարո՞ղ եմ: Իհարկե, ոչ նախագահ, բայց նվազագույնը պատգամավոր կարող եմ դարձնել:

– Դա էլ հեշտ չէ: Դե, քեզ տեսնենք:

– Համաձայն եմ, որ հեշտ չէ: Բայց տղամարդիկ շահամոլ արարածներ են: Ես ստիմուլ չունեմ՝ նման նյարդատար ու ժամանակատար ավանտյուրայի մեջ մտնելու:

– Հիմա արդեն ունես,– ասաց Կատյան և նայեց աչքերիս:

– Եվ ո՞րն է այդ ստիմուլը:

– Պարգևատրումը… իմ սիրտը:

– Հիմա դու չես խոսում, քո փոխարեն խոսում են այն 5 բաժակ «Մարգարիտաները», որոնք դու այդքան անխոհեմաբար խմեցիր:

– Ինչո՞ւ անխոհեմաբար, ես քեզ վստահում եմ: Բայց ԵՍ եմ խոսում: Եթե կարողանաս Վաղինակիդ խցկել կուսակցություններից որևէ մեկի ցուցակ՝ ցանկացած, խոստանում եմ իմ տաք, փոքր ու կամակոր սրտիկը դնել քո ափերի մեջ: Կարող ես ինչ ուզում ես, դրա հետ անել:

– Վստա՞հ ես:

– Վստահ եմ: Իսկ դու վստա՞հ ես, որ գլուխդ չես կորցնի:

Այդ մեկում վստահ չէի… Ու կարծես մտքերս կարդալով՝ ռեստորանի երգչուհին իր թավշյա «նեգրական» ձայնով սկսեց երգել «Bésame Mucho»-ն:

– Պաշտում եմ այս երգը: Երբ լսում եմ, ուզում եմ սիրահարվել, խենթություններ անել, անձրևի տակ մերկ վազել: Հա, ի դեպ, խենթությունների մասին. քանի որ դու զրկեցիր ինձ սեղանների վրա պարելու հաճույքից, պարտավոր ես փոխհատուցել: Հրավիրում եմ տանգոյի:

– Բանն այն է, որ ի տարբերություն քեզ, ես խիստ անտարբեր եմ այդ երգի հանդեպ,– փորձեցի տանգոյից խուսափել ես,– բացի այդ, դու դա դեմքի այնպիսի արտահայտությամբ ասացիր, կարծես ոչ թե հրավեր էր, այլ մարտահրավեր:

– Այդպես էլ կա: Աֆրիկայում մի ցեղախումբ կա, որի կանայք տղամարդկանց ընտրում են՝ գնահատելով նրանց պարը: Համարվում է, որ լավ պարող տղամարդը նույնքան լավն է նաև անկողնում: Ուզում եմ տեսնել՝ քո ռիթմի զգացումը բռնում է իմ ռիթմի հետ, թե ոչ: Այնպես որ ստիպված ես լինելու պարել ինձ հետ, որքան էլ որ անտարբեր լինես իմ սիրած երգի հանդեպ:

Լավ, մտածեցի, ցույց կտամ քեզ իմ ռիթմն էլ, զգացումն էլ, զգացմունքն էլ ու ամուր սեղմեցի նրան ինձ…

Հետո, երբ նստեցինք սեղանի մոտ, Կատյան երկիմաստ ժպտաց և հայտարարեց.

– Սիրում եմ տանգոն, Աֆրիկան ու այնտեղ ապրող իմաստուն կանանց: Դու լավ ես պարում:

– Առաջարկում եմ պարը տեղափոխել այլ հարթություն,– երկիմաստ հաճոյախոսությանն անմիջապես արձագանքեցի ես:

– Նկատի ունես հորիզոնակա՞ն հարթություն: Երիտասա՛րդ, դու շատ արագ ես երես առնում: Հետաքրքիր է, թե ով է քեզ այդքան երես տվել:

– Ամբողջական ցուցակը կարող եմ ուղարկել էլեկտրոնային հասցեիդ:

– Ո՞ր ցուցակը՝ «մեծամասնակա՞նը-», թե՞ «համամասնականը»:

– Այսի՞նքն,– չհասկացա ես:

Կատյան նորից փափկեց.

– Դե, կանայք ունեն «էքսերի»՝ նախկինների երկու ցուցակ: «Մեծամասնականը» նախկին սերերի ու սիրեկանների պաշտոնական ցուցակն է, ներկայացվում է բացառապես ամուսիններին, ընկերներին և ընթացիկ սիրեկաններին: Իսկ «համամասնականը» կնոջ գաղտնի՝ իրական ցուցակն է, ներկայացվում է միայն ամենամտերիմ ընկերուհուն և Աստծուն: Տեսնում ես, երբեմն սիրո քրմուհիներն էլ են օգտվում քո սիրած քաղաքական տերմիններից: Հիմա ո՞ր ցուցակն ես ուղարկելու:

– Քո անկեղծությունը հաճախ ստիպում է ինձ վերանայել վերաբերմունքս կանանց նկատմամբ:

– Ուզում եմ, որ հստակ հասկանաս: Անկողնային խենթ պարերը բացառվում են, մինչև դու չնվաճես իմ սիրտը: Իմ անկողին մտնելուց առաջ տղամարդը սկզբից պետք է կարողանա մտնել իմ սիրտը: Երկու դեպքում էլ ցանկալի է՝ մաքուր կոշիկներով: Գրազն ուժի մեջ է: Եթե, իհարկե, արդեն չես մոռացել դրա մասին: Առաջարկում եմ խմել դրա կենացը:

– Կգա այն օրը, երբ դու, գլուխդ իմ ուսին հենած, կպատմես քո բոլոր համամասնական և մեծամասնական ցուցակների մասին: Եվ ընդհանրապես՝ ամեն ինչի մասին: Խոստանում եմ…

– Մի՛ սպառնա ինձ: Երբ ինձ սպառնում են, ես ավելի վտանգավոր եմ դառնում:

– Չեմ սպառնում, նախազգուշացնում եմ:

– Կապրենք, կտեսնենք… Կրկնե՛ք մեր «Մարգարիտաները», մենք նշելու առիթ ունենք: Ու հեռու մի՛ գնացեք, առիթը պատրաստվում ենք երկար նշել,– թեման փոխեց Կատյան՝ մոտ կանչելով մատուցողին:

Ինչքա՞ն կարելի է խմել

Երբ աչքերս բացեցի, առաջին բանը, որ զգացի, ցուրտն էր: Դողում էի ողջ մարմնով: Հետո առաջին բանը, որ տեսա, զույգ ոտքերս էին, ընդ որում, մեկի վրա կոշիկ կար, մյուսն առանց կոշիկի էր: Ոտքերս մեքենայի ղեկին էին, իսկ դիմապակուց երևում էր ծանոթ պատկեր. մեր բակն էր: Հասկացա, որ քնել եմ մեքենայում, և մեր շենքի առջև եմ:

Բայց ինչո՞ւ մեքենայում, ինչո՞ւ տուն չեմ բարձրացել: Հավանաբար ծերանում եմ: Ինձ հետ իհարկե էլի է պատահել, որ արթնանամ այնպիսի տեղերում, ուր կարելի էր և չարթնանալ, բայց, որպես կանոն, այդ տեղերը եղել են շատ ավելի տաք ու փափուկ: Եվ ահա ես արթնանում եմ սեփական մեքենայում՝ մրսած, ջարդոտված ու անկոշիկ: Իսկ պատճառն անշուշտ վերջին բաժակն էր, որը, բնականաբար, ստույգ չէի հիշում, թե որտեղ և ում հետ էի խմել:

Բայցևայնպես, բախտս բերեց: Դեռ ժամը ութը չկար, հետևաբար կհասցնեի մտնել տուն, ինձ կարգի բերել և աղջիկներիս տանել դպրոց: Այդպես էլ արեցի՝ իհարկե նախապես գտնելով կոշիկս, բայց ինձ հիասթափություն էր սպասվում: Տանը բոլորը քնած էին, ինչը նշանակում էր, որ ոչ մի դպրոց էլ այսօր չկար, այն պարզ պատճառով, որ օրը շաբաթ էր:

Դե ինչ, ավելի լավ. շաբաթ, ուրեմն շաբաթ: Լողացա, ինձ կարգի բերեցի ու գնացի խմբագրություն: Անընդհատ ինձ ստիպում էի չմտածել նախորդ օրվա մասին և չփորձել հիշել, թե ինչ է եղել:

Դեռ ոչ ոք չէր եկել, ու գրասենյակն ինձ դիմավորեց մի տեսակ անտարբեր: Սուրճ եփեցի ու միացրի համակարգիչս: Բավականաչափ նյութեր էին կուտակվել, և պետք էր կարդալ:

Հայացքս սահում էր տողերի վրայով, որոնք այդպես էլ մնում էին զուտ տողեր և ոչինչ ավելի: Ուշք ու միտքս բացարձակապես այլ տեղ էր: Հասկանալով, որ ոչինչ էլ չեմ կարող խմբագրել՝ որոշեցի ծանոթանալ նախորդ օրվա լրահոսին: Եվ հենց այդտեղ էլ սխալվեցի: Որովհետև առաջին իսկ ներքաղաքական լուրը կարդալով՝ հիշեցի Կատյայի հետ կնքածս պայմանի մասին…

Վաղինակը՝ պատգամավո՞ր: Ինչպիսի հիմարություն: Ի՞նչ միջատ էր ինձ խայթել երեկ: Ինչպե՞ս եմ հիմա արդարանալու Կատյայի առջև. որ խմա՞ծ եմ եղել: Դա ի՞նչ արդարացում է: Աստիճանաբար մտաբերում էի խոսակցության մանրամասները և փորձում հասկանալ, թե ինչպես կարելի էր դուրս գալ այս անհեթեթ վիճակից:

Լավ, իսկ ի՞նչ է դրված խաղասեղանին. մի՞թե Կատյայի սիրտն ուրիշ կերպ նվաճել չի կարելի: Կամ եթե անգամ չի կարելի, այս ի՞նչ մանկական արկածախնդրություն է, ինչո՞ւ պարզապես չմոռանալ Կատյային էլ, նրա սիրտն էլ, մնացած բաների մասին էլ չեմ խոսում:

Անկախ ինձանից բացեցի նրա «Ֆեյսբուքի» էջն ու սկսեցի նայել նկարները: Դրանցից մեկում Կատյան երեկոյան կարմիր ու լանջաբաց զգեստով էր: Նա նման էր վարդի, կարմիր վարդի, որը միայնակ մնացել է պարտեզում: Մյուս բոլոր վարդերին պոկել են, այս մեկին չեն համարձակվել: Նա նայում էր ուղիղ աչքերիս մեջ՝ կարծես ասելով. «Կարո՞ղ ես՝ պոկի՛ր ինձ»:

Կարո՛ղ եմ: Եվ իհարկե պայմանից հետ կանգնել չի կարելի: Եթե պետք է, որ Վաղինակը դառնա պատգամավոր, ուրեմն նա կդառնա: Եթե անգամ դրա համար ես ստիպված լինեմ գործարքի մեջ մտնել սատանայի հետ:

Միակ մխիթարող բանն այն էր, որ մենք կանգ առանք պատգամավորի տարբերակի վրա և ոչ թե նախագահի: Այսինքն՝ իշխանափոխություն անելու խնդիր չկար: Դա, ինչ խոսք, բավականաչափ հեշտացնում էր իմ գործը:

Ես փակեցի Կատյայի «Ֆեյսբուքի» էջը: Աշխատասենյակիս փոքրիկ սեղանին դրված էր ռոմի կիսադատարկ շիշը:

Հավաքարարը հավանաբար չէր համարձակվել վերցնել այն, իսկ աշխատակիցները երևի չէին էլ մտել սենյակս: Դե ինչ, որոշումը կայացված էր, կարելի էր մի բաժակ խմել:

Դեռ չէի հասցրել լցնել բաժակը, երբ լսեցի, թե ինչպես բացվեց խմբագրության դուռը: Նայեցի, և այ քեզ հրաշք՝ Պանդան էր: Մտավ սենյակս, կանգնեց ուղիղ գլխավերևումս ու առանց բարև տալու ասաց.

– Ինչքա՞ն կարելի է խմել:

Ես չարձագանքեցի: Այնպիսի մեղադրական տոնով էր ասում, կարծես ամեն ինչի մեղավորն ինքը չէր: Գիտեի, որ հիմա հետևելու է տասրոպեանոց քարոզ խմելու վնասների մասին, որին հաջորդելու է մեկ այլ քարոզ՝ նվիրված ընտանեկան հավատարմությանը: Ու Պանդան դա անում էր այնքան բնական, որ կարելի էր մտածել, թե նրան միայն փարաջան է պակասում: Վերջինը, ի դեպ, Պանդան կարող էր և հագնել, եթե սրանից ուղիղ քսան տարի առաջ «չկտրվեր» երգեցողության քննությունից Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Բայց այդ դեպքում ես նրան չէի ճանաչի, որովհետև եթե ընդունվեր ճեմարան, մենք մի կուրսից չէինք լինի Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Բայցևայնպես, այստեղ էլ չի կարելի պնդել, որ նա այն ավարտեց: Չնայած, երբ իրեն են հարցնում, ասում է, որ ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի… բուֆետը:

Բայց այս անգամ հերթը քարոզին չհասավ: Պարզվեց՝ ընկերս եկել էր հետաքրքրվելու այն մարդու ճակատագրով, որին պետք էր դիմավորել օդանավակայանում, և որին այդպես էլ չդիմավորեցինք ո՛չ ինքը, ո՛չ էլ առավել ևս՝ ես: Իմ ձախողումը ես նրան ներկայացրի հնարավորինս գեղարվեստորեն և արդարացա նրանով, որ փոխարենը դիմավորել եմ հայրենի խորհրդարանի ապագա անդամներից մեկին: Բայց Պանդային դա առանձնապես չմխիթարեց:

– Կյանքում մի անգամ ինձ թույլ տվեցի երկու օր անընդմեջ խմել և կյանքում առաջին անգամ քեզ մի բան վստահեցի…

Պետք է ասել, որ երկու պարագայում էլ նա ճիշտ էր ասում: Ես անդրադարձա, որ չեմ հիշում մի դեպք, երբ ընկերս խմի հաջորդ օրը և առավել ևս չեմ հիշում դեպք, որ նա խառնի ինձ իր գործերին: Ես անգամ պատկերացում չունեի, թե ինչպես է նա փող աշխատում, չնայած ամեն ամիս նրանից «պարտքով» վերցնում էի տարբեր կլորիկության գումարներ, որոնք, բնականաբար, չէին վերադարձվում: Իսկ գլխավորն այն է, որ հիմա էլ նման պլաններ ունեի. երեկվա հրավառությունից հետո դրամապանակումս մնացել էին միայն լավ օրերի հուշերը:

– Դե լավ, շատ մի՛ նեղվի, կգտնենք սփյուռքահայիդ, մի լավ կհյուրասիրենք ու ամեն ինչ կկարգավորվի: Ի դեպ, կարո՞ղ ես ինձ պարտքով մի քիչ փող տալ, հնարավորինս արագ կվերադարձնեմ:

Պանդան գնաց՝ խոստանալով վերադառնալ, ես էլ իմ հերթին վերադարձա ռոմին ու քաղաքականությանը:

Քաղաքական ուժերի իրական ու անիրական վարկանիշները, կամ ինչպե՞ս սիրի ժողովուրդը նախագահին

Խորհրդարանական ընտրություններից մի քանի ամիս առաջ ի՞նչ քաղաքական ուժեր կային ասպարեզում և ինչպիսի՞ն էր նրանց վարկանիշը: Սա մի հարց էր, որի շուրջ 2011-ի հոկտեմբերին տարբեր վերլուծաբաններ ունեին տարբեր պատկերացումներ: Խորհրդարանական ընտրությունների նախաշեմին ո՞ր քաղաքական ուժերն էին իշխանությունների և անձամբ պետության նախագահի ցուցակում, և որի՞ն որքան տոկոս էր հատկացված: Սա մյուս հարցն էր, որի պատասխանը բնականաբար հայտնի չէր և կարելի էր ընդամենը կռահումներ անել: Այլ խոսքով՝ ինչպիսի՞ն էր քաղաքական ուժերի իրական և «նախագահական» վարկանիշը:

Մեր լրատվամիջոցի քաղաքական մեկնաբաններից մեկը, ում ես հակված էի վստահել, ուներ այս մասին իր կարծիքը. նա պնդում էր, որ ասպարեզում են ընդամենը հինգ քաղաքական ուժեր, որոնք հնարավորություն ունեն համամասնական ընտրակարգով անցնել խորհրդարան: Այդ քաղաքական ուժերի իրական վարկանիշը, ըստ մեր վերլուծաբանի, այսպիսին էր. «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցություն՝ 20 տոկոս, «Ինքնըստինքյան» կուսակցություն՝ 17 տոկոս, «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցություն՝ 13 տոկոս, «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինք՝ 12 տոկոս և «Ամերիկյան ժառանգություն» կուսակցություն՝ 7 տոկոս:

Ինչպես ասացի վերևում, ես ընդհանուր առմամբ համաձայն էի մեր վերլուծաբանի այս տվյալների հետ: Այդ վերլուծաբանի մասին, որը նաև իմ ընկերն է (գուցե լավագույնը), ես դեռ առիթ կունենամ ձեզ պատմելու, իսկ առայժմ ներկայացնեմ նրա

վերլուծության երկրորդ հատվածը, որը վերաբերում է քաղաքական ուժերի ոչ իրական վարկանիշին, այսինքն այն վարկանիշին, որը հասարակությանն էին հրամցնում իշխանական ընտրակեղծարարները և որը միս ու արյուն էր ստանալու ընտրությունների արդյունքում: Ավելի ստույգ, հանրապետության նախագահի նստավայրում, ըստ մեր վերլուծաբանի, մտմտում էին խորհրդարանական ընտրություններում քաղաքական ուժերի միջև տոկոսների բաշխման հետևյալ պատկերի շուրջ. «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցություն՝ 45 տոկոս, «Ինքնըստինքյան» կուսակցություն՝ 25 տոկոս, «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինք՝ 10 տոկոս, «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցություն՝ 7 տոկոս, «Ամերիկյան ժառանգություն» կուսակցություն՝ 6 տոկոս: Այս ցանկին, ըստ մեր հարգարժան վերլուծաբանի, ավելանալու էր նաև «Appendix vermifomis» կուսակցությունը՝ հինգ կամ վեց տոկոսով:

Եվ ուրեմն, Վաղինակին պատգամավոր դարձնելու համար հարկավոր էր ընտրություն կատարել, թե նշվածներից որ քաղաքական ուժի վրա կանգ առնել:

Քաղաքականությամբ Հայաստանում վաղուց արդեն զբաղվում էին բոլորը, բացի, թերևս, քաղաքական գործիչներից: Եթե հավատալու լինեինք կուսակցությունների ներկայացրած տվյալներին, որոնք վերաբերում էին իրենց անդամների թվին, ապա մեր երկրի չափահաս բնակչության հարյուր տոկոսից ավելին կուսակցական էր: Զավե՞շտ է: Բոլորովին: Բայց ոչ թե այն իմաստով, որ այս թվերն իրական էին, և իսկապես երկրի ողջ բնակչությունը այս կամ այն կուսակցության անդամ էր: Դա, անշուշտ, սուտ էր: Իսկ ճշմարտություն էր այն, որ երկրի ողջ բնակչությունը քաղաքականացված էր, և նրա գերակշիռ մասը՝ անմիջականորեն ներգրավված քաղաքական գործընթացներում:

Կուսակցական դառնում են և քաղաքականությամբ զբաղվում են երկու դեպքում՝ կամ գաղափարականության, կամ պարապության

ավելցուկից: Թե որ դեպքն էր գերակշռում մեր իրականության մեջ, կարծում եմ՝ հասկանալի է:

Քանի դեռ պետությունը չի հասել նրան, որ իր քաղաքացին քաղաքականացված լինի միայն ընտրությունների ընթացքում, այդ պետությունը չի կարելի կայացած համարել: Քաղաքացին պետք է հնարավորություն ունենա կողմնորոշվելու և կատարելու իր ընտրությունը, որից հետո պետք է շարունակի ապրել իր կյանքը մինչև հաջորդ ընտրություններ: Նա իհարկե կարող է սխալ կամ ճիշտ ընտրություն կատարել, բայց հենց իր հետագա ապաքաղաքական կյանքն ապրելով է, որ կարող է համոզվել իր ճիշտ ընտրության մեջ կամ, հակառակը, տեսնել, որ այդ ընտրությունը սխալ է եղել, և փորձել ուղղել այն հաջորդ ընտրությունների ժամանակ: Իսկ եթե սխալվի նաև այստեղ, սխալվի նաև երրորդ ու չորրորդ անգամ, դա ևս նորմալ է: Պետության կայացման գործընթացը հենց սա է, և որքան էլ երկար տևի, պետք է այն անցնել: Սակայն մի բան է, երբ կա նման ձգտում և այլ բան է, երբ պետությունը առաջնորդվում է իր քաղաքացուն սխալվելու հնարավորություն չտալու սկզբունքով: Այսինքն, երբ գործող նախագահը կամ իշխող կուսակցությունը, առաջադրելով սեփական թեկնածությունը հերթական ընտրություններում, պատրաստ է գնալ ցանկացած քայլի, որպեսզի թույլ չտա, որ ժողովուրդը «սխալվի» և ընտրի ուրիշին:

Քանի դեռ պետությունը չի հասել նրան, որ իր քաղաքացին քաղաքականացված լինի միայն ընտրությունների ընթացքում, այդ պետությունը չի կարելի կայացած համարել: Այստեղ, ինչ խոսք, ամենամեծ դերակատարությունը կարող է ունենալ հանրապետության նախագահը: Բայցևայնպես, եկեք փորձենք հասկանալ հանրապետության նախագահին: Փորձենք հասկանալ, թե ինչ էր նա մտածում, որ անում էր այն, ինչ անում էր:

Դիցուք, նախագահը մտածում էր այսպես. եթե հիմա որևէ այլ ուժ գա իշխանության, այն անպայման կտանի երկիրը կործանման,

հետևաբար չի կարելի թույլ տալ դա, և պետք է ամեն գնով պահել իշխանությունը: Եվ նախագահն ամեն գնով պահում էր իշխանությունը: Նա անում էր դա խորհրդարանական ընտրությունների ժամանակ, կաներ նաև նախագահական ընտրությունների ժամանակ:

Ուստի, ընդունենք, որ նախագահն իր նպատակներում ազնիվ էր. նա ընդամենը թույլ չէր տալիս, որ երկիրը տանեն կործանման:

Կրկնում եմ, գուցե իսկապե՞ս նախագահը մտածում էր, որ իր կառավարման արդյունքում երկրում վիճակը բարելավվում էր, ժողովրդի կենսամակարդակը բարձրանում էր, Հայաստանն ամրապնդում էր իր դիրքերը միջազգային ասպարեզում: Չէ՞ որ նա կարող էր այդպես մտածել:

Բայց այս դեպքում հարց է առաջանում. եթե իսկապես այս ամենն այսպես էր, եթե իսկապես իշխանությունը լավ էր աշխատում, ապա ի՞նչ կարիք կար ժողովրդին վճարել, որ նա ընտրեր այդ իշխանությանը:

Հայաստանի երրորդ հանրապետության բոլոր երեք նախագահների պարագայում գուցե կային այլ ընդհանուր բաներ ևս, բայց ամենակարևոր ընդհանրությունն այն էր, որ նրանցից և ոչ մեկն այդպես էլ չկարողացավ իր մեջ ուժ գտնել՝ հնարավորություն տալ ժողովրդին՝ իրենցից բացի այլ մեկին ընտրելու: Եվ թերևս սա էր հիմնական պատճառը երեք նախագահների միջև եղած մյուս ընդհանրության. նրանցից և ոչ մեկին ժողովուրդը չսիրեց: Սա սարսափելի բան է:

Կար երրորդ կարևոր ընդհանրությունն էլ. երեք նախագահներից և ոչ մեկը չէր ընդունում իր արած սխալները և չէր զղջում դրանց համար, էլ ուր մնաց ներողություն խնդրեր ժողովրդից: Սա ևս սարսափելի բան է:

Բոլոր երեք նախագահները, երբ խոսում էին, պարզ էր դառնում, որ նրանք խոսում են ոչ թե ժողովրդի, այլ իրենց նախորդի ու հաջորդի հետ: Այո, նրանք խոսում էին միմյանց հետ, դիմում,

խոստանում, սպառնում էին միմյանց, երբեմն էլ ամերիկաներին ու ռուսաստաններին:

Այնպիսի տպավորություն էր, որ նրանց պայքարը, եթե հանուն էր, ապա հանուն իրենց, բայց իրականում ընդդեմ իրար էր: Ժողովուրդն այստեղ բացակայում էր, պարզապես չկար:

Եթե նրանք մի լավ բան էին անում, անում էին իրենց համար: «Իրենց» ասելով՝ կարելի էր հասկանալ հարյուր մարդու, հազար, տասը հազար: Բայց մի՞թե այսքանն էր մեր ժողովուրդը:

Բայց ամենացավալին այն էր, որ երբ նրանք վատություն էին անում իրար, տուժողը դարձյալ ժողովուրդն էր:

Ինչպե՞ս սիրեր այս մարդկանց ժողովուրդը:

Մի՞թե կարելի էր ասել, որ ասենք «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի տասնյակ հազարավոր համակիրները սիրում էին իրենց առաջնորդին՝ հանրապետության առաջին նախագահին: Ոչ, նրանք պարզապես ատում էին երկրորդ և երրորդ նախագահներին: Ու եթե պատահաբար կրկին իշխանության գար հանրապետության առաջին նախագահը, նրան էլ ատելու էին, ինչպես ատում էին մի ժամանակ:

Այս ի՞նչ ատելություն սերմանեցիք դուք այս ժողովրդի մեջ՝ նախագահի նկատմամբ:

Երջանիկ է այն ժողովուրդը, որ սիրում է իր նախագահին: Բայց եթե դա անհնար է, ապա պետք է գոնե հանել ատելությունը ժողովրդի միջից: Իսկ դրա համար պետք էր խոսել ոչ թե միմյանց հետ, այլ ժողովրդի: Պետք էր ընդունել սխալներն ու ներողություն խնդրել ժողովրդից: Պետք էր թույլ տալ ժողովրդին ընտրել սեփական անձից դուրս մեկին:

Իմ ընկեր Անդրեասը և Պանդայի ծաշը

Հիշո՞ւմ եք, ես ձեզ խոստացել էի ներկայացնել Անդրեասին՝ մեր հարգարժան քաղաքական վերլուծաբանին: Նա նաև իմ ընկերն էր ու թերևս լավագույնը: Ես արդեն առիթ ունեցել եմ ասելու, որ ընկերների հարցում կյանքն իմ հանդեպ շռայլ էր գտնվել, և նրանցից մի մասին ես այս գրքում կանդրադառնամ: Եվ գուցե բոլորի մասին պատմելիս էլ ասեմ, որ նա էր լավագույնը: Կրկին չհավատաք. լավագույնն Անդրեասն էր: Նման երկրորդն աշխարհում պարզապես չկար՝ ի հեճուկս տարածված, համընդհանուր, հայտնի տեսակետի: Հենց միայն այն պատճառով, որ չկար և չէր կարող լինել աշխարհում ուրիշ մեկը, ով նույնքան սրտացավորեն կարողանար կրել նույն այդ աշխարհի դարդուցավի մի մեծ մասը և իր հայրենիքի դարդուցավն ամբողջությամբ, որքան սրտացավորեն դա անում էր սույն մարդ արարածը: Ես միշտ ապշում էի, թե ինչպես կարող են զգացմունքայնությունը և տղամարդկությունը այդչափ համերաշխ ապրել նրա հաղթանդամ մարմնում: Անդրեասն իր արծվի հայացքով նայում էր շուրջն ու, երբ անարդարություն էր տեսնում, կարող էր միայնակ դուրս գալ ազգի բոլոր ներքին ու արտաքին թշնամիների դեմ և միևնույն ժամանակ կարող էր մանկան պես հուզվել, երբ սիրուն մի բան էր տեսնում: Նա պարզապես չէր կարող հանդուրժել անարդարությունը և պատրաստ էր կռիվ տալ անգամ դրա ամենաչնչին դրսևորման դեմ: Եվ թերևս դա էր պատճառը, որ իր ապրած հիսուն տարիների ընթացքում նա հասցրել էր երկու անգամ կաթված ստանալ: Միայն թե դա նրան չէր հանգստացրել. նա հիմա էլ շարունակում էր իր գրչի և թավ բեղերի տակից դուրս եկած խոսքով տեղը դնել յուրաքանչյուրին, ով դեմ էր գնում արդարությանը:

Եվ ահա այս մարդը, ով մեր կայքի վերլուծաբանն է ու անտարակույս իմ լավագույն ընկերը, խմբագրություն մտավ ճիշտ այն պահին, երբ ես դատարկել էի ռոմի վերջին բաժակն ու պատրաստվում էի դուրս գալ և գնալ Վաղինակին այցելության:

– Էլի մենակ-մենակ խմում ես հա՞,– ասաց նա՝ միայն իրեն հատուկ տոնով, որը չգիտես՝ կշտամբանք է, թե հումոր:

– Ինչո՞ւ մենակ,– փորձեցի արդարանալ ես,– գիտեի, որ գալու ես: Պանդան էլ քիչ առաջ այստեղ էր և խոստացավ վերադառնալ…

Վերջին լուրը Անդրեասին ակնհայտորեն անհանգստացրեց: Պանդայի անունը լսելով՝ նա զգաց մոտալուտ խրախճանքի վտանգը, որից վստահ էր՝ ո՛չ կարող է, ո՛չ էլ ուզում է (մեր մեջ ասած) խուսափել:

Վաղուց արդեն ավանդույթ էր դարձել, որ շաբաթ օրերին Պանդան գալիս էր մեր խմբագրություն ու պատրաստում իր հանրահայտ ճաշը: Այդ ճաշի համբավը վերջերս դուրս էր եկել մեր խմբագրությանը մերձ մարդկանց շրջանակից և տարածվել ողջ քաղաքում: Դա պարզապես ճաշ չէր, դա փիլիսոփայություն էր (չնայած Պանդան ասում էր, որ ճաշի նպատակն ընդամենը ինձ նախորդ՝ ուրբաթ օրվա խմածության հետևանքով անխուսափելիորեն առաջացող խումհարից հանելն է): Հատուկ այդ փիլիսոփայության համար Պանդան գնել էր մի ահռելի պղնձե կաթսա և քիչ ավելի փոքր երկրորդը: Առաջինի մեջ նա եփում էր Հայաստանում և տարածաշրջանում աճող բոլոր գյուղատնտեսական մթերքները (ընդ որում՝ թե բանջարեղենի, թե մրգերի տեսքով), իսկ երկրորդի մեջ ինչ-որ հատուկ եղանակով՝ միսը: Այնուհետև այդ ամենը խառնում էր իրար և ավելացնում գարեջուր, գինի ու էլի չգիտես ինչ: Ողջ պրոցեսը տևում էր առնվազն երեք ժամ, և այդ ընթացքում Պանդան խոհանոցից դուրս չէր գալիս ու չէր թողնում, որ որևէ մեկը մտնի խոհանոց, բացառությամբ այն պահերի, երբ կանչում էր ինձ մի բաժակ խմելու: Դա տեղի էր ունենում առնվազն հինգ անգամ, և երբ ճաշը պատրաստ էր լինում, ես հասկանալիորեն ոչ թե խումհարից էի դուրս գալիս, այլ պարզապես խմած էի լինում:

Մի խոսքով, այսօր էլ մեզ սպասվում էր նույնը և այդ մասին շատ լավ գիտեինք թե՛ ես, թե՛ Անդրեասը:

– Բայց ես եկել էի քեզ ուրիշ, շատ ավելի կարևոր մի բան ասելու,– թավ բեղերի տակից մրթմրթաց Անդրեասն այնպիսի տոնով, որ ես ակամա հարցրի.

– Ի՞նչ է պատահել. Թուրքիան ընդունել է Ցեղասպանությո՞ւնը, ԱՄՆ-ը ճանաչել է Ղարաբա՞ղը, նախագահը հրաժարակա՞ն է տվել:

– Ոչ, ավելի անհավանական մի բան. հստակ տեղեկություններ ունեմ, որ Ճանճը պատգամավոր է դառնում հանրապետականների ցուցակով:

Երբ իրենց խոսքի տերը չեն մեր երկրի շատ բարձրաստիճան պաշտոնյաները կամ պարզապես՝ ճանճը

Անկեղծ ասած, ես չէի անդրադառնա սրան այս գրքում, առավել ևս մի ամբողջ գլուխ չէի հատկացնի, եթե չլիներ մի կարևոր հանգամանք. և ուրեմն, եթե Ճանճը կարող էր դառնալ պատգամավոր, ինչո՞ւ դա չէր կարող անել Վաղինակը:

Ճանճը չնայած ուներ անուն-ազգանուն, հնարավոր է՝ նաև հայրանուն, բայցևայնպես, ես դրանք այստեղ չեմ բացահայտի: Քանի որ ես հիմնավոր կասկածներ ունեմ, որ նա նորից ինձ դատի կտա: Ճանճն արդեն երկու անգամ դա արել էր: Ավելի ստույգ՝ դատի էր տվել ոչ թե ինձ, այլ մեր լրատվամիջոցին ու անձամբ Անդրեասին: «Ճանճը փղի դարդն է լալիս». շուրջ մեկ տարի առաջ իր հոդվածներից մեկում գրել էր Անդրեասը: Այստեղից էլ մնաց անունը: Եվ հենց սա էլ եղավ պատճառներից մեկը, որ Ճանճը դատի տա մեզ՝ պահանջելով հերքում, հրապարակային ներողություն, ինչպես նաև՝ բավական խոշոր մի գումար՝ պատիվը և արժանապատվությունը ոտնահարելու համար: «Ախր պետք է մեկը պատիվ ու արժանապատվություն ունենա, որ ոտնահարես»,– ասում էր Անդրեասը: Եվ ես լիովին նրա հետ համաձայն էի: Եվ ահա մոտավորապես այս թեմայով մեր վերլուծաբանը հանդես եկավ երկրորդ հրապարակմամբ, որում ասում էր, որ արժանապատվություն ունեցող ու պատվախնդիր մարդը «սովորաբար, պաշտոնապես դիմում է խմբագրությանն ու մի բան էլ գրավոր տեքստ է ներկայացնում, որ իրեն վիրավորանք հասցրած լրատվամիջոցն այն հրապարակի որպես հերքում՝ վիրավորական հոդվածի»: Ավելորդ է ասել, որ Ճանճի մտքով նման բան նույնիսկ չէր էլ անցել: Այն ամենը, ինչ նրան անհրաժեշտ էր, ընդամենը PR-ն էր, կարևոր չէ՝ սև, թե բազմագույն: Դե իհարկե, չէր

խանգարի նաև մի քիչ փողը, մանավանդ որ այդ «մի քիչն» այնքան էլ մի քիչ չէր: Ուստի չուշացավ նաև երկրորդ հայցը: Այո, այո, Ճանճը վերցրեց ու երկրորդ անգամ դատի տվեց մեզ, այս անգամ Անդրեասի երկրորդ՝ բացատրական հոդվածի համար:

Ճանճը քաղաքականություն էր մտել վաղուց, դեռ ինչսունականների սկզբին, բայց, ինչպես նույն հրապարակման մեջ գրում էր Անդրեասը, «այդպես էլ քաղաքական գործիչ չէր դարձել»: Թեպետ, հանուն արդարության պետք է ասել, որ դրա համար ջանք ու եռանդ չէր խնայել: Լինելով գաղափարապես առողջ մի կուսակցության մեջ՝ երկար տարիներ գլուխը կախ աշխատել էր՝ այդ ընթացքում սովորելով իր առաջնորդից, ով, ինչպես և կուսակցությունը, գաղափարապես առողջ էր, պարկեշտ և սկզբունքային: Իբրև գերազանցիկ աշակերտ՝ 99-ի խորհրդարանական ընտրություններում պարգևատրվել էր պատգամավորի մանդատով և չորս տարի նստել-վեր էր կացել մարդկանց հետ, որոնց համար առաջներում ընդամենը «ջահել էր աշխատել» (ձևակերպումը Անդրեասինն է և մեզ դատի տալու պատճառներից ևս մեկը): Եվ հենց այստեղ էլ Ճանճը սկսել էր աստիճանաբար կայանալ, բայց իհարկե ոչ թե որպես քաղաքական գործիչ, այլ որպես հմուտ կամակատար և դարձյալ ոչ թե իր կուսակցության և առաջնորդի համար, այլ՝ իշխանությունների ու այսպես կոչված «գործարար» պատգամավորների: Եվ եթե իշխանությունների հետ շփումները Ճանճը կարողանում էր խնամքով թաքցնել, ապա «գործարար» (կարդացեք՝ քրեաօլիգարխիկ) պատգամավորների պարագայում նույն բանն անել չէր կարող: Հենց միայն այն պատճառով, որ ասենք, Երևանի կենտրոնում՝ Սայաթ-Նովա պողոտայում գտնվող այն ժամանակվա «էլիտար» ռեստորաններից մեկը թաքուն չես գնա: Բայց Ճանճը ոչ միայն դա չէր կարողանում թաքցնել, այլև չէր կարողանում թաքցնել իր հպարտությունը: Պետք էր տեսնել նրա դեմքի ինքնագոհ և զարմացած արտահայտությունը, երբ «Գռս» մականունով հայտնի օլիգարխի հետ իջնում էր նրա շքեղ լիմուզինից:

Կարծես այդ պահին ասում էր ինքն իրեն՝ «այս ի՞նչ եղավ գրասենյակային խեղճ ճանճիս հետ, այս ի՞նչ թռիչք կատարեցի «... Իսկ շուրջը հավաքված ու իրենց (ավելի ճիշտ՝ շքեղ լիմուզինին) նայող հասարակ մահկանացուներին ասում էր՝ տեսա՞ք, թե ինչի հասա, «Գռսի» լիմուզինն եմ նստում, և դեռ ինչե՜ր եմ անելու: Ու պետք է ասել, որ արեց. նախ դավաճանեց իր կուսակցության ղեկավարին (հայաստանյան իրականության հազվադեպ մաքուր մնացած քաղաքական գործիչներից մեկին) ու ճղճիմ հնարքներով և իշխանությունների լուռ աջակցությամբ ներկուսակցական հեղաշրջում արեց: (Հարկ է նշել, որ այդ ընթացքում մի քանի հրապարակային ապտակ ստացավ նույն այդ մարդուց՝ իր երբեմնի ուսուցչից ու նրան դատի տվեց): Եվ ահա հիմա էլ, եթե հավատալու լինեինք Անդրեասի ունեցած տեղեկություններին, ընդգրկվել էր իշխող կուսակցության համամասնական ցուցակում, ինչը նշանակում էր, որ կրկին պատգամավոր էր դառնալու:

Ահա այսպիսի՛ ճանճ:

Ինչպես արդեն ասացի, նա մեզ դատի էր տվել Անդրեասի հեղինակած մի հոդվածի համար, որը հրապարակվել էր մեր կայքում մոտ մեկ տարի առաջ: Եվ ահա, դեռևս մեկ տարի առաջ մեր վերլուծաբանը ենթադրություն էր արել, որ սույն «քաղաքական գործիչը» հավակնություններ ունի նորից խորհրդարանում հայտնվելու: «Հասկանում ենք, որ ընտրություններ են մոտենում: Բայց մի՞թե կարելի է ընտրվելու համար ինքնավաճառվել և այն էլ այդքան էժան գնով»,– հարց էր տալիս Անդրեասը խնդրո առարկա հոդվածում (հոդվածի այս հատվածը նույնպես, ըստ հայցվորի, պարունակում էր զրպարտություն): Փաստորեն, ընկերոջս կանխատեսումը մոտ էր իրականություն դառնալուն: Սխալվել էր նա միայն մի կետում. «Քաղաքական գործիչը սեփական կարծիքը պետք է ունենա և ոչ թե՝ քսմսվելու հախուռն ցանկություն: Ի դեպ, նրան (Ճանճին) ասենք, որ իշխանություններին դա հիմա դուր չի գալիս»,– այսպես էր եզրափակում հոդվածն Անդրեասը:

Ոչ, սիրելի՛ ընկեր, ինչպես տեսնում ես, իշխանություններին դա շարունակում էր դուր գալ: Կարող եմ նաև ասել, թե կոնկրետ ում: Բայց դրանից առաջ մի փոքր նախապատմություն:

Ուրեմն այն բանից հետո, երբ խմբագրության հասցեով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանից եկավ հերթական ծրարը, որի պարունակությունից պարզ դարձավ, որ Ճանճը մեզ երկրորդ անգամ է դատի տվել և այս անգամ պահանջում է նախորդից երկու անգամ ավելի գումար, ես մի քիչ զայրացա: Շատ չէ, մի քիչ: Բայցևայնպես, հասկացա, որ ժամանակն է սրա դեմն առնելու: Հո չէինք կարող շաբաթվա կեսն անցկացնել դատարաններում և սա դեռ մի կողմ, մեր ամսական բյուջեի կեսն էլ տալ փաստաբաններին, որպեսզի նրանք մեզ պաշտպանեն ճանճերից: Եվ ահա այդ ժամանակ ես հանդիպեցի մեկի հետ, ով ժամանակին եղել էր Ճանճի ղեկավարը և անխոհեմություն էր ունեցել մարդամեջ բերելու սրան: Այդ հարգարժան մարդու մասին ես խոսել եմ վերևում՝ ներկայացնելով նրան որպես մեր իրականության այն հազվադեպ քաղաքական գործիչներից մեկը, ով կարողացավ հնարավորինս մաքուր մնալ: Արդյունքում (իհարկե ոչ առանց իշխանությունների և անձամբ՝ Ճանճի գործադրած ջանքերի) ստիպված եղավ դուրս գալ քաղաքականությունից, բայց դա այլ խոսակցության թեմա է: Եվ ահա պարզելու համար, թե ինչպես վարվել իր երբեմնի վայ-աշակերտի հետ՝ ես հանդիպեցի այդ մարդուն, և նա մի չափազանց խոհեմ խորհուրդ տվեց ինձ: «Ոչ ոք չի կարող ավելի արագ լռեցնել շանը, քան նրա տերը. ուրեմն գտի՛ր տիրոջը». այսպիսին էր նրա խորհուրդը, որին ես հետևեցի և շուտով գտա այդ տիրոջը:

Այսինքն գտա նրան, ում, ինչպես իր հոդվածում գրել էր Անդրեասը, հախուռն քսմսվելու սովորություն ուներ հայցվոր Ճանճը: Եվ այդ մարդը ոչ այլ ոք էր, քան երկրի բարձրագույն ղեկավարներից մեկը. շատ բարձրագույն: Սրանից ավելի կոնկրետանալ, կներեք, չեմ կարող, որովհետև ընդհանուր առմամբ նա լավ


Appendix
Vermiformis

մարդ է, և չէի ուզի, որ տարիներ հետո, երբ մարդիկ կարդան այս գիրքը, իմանան, որ նա հովանավորել է ճանճերին:

Ես իհարկե չեմ ասում, որ շատ բարձրաստիճան այս պաշտոնյան ուրիշ վնասներ չի տվել պետությանն ու հասարակությանը: Իհարկե, դա այդպես չէ: Բավական է նշել միայն այն հանգամանքը, որ նա երկար տարիներ կանգնած էր ոչ միայն երկրի օրինական, այլև ստվերային՝ քրեաօլիգարխիկ իշխանության ամենավերևներում:

Ինչպիսի՞ ճշմարտությամբ են առաջնորդվում այս մարդիկ: Թիվ մեկ ճշմարտությունն իհարկե օրենքն է, բայց երբ սովորական բան է օրենքը բանի տեղ չդնելը, առաջ են գալիս այլ «ճշմարտություններ», որոնց դավանում են նրանք: Ցավոք, մեր պետության կազմավորման ողջ ընթացքում դա եղավ տղայական, թայֆայական, այլ կերպ ասած՝ «գողական» ճշմարտությունը: Եվ սա էլ հենց բերեց-հասցրեց երկիրն ու հասարակությանը անդունդի եզրին:

Եվ ուրեմն, «գողական» ճշմարտություն դավանող սույն շատ բարձրաստիճան պաշտոնյայի հետ ես հանդիպեցի՝ խոսելու համար իր հովանավորյալ Ճանճի մասին: Ինչպես ասացի, ընդհանուր առմամբ նա լավ մարդ էր, չնայած ինչպես պարզվեց՝ խոսքի տերը չէր: Եվ ահա թե ինչու:

Մեր հանդիպումը կայացավ նրա մարզային այցերից մեկի ժամանակ: Կանգնած էինք մի ջերմոցի առջև, ուր վարունգ էին աճեցնում (այցը նպատակ ուներ խթանել գյուղատնտեսության զարգացումը) և զրուցում էինք: Նա առաջարկեց երեքով (ինքը, Ճանճը և ես) հանդիպել իր աշխատասենյակում և «ճշտով» խոսել: Ես ասացի, որ ինքս խնդիր չունեմ, պարզապես կասկածում եմ, որ Ճանճը կգա: Պետք էր տեսնել շատ բարձրաստիճան պաշտոնյայի դեմքի արտահայտությունը, երբ լսեց իմ խոսքերը. մոտավորապես նույնը, երբ «օրենքով գողին» ասում են, թե նա անպատասխանատու հայտարարություն է անում:

Լավ էր՝ այդ պահին անվտանգության աշխատակիցների ուղեկցությամբ մոտեցավ ջերմոցի տերը՝ ձեռքին մի սկուտեղ, որի վրա

գեղարվեստորեն շարված էին մատղաշ վարունգները, ինչպես պարզվեց՝ նոր տեսակի: Զրուցակիցս վերցրեց դրանցից մեկն ու սկսեց հոտոտել: «Կհանդիպենք իմ աշխատասենյակում: Քարտուղարուհիս կզանգի ձեզ»,– ասաց նա ու կերավ վարունգը:

Քարտուղարուհին այդպես էլ չզանգեց: Առաջ ընկնելով ասեմ, որ մենք ևս մեկ տարի շարունակեցինք մնալ դատական քաշքշուկների մեջ, այնուհետև շահեցինք երկու դատերն էլ, ընդ որում՝ թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ, թե՛ վճռաբեկ դատարաններում, բայց քարտուղարուհին այդպես էլ չզանգեց:

Վաղինակի „բոմժերը„

Թերևս ժամանակն է, որ վերադառնանք մեր պատմությանը և տեսնենք, թե ինչպես է դասավորվում Վաղինակի և իմ ճակատագիրը: Ու չնայած այս ամենը շարունակում էր ինձ անմտություն թվալ, այսուհանդերձ, ես որոշել էի առաջին քայլն անել: Իսկ առաջին քայլը, բնականաբար, Վաղինակի համաձայնությունը ստանալն էր:

Աղյան փողոցում գտնվող Վաղինակի բնակարանը զանգ չուներ, իմ թակոցները մնացին անարձագանք, և քանի որ դուռը կողպված չէր, ես բացեցի այն և ներս մտա:

Տանտիրոջը գտա խոհանոցում՝ ինչ-որ մարդկանց հետ նստած: Նա նույն դիրքով էր, որով թողել էի նախորդ առավոտյան, երբ հայտարարեց իր նախագահական հավակնությունների մասին, և ես, նրան խելագարի տեղ դնելով, հեռացա: Սեղանակիցներին նայելով՝ սկզբում չհավատացի աչքերիս. «բոմժեր» էին՝ երեք տղամարդ և մի կին: Վերջինի գլխին տարօրինակ մի բան կար, որին ուշադիր նայելուց հետո միայն հասկացա, որ պիցցայի ստվարաթղթե տուփ է: Տղամարդկանցից մեկը ձմեռային կեղտոտ վերարկուով էր, երկրորդը՝ անթև շապիկով, իսկ երրորդի հագին Վաղինակի նարնջագույն պիջակն էր: Սեղանին կային պիցցայի ևս երկու ստվարաթղթե տուփեր (երկուսն էլ՝ դատարկ), մարինացված վարունգի տարա (ծառայում էր իբրև մոխրաման), ձմերուկի՝ դաժանաբար կրծած կեղևներ, կես գլուխ փտած սոխ (հավանաբար «բոմժերից» մեկի հոգապահուստից) և վիսկիի, ջինի ու օղու բազմաթիվ դատարկ շշեր, որոնց ծագումնաբանության մասին կարելի էր եզրակացություն անել՝ դատելով գետնին՝ այս ու այնտեղ թափված «Duty free»-ի տոպրակներից:

Ես առաջին հերթին բացեցի պատուհանը, որովհետև խոհանոցում գարշելի հոտ էր տարածված, հետո նոր փորձեցի գնահատել իրավիճակը:

Պետք է ասեմ, որ իմ հայտնվելը տիկինը և պարոնայք շատ էլ չկարևորեցին: Նրանք մի թռուցիկ հայացք միայն նետեցին վրաս և շարունակեցին իրենց զրույցը:

– Միևնույն է, ես կողմնակից եմ դիկտատուրային,– ասաց «բոմժերից» մեկը՝ նա, ում հագին Վաղինակի նարնջագույն պիջակն էր,– կուշտ եմ ձեր թվացյալ ժողովրդավարությունից:

– Ժողովրդավարությունը պիցցա չէ, որ ուտես, կշտանաս,– միջամտեց նա, ով նստած էր շապիկով,– ժողովրդավարությունը ավելի շուտ դառը դոշաբ է, որ պետք է պարբերաբար կուլ տաս, եթե իհարկե բուժվելու ցանկություն ունես:

– Իսկ ես կարծում եմ, որ աշխարհը կփրկի նոր համաշխարհային ջրհեղեղը,– սա արդեն ասաց նա, ով նստած էր վերարկուով:

Դե ինչ, կարելի էր փաստել, որ իմ բարեկամ Վաղինակի՝ նախագահի (ըստ իմ ծրագրերի՝ պատգամավորության) ապագա թեկնածուի քաղաքական գործունեության մեկնարկը տրված էր: Միայն թե ինչո՞ւ էր նա որոշել սկսել այն հենց բանավեճով և այն էլ՝ այսպիսի ներկայացուցչական կազմով:

Ես մոտեցա սեղանին, ու քանի որ ինձ վրա շարունակում էին ուշադրություն չդարձնել, վերցրի լիքը մնացած միակ շիշը և պարունակությունը դատարկեցի լվացարանի մեջ: Սկանդալն անխուսափելի էր. «բոմժերից» մեկը (նա, ում հագին Վաղինակի պիջակն էր) կտրուկ վեր կացավ տեղից, աջ ձեռքը դրեց սրտին և մի երկարուձիգ ոռնոց արձակեց: Մյուսը (վերարկուովը) երկու ձեռքով բռնեց գլուխը և գոռաց՝ «ա՜խ, մամա՛ ջան», իսկ երրորդը (շապիկովը) թռավ իմ կողմը և փորձում էր ձեռքիցս խլել շիշը: Ես երկար չդիմադրեցի, որովհետև այն արդեն դատարկ էր: Չգիտեմ ինչ կլիներ շարունակությունը, եթե այդ պահին չմիջամտեր տիկինը.

– Այս մարդը ԿԳԲ-ից է, ես նրան ճանաչում եմ,– ասաց նա,– եկել է՝ մեզ տանի:

Բոլորն անմիջապես սթափվեցին, իսկ շապիկով «բոմժի» ձեռքը մնաց օդում (նա բարձրացրել էր շիշը և թափահարում էր): Բայց ամենատարօրինակը Վաղինակի կեցվածքն էր. նա հերիք չէ՝ լուռ էր, մի բան էլ փակել էր աչքերը:

Տիկնոջ «բացահայտումն» ինձ ձեռնտու էր, և ես չփորձեցի էլ առարկել: «Բոմժի»՝ օդում կախված ձեռքից հանգիստ վերցրի շիշը, դրեցի այն սեղանին, հետո դիմելով Վաղինակի քաղաքական թիմին՝ ասացի.

– Բոլորիդ առայժմ հայտարարում եմ նախազգուշացում: Հաջորդը կլինի խիստ նկատողությունը, իսկ դրանից հետո… էլ չասեմ: Իսկ հիմա անմիջապես հեռանում եք այստեղից:

«Բոմժերը» սուսուփուս ենթարկվեցին: Առանց որևէ բան ասելու՝ նրանք վեր կացան և հավաքվեցին: Միայն վերարկուովը, սեղանի վրայից վերցնելով իր կես սոխը, մի խղճահարույց հայացք նետեց վրաս և հարցրեց.

– Կարո՞ղ եմ տանել դատարկ շշերը:

Ես գլխով համաձայնության նշան արեցի և անգամ օգնեցի նրան հավաքել ինվենտարը:

Երբ «բոմժերը» հեռացան, անդրադարձա Վաղինակին, ով շարունակում էր նստած մնալ նույն դիրքով, միայն թե բացել էր աչքերը:

– Դե ինչ,– ասացի,– գուցե քեզ կարգի՞ բերես. խոսելու բան կա:

Նա դանդաղ բարձրացրեց գլուխը և կմկմաց.

– Դու իսկապե՞ս «չեկիստ» ես: Միայն թե չասես, որ այս ամենն ի սկզբանե սարքված էր, և դու հատուկ էիր եկել օդանավակայան՝ ինձ դիմավորելու:

Ավելորդ է ասել, որ ինձանից լուրջ ջանքեր պահանջվեցին՝ համոզելու նրան, որ հատուկ ծառայությունների հետ որևէ կապ չունեմ, և այս ամենը զուտ պատահականության արդյունք էր: Ստիպված եղա ցույց տալ խմբագրության վկայականս, Գրողների միության

անդամատոմսս, անգամ նրա ներկայությամբ զանգեցի խմբագրությունն և բարձրախոսը միացրած՝ երկար-բարակ խոսեցի աշխատակիցների հետ: Չգիտեմ՝ այս ամենից հետո որքանով հավատաց ինձ Վաղինակը: Չէի կարող նաև դատողություններ անել նրա սթափության աստիճանի մասին: Պարզ էր, որ սթափ չէր, բայց և հարբածի տպավորություն էլ չէր թողնում: Բավականաչափ հանգիստ էր, միայն երբեմն անում էր այն ջղային շարժումները, որոնք նկատել էի դեռևս մեր առաջին հանդիպման ժամանակ:

– Ինչո՞ւ վռնդեցիր ընկերներիս,– հարցրեց Վաղինակը:

– Նրանք քո ընկերնե՞րն էին,– զարմացա ես:

– Դե, ինչպես ասեմ, դա երկար պատմություն է:

– Պատմի՛ր, ես ժամանակ ունեմ: Եվ առհասարակ, կուզեի, որ մի քիչ պատմես քո մասին. ինչպե՞ս հեռացար Հայաստանից, ինչպե՞ս հաստատվեցիր Ամերիկայում, ինչո՞վ էիր այնտեղ զբաղված և ինչո՞ւ որոշեցիր վերադառնալ:

– Ես արդեն ասել եմ քեզ, թե ինչու եմ վերադարձել:

– Այո, հիշում եմ: Եվ հենց դրա համար էլ եկել եմ: Եկել եմ խոսելու քեզ հետ, բայց տեսա այդ «բոմժերին» և ապշեցի…

– Մի՛ ասա այդպես: Դու նրանց չես ճանաչում. նրանցից մեկը պրոֆեսոր է, մյուսը՝ դերասան, երրորդը՝ ճարտարապետ, իսկ այն տիկինը գրաքննադատ է: Այս ո՞ւր հասցրիք այս երկիրը,– նա մոտեցավ պահարանին, բացեց դուռը և սկսեց ինչ-որ բան փնտրել:

– Որտեղի՞ց գտար նրանց,– շարունակեցի հետաքրքրվել ես:

– Դա երկար պատմություն է,– Վաղինակը վերադարձավ սեղանի մոտ ու կանգնեց գլխավերևումս,– դու թափեցիր վերջին շիշ օղին, հիմա ի՞նչ է լինելու:

Ես նույնպես ոտքի կանգնեցի:

– Արի՛ այսպես պայմանավորվենք. ես օղի եմ բերում, խմում ենք միասին, ու դու պատմում ես քո պատմությունը:

Ի՞նչ է „զապոյը„ կամ Վաղինակի պատմությունը

Դուրս եկա բնակարանից, մտա մոտակա խանութը և գնեցի ամենալավ օղին, որ կար այնտեղ, կարծեմ՝ «Աբսոլյուտ»: Չէի ուզում գծուծ մեկի տպավորություն թողնել ապագա պրոտեժեիս մոտ: Գնեցի նաև մի տուփ կարմիր խավիար ու կես կիլոգրամ կարմրաձուկ: Աստված առողջություն տա Պանդային:

Դելիկատեսների վրա Վաղինակը ուշադրություն չդարձրեց: Ձեռքիցս խլեց օղու շիշը, բացեց այն և լցրեց բաժակները: Եվ այստեղ ես հասկացա, որ ոչ մի խելագար էլ չէր մեր հերոսը, ու եթե անգամ նա հոգեկան խանգարում էլ ուներ, դրա պատճառը պարզապես այն էր, որ դասական (ինչպես հետո պարզվեց՝ ոչ դասական) իմաստով «զապոյիստ» էր:

Ընթերցողներից շատերի համար այս տերմինը հավանաբար անհասկանալի լինի: Հայերիս մոտ, բարեբախտաբար, երևույթը լայն տարածում չունի:

Ուրեմն փորձեմ համառոտ ներկայացնել, թե ինչ է «զապոյը»:

Այն ալկոհոլային կախվածության բարդագույն դրսևորում է, որը երբեմն կարող է ունենալ ամենացավալի հետևանքները: Ընդ որում, «զապոյներ» կարող են պատահել թե՛ սովորական ալկոհոլիկների, թե՛ ալկոհոլիզմից հեռու մարդկանց մոտ: Ամեն ինչ սովորաբար սկսվում է չափից ավելի խմիչք օգտագործելու հաջորդ առավոտյան, երբ մարդը որոշում է խումհարը վերացնել խմիչքի նոր չափաբաժնի օգնությամբ, ինչին հետևում է ալկոհոլի օգտագործման հետագա ընթացքը: Որպես հետևանք՝ ամեն հաջորդ առավոտ սկսվում է ավելի խոր խումհարով, որը վերացնելու համար կրկին անհրաժեշտ է լինում խմել: Մի խոսքով՝ այդպես շարունակ: «Զապոյները» կարող են տևել մի քանի օր, մի քանի շաբաթ, անգամ՝ մի քանի ամիս, ինչի ընթացքում մարդն աստիճանաբար

դադարում է տիրապետել իրավիճակին, և նրա միակ միտքն ու նպատակը դառնում է խմելը: Նա դադարում է գնալ աշխատանքի, մոռանում է բոլոր կարևոր գործերն ու պայմանավորվածությունները և որպես կանոն շարունակում է մնալ այն տեղում, որտեղ սկսվել է «զապոյը»: Երևույթը կարող է պատահել ամենատարբեր մարդկանց հետ, և ինչպես արդեն ասացի, բոլորովին պարտադիր չէ, որ նրանք լինեն «օրինական» հարբեցողներ: «Զապոյի» կարող են տրվել հարգարժան մարդիկ, օրինակ՝ լուրջ պաշտոնյաներ կամ արվեստագետներ: Այս կարգի մարդիկ սովորաբար գիտակցված են գնում «զապոյի»: Պատահում է նույնիսկ, որ նրանք հատուկ այս նպատակով արձակուրդ են վերցնում և մեկուսանում են ինչ-որ տեղում՝ իհարկե նախօրոք հոգալով խմիչքի անհրաժեշտ պաշարի մասին: Կարելի է ասել, որ «զապոյ մտնելը» առանձնապես բարդ բան չէ, այլ հարց է, թե ինչպես «դուրս գալ զապոյից»: Հավատացե՛ք, որ սա արդեն ավելի լուրջ գործընթաց է:

Մի խոսքով, Վաղինակն ակնհայտորեն «զապոյի մեջ էր»: Դա, բնականաբար, ինձ ձեռնտու չէր՝ նկատի ունենալով նրա հետ կապված իմ ծրագրերը: Բայց և մյուս կողմից, ավելի լավ էր գործ ունենալ խմած մարդու հետ, քան խելագարի: Այնպես որ, այս բացահայտումը կարելի էր մխիթարող համարել:

– Դու ինչ-որ բա՞ն էիր ուզում, որ քեզ պատմեմ,– ասաց Վաղինակը՝ դատարկելով առաջին բաժակը և թևքով սրբելով բերանը:

Հետո պատմեց. պատմեց, թե ինչպես է հեռացել Հայաստանից իննսունհինգին և ինչպես է ապրել Ամերիկայում ավելի քան տասնվեց տարի: Տխուր պատմություն էր: Բայց քանի որ մեր հերոսը պատրաստվում էր դառնալ պատգամավոր, կարծում եմ՝ հասարակությունն իրավունք ունի ծանոթանալ նրա կենսագրությանը, և ես ինձ թույլ կտամ համառոտ ներկայացնել այն:

Նախորդ դարի ութսունական թվականների վերջին, երբ մեր երկրում սկսվեցին ազգային զարթոնքը և անկախության պայքարը, Վաղինակը դասախոսում էր համալսարանում ու զուգահեռ

աշխատում թեկնածուական թեզի վրա՝ տեխնիկական ուղղվածության: Բայց թեկնածուականը մնաց կիսատ, որովհետև հանգամանքների բերումով հեղինակը հայտնվեց մի շրջապատում, որն առաջնորդում էր ազգային-անկախական շարժումը: Սկզբում ընդամենը օգնողի դերում էր, տարատեսակ հանձնարարություններ էր կատարում, մասնակցում որոշակի կազմակերպչական աշխատանքների: Աստիճանաբար հանձնարարությունները սկսեցին ավելի լրջանալ և ավելի ուշ, երբ ազգային-անկախական շարժումը հասավ իր նպատակին, և վերոնշյալ շրջապատի մարդիկ եկան իշխանության, Վաղինակին առաջարկեցին միջինից բարձր մի պաշտոն, որից, սակայն, նա հրաժարվեց: Սկսվել էր պատերազմը, և Վաղինակը մասնակցում էր մարտական գործողություններին սահմանամերձ շրջաններում: Երկրում տեղի ունեցող փոփոխություններին հետևում էր ռազմաճակատից և երազում պատերազմի հաղթական ավարտից հետո վերադառնալ ու զբաղվել գիտությամբ ազատ ու անկախ հայրենիքում, ուր յուրաքանչյուր մարդ կատարում է այն աշխատանքը, որ կարող է լավ կատարել: Պատերազմն ավարտվեց, հաղթանակ եղավ, Վաղինակը վերադարձավ, սակայն իրեն գտավ ոչ այն երկրում, որի մասին երազում էր: Եվ իր երբեմնի շրջապատի մարդկանց էլ գտավ մի քիչ տարբեր: Փորձեց խոսել նրանց հետ, ոմանք լսեցին, ոմանք չուզեցին լսել, ոմանք անգամ չընդունեցին համատեղ պայքարի նախկին ընկերոջը: Վաղինակի հիասթափությունը բավական խորն էր, և նա որոշեց էլի որոշ ժամանակով հետաձգել թեկնածուական թեզն ու զբաղվել քաղաքականությամբ: Նրա կենսագրության այս հատվածի վրա, սակայն, շատ չարժե սևեռվել: Արժե թերևս միայն նշել, որ քաղաքականությամբ զբաղվել Վաղինակին չթողեցին, և նրա հիասթափությունն իր գագաթնակետին հասավ ինսունհինգի խորհրդարանական ընտրությունների ժամանակ, որոնցում նա որոշել էր առաջադրել իր թեկնածությունը: Վաղինակին սկզբում համոզեցին չանել դա, հետո գործարք առաջարկեցին, հետո սպառնացին, իսկ վերջում

առևանգեցին և բաց թողեցին միայն այն ժամանակ, երբ ընտրությունները արդեն ավարտվել էին, և մեր երկիրն արել էր իր առաջին քայլը՝ դեպի ճահճացում:

Եվ հենց այստեղ էլ Վաղինակը «հանձնվեց» ու մեկնեց Միացյալ Նահանգներ: Հիասթափությունն այնչափ խորն էր, որ հայտնվելով Ամերիկայում՝ նա նախընտրեց հաստատվել մի նահանգում, ուր հայերը քիչ էին: Ընտրեց Ալաբաման և աշխատանքի անցավ Մոնթգոմերիի համալսարանում:

Առաջին տարիներին ամեն ինչ հրաշալի էր: Ուներ բարձր վարձատրվող աշխատանք համալսարանի լաբորատորիայում (անգամ մի գյուտ էր հեղինակել, որի համար ստացել էր չափազանց մեծ գումար), առանց գլխացավանքների ստացել էր կեցության իրավունք (գրին քարտ), ամուսնացել կարմիր այտերով մի յանկիի հետ, հիփոթեքով ձեռք էր բերել տուն, որի պարտեզում շաբաթավերջերին (ուիքէնդ) խորոված (բարբիքյու) էր անում, ապառիկով (լիզինգ) գնել էր բոլորովին նոր մի «Բյուիկ»: Մի խոսքով, չափազանց ամերիկյան էր ամեն ինչ և հավանաբար այդպես էլ շարունակվեր, եթե մի օր աշխատանքի բերումով Վաղինակը չմեկներ Կալիֆոռնիա՝ Լոս Անջելես: Այստեղ նա հանդիպեց մի քանի հին ծանոթների և ընկերների, ու երեք օր նախատեսված գործուղումը տևեց երեք շաբաթ (արժե՞ արդյոք ասել, թե ինչ էր անում մեր հերոսն այդ երեք շաբաթների ընթացքում): Մոնթգոմերի վերադառնալով և կնոջ ու համալսարանական լաբորատորիայի ղեկավարության հետ լուրջ խոսակցություն ունենալով՝ Վաղինակը խոստացավ ինքն իրեն այլևս ոտք չդնել Կալիֆոռնիա: Խոստումը պահեց մի քանի տարի: Ճիշտ է, երբեմն խմում էր, բայց միայն կիրակի օրերը և չափավոր: Ամեն ինչ նորից խառնվեց 2004-ին, երբ Վաշինգտոնում հանդիպեց Հայաստանի մի պաշտոնական պատվիրակության, որի կազմից որոշ մարդկանց ճանաչում էր: Նրանց հետ մի ամբողջ օր խմեց Հայաստանի դեսպանատանը և նրանց միջնորդությամբ երկու օրում ստացավ Հայաստանի Հանրապետության նոր անձնագիր



1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31

Запой

(արդեն գործում էր երկքաղաքացիության մասին օրենքը)։ Հետո ևս մի քանի շաբաթ մնաց մայրաքաղաքում (ընդ որում, պատվիրակությունը վաղուց արդեն մեկնել էր, մինչդեռ նա շարունակում էր մենակ խմել)։ Տուն՝ Մոնթգոմերի, այս անգամ նրան տեղափոխեց կինը և համալսարանի լաբորատորիայի ղեկավարության հետ շատ կտրուկ դրեց հարցը՝ կա՛մ ընտանիքն ու աշխատանքը, կա՛մ խմելը։ Վաղինակն իհարկե ընտրեց առաջինը, բայց պարզվեց, որ այլևս ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ։ Կիրակնօրյա «բարբիքյուներից» հետո սկսեց երկուշաբթի օրերը արթնանալ ծանր գլխացավերով և դեռևս հիփոթեքի մեջ գտնվող տան ավտոտնակում՝ «Բյուիկի» կողքին սկսեցին բազմանալ «Ձեք Դենիելսի» դատարկ շշերը։

Համալսարանի լաբորատորիայից Վաղինակին հեռացրին մեկ տարի անց։ Կինը դիմացավ ևս երկու տարի և բաժանվեց։ Մնացածը հետաքրքիր չէ։ Արժե թերևս հավելել միայն այն, որ վերջին չորս տարիներին Վաղինակը ապրում էր կայուն «զապոյիստի» կյանքով՝ մի քանի ամիս խմում էր, մի քանի ամիս զբաղվում գիտական աշխատանքով։ Թե ինչ «գիտական աշխատանք» էր դա, նա չասաց, միայն ասաց, որ փողի խնդիր ինքը, բարեբախտաբար, չունի, որովհետև շնորհիվ իր արած գյուտի խնայողություններն այնքան են, որ կհերիքեն մի քանի կյանքի համար։ Իսկ նրա՝ Հայաստան այցը բնականաբար համընկել էր խմելու «միքանիամսյակին», որ մեկնարկել էր Մոնթգոմերիի մի պանդոկում, շարունակվել Մոնթգոմերի-Ցինցինատի-Նյու Յորք-Մոսկվա չվերթի ինքնաթիռներում և ահա հասել հայրենիք՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Աղայան փողոց 19/1…

Թե ինչպես ես համոզեցի Վաղինակին դառնալ պատգամավոր

– Ահա և վե՛րջ, ես հիմա իմ տանն եմ,– այսպես ավարտեց իր պատմությունը Վաղինակը,– ի դեպ, չգիտե՞ս՝ ինչ է պետք անել, որ հոսանքը միացնեն:

– Ինչի՞դ է պետք հոսանքը, եթե պիտի շարունակես խմել:

– Ճիշտ ես ասում: Միայն թե ո՞վ ասաց, որ ես խմում եմ:

– Իսկ ի՞նչ է սա կոչվում:

– Տարբեր բաներ են խմելը և խմելը, բարեկա՛մս: Խմել էլ կա, խմել էլ: Եվ հիմա ես ոչ թե խմում եմ, այլ՝ խմում:

– Ընդունենք, որ հասկացա: Բայցևայնպես, ես մի առաջարկ ունեմ քեզ, որին համաձայնելու դեպքում ո՛չ պետք է խմես, ո՛չ էլ՝ խմես:

– Դու իսկապես կարծում ես, որ այնպիսի առաջարկ կարող ես ինձ անել, որ ես դադարեցնե՞մ խմելը:

– Կարծում եմ, որ կարող եմ. հիշո՞ւմ ես, դու խոսում էիր քո նախագահական հավակնությունների մասին:

– Իհարկե հիշում եմ: Եվ ես ամենևին էլ չեմ հրաժարվել այդ հավակնություններից: Միայն թե ինչո՞ւ է քեզ թվում, թե խմած վիճակում չի կարելի հավակնել նախագահի աթոռին: Եվ գուցե իմ նպատակը հենց այն է, որ ժողովուրդը հասկանա իրականության ողջ զավեշտը:

Չնայած ես համոզված էի, որ աթոռն ինքը այստեղ ոչ մի մեղք չունի, ժողովուրդն՝ առավել ևս, բայցևայնպես, ինձ դուր եկավ Վաղինակի անկեղծությունը: Միայն թե ժամանակն էր անցնել բուն գործին և Վաղինակին նախագահականի փոխարեն առաջարկել պատգամավորական աթոռ: Ես իհարկե գիտակցում էի, որ իմ այս ավանտյուրայով կարող էի վատ դրության մեջ դնել մի

ազնիվ ու հայրենասեր մարդու: Բայց մյուս կողմից փորձում էի ինձ արդարացնել նրանով, որ այդ մարդն ինքը ոչ միայն դեմ չէր՝ ներքաշվել նման ավանտյուրայի մեջ, այլև նախաձեռնությունն ի սկզբանե իրենն էր, ընդ որում՝ ավելի բարձր մակարդակով: Չէ՞ որ Վաղինակն ինքն էր ինձ առաջարկում արկածներ:

Բայց, ինչ խոսք, այս ամենի մեջ մտնելու համար ես ունեի շատ ավելի հիմնավոր պատճառ՝ Կատյան:

– Հիշո՞ւմ ես, դու ասում էիր, որ իմ օգնության կարիքն ունես,– հարցրի Վաղինակին:

– Այո՛, և որքան որ հասկանում եմ, դու որոշել ես համաձայնել,– նա խորամանկորեն ժպտաց:

– Մասամբ: Ես կհամաձայնեմ օգնել քեզ, եթե մենք մի փոքր խմբագրենք քո հավակնությունը:

– Այսի՞նքն, ինչ է նշանակում խմբագրել:

– Եթե դու հավակնես ոչ թե նախագահի աթոռին, այլ պատգամավորի մանդատին. ի՞նչ կարծիքի ես:

– Իմ ինչի՞ն է պետք պատգամավորի մանդատը:

– Իսկ ինչի՞դ է պետք նախագահի աթոռը:

– Չէ՞ որ ես արդեն ասացի: Ես հո վերջնականապես չե՞մ ցնդել, որ մտածեմ, թե կարող եմ նախագահ դառնալ: Պարզապես ուզում եմ մի քիչ ծիծաղել ու հեռանալ: Այս երկրում, հավատա՛, ո՛չ ես, ո՛չ դու, ո՛չ էլ որևէ մեկն այս սերնդից ոչինչ փոխել չենք կարող:

Պետք է ասեմ, որ ես լավ չէի հասկանում Վաղինակին: Ավելի ճիշտ՝ չէի հասկանում, թե երբ է նրա մեջ խոսում նախկին այլախոհն ու գիտնականը, երբ՝ հոգեկան շեղում ունեցող «զապոյիստը»: Չափազանց մեծ էր այդ երկու կերպարների հակասությունը, չափազանց հաճախ էր տեղի ունենում նրա մեջ այդ տարօրինակ անցումը անլուրջից լրջի, անիմաստ խոսքերից՝ խոհեմ մտքերի: Եվ այս հանգամանքն ավելի շատ խանգարում էր, քան օգնում: Ես չգիտեի՝ ինչպես խոսել նրա հետ՝ ինչպես հասուն մարդո՞ւ, թե՞ ինչպես երեխայի, ինչպես լրջամիտի՞, թե՞ ինչպես ցնդածի:

Բայցևայնպես, պետք էր ստանալ նրա համաձայնությունը, ինչ ձևով էլ որ դա լիներ: Եվ ես որոշեցի առանց այլևայլությունների անցնել բուն գործին:

– Շուտով խորհրդարանական ընտրություններ են, տեղյա՞կ ես,– հարցրի:

– Գիտեմ, որ շուտով նախագահական ընտրություններ են:

– Նախագահական ընտրությունները մեկ ու կես տարուց են, իսկ խորհրդարանականը՝ կես:

– Ինձ հետաքրքրում են նախագահական ընտրությունները: Եվ ես հենց դրա համար եմ վերադարձել, որ մասնակցեմ: Ընդ որում, ես նպատակ չունեմ հրապարակ դուրս գալ, նախընտրական քարոզչությամբ զբաղվել, ասուլիսներ տալ, ելույթներ ունենալ: Հակառակը, ես պատրաստվում եմ առաջադրվել, ապա նստել տանը և խմել:

– Եվ ի՞նչ կարող ես դու այդպես ապացուցել:

– Հասկացողը կհասկանա: Միայն ասեմ, որ իմ մեջ թույն չկա, վրեժի զգացողություն՝ առավել ևս: Ես ընդամենը ուզում եմ ծաղրել այս իրականությունը:

– Հրաշալի միտք է, բայց անիրագործելի:

– Ինչո՞ւ է անիրագործելի:

– Որովհետև ասելիքդ տեղ չի հասնի: Կան բազմաթիվ այլ պատճառներ, բայց բերեմ ընդամենը մեկը. բացառված է, որ քեզ գրանցեն իբրև նախագահի թեկնածու այն պարզ պատճառով, որ դու վերջին տասը տարիներին ոչ միայն մշտապես, այլև ընդհանրապես չես բնակվել Հայաստանում:

– Ի՞նչ անենք, մի տեղեկանքի եղածն ի՞նչ է որ: Այդպի՞սի բաներ են կեղծում այստեղ:

– Համաձայն եմ, կեղծվում են, բայց սա այդ դեպքը չէ:

– Եթե այդպես է, ինչպե՞ս ես առաջարկում ինձ մասնակցել խորհրդարանական ընտրություններին: Կարծեմ այնտեղ էլ կա բնակության վերաբերյալ նման պահանջ:

– Այո՛, այնտեղ էլ կա, բայց եթե մենք կարողանանք այնպես անել, որ դու խցկվես իշխանական կուսակցություններից մեկի համամասնական ցուցակ, այդ դեպքում կարելի է մի տեղեկանք վերցնել, և ոչ ոք ուշադրություն չի դարձնի այդ տեղեկանքի վրա: Ես դեռ չեմ որոշել, թե որ ցուցակում և ինչպես, բայց դեռ ժամանակ կա: Նախ, կարևոր է ստանալ քո համաձայնությունը:

– Ես չեմ ուզում ոչ մի տեղ «խցկվել»:

Վաղինակը կարծես վիրավորվեց այդ բառից: Նա վեր կացավ, մոտեցավ պատշգամբի դռանը և փորձեց բացել այն: Տասնվեց տարի փակ մնացած դուռը, բնականաբար, հեշտ չենթարկվեց, և ես ստիպված էի օգնել: Երբ դուռը վերջապես տեղի տվեց, նա դուրս եկավ պատշգամբ: Ես հետևեցի նրան: Այստեղ նույնպես իննսունա-կաններն էին. մի կողմում խնամքով շարված էր կոտրատված վառե-լափայտը, ժանգոտած կացինն ընկած էր գետնին, մյուս կողմում մի քանդված «Ռիգա» լվացքի մեքենա կար, երկու զույգ զինվորական կրկնակոշիկ, խառը գործիքներով մի մեծ տուփ, նավթի մի դատարկ ու կեղտոտ պլաստմասսե տարա և ավտոմեքենայի մի մարտկոց:

Ի՜նչ ժամանակներն էին: Երբեմն թվում է, թե դա մեր կյանքում չի եղել: Ասենք ինչ-որ ֆիլմում ենք տեսել: Թվում է, թե տարիներ էին, անցան-գնացին: Ու մեր հիշողության մեջ մնացին սոսկ իբրև կադրեր: Ի՞նչ թողեցինք մենք այդ ժամանակներում, ի՞նչ վերցրինք այնտեղից: Ահա, այս բնակարանը, այս պատշգամբը, որ գզրոցում կորած մի հին լուսանկարի նման հիշողություններ են արթնացնում: Տխուր ու ցավոտ հիշողություններ: Բայց դրանք ցուրտն ու մութը չեն, այլ հավատի կորուստը: Որովհետև մեր ժողովուրդը պատրաստ էր ամեն ինչ հասկանալ ու տանել՝ և՛ զրկանքները, և՛ դժվարությունները, և՛ անկումները, և՛ կորուստները. բայց ժողովուրդը չհասկացավ մի բան՝ թե ինչու այդ ամենը չապրեց իշխանավորների հետ միասին:

– Այս ի՞նչ են կառուցում այստեղ,– հարցրեց Վաղինակը՝ ցույց տալով Սայաթ-Նովա Աբովյան խաչմերուկի մոտ գտնվող Սուրբ Հովհաննես եկեղեցու մոտ իրականացվող շինարարության կողմը:

– Կաթողիկոսի երևանյան նստավայրը:

– Իսկապե՞ս,– զարմացավ նա,– ինձ թվաց՝ հյուրանոց է:

Քիչ էր մնում՝ բերանիցս մի բան թռցնեի, բայց լավ է՝ զսպեցի ինձ ու փոխարենը խաչակնքվեցի: Մենք էլի որոշ ժամանակ կանգնած մնացինք պատշգամբում, հետո երբ վերադարձանք ներս, Վաղինակն անսպասելի հարցրեց.

– Իսկ կարելի՞ է իմանալ, թե որն է քո շահը: Ինչո՞ւ ես դու ուզում, որ ես մասնակցեմ խորհրդարանական ընտրություններին:

Անկեղծ ասած՝ ես հանկարծակիի եկա և չգիտեի, թե ինչ պատասխանել: Ճշմարտությունն ասել՝ կնշանակեր ծաղրել նրան. ավելի լավ է, թող իմանար, որ ես ուզում եմ ծաղրել ոչ թե իրեն, այլ, ինչպես և ինքը՝ ծաղրել մեր իրականությունը: Այդպես էլ ասացի:

Նա մի պահ մտածեց, ապա ծիծաղեց և լցրեց բաժակները.

– Դե ինչ, պատգամավոր՝ ուրեմն պատգամավոր, համարի՛ր, որ ինձ համոզեցիր: Միայն թե մի պայմանով. ես ոչ մի բանի չեմ խառնվում, և եթե անգամ այս ամենը ստացվի, ինչին, վստահ եմ, երկուսս էլ խիստ կասկածում ենք, ես հրաժարվում եմ մանդատից:

Մենք խփեցինք բաժակները, խմեցինք ու հետո իրար ձեռք սեղմեցինք:

Մշկե՞նք մե հադըմ

– Մշկե՞նք մե հադըմ,– հարցրեց Վասյան՝ պիջակիս ծոցագրպանից հանելով տափաշիշս:

Նա իհարկե գիտեր՝ երբ իմ ծոցագրպանում տափաշիշ կա և երբ՝ ոչ: Վասյան իմ ընկերն էր, իսկ «մշկել», ինչպես վստահ եմ, հասկացաք, նշանակում էր խմել: Ասում էին, որ այդ բառը ես էի հորինել, չնայած հաստատ չէի հիշում: Համենայնդեպս, եթե անգամ դա այդպես էր, այն վաղուց արդեն ավելի շատ օգտագործում էին Վասյան և մյուսները, քան ես: Դե ինչ, ես բոլորովին դեմ չէի:

Բայց ովքե՞ր էին Վասյան և մյուսները: Եթե չեմ սխալվում, այս գրքում ես արդեն առիթներ ունեցել եմ ասելու, որ ընկերների հարցում կյանքն իմ հանդեպ շռայլ էր գտնվել: Եվ ահա, Վասյան և մյուսները նրանց թվում էին: Նրանք չորսն էին, բայց մյուս երեքի անունները ես չեմ տա: Վասյային այս դեպքում կարող եք համարել հավաքական կերպար, որ ներկայացնում է ողջ իրենց խումբը, ռոք խումբը, որ կոչվում էր... Սակայն ես խմբի անունն էլ չեմ տա: Միայն ասեմ, որ նրանք, անտարակույս, իմ լավագույն ընկերներն էին:

Սա մարդու, մտավորականի, քաղաքացու բոլորովին այլ տեսակ է: Այս տեսակը ունի իր սեփական, բացառիկ ճշմարտությունը, որը մի բառով կոչվում է ազատություն: Ազատությունն է նրանց սերը, ազատությունն է նրանց հավատը, ազատությունն է նրանց հայրենիքը: Նրանք այդ ազատության կրողներն են ու փոխանցողները: Հենց փոխանցողները և ոչ թե պարտադրողները: Ու դա լավ ազատություն է, հավատացե՛ք: Դա այն ազատությունն է, որ ունի սահմաններ, որքան էլ որ դա հակասական է հնչում: Միայն թե այդ սահմանները տարածական չեն բոլորովին, այլ

փիլիսոփայական, այն է՝ դու ազատ ես այնքան ժամանակ, քանի դեռ այդ ազատությունը սիրուն է ու ազնիվ:

Տիկնիկային թատրոնի դահլիճը դեռ դատարկ էր, համերգը սկսվելու էր մեկ ժամ հետո միայն, և վասյաները զբաղված էին ինչ-որ տեխնիկական մանրուքներով: Միայն ժամանակ առ ժամանակ մոտենում էին ինձ, վերցնում տափաշիշս, մի կում անում ու վերադառնում իրենց գործին: Ես նստած էի վերջին շարքում՝ ձեռքիս նոթատետրս ու գրիչս, ու փորձում էի կազմել հետագա գործողություններիս ծրագիրը: Այն բանից հետո, երբ ստացել էի Վաղինակի համաձայնությունը, մնում էր որոշել, թե որ կուսակցության ցուցակն ենք նրան խցկում (որքան էլ որ Վաղինակն ինքն այդ բառը չհավաներ) և անցնել գործի: Միայն թե դա այդքան էլ հեշտ չէր որոշել: Ես արդեն երկրորդ օրն էի գլուխ կոտրում այս հարցի վրա և ոչ մի կերպ չէի կարողանում վերջնական որոշման հանգել:

Լավ երաժշտությունն ինձ միշտ օգնում է մտածել, երբ կանգնած եմ մի բարդ ստեղծագործական խնդրի առջև: Երբ, ասենք, խմբագրությունում նստած եմ համակարգչիս մոտ ու զգում եմ, որ տողը համառորեն կիսատ է մնում, դնում եմ ականջակալներն ու միացնում, ասենք, Ջեթրո Թալի «Ակվալանգը»: Երբ քիչ ավելի բարդ է իրավիճակը, և կիսատ է մնացել ոչ թե ընդամենը տողը, այլ գաղափարը, գնում եմ իմ սիրելի սրճարաններից մեկը, նստում բարի կանգնաթոռին ու խնդրում բարմենին միացնել ասենք Փինք Ֆլոյդ: Օգնում է:

Մինչդեռ սա բոլորովին այլ դեպք էր: Եվ ահա, ես որոշել էի ապավինել կենդանի երաժշտության օգնությանը:

Վասյաներից մեկը կանգնել էր բեմի կենտրոնում և ստուգում էր իր կիթառի ձայնը: Այն ինձ հիշեցնում էր վիրավոր շան կաղկանձ: Մյուսներն ինչ-որ բաներ էին տեղափոխում այս ու այն կողմ ու անընդհատ շարժման մեջ էին: Դահլիճի դռների արանքում կանգնած էին խմբի երկու դեռատի երկրպագուհիներ և հավանաբար տատանվում էին՝ ներս մտնել, թե ոչ: Հավաքարարը, լաթի

կտորը ձեռքին, անցնում էր շարքից շարք և մաքրում նստատեղերի թիկնակները: Ինչ-որ մեկը չգիտես որտեղից անջատում ու միացնում էր առաստաղից կախված տարատեսակ լույսերը՝ մի տեսակ անիրական դարձնելով նախահամերգային այս մթնոլորտը:

Շան կաղկանձը վերջապես դադարեց, և կիթառն աստիճանաբար սկսեց նվագել իր ողջ ձայնով: Հետո հաջորդիվ միացան ֆլեյտան, բաս-կիթառն ու հարվածային գործիքները: Որքան տարբեր է մի գործիքն առանձին և որքան տարբեր է ուրիշ գործիքների հետ: Շեմին կանգնած աղջիկները մտան դահլիճ: Պառավ հավաքարարը շարունակեց անել իր գործը, բայց արդեն տակտով, կարծես պարելով և հենց այստեղ էլ՝ թարթող լույսերի տակ, իմ գլխում միտք ծագեց:

Ոչ թե մեկը, այլ բոլորը: Վաղինակին պետք էր «խցկել» ոչ թե մեկ, այլ բոլոր կուսակցությունների նախընտրական ցուցակներ: Այ թե բան կստացվեր: Սա արդեն կլիներ գործ: Կատյան իր հերթին, բայց սա արդեն բոլորովին այլ թեմա էր: Այստեղ կար և՛ գաղափար, և՛ անհնազանդություն, և՛ կռիվ: Ես փաստորեն ապացուցում էի, որ Հայաստանում չկար քաղաքականություն, և չկային քաղաքական կուսակցություններ: Կար պարզապես առևտուր ու կային անձնական կամ լավագույն դեպքում՝ խմբակային շահ հետապնդող կազմակերպություններ: Ընդ որում, առևտուրը կարելի էր բաժանել երեք մասի. խոշոր, միջին և մանր: Խոշոր առևտուրը կազմակերպությունների (քաղաքական ուժերի) միջև էր, միջինը՝ կազմակերպությունների ներսում, իսկ մանր առևտուրը տարվում էր բացառապես ժողովրդի հետ: Եվ սա այն էր, ինչ մենք տեսնում էինք արդեն տասնվեց տարի, այսինքն՝ ինսունհինգ թվականից:

Եվ ինչ է, չարժե՞ր այս առևտրական կազմակերպությունների գլխին մի խաղ խաղալ: Իսկ խաղը կարող էր լինել հետևյալը. մեկը, որ հերիք չէ՝ ընտրվելու իրավունք չուներ, այլ նաև «զապոյիստ էր» և տվյալ պահին գտնվում էր «զապոյի» մեջ, տարատեսակ գործարքների ու պայմանավորվածությունների օգնությամբ

խորհրդարան էր անցնում միաժամանակ բոլոր կուսակցություն-ների համամասնական ցուցակներով:

Ուրեմն՝ գործողության ծրագիրը կազմված էր, մնում էր անցնել այն իրագործելուն: Դե ինչ, չմշկե՞նք մե հադըմ: Ես ծոցագրպանիցս հանեցի տափաշիշը, բայց այն արդեն դատարկ էր:

Թե ինչ կլինի, եթե Երկիր մոլորակից վերանա վերջին կինը, կամ սամուրայները մահանում են, բայց չեն հանձնվում

Համերգից հետո մենք գնացինք վասյաներից մեկի տուն: Ես սիրում եմ այդ տունը և հաճախ եմ լինում այնտեղ: Սովորական տուն է՝ քաղաքի սովորական ծայրամասում, սովորական պատերով ու սովորական պարտեզով: Պարզապես մի յուրահատուկ մթնոլորտ կա այնտեղ միշտ, որը տրամադրում է ամբողջովին լիցքաթափվելու և լավ զգալու:

Բայց այս անգամ ես ինձ կրկնակի լավ էի զգում, որովհետև մեզ հետ էր Կատյան: Նա մեզ էր միացել համերգից հետո:

– Պարզ է: Որքան հասկանում եմ, իմ բարձր կրունկներն այստեղ տեղին չեն,– հայտարարեց Կատյան՝ արագ գնահատելով իրավիճակը:

Իսկ իրավիճակը հետևյալն էր: Բոլոր հյուրերը հարմարավետ տեղավորվել էին Վասյայի տան պարտեզում՝ հենց խոտերի վրա:

– Եթե ուզում ես, կարող ենք գնալ,– մի քիչ նեղացած ասացի ես:

– Բոլորովին: «Խոտային afterparty»-ի գաղափարն ինձ դուր է գալիս:

Կատյան առանց վարանելու հանեց կոշիկները, մի քիչ հիացավ սև զուգագուլպաների մեջ պարուրված իր փոքրիկ ոտքերով և միացավ հյուրերին: Ես հետևեցի նրա օրինակին:

– Ի՞նչ ենք խմելու,– հարցրեց նա:

– Այսօր մենյուի մեջ միայն օղի է,– հայտարարեց Վասյան և փոխանցեց մեզ օղու բաժակները:

Որոշ ժամանակ անց Կատյան ասաց, որ մրսում է:

– Ծառերի տակ ճոճացանց եմ տեսել: Արի՛ գնանք այնտեղ:

Լքեցինք խոտերի վրա նստած, պառկած ու գրկախառնված հյուրերին և տեղավորվեցինք ճոճացանցում: Դանդաղ ճոճվում էինք ու լռում: Կատյան շարունակում էր դողալ, հետո հպվեց ինձ, հարմար տեղավորվեց ուսիս՝ այնպես, որ պարանոցիս զգում էի նրա շնչառությունը: Աշխատում էի չշարժվել, որ հանկարծ չխախտեմ պահի երանությունը: Սովորաբար Կատյան սիրում էր խոսել, ինչպես ինքն էր ասում՝ «բլբլալ»: Երբ նա չէր «բլբլում», նշանակում էր, որ տխուր է կամ մտահոգ, կամ՝ երկուսը միասին: Նրա թեմաների ընտրությունը շատ տարբեր էր ու սովորաբար առանց տրամաբանական անցումների: Կարող էր շատ լուրջ սկսել խոսել Նիցշեից, կյանքից, մահից, հավերժությունից ու հանկարծ առանց որևէ նախազգուշացման անմիջապես կտրուկ անցում կատարել և սկսել պատմել հերթական խանութում տեսած մի պստլիկ զգեստի մասին: Ընդ որում, նույն ոգևորությամբ, ինչպես որ քիչ առաջ խոսում էր Նիցշեի գերմարդու մասին: Ինձ նա մեղադրում էր սակավախոսության մեջ և ասում, որ երբեք չի հանդիպել այդքան քչախոս գրողի:

«Դու ոչ թե գրող ես, այլ տրամվայի վարորդ: Շարքային տղամարդն օրական արտասանում է մոտավորապես 4 հազար բառ, իսկ դու սահմանափակվում ես չորս հարյուրով»:

Ի պատասխան իմ հարցին, թե քանի բառ է արտասանում շարքային կինը, նա հայտարարեց, որ 25 հազար: Երբ տեսավ ցնցված դեմքս, շտապեց հանգստացնել ինձ:

«Մի՛ մտածիր, ես շարքային կին չեմ, այդ ողորմելի 25 հազար բառը ես օգտագործում եմ մինչև լանչը»:

Ես գրկել էի նրան և երազում էի, որ այդ պահը հնարավորինս երկար ձգվի: Աստիճանաբար Կատյան տաքացավ ու սկսեց շարժվել: Հոգու խորքում ափսոսանքով հոգոց հանեցի, քանի որ դա նշանակում էր, որ հիմա նա նորից կսկսի խոսել, իսկ այդ պահին ես բոլորովին տրամադրված չէի զրույցների: Հագուստի տակից զգում էի նրա մարմնի ջերմությունը: Այն դանդաղ ներծծվեց վերնաշապիկիս մեջ, հետո հասավ մաշկիս, թափանցեց արյանս մեջ

ու արյան հետ իջավ դեպի ներքև… Կատյան անմիջապես զգաց իմ վիճակը: Բայց ի զարմանս ինձ՝ չծիծաղեց իր սովորության համաձայն: Ուշադիր նայեց աչքերիս մեջ ու ասաց.

– Գիտես, ես միշտ մրսում եմ: Ահավոր մրսկան եմ: Տաքանում եմ միայն, երբ կողքիս տղամարդ է լինում: Սիրում եմ տղամարդկանց: Աշխարհի ամենաուժեղ, ամենատաք, ամենամիամիտ և միևնույն ժամանակ ամենաստոր արարածներն են: Հենց այդ հերթականությամբ:

– Վերջինի հետ համաձայն չեմ:

– Իզուր: Տղամարդիկ իմ հոբբին են և ուսումնասիրության առարկան: Դա զգալի թեթևացնում է կյանքը: Կարողանում ես առասպելներն իրականությունից տարբերել:

– Եվ ո՞րն է տղամարդկանց մասին ամենամեծ առասպելը:

– Այն, որ տղամարդիկ ուժեղ սեռ են: Բոլոր ժամանակների մեծագույն առասպելն է: Հանկարծ չմտածես, թե չբավարարված ֆեմինիստուհի եմ: Ատում եմ բոլոր տեսակի սուֆրաժիզմներն ու ֆեմինիզմները:

– Դու բավական գոհ ու բավարարված տեսք ունես,– ընդհատեցի ես:– Էլ ի՞նչ գիտես մեր մասին:

– Վստահաբար գիտեմ այն, որ երբ Երկիր մոլորակի երեսից վերանա վերջին կինը, արևն այլևս չի ծագի: Հավերժական գիշեր կլինի, ու տղամարդիկ՝ միայնակ, լքված, գայլերի պես երկար-երկար կոռնան աստղերի տակ, իսկ հետո կխելագարվեն… Հավերժական աստղերից, կարոտից, սիրուց, մենությունից ու սպերմատոքսիկոզից:

– Բավականին ռոմանտիկ սկսել էիր, ես անգամ վախեցա: Բայց լավ է, վերջում վերադարձար քո ոճին:

– Մի՛ ծաղրիր: Կանանց ցինիզմի մեջ մեղավոր են միայն տղամարդիկ: Բայց դա փաստ է. տղամարդը չի կարող ապրել առանց կնոջ:

– Իսկ կինը կարո՞ղ է: Կարո՞ղ է ապրել առանց տղամարդու:

– Նայած կին: Բայց հաստատ կանայք չեն խելագարվի առանց տղամարդկանց:

– Իսկ դու առանց ինձ կարո՞ղ ես:

– Դու ուսումնասիրության և հետազոտության բավականին հետաքրքիր նմուշ ես,– պատասխանից խուսափեց Կատյան:

– Իսկ եթե ես հաղթեմ գրազը ու չպահանջեմ կատարել պայմանը՝ թողնելով այն քո հայեցողությանը, ի՞նչ կանես:

– Չեմ հարգի քեզ,– ծիծաղեց նա:– Սիրում եմ այս երգը:

– Ի՞նչ երգ:

Նոր միայն նկատեցի, որ մինչ մենք փորձում էինք տարբերել առասպելն իրականությունից, Վասյաներից մեկը կիթառ էր բերել ու նվագում էր «Բիթլզի» «Բլեքբըրդը»:

– Այսուհետ ամեն անգամ այս երգը լսելիս, ես կհիշեմ քեզ: Արի՛ պայմանավորվենք, որ դու էլ այս երգը լսելիս միշտ կհիշես ինձ: Թող սա լինի մեր երգը:

– «Մեր երգը» արտահայտությունը բավականին հուսադրող է մեր հետագա հարաբերությունների զարգացման ենթատեքստում: Բայց այս նախադասության մեջ ինձ դուր չի գալիս «հիշել» բառը: Մի տեսակ անցյալում թողած հուշերի հոտ է գալիս:

– Դու մոռանում ես, որ ոչինչ հավերժ չէ լուսնի ու արևի տակ: Ամեն ինչ, որ ունենում է սկիզբ, ունենում է նաև վերջ:

– Դու մի՞շտ ես այսքան զգոն, թե՞ միայն ինձ հետ:

– Միշտ: Բայց քեզ հետ հատկապես: Սամուրայները միշտ պատրաստ են մահի՝ արթուն, թե քնած: Իսկ ես միշտ պատրաստ եմ նրան, որ անգամ ամենախելագար սերերն ավարտվում են կա՛մ անկողնում, կա՛մ ամուսնական առագաստում, կա՛մ դատարանում: Եթե կանանց գոնե 50 տոկոսը անձնական հարաբերություններում սամուրայների բանաձևը միշտ աչքի առջև ունենար, հավատացնում եմ՝ հոգեբանները գործազուրկ կմնային:

– Դու ավելի շատ փոքրիկ գեյշայի ես նման, քան սամուրայի: Բայց չասացիր, ինչո՞ւ հատկապես ինձ հետ ես զգոն:

– Որովհետև ինձ մոտ ֆանտաստիկ զարգացած է ինտուիցիան:

– Եվ…

– Եվ դա նշանակում է, որ իմ ինտուիցիան հուշում է ինձ զգուշանալ քեզնից: Քանի որ մեծ հավանականություն կա, որ դու կկոտրես իմ անառիկ սրտիկը, ու ինձ չի փրկի սամարոյական ոչ մի բանաձև: Չնայած մի քիչ դժվար եմ ինձ պատերացնում հոգեբանի սենյակում աղիողորմ ոռնալիս կամ «Ֆեյսբուքում» տղամարդկանց մասին սադիստական ստատուսներ գրելիս:

– Անկեղծ ասած, ես էլ…

– Լավ, ուշ է արդեն: Ինձ տուն ճանապարհի՛ր, նորից սկսում եմ սառչել:

– Առաջարկում եմ մնալ այստեղ, քանի որ տանը կարգավիճակը վառարանի փոխած տղամարդ չկա, որքան գիտեմ: Չէ՞ որ դու ես ասում՝ տաքանում եմ միայն տղամարդկանց կողքին,– «ճոճացանցային նիրվանաս» փորձեցի երկարաձգել ես:

– Ես ունեմ անձնական օգտագործման որձ էլդերտերիեր…

Մեքենան վարում էի ձախ ձեռքով. աջով բռնեցի Կատյայի ձեռքը, որ տաքացնեմ: Նրա մեջ նստած փոքրիկ սամուրայը մի պահ հանեց իր թուր ու թվանքը, բայց արագ նահանջեց, ու ձեռքը մնաց ափիս մեջ: Այդպես հասանք մինչև նրա շենքի բակը: Ես աղոտ հույս էի փայփայում, որ Կատյան կհրավիրի ինձ վերև բարձրանալ: Բայց նա ձեռքը ետ քաշեց, պայուսակից հանեց ձնծաղիկի բույրով իր սիրելի ֆրանսիական օծանելիքը, առատորեն լցրեց վրան ու անվրդով տոնով ասաց՝ բարի գիշեր: Կարծես կես ժամ առաջ ոչ թե նա էր փարվել ուսիս ու խոստովանում, թե վախենում է՝ իր սիրտը կոտրեմ, այլ, ասենք, Սոֆի Մարսոն: Զգացի, թե ինչպես է կատաղությունը կամաց-կամաց ոտքերիս ծայրերից բարձրանում, հասնում լեզվիս և վերածվում խանդի հիմար խոսքերի:

– Եվ ո՞ւմ համար ես առատորեն օծվում ֆրանսիական պարֆյումով այս գիշերվա կեսին:

– Շանս,– հանգիստ պատասխանեց Կատյան ու իջավ մեքենայից:

Ծիծաղի հետ միջիցս դուրս եկան և՛ խանդը, և՛ կատաղությունը: Ինչ արած, սամուրայները մահանում են, բայց չեն հանձնվում:

Appendix vermiformis

Վաղինակին մեր ծրագրում տեղ գտած փոփոխությունը դուր եկավ: Նա նույնիսկ համաձայնեց հարկ եղած դեպքում օգնել ինձ և անգամ մի քանի ժամով դուրս գալ «զապոյից», եթե անհրաժեշտ լինի մասնակցել ինչ-որ հանդիպումների: Դա իհարկե լավ էր: Բայցևայնպես, ինչպե՞ս էի ես պատրաստվում կյանքի կոչել մեր ծրագիրը: Ընդ որում՝ չվնասելով Վաղինակին և որևէ կարգին մարդու: Ինքս իմ մասին էլ չեմ խոսում: Չէ՞ որ սա մի խոշոր ավանտյուրա էր, որը վաղ թե ուշ բացահայտվելու էր: Ուրեմն պետք էր ամեն ինչ անել՝ առանց օրենք խախտելու: Սա՝ մեկ: Երկրորդ՝ նկատի ունենալով, որ անգամ օրենք չխախտելու պարագայում կարելի էր հետո ընկնել տհաճ պատմությունների մեջ (Վաղինակը գնալու էր իր Ամերիկան, մինչդեռ ես շարունակելու էի մնալ այստեղ), հարկավոր էր այնպիսի ձև գտնել, որ քաղաքական ուժերի հետ շփումներում իմ մասնակցությունը հասներ նվազագույնի և լիներ ընդամենը միջնորդի կարգավիճակով (ասենք՝ մարդ, ում խնդրել են բան փոխանցել) և վերջապես երրորդ՝ անհրաժեշտ էր գործել այնպես, որ թե՛ հաջողության, թե՛ ձախողման պարագայում, վերջում այս ամենը հասարակական հնչեղություն չստանար:

Բայցևայնպես, սրանք, թեև բարդ, բայց ածանցյալ խնդիրներ էին: Հիմնական և գլխավոր խնդիրը մեկն էր՝ ինչպե՞ս «խցկել» Վաղինակին կուսակցությունների համամասնական ցուցակներ: Այլ խոսքով՝ ի՞նչը կարող էր շահագրգռել քաղաքական ուժերին: Այս հարցի պատասխանն առանձնապես բարդ չէր: Ի՞նչն է ավելի հետաքրքրում քաղաքական ուժերին, քան ընտրություններում ավելի շատ քվեներ ստանալը: Իհարկե ոչի՛նչ: Իսկ ի՞նչ է պետք քաղաքական ուժերին ընտրություններում ավելի շատ քվեներ ստանալու համար: Իհարկե փո՛ղ: Եվ սա էր հենց հարցի պատասխանը՝ փողը:

Իսկ մեր ավանտյուրան ես որոշել էի սկսել «Appendix vermifomis» կուսակցությունից, միայն այն պատճառով, որ առավել հակակրանք ինձ մոտ առաջացնում էր հենց այս քաղաքական ուժը:

2011 թվականին քաղաքական թատերաբեմում դերակատար կուսակցությունների իրական և անիրական վարկանիշների մասին ես արդեն առիթ ունեցել եմ խոսելու: Չեմ խոսել միայն դրանց հանդեպ ունեցած իմ համակրանքների ու հակակրանքների մասին: Բայց մի՞թե դրա անհրաժեշտությունը կա: Ճիշտն ասած, չեմ ուզում սուբյեկտիվ լինել: Չէ՞ որ եթե արտահայտեմ համակրանքս կամ հակակրանքս, պիտի նաև հիմնավորեմ դա: Կարելի՞ է արդյոք առանց հիմնավորման ասել, որ խոր հակակրանք էի տածում, ասենք՝ «Appendix vermformis» կուսակցության հանդեպ: Չէ՞ որ այդ դեպքում ընթերցողի մոտ հարց կառաջանա՝ ինչո՞ւ: Եվ որպեսզի պատասխանեմ այդ հարցին, ստիպված պիտի լինեմ ասել, որ կուսակցության հանդեպ ունեցած հակակրանքս հիմնականում պայմանավորված էր կուսակցության առաջնորդի հանդեպ ունեցած հակակրանքով: Այստեղ էլ ընթերցողի մոտ իրավացիորեն կառաջանան հաջորդ հարցերը. նախ՝ մի՞թե մեկ անձի նկարագրից ելնելով, եթե անգամ նա կուսակցության առաջնորդն է, կարելի է գնահատական տալ ողջ կուսակցությանը և երկրորդ՝ ո՞րն է այդ առաջնորդի հանդեպ հակակրանքիս պատճառը: Եվ ես ստիպված պիտի լինեմ պատասխանել, որ առաջին դեպքում՝ այո, առաջնորդի նկարագիրը բավական էր՝ գնահատական տալու ողջ կուսակցությանը, եթե այդ կուսակցությունը «Appendix vermiformis»-ն էր: Պատճառը չափազանց պարզ էր՝ այս կուսակցությունը կառուցված էր հենց առաջնորդի շուրջ, և չլիներ առաջնորդը, չէր լինի նաև կուսակցությունը: Գուցե դրանում ոչ մի վատ բան չկար, բայց հենց այստեղ էլ առաջանում է հարցը՝ ինչպիսի՞ առաջնորդ: Այսինքն՝ այն երկրորդ հարցը, որի պատասխանը ես նույնպես ստիպված եմ տալ, եթե որոշել եմ խոսել քաղաքական ուժերի հանդեպ ունեցած իմ համակրանքների ու հակակրանքների մասին:

Երբ քաղաքական գործչին չես ճանաչում, նրա մասին կարող ես պատկերացում կազմել՝ լսելով նրան: Բայց սա միշտ չէ, որ կարող է օգնել, որովհետև կան քաղաքական գործիչներ, ովքեր կարող են այնպես խոսել, որ հասարակ մահկանացուին թվա, թե իր առջև առաքյալներից մեկն է: Հենց այդպիսի քաղաքական գործիչ էր «Appendix vermifomis» կուսակցության առաջնորդը: Սխալ կլինի ասել, թե նա հռետոր էր, որովհետև, երբ խոսում էր, դա անում էր այնպես, ինչպես կաներ գերազանցիկ աշակերտը՝ անգիր արած դասը պատասխանելիս: Եվ իհարկե, հիմնականում դատարկաբանում էր: Բայց դա էլ, ինչ խոսք, շնորհք է՝ լինել գերազանցիկ ու այնպես դատարկաբանել, որ հազարավոր մարդկանց կարողանաս համոզել: Եվ ուրեմն, երբ քաղաքական գործչին չես ճանաչում, իսկ նրան լսելը բավական չէ նրա մասին ճիշտ պատկերացում կազմելու համար, մնում է ծանոթանալ նրա կենսագրությանը: Ու ես զարմանում եմ, թե ինչու դա չէին անում մեր բազմաթիվ հայրենակիցները, նրանք, ովքեր վստահում ու իրենց ձայնը տալիս էին այս մարդուն:

«Appendix vermiformis» կուսակցության առաջնորդն իր քաղաքական կարիերան սկսել էր քսաներկու տարեկանում՝ համալսարանը գերազանցությամբ ավարտելուց անմիջապես հետո անդամակցելով այդ ժամանակվա իշխող կուսակցությանը: Նրա իրավագիտական գիտելիքները, հռետորական ձիրքը և կարիերիզմի մոլուցքն իշխող կուսակցության ղեկավարները նկատել էին շատ շուտ և նախ նրան վստահել մի քանի միջին պաշտոններ, ապա օգնել, որ մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվի առաջին գումարման Ազգային ժողովում: Այստեղ երիտասարդն իրեն դրսևորել էր անմիջապես: Ոչ առանց իր ղեկավարների համաձայնության՝ խորհրդարանի ամբիոնից նա սկսել էր խոսել: Խոսել շատ՝ հմտորեն քննադատելով ընդդիմությանը և հմտորեն պաշտպանելով իշխանությունների ցանկացած քայլ, իսկ որ կարևորն է, ձեռքի հետ բարձրացնելով ժողովրդին չափազանց

մտահոգող, բայց ոչ մի կերպ լուծում չունեցող հարցեր: Աստիճանաբար ձեռք բերելով արդարության ծարավ հասարակ ժողովրդի համակրանքը՝ վարկաբեկված իշխանության մեջ նա դարձել էր մի օազիս: Այն, որ օազիսը կեղծ էր, ժողովուրդը չէր գիտակցել այդ ժամանակ և չէր գիտակցել հետո, երբ իշխանության փոփոխությունից հետո նա հեռացել էր իր կուսակցությունից և անդամակցել խորհրդարանում ձևավորված նոր մեծամասնությանը: Նա շարունակել էր խոսել՝ հմտորեն քննադատելով նախկին իշխանություններին (մոռանալով, որ ժամանակին ինքն անգամ գիրք է գրել, որտեղ փառաբանել է երկրի առաջին նախագահին)՝ պաշտպանելով նորերին և ձեռքի հետ բարձրացնելով ժողովրդին չափազանց մտահոգող, բայց ոչ մի կերպ լուծում չունեցող նույն հարցերը: Հետո նա ստեղծել էր սեփական կուսակցությունը (լուրջ հիմքեր կան կասկածելու, որ ոչ առանց ներկա նախագահի օժանդակության, ով այն ժամանակ ուժային կառույցներից մեկի ղեկավարն էր), այն մասնակցել էր հաջորդ խորհրդարանական ընտրություններին և կարողացել հաղթահարել հինգտոկոսանոց շեմը, ինչը հնարավորություն էր տվել ներկայացված լինելու օրենսդիր մարմնում: Արդյունքում խորհրդարանի ամբիոնից նրա ոճով սկսել էին խոսել ևս մի քանի հոգի, հմտորեն խաբել ժողովրդին, ժողովուրդը շարունակել էր հմտորեն խաբվել, և կեղծ օազիսն աստիճանաբար մեծացել էր: Բայց այս մարդու ամենամեծ թռիչքը դեռ առջևում էր: Երրորդ գումարման Ազգային ժողովում նրա կուսակցությունը ստացել էր նախորդից եռակի ավելի տեղեր, և նա զբաղեցրել էր պետության երկրորդ պաշտոնը (դարձյալ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ բացառապես միևնույն մարդու՝ ներկայիս նախագահի և այն ժամանակվա ուժային կառույցներից մեկի ղեկավարի հովանավորությամբ): Հետո նա հեռացվել էր այդ պաշտոնից՝ ինչինչ մութ պատմությունների արդյունքում՝ այդ ժամանակվա երկրի նախագահի կողմից ստանալով «դավաճան» որակումը:

Եվ ահա նա առաջադրեց իր թեկնածությունը 2008 թվականի նախագահական ընտրություններում:

Այս մարդն իհարկե խնամքով թաքցնում էր իր կենսագրությունը և ահավոր վախենում էր այդ բառից: Դրանում համոզվելու առիթ ես ունեցել եմ, ինչպես և առիթ եմ ունեցել նրան անձամբ ճանաչելու: Ահա թե ինչպես դա եղավ:

2008 թվականի նախագահական ընտրությունների շեմին ես մեր թերթի համար հարցազրույցներ էի անում նախագահի թեկնածուների հետ: Հիմա չեմ հիշում, թե ինչու էի նման բան որոշել: Ես հազվադեպ եմ զբաղվում պրակտիկ լրագրությամբ և ավելի հազվադեպ էլ հարցազրույցներ եմ անում՝ երկու պատճառով: Նախ, որ մեր խմբագրությունում կան լրագրողներ, ովքեր ինձանից շատ ավելի լավ են դա անում, և երկրորդ՝ հարցազրույց անելիս ինձ առավել հետաքրքրում են ոչ ստանդարտ հարցերը, ինչը հաճախ կարող է դուր չգալ նրանց, ում հետ հարցազրույց եմ անում: Այդպես չեղավ նախագահի մյուս թեկնածուների պարագայում, ովքեր պատասխանեցին իմ բոլոր հարցերին, և այդ պատասխանները բավական խորն էին ու անկեղծ: Բայց այդպես եղավ «Appendix vermiformis» կուսակցության առաջնորդի պարագայում, ով իմ առաջին իսկ հարցից հետո հրաժարվեց շարունակել հարցազրույցը՝ պատճառաբանելով, որ պատրաստ չէ: Իսկ հարցը հետևյալն էր. «Ի՞նչ է քաղաքական գործչի համար կենսագրությունը»:

Եվ այդ մարդը, ով վախենում էր ասել, թե ինչ է իր համար կենսագրությունը, 2008-ի նախագահական ընտրություններում ստացավ ընտրողների ձայների մոտ քսան տոկոսը…

Բայց ինչո՞ւ եմ ես պատմում այս ամենի մասին: Որովհետև Վաղինակի «պատգամավորացման» գործընթացը ես որոշել էի սկսել հենց այս, իմ սուբյեկտիվ կարծիքով՝ ամենաբացասական կուսակցությունից:

«Appendix vermiformis» կուսակցության առաջնորդին, ինչպես ասացի, ես ճանաչում էի: Բայց գործը «գլխից բռնել» իհարկե

իմաստ չուներ (վստահ եմ, որ առաջնորդն ինքն էլ բուռն ցանկություն չէր դրսևորի՝ երկրորդ անգամ ինձ հետ հանդիպելու)։ Ուրեմն պետք էր մտածել, թե կուսակցության ազդեցիկ անդամներից ում վրա կանգ առնել։ Չմոռանամ նշել, որ այս կուսակցությունը մաս էր կազմում իշխող կոալիցիային, ուներ նախարարական երեք, փոխնախարարական վեց պորտֆել և պատգամավորական ութ մանդատ։ Իսկ կուսակցության առաջնորդը զբաղեցնում էր այլ, խիստ բարձր պաշտոն (ինչպես մի անգամ ասել էր հանրապետության նախագահը՝ «երկրի երրորդ-չորրորդ պաշտոնը»)։ Պաշտոնն այդ, թեև եղել էր նախկինում էլ, բայց իր այդօրեական «կշիռը» ստացել էր ընդամենը մեկ պատճառով. ինչպես արդեն ասացի վերևում, «Appendix vermiformis» կուսակցության առաջնորդը մասնակցել էր 2008 թվականի նախագահական ընտրություններին և հավաքել մոտավորապես քսան տոկոս, բայց մոռացա ասել, որ այդ ժամանակ նա և իր կուսակցությունը հանդես էին գալիս ընդդիմադիր դիրքերից։ Եվ ահա ընտրություններից հետո առավել ձայներ ստացած թեկնածուն (ներկա նախագահը) ներքաղաքական շիկացած մթնոլորտը մեղմելու նպատակով առաջարկեց սույն «ընդդիմադիր» թեկնածուին մտնել իշխանական կոալիցիա և հատուկ նրա համար թարմացրեց «երկրի երրորդ-չորրորդ պաշտոնը», որն իրականում ոչ այլ ինչ էր, քան քարտուղարի գործ։

Անմիջապես «Appendix vermiformis» կուսակցության առաջնորդի հետ գործ ունենալ, ինչպես ասացի, ես չէի պատրաստվում։ Մյուս ազդեցիկ անդամներից ճանաչում էի ընդամենը երեքին՝ խորհրդարանական խմբակցության ղեկավարին, մի նախարարի և կուսակցության մամլո խոսնակին։ Հենց նրա վրա էլ կանգնեց ընտրությունս։

Մամլո խոսնակի անունը Ռուզան էր, և ես նրան ճանաչում էի դեռ համալսարանից։ Անգամ բավականաչափ մտերիմ էի եղել հետը։ Ոչ մի առարկայական բան, պարզապես՝ մտերիմ։ Գրավիչ աղջիկ էր, ասող-խոսող, սրտաբաց, երբեմն չափից ավելի ոգևորվող։

Բայց նաև ճարպիկ էր: Համալսարանից հետո ժամանակ առ ժամանակ նրան հանդիպում էի տարբեր տեղերում և ամեն անգամ իմանում, որ նոր, ավելի պատասխանատու աշխատանքի է անցել: Բայց կարծում եմ՝ սա նրա կարիերայի բարձրակետն էր: Ասենք՝ քիչ բան չէ, իշխող կոալիցիայի անդամ կուսակցություններից մեկի մամլո խոսնակը: Շատերը կերազեն:

Մի խոսքով՝ հենց Ռուզանին էի զանգել և ասելով, որ կարևոր գործ ունեմ՝ պայմանավորվել հանդիպել երեկոյան Հյուսիսային պողոտայի սրճարաններից մեկում: Տեղն ինքն ընտրեց: Այն, չնայած ինձ հարմար էր, որովհետև գտնվում էր մեր խմբագրությանը շատ մոտ, բայց այնքան էլ ձեռնտու չէր: Ես շատ էլ չէի ուզում, որ Հյուսիսային պողոտայի ողջ հասարակությունը մեզ տեսներ միասին: Իսկ որ կտեսներ, դա հաստատ էր, որովհետև Ռուզանն այն աղջիկը չէր, որ աննկատ մնար. առնվազն ամեն երկրորդը նրան ճանաչում էր: Ու հենց այդ պատճառով էլ գլխիս դրեցի մի սպորտային գլխարկ (մի անգամ Պանդան էր մոռացել խմբագրությունում, ու այն այդպես էլ մնացել էր կախիչից կախված), աշխատակիցներից մեկից խնդրեցի նրա արևային սև ակնոցները (ինքս երբեք չեմ ունեցել նման բան) ու պայմանավորվածս ժամից տասնհինգ րոպե շուտ դուրս եկա խմբագրությունից, որպեսզի մի քիչ քայլեմ ու մտածեմ: Ես ուղղակի դեռ հստակ չգիտեի, թե ինչ եմ ասելու Ռուզանին, ինչպես եմ ներկայացնելու առաջարկս:

Հյուսիսային պողոտան մարդաշատ էր: Հիշեցի, որ տարիներ առաջ, երբ նոր էինք վարձել այն տարածքը, որտեղ մեր խմբագրությունն է, ես երբեմն դուրս էի գալիս զբոսնելու, ու բոլորովին տարբեր էր պատկերը: Հյուսիսային պողոտան այն ժամանակ ամայի էր ու անկենդան: Մի անգամ զբոսնելիս ականատես եղա մի տարօրինակ տեսարանի, որի մասին, հիշում եմ, վերադարձա ու անմիջապես մի ակնարկ գրեցի: Իսկ տեսել էի մի մանչուկի, ով նման էր Սարոյանի Յուլիսիսին: Նա կանգնած էր Հյուսիսային պողոտայում և ուշադիր նայում էր մի տատրակի, որ չգիտես

որտեղից հայտնվել էր այստեղ: Մանչուկի մայրը, ով այդ պահին հագուստի խանութում էր, կանչում էր նրան, բայց փոքրիկին թանկարժեք շորերը չէին հետաքրքրում, և նա գերադասում էր նայել տատրակին: Յուլիսիս Մաքոլին, որ սիրում էր աշխարհի բոլոր մարդկանց, խլուրդներին և վստահաբար՝ տատրակներին, անպայմանորեն նույնը կաներ:

Եվ ես մտածում էի այն ժամանակ, թե ինչու Երևանում տատրակներ չկան: Պատկերացնո՞ւմ եք, ինչ հրաշալի կլիներ, որ Հյուսիսային պողոտայում տատրակներ լինեին: Գոնե մի շունչ կլիներ, չէ՞ որ այստեղ մարդիկ էլ չկային:

Հիմա Հյուսիսային պողոտան մարդաշատ էր, բայց միևնույն է՝ անկենդան էր ու մի տեսակ արհեստական: Պատճառն անշուշտ նաև այն էր, որ այն միայնակ տատրակը, որին ես տեսա այստեղ տարիներ առաջ, հիմա այլևս թռել-գնացել էր: Մինչդեռ եթե մնար, գուցե տարբեր լիներ ամեն ինչ: Տատրակներին գուցե մենք հանդուրժեինք ու սկսեինք հանդուրժել միմյանց ևս: Չէ՞ որ մենք այնքան անհանդուրժող էինք դարձել: Ամեն ինչ, այսինքն՝ ամեն բարին, հավատացե՛ք, սկսվում է տատրակներից: Որովհետև մեզ այնպես պակասում էր շունչը, այնպես պակասում էր կենդանությունը, և անսպառ այս անկենդանության մեջ մեզ մի ծիլ էր պետք, որը նաև հույս կլիներ:

Չարություն կար մեր շուրջը, ու այնքան քիչ էր գեղեցիկը: Ի՞նչ կտեսնեիք, եթե նայեիք մարդկանց դեմքերին՝ աշխատանքի գնացող, գնումների գնացող, անգամ զվարճանալու գնացող. տխուր էին մարդկանց դեմքերը ու մռայլ, ինչպես մռայլ եղանակը: Երբ արև չկա երկնքում:

Ինչո՞ւ մենք չէինք կարողանում զանազանել չարը բարուց: Բարին ջերմ է, բարին լուսավոր է, բարին ժպիտ ունի, և դա այն ժպիտն է, որը ժպիտ է պարգևում բոլորին: Եվ բարին սիրուն է:

Ի՞նչ սիրուն բան կտեսնեիք, եթե նայեիք ձեր շուրջը. նորակառույց շենքերն ու կամուրջնե՞րը, շքեղ խանութներն ու սրճարաննե՞րը,

փայլող «Համմերներն» ու «Մերսեդեսնե՞րը»: Եթե անգամ գեղեցիկ էին դրանք իսկապես, ի՞նչ արժեին տխուր մարդկանց ֆոնին:

Առանձին մարդիկ կարող են տխուր լինել կամ ուրախ, նրանց մասին չէ խոսքը: Հասարակությունն էր տխուր: Ի՞նչ կլիներ, եթե փորձեիք կանգնել մայթին և ժպտալ տասը պատահական անցորդի: Քանի՞սը կժպտային ի պատասխան: Ձեզ հիմարի տեղ կդնեին հավանաբար: Կամ խելագարի, կամ որ ավելի հավանական է, կմտածեին, որ ձեռ եք առնում իրենց և կռիվ կսարքեին:

Մի՞թե սա յուրօրինակ սոցիոլոգիական հարցում չէ: Ո՞րն է ավելի արդյունավետ միջոց՝ իմանալու հասարակության վերաբերմունքը իշխանությունների նկատմամբ: Ուղղակիորեն հարցնե՞լ մարդկանց այդ մասին, թե՞ պարզապես ժպտալ նրանց: Եթե ժպիտդ մարդկանց վրա այլ տպավորություն է թողնում, քան պարզապես ժպտալը, ուրեմն նրանք տխուր կյանքով են ապրում, եթե ժպտում ես, ու մտածում են, թե իրենց ձեռ ես առնում, ուրեմն սովոր են խոժոռ ու չար դեմքերի, եթե ժպտում ես, ու քեզ ցնդածի տեղ են դնում, ուրեմն մտածում են, որ միայն ցնդածը կարող է ուրախ լինել, երբ շուրջը բոլորը տխուր են:

Ամենուրեք մարդիկ հոգսեր ունեն: Անհոգ մարդիկ շատ չեն, անտարակույս: Բայց դրանից չէ անժպիտ կյանքը: Անժպիտ կյանքը ոչ թե հոգսերից է, այլ անտարբերությունից, հասարակ քաղաքացու ու հասարակության անտարբերությունից՝ հանդեպ դիմացինը և պետությունը, ինչը հետևանք է պետության անտարբերության՝ հանդեպ հասարակ քաղաքացին ու հասարակությունն ընդհանրապես:

Ռուզանը եկավ ճիշտ ժամանակին: Չգիտեմ՝ մամուլի խոսնակի պաշտոնն էր նման պարտաճանաչության պատճառը, թե պարզապես այդպես ստացվեց: Նույնիսկ չէի հասցրել խմելու որևէ բան պատվիրել: Ես վեր կացա տեղիցս, նա մի «շրխկան» համբույր դրոշմեց ահյակ այտիս, հետո նայեց չորսբոլորը և թքոտելով մատը՝ այտիս վրայից սկսեց մաքրել շրթներկի հետքը:

– Այս ի՞նչ տարօրինակ տեսք ունես, քիչ էր մնում՝ չճանաչեի:

Ես չասացի, որ հենց այդ պատճառով էլ տարօրինակ տեսք ունեմ: Փոխարենը հարցրի.

– Ի՞նչ կխմես:

– Չեմ խմում, արև՛ս, վաղուց արդեն չեմ խմում:

– Քաղաքականության մեջ ես ու չե՞ս խմում:

– Քաղաքականության մեջ եմ, դրա համար էլ չեմ խմում:

– Որ ավելորդ բան չասե՞ս, թե՞ չանես:

– Եվ՛ մեկը, և՛ մյուսը:

Ինձ դուր եկավ նրա անկեղծությունը: Չնայած փոխվել էր բավականին, բայց ներսում վստահաբար մնացել էր նույնը: Եվ ես սկսեցի տարակուսել՝ արդյո՞ք ճիշտ էր որոշումս՝ հենց նրա հետ գործ բռնել: Բայց արդեն ուշ էր որևէ բան փոխելը, որովհետև Ռուզանն անշուշտ հասկացել էր, որ իրեն լուրջ գործով եմ հրավիրել հանդիպման, և այնպիսի հայացքով էր նայում աչքերիս (ավելի ճիշտ՝ ակնոցներիս), որ պարզ էր՝ պայթում է հետաքրքրասիրությունից և ուզում է րոպե առաջ հասկանալ, թե ինչ է տեղի ունենում: Ես իհարկե կարող էի հընթացս մի բան մոգոնել, ասենք ասել, որ նրան կանչել եմ շեֆի հետ մի նոր հարցազրույց կազմակերպելու համար, բայց, այդուհանդերձ, որոշեցի ասել ճիշտը:

Խնդիրը ձևակերպեցի հետևյալ կերպ. իմ ծանոթներից մեկը (ում անունն առայժմ չասացի) ծրագրում է Հայաստանի լրատվական դաշտում լուրջ բիզնես-ներդրումներ անել, ինչի համար քաղաքական ամուր տանիք է փնտրում: Նկատի ունենալով, որ «Appendix vemifmis» կուսակցությունը միակն է իշխող կոալիցիայի ուժերից, որը չունի սեփական լրատվամիջոցներ՝ ո՛չ տպագիր, ո՛չ էլ էլեկտրոնային, իմ ծանոթը մտածում է, որ կարելի է գտնել փոխշահավետ համագործակցության եզրեր:

Այստեղ ես դիտմամբ դադար տվեցի: Դանդաղ հանեցի ծխախոտս, վառեցի, ապա սկսեցի ուսումնասիրել ճաշացանկը: Ռուզանը, աչքերը չռած, նայում էր ինձ: Նա նման էր երեխայի, որին

ասել էին, թե գրպանում կոնֆետ ունեն, բայց դեռ չէին հանել այն: Ինչպես և սպասում էի, նրա արձագանքը չուշացավ:

– Հետաքրքի՞ր է,– ծոր տվեց նա,– իսկապես հետաքրքիր է:

Ես շարունակեցի պահել դադարը: Թերթում էի ճաշացանկը և զգում, որ Ռուզանը հայացքը չի կտրում ինձանից: Նա կրկին չդիմացավ և ասաց.

– Բայց հեռուստաընկերություն բացելը չափազանց թանկ հաճույք է:

– Այդ մարդը, որքան որ գիտեմ, փողի խնդիր չունի:

Ես շխկոցով փակեցի ճաշացանկը և կանչեցի մատուցողին: Ռուզանը սպասեց, մինչ կպատվիրեմ, ապա խոսեց մի տեսակ աղերսագին տոնով.

– Հասկանում եմ, որ առայժմ չես ուզում անունը տալ, բայց գոնե ասա՝ հայտնի՞ մարդ է:

– Չեմ կարծում, որ կճանաչես նրան:

– Հայաստանի՞ց է, թե՞ Սփյուռքից:

Այստեղ ես մտածեցի, որ ժամանակն է դադարեցնել «պոչ խաղացնելը»: Զրուցակիցս արդեն ավելի քան հետաքրքրված էր, և կարելի է դա նրբորեն օգտագործել:

– Լավ,– իբր տեղի տվեցի ես,– կբացեմ որոշ խաղաթղթեր: Բայց դու պիտի խոստանաս, որ այս մասին ոչ մի տեղ չես խոսի:

Նա ինտենսիվորեն գլխով արեց: Ես մի կերպ զսպեցի ծիծաղս և ասացի, որ խոսքը չափազանց հարուստ մի մարդու մասին է, ով բիզնեսներ ունի արտերկրում: Անունը Վաղինակ է: Այսքանը, նրան վերաբերող որևէ հարցի այլևս պատասխանել չեմ կարող: Ընդամենը ուզում եմ, որ այս մասին իմանա կուսակցության առաջնորդը, և եթե նրան կհետաքրքրի, նոր կարելի է շարունակել: Ընդ որում, պարտադիր չէ, որ Ռուզանը հիշատակի իմ մասին, որովհետև ես ընդամենը միջնորդ եմ: Նա կարող է ասել, որ այդ մարդը դիմել է անձամբ իրեն:

Բայց Ռուզանը չէր ուզում հեշտությամբ հանձնվել: Նա շարունակում էր հարցեր տալ, իսկ ես անտարբեր խմում էի կոնյակս:

Մի բան էր միայն պարզ, որ ճիշտ թիրախ եմ ընտրել: Ասածս գոնե մամուլի խոսնակին ակնհայտորեն հետաքրքրել էր: Հասկանալի էր, որ այստեղ նա տեսնում էր սեփական շահը, որովհետև խոսքն իր ոլորտի մասին էր, և նրա համար կարող էին լուրջ հեռանկարներ բացվել: Ու հենց դա էլ ինձ պետք էր, ճիշտն ասած, որովհետև հենց սեփական շահը կխրախուսեր նրան հնարավորինս լավ ներկայացնել հարցը կուսակցության առաջնորդին: Եվ ես վստահ էի, որ Ռուզանը հիմա անհամբեր է ու կուզեր որպե առաջ բաժանվել ինձանից, որ վազեր նրա մոտ և պատմեր այս ամենի մասին:

Այդպես էլ եղավ: Ոչ մի դիվանագիտություն: Նա նույնիսկ չփորձեց էլ թաքցնել իր ոգևորությունը: Կիսատ թողեց թեյը, մեկ անգամ էլ համբուրեց միևնույն այտս (բայց այս անգամ շտապելուց չմաքրեց շրթներկը), աթոռի թիկնակից վերցրեց վերարկուն ու հեռացավ:

Լուծումներ փնտրելիս

Վաղինակին օդանավակայանում սխալմամբ դիմավորելու օրից անցել էր ուղիղ մեկ շաբաթ: Այն անշուշտ իմ կյանքի ամենահարուստ շաբաթներից էր: Եվ իհարկե՝ ամենաանսթափ: Հետաքրքիր է, եթե հաշվեի, թե քանի շիշ տարբեր գույների, բայց (ինչպես կասեր Կատյան) բարձր թնդության խմիչք էի լցրել օրգանիզմս այդ մեկ շաբաթվա ընթացքում, ի՞նչ թիվ կստացվեր: Պետք է ասեմ, որ մի անգամ ես նման բան արել էի: Ավելի ճիշտ ոչ թե ես, այլ Խաչիկը, և ոչ թե մեկ շաբաթվա, այլ մեկ ձմեռվա կտրվածքով: Եվ գիտե՞ք, թե որքան ստացվեց: Ավելի լավ է՝ չխոսեմ այդ մասին:

Իսկ Խաչիկն իմ լավագույն ընկերն էր: Ընկերների հարցում կյանքն իհարկե իմ հանդեպ շռայլ էր գտնվել, և ինձ երբեմն թվում էր, թե նրանցից յուրաքանչյուրը լավագույնն է: Բայց դա այդպես չէր: Լավագույնն, անտարակույս, Խաչիկն էր: Նա Նյու Յորքից էր: Առաջ շատ էր լինում Հայաստանում, ասենք՝ գալիս էր մի շաբաթով ու... մնում մի տարի, բայց վերջին շրջանում նվազագույնի էր հասցրել այցելությունները: Երբ հարցնում էիր, թե ինչու ես ուշ-ուշ գալիս, պատասխանում էր՝ «Ձեր իշխանությունները չեն թողնում, որ ընկերներիս մարդավարի հյուրասիրեմ»:

Նա իմ ճանաչած ամենաապաքաղաքական մարդկանցից ու միաժամանակ ամենաառատաձեռն տղերքից էր, և ինչպես բոլոր ապաքաղաքական մարդիկ ու միաժամանակ առատաձեռն տղերքը, առավոտներն արթնանալուց, հագնվելուց ու ձեռքը գրպանը տանելուց հետո հայտնաբերում էր, որ այն նույնքան դատարկ է, որքան գլուխը՝ խումհարի ժամանակ: Բայց փոխարենը՝ լիքն ու սիրուն է կյանքը, որը պետք է շարունակել ապրել այնպես, ինչպես երեկ ու նախորդ բոլոր օրերին: Դրա համար, իհարկե, փող պետք է, բայց այդքան փող միշտ էլ կարելի է ունենալ: Ահա այսպես էր մտածում

իմ ընկերը, և ես չեմ կարող պնդել, որ մեծ հաշվով համաձայն չէի նրա հետ:

Միայն հետո որոշակիորեն դժվարացավ ընկերոջս կյանքը: Դա խոստովանում էր նույնիսկ ինքը: «Հարյուր դոլարն այլևս հարյուր դոլար չէ,– ասում էր Խաչիկը,– հիշո՞ւմ ես՝ հարյուր դոլարը մանրում էինք, ութ հոգով գնում «Պոպլավոկ», խմում այնտեղ եղած ողջ օղին, ու դեռ մի բան էլ մնում էր տակը՝ առավոտյան թարմանալու համար»:

Հիշում էի, իհարկե: Դա մի տասը տարի առաջ էր: Տասը տարի առաջ հարյուր դոլարը կազմում էր մոտ վաթսուն հազար դրամ, և դա մեծ փող էր:

Բայց մի՞թե դոլարի և ընդհանրապես փողի մասին էր, որ ես ուզում էի խոսել: Իհարկե ոչ, մանավանդ, որ ֆինանսներից առանձնապես բան չեմ հասկանում: Եվ ընկերս նույնպես չէր հասկանում՝ անշուշտ չհաշված ծախսային մասը: Եվ փողի առաջ էլ մենք երբևէ գլուխ չենք խոնարհել ու չենք էլ պատրաստվում: Պարզապես ակնհայտ էր մի բան. Հայաստանում ո՛չ հարյուր դոլարն էր այլևս հարյուր դոլար, ո՛չ էլ վաթսուն հազար դրամը՝ վաթսուն հազար դրամ: Հայաստանում ո՛չ հայաստանցու վաստակածն էր մի բան, ո՛չ ամերիկացունը: Փողը չէր հերիքում ամենապարզ ու սիրուն բանի՝ հյուրասիրելու համար:

Դուք հանգիստ կարող եք ասել, որ Հայաստանում ժողովուրդը պայքարում էր իրենց օրվա հացի փողը վաստակելու համար, մինչդեռ այս մարդը խոսում է խմելու ու հյուրասիրության մասին: Եվ դուք, անտարակույս, ճիշտ կլինեք: Բայց, ինչ արած, կարոտել էի ընկերոջս: Նա չէր եկել արդեն երեք տարի, և նրա փոխարեն ահա եկել էր Վաղինակը:

Ա՛յ նրա խմելը տարբեր էր: Ինչպես ինքն էր ասում՝ խմել էլ կա, խմել էլ: Հիմա փաստորեն լրացել էր նրա «զապոյի» ու մեր բռնած գործի մեկ շաբաթը: Վաղինակը շարունակում էր մնալ Աղայան փողոցում գտնվող իր տանը, ուր դեռևս հոսանք չկար:

Ես պարբերաբար այցելում էի նրան, որպեսզի տեսնեմ, թե արդյոք ամեն ինչ կարգին է:

Բայց անհանգստանալու բան կարծես թե չկար: Նա կա՛մ քնած էր լինում, կա՛մ խմում էր խոհանոցում, ընդ որում՝ միշտ նույն տեղում ու նույն դիրքով նստած: Երբեմն պատգամավորության թեկնածուին հյուր էին գալիս նրա «բոմժերը» (Վաղինակը սպառնացել էր չեղյալ համարել մեր գործարքը, եթե ես նեղացնեմ նրանց), և այդ ժամանակ սկսվում էին երկարուձիգ փիլիսոփայական զրույցները: Հենց նման իրավիճակ էր, երբ ես այցելեցի Վաղինակին նոյեմբերյան այդ ուրբաթ օրը: Նրա հյուրերի կազմը նույնն էր՝ չէր փոփոխվել: Ես հիշեցի, որ Վաղինակն ասում էր, թե նրանցից մեկը պրոֆեսոր է, մյուսը՝ դերասան, երրորդը՝ ճարտարապետ, իսկ տիկինը՝ գրաքննադատ: Ինչու չէ, կարող էր պատահել: Ի՞նչը պիտի Հայաստանում խանգարեր ասենք պրոֆեսորին «բոմժ» դառնալ: Պետության շպրտած երկու կոպե՞կը, որ ավելի շատ ծաղրի էր նման: Եվ կամ երբևէ մտածե՞լ էր այդ պետությունը, թե ինչն է պատճառը, որ մեզ մոտ «բոմժ» է դառնում դերասանը: Գիտե՞ր արդյոք պետությունը, որ հրաշալի հայկական կինեմատոգրաֆը վախճանվել էր, և տաղանդավոր դերասանը կա՛մ պիտի սպառեր իրեն ապուշագույն սերիալներում, կա՛մ դառնար «բոմժ»: Ո՞վ էր Հայաստանում լսում իր մասնագիտությունը հարգող ճարտարապետին: Եվ ի՞նչն էր խանգարում վերջինին նույնպես «բոմժ» դառնալ: Բավական չէ՞ր արդյոք միայն քայլել Երևանի (էլ չեմ ասում՝ ուրիշ քաղաքների) փողոցներով և նայել շուրջը: Եվ կամ ի՞նչը քննադատեր գրաքննադատը: Տարեկան քանի՞ գիրք էին գրում մեր բոլոր գրողները միասին: Տարեկան քանի՞ գիրք էր կարդում մեր հասարակությունը: Եվ ի վերջո, ով էր ավելի վատը, «բոմժ» պրոֆեսո՞րը, թե՞ պրոֆեսորը, ով բութ ուսանողից փող էր վերցնում, որ նրան գնահատական նշանակեր: «Բոմժ» դերասա՞նը, թե՞ դերասանը, ով սերիալում մարմնավորում էր մեր երկրի «բոմժությունը»: «Բոմժ» ճարտարապե՞տը, թե՞ ճարտարապետը, ում սարքած այլանդակ շենքը մի տարուց ճաք

էր տալիս: «Բոմժ» գրաքննադա՞տը, թե՞ գրաքննադատը, ով բանուգործ չունենալուց ջարդուփշուր էր անում մի սկսնակ գրողի, որ համարձակություն էր ունեցել մեր անտեր ժամանակներում գիրք հրատարակել:

Մի խոսքով, կարող էր պատահել, որ Վաղինակը ճիշտ էր ասում, և այս «բոմժերն» իրոք ժամանակին հասարակության լիարժեք անդամներ էին եղել: Հնարավոր էր նաև, որ նրանք հիմա իրենց հասարակության ավելի լիարժեք անդամներ էին զգում, քան այն ժամանակ, երբ «բոմժ» չէին:

Ես ճիշտն ասած ոչինչ չունեի «բոմժերի» դեմ: Որովհետև հասկանում էի, որ նրանք ընդամենը փնտրում են հարցի լուծումը:

Մի «բոմժ» կար, որ գիշերները թափառում էր այն փողոցով, ուր մեր խմբագրությունն էր, երբեմն հանդիպում էր ինձ՝ իր պես թափառելիս, ու ես հասկանում էի, որ մեր մեջ եղած միակ տարբերությունն այն էր, որ ես տուն ունեի ու նաև աշխատատեղ, իսկ ինքը տուն չուներ ու իր աշխատատեղը սա էր՝ մեր խմբագրության ամայի փողոցը:

Մնացած ամեն ինչ նույնն էր կամ նման էր: Ես երբևէ չէի խոսել այդ մարդու հետ, բայց համոզված էի, որ այդպես է: Մենք նույնապես կամ նմանապես թափառում էինք, որովհետև դա էր հարցի լուծումը այդ պահին:

Մենք, իհարկե, կարող էինք ուրիշ կերպ վարվել՝ թափառող այդ անտուն մարդը և ես:

Օրինակ՝ կարող էինք չթափառել: Ես կարող էի նստել իմ աշխատատեղի կամ իմ տան իմ աթոռին, նա կարող էր նստել իր ամայի փողոցի իր սալաքարին ու մենք կարող էինք փնտրել հարցերի լուծումներ:

Բայցևայնպես, թող ոչ ոք չկարծի, թե մենք թափառելիս լուծումներ չէինք փնտրում: Ինչպես և մեր ողջ հասարակությունը, որը հիմա թափառում է: Մեր ողջ հասարակությունը, անկախ այն բանից՝ ունի տուն ու աշխատատեղ, թե ոչ, հիմա անտուն այդ մարդու ու իմ պես

թափառողի կարգավիճակում է: Որովհետև հասարակությունն ինքն է փնտրում հարցերի լուծումներ:

Մինչդեռ այդպես չպետք է լիներ: Չէ՞ որ կային իշխանություններ, որոնց պարտականությունն էր փնտրել և գտնել հարցերի լուծումները:

Միայն թե ամբողջ հարցն այն էր, որ հարցերը չունեին լուծումներ, որովհետև մենք չունեինք իշխանություններ, որոնք կարող էին լուծել այդ հարցերը:

Բայց վերադառնանք Վաղինակի «բոմժերին», ովքեր բանավիճում էին անլույս տան ցուրտ խոհանոցում: Բանավեճի թեման, սակայն, այս անգամ քաղաքական չէր: Ես հասա այն պահին, երբ նրանք քննարկում էին, թե ինչ է փողը: Կանգնել էի խոհանոցի դռան արանքում և լսում էի նրանց:

– Փողը գայթակղություն է և ուրիշ ոչինչ: Բայց տարբեր բաներ են փողը և շատ փողը: Խոսքը շատ փողի մասին է: Աստված շատ փող է տալիս մեկին և փորձում նրան,– ասողը նա էր, ով վերարկուով էր (կարծում եմ՝ նախկին պրոֆեսորը նա էր):

– Իսկ ինչո՞ւ Աստված շատ փող չի տալիս ինձ. գուցե ես չե՞մ գայթակղվում,– հարցադրումը նրանն էր, ում հագին մեր առաջին հանդիպման ժամանակ Վաղինակի նարնջագույն պիջակն էր, մինչդեռ հիմա նա սեփական պիջակով էր, որի օձիքին մեխակի գլխիկ էր ամրացված (հավանաբար նախկին դերասանը նա էր):

– Հաստա՛տ կգայթակղվես,– կրկին պրոֆեսորն էր ասողը:

– Իսկ ես ասում եմ, որ չեմ գայթակղվի:

Նրանք շարունակեցին վիճել, մինչև որ չմիջամտեց նա, ով թե՛ առաջին անգամ, թե՛ հիմա միայն շապիկով էր (եթե առաջնորդվենք բացառման սկզբունքով, ապա՝ նախկին ճարտարապետը).

– Մի՛ կռվեք, պարոնայք, չարժե վիճել փողի համար:

– Այստեղից էլ հետևություն. փողը հենց նրա համար է, որ մարդիկ կռվեն,– տիկինն էր հետևության հեղինակը՝ նախկին գրաքննադատը:

Նրա գլխին այս անգամ չորացած տերևներից պատրաստված մի բան էր դրված՝ ոչ այն է՝ գլխարկ, ոչ այն է՝ պսակ: Տիկինը սպիրտայրոցի վրա սուրճ էր եփում, և խոհանոցում տարածվել էր չոր սպիրտի սուր հոտը: Խնջույքի սեղանն այս անգամ ավելի աղքատ էր, կային միայն մի քանի խնձորներ՝ հիմնականում որդնած: Իսկ որպես մոխրաման հիմա ծառայում էր իմ գնած կարմիր խավիարի մետաղյա տուփը: Բայց խմիչքի պակասություն չկար, ընդ որում՝ լավ խմիչքի: Այսուայնտեղ դրված էին «Աբսոլյուտ» օղու բազմաթիվ լիքն ու դատարկ շշեր: Դե ինչ, Վաղինակն իր «խնայողությունների» մասին կարծես թե ճիշտ էր ասում:

Ես խնդրեցի նրան առանձնանալ՝ ասելով, որ խոսելու կարևոր բան կա: Նախօրեին ինձ էր զանգել Ռուզանը և ասել, որ իրենց կուսակցության առաջնորդը ցանկանում է հանդիպել իմ գործարար ծանոթի հետ: Այսինքն՝ Վաղինակի:

– Ահա և սկսվեցին արկածները,– ասացի նրան, երբ մենք միասին դուրս էինք եկել պատշգամբ,– հիշո՞ւմ ես, դու ինձ արկածներ էիր առաջարկում:

– Ի՞նչ է պատահել, ես ոչ մի բանից տեղյակ չեմ:

– Իհարկե տեղյակ չես: Չէ՞ որ դու ամբողջ օրը խոհանոցում նստած խմում ես, իսկ ես քո փոխարեն գործ եմ անում:

– Բայց չէ՞ որ մենք հենց այդպես էլ պայմանավորվել էինք:

– Ամենևին, մեր վերջին խոսակցության ժամանակ դու ասացիր, որ կօգնես ինձ, մինչդեռ հիմա մոռացել ես դա:

Ես դիտմամբ էի այսպես խոսում Վաղինակի հետ: Չգիտեի, թե որքանով է նա պարտաճանաչ մարդ և եթե անգամ այդպիսին է, կարո՞ղ է մարդը պարտաճանաչ մնալ «զապոյի» ժամանակ: Բանն այն է, որ վաղուց արդեն հասկացել էի, որ առանց նրա օգնության գործը գլուխ բերել ոչ մի կերպ չէր ստացվի: Հո չէ՞ր կարող պատգամավորության թեկնածուն աներևույթ մարդ լինել: Չէ՞ որ գոնե մեկ-մեկ պետք է ի հայտ գար:

Բարեբախտաբար, Վաղինակը դեռ ի վիճակի էր լսել ու հասկանալ: Ես նրան պատմեցի Ռուզանի հետ ունեցած իմ խոսակցության մասին և ասացի, որ պետք է պատրաստվել «Appendix vermiformis» կուսակցության առաջնորդի հետ հանդիպմանը:

– Այդ մարդուն ես չեմ ճանաչում, միայն գիտեմ, որ խորամանկ սրիկա է: Բայց մի՛ անհանգստացիր, ես նրա հետ այնպես կխոսեմ, որ նա ինձ ոչ միայն տեղ կտա իրենց համամասնական ցուցակում, այլև կհամաձայնի նույնիսկ իրենից հետո երկրորդ տեղը տալ:

– Երկրորդ տեղը մեզ պետք չէ,– ասացի ես ու սկսեցի զարմանքով նայել Վաղինակին:

Մի՞թե սա այն մարդն էր, որը մի շաբաթ էր՝ արդեն խմում էր: Որքան անհասկանալիորեն էր տեղի ունենում նրա մեջ կերպարանափոխությունը: Մեկ րոպեում նա կարող էր շեղված հարբեցողից վերածվել ինքնավստահ ու սթափ դատող մարդու:

– Երկրորդ տեղը մեզ պետք չէ: Բավական է որևէ անցողիկ տեղ: Իսկ այդպիսին կարող է լինել անգամ տասներորդը: Նրանց ցուցակի առաջին տասնյակում անպայմանորեն կլինեն մարդիկ, ովքեր հիմա նախարարական ու փոխնախարարական պորտֆելներ ունեն և ընտրություններից հետո էլ կպահեն այդ պորտֆելները՝ այդպիսով ցուցակում իրենց տեղը զիջելով հաջորդներին: Այնպես որ հարգելի առաջնորդից դու պետք է պահանջես հենց տասներորդ տեղը ցուցակում: Կասես, որ դրա դիմաց պատրաստ ես կուսակցության հաշվին փոխանցել երկու հարյուր հիսուն հազար դոլար, այն բանից հետո, երբ կհրապարակվեն ցուցակները: Բացի այդ, կխոստանաս քսանհինգ տոկոս բաժնեմաս քո «մեդիա հոլդինգում», որը կստեղծվի ընտրություններից հետո: Կարծում եմ՝ այսքանը բավական կլինի: Ամբողջ խնդիրն այն է, թե ինչպես կասես դու այս ամենը:

Վաղինակն ուշադիր լսում էր ինձ: Հենվել էր պատշգամբի ձողերին, ծխում էր և նայում ուղիղ աչքերիս:

– Որտե՞ղ և ե՞րբ է հանդիպումը:

– Իրենց կուսակցության գրասենյակում, երկուշաբթի՝ ժամը հինգին: Եթե իհարկե դու կարողանաս չխմել և մինչ այդ քեզ կարգի բերել:

– Կարծեմ քեզ արդեն ասել եմ, որ ես ոչ թե խմում եմ, այլ խմում եմ: Ու մի՛ անհանգստացիր, ամեն ինչ լավ կլինի: Ի դեպ, կարո՞ղ ես ճշտել, այդ սրիկան խմիչքի հետ ինչպե՞ս է:

– Ինչի՞դ է դա պետք. հուսով եմ՝ չես պատրաստվում նրա հետ խմել:

– Հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ: Իսկ հիմա արի՛ գնանք ներս, շատ մենակ թողեցինք իմ բարեկամներին:

Թբիլիսի–Երևան

Երբ դուրս եկա Վաղինակի մոտից, ժամը հինգն էր: Ուրիշ դեպքերում՝ «ուրբաթ օրը» սկսելու ճիշտ ժամանակը: Վստահ էի, որ Պանդան արդեն խմբագրությունում ինձ էր սպասում և նույնիսկ հասցրել էր սրիկայաբար մի քանի բաժակ խմել առանց ինձ: Բայց նա դեռ չգիտեր, որ այդ օրն այդպես էլ շարունակելու է, այսինքն՝ շարունակելու է խմել մենակ, համենայնդեպս՝ առանց ինձ: Ժամը յոթին ես պայմանավորված էի Կատյայի հետ, և նա պահանջել էր, որ հանդիպման ներկայանամ բացարձակ սթափ: «Ուզում եմ գեթ մի անգամ քեզ չխմած տեսնել: Վստահ եմ, որ դու անտանելի կլինես, և դա կլինի մեր վերջին հանդիպումը»,– ասել էր Կատյան:

Ամեն դեպքում որոշեցի գնալ խմբագրություն: Պանդան, բնականաբար, այնտեղ էր: Ռոմի շիշը դրել էր առջևը և աղջիկների համար ինչ-որ կոկտեյլ էր պատրաստում: Ես ցուցադրաբար նրա վրա ուշադրություն չդարձրի և անցա սենյակս: Միացրի համակարգիչս ու սկսեցի աշխատել: Զարմանալիորեն ստացվում էր: Կարդացի բոլոր այն հոդվածները, որ դեռ չէի հասցրել, անգամ մի քանի նոր նյութերի թեմաներ առաջարկեցի թղթակիցներին: Այդ ընթացքում Պանդան մի քանի անգամ ձայն տվեց, բայց ես չլսելու էի տալիս: Անհամբեր սպասում էի, թե երբ է անցնելու այդ երկու ժամը, որ ես աննկատ ծլկեմ: Ու հանկարծ զանգեց Կատյան.

– Մենք այսօր չենք կարող հանդիպել,– ասաց նա:

Ահա այսպես՝ կարճ ու կոնկրետ: Ո՛չ «կներես», ո՛չ» ցավում եմ», ո՛չ «ափսոս», ո՛չ պատճառ, ո՛չ բացատրություն: Չենք կարող հանդիպել ու վերջ: Ես այնուամենայնիվ հարցրի, թե կարող եմ գոնե իմանալ պատճառը: Ասաց, որ իր ֆիրմայի գործերով շտապ մեկնում է Թբիլիսի:

Դե ի՞նչ, ինչպես ասվում է սիրելի ֆիլմում՝ «իզուր մորուքներս սափրեցինք»…

Հասկանալի է, որ ինձ այլ բան չէր մնում, քան մեղայականով ներկայանալ Պանդային: Ռոմի առաջին շիշը դատարկեցինք քառասունհինգ րոպեում, երկրորդի համար պահանջվեց ճիշտ նույնքան: Բայց երրորդը բացել չհաստցրինք: Իմ գլխում մի միտք էր ծագել. իսկ ինչո՞ւ չգնալ Թբիլիսի:

Կատյային զանգեցի ճանապարհից: Երբ նա իմացավ որոշմանս մասին, սկսեց ծիծաղել: Մի լավ ծիծաղեց, հետո ասաց.

– Նախկի՛ն երիտասարդ, դուք սիրահարված եք: Հիմա արդեն ես դրանում վստահ եմ:

Ես չառարկեցի: Միայն խնդրեցի ասել այն հյուրանոցի անունը, որտեղ մնալու էր:

Արդեն հասել էի Աշտարակ, երբ հիշեցի, որ մեքենաս որևէ փաստաթուղթ չունի: Ոչինչ՝ մտածեցի, կթողնեմ այն սահմանի մոտ և Թբիլիսի կհասնեմ տաքսիով: Քիչ ավելի ուշ՝ առաջին իսկ կտրուկ զառիվերի վրա, հիշեցի, որ մեքենայիս ռադիատորը շարքից դուրս եկած էր: Ավելի ճիշտ ոչ թե հիշեցի, այլ ռադիատորը հիշեցրեց: Շարժիչի ջուրը սկսել էր եռալ: Ստիպված էի կանգնել, մինչև կսառչեր: Հետո հասա մի աղբյուրի մոտ ու ջուր ավելացրի: Այդպես շարունակվեց ողջ ճանապարհին: Յուրաքանչյուր քիչ թե շատ լուրջ զառիվերի վրա ստիպված էի կանգնել, ռադիատորի մեջ ջուր ավելացնել և սպասել մինչև կսառչի շարժիչը: Մի խոսքով, տանջահար արեցի իմ փոքրիկ խեղճ «Ռենոյին» և կեսգիշերին նոր հասա Բագրատաշենի սահման: Եվս մեկ ժամ պահանջվեց տաքսիով Թբիլիսի հասնելու համար: Արդեն գիշերվա մեկն էր, երբ հյուրանոցի լոբբիից զանգեցի Կատյային և գուժեցի իմ գալուստի մասին լուրը:

– Վերև՛ բարձրացիր,– հեռախոսի մեջ դժգոհ մռլտաց Կատյան:

Նա բացեց համարի դուռը, սառը բարևեց ու մնաց դռան շեմին կանգած:

– Գուցե ինձ նե՞րս թողնես,– շինծու խղճահարույց տոնով ասացի ես:

– Գուցե: Եթե պատասխանես, թե ինչու ես այս գիշերվա կեսին հատել հայ-վրացական սահմանը:

– Հիմար հարցերը չեն սազում խելացի կնոջ քո իմիջին:

– Հենց այդ իմիջն էլ ինձ ստիպում է քեզ ներս չթողնել, քանի որ մոտավորապես պատկերացնում եմ դեպքերի հետագա ընթացքը,– հայտարարեց Կատյան՝ թշնամաբար վրաս նայելով:

– Մի՛ անհանգստացիր: Մինչև երեկոյան ժամը տասնմեկը ես նորածին քոթոթից էլ անվտանգ եմ ու հմայիչ:

Կատյան ժպտաց և կրնկի վրա բացեց դուռը: Նա կաթնագույն երեկոյան զգեստով էր՝ մեջքն ամբողջովին բաց: Շունչս մի պահ կտրվեց. կաթնագույն թափանցիկ գործվածքի տակից երևում էր շոկոլադագույն արևայրուքով մաշկը՝ չծանրաբեռնված ներքնազգեստ կոչվող պայմանականություններով: Հագին խամրած ոսկու գույնի բարձրակրունկ կոշիկներ էին: Նա այնքան գայթակղիչ էր, որ հայացքս ակամայից սկսեց փնտրել մահճակալը: Գնահատելով պահի ողջ հմայքը՝ Կատյան դանդաղ և ցուցադրական շրջվեց, նույնքան դանդաղ քայլեց դեպի բազմոցը, նստեց, ոտքը գցեց ոտքին և հարցական հայացքը հառեց վրաս:

– Դու ինչ-որ տե՞ղ ես շտապում, ինչպես ասացիր՝ այս գիշերվա կեսին,– հարցրի ես:

– Ծանր աշխատանքային օրվա ավարտից հետո պատրաստվում եմ ընկերներիս հետ լիցքաթափվել գիշերային Թիֆլիսում: Ակումբում կամ ակումբներում: Քեզ այնտեղ դուր չի գա, հավատացնում եմ: Որովհետև հմայիչ, անվտանգ քոթոթներն այս ժամին պետք է կաթիկ խմեն, կուչ գան տաքուկ անկյունում ու մրափեն:

– Կաթիկն ինձ մոտ ստամոքսի խանգարում է առաջացնում, և ես որոշեցի այն փոխարինել վիսկիով:

– Պարզ է: Լավ, համառությունը պետք է պարգևատրվի: Մինչ ես կներկեմ աչիկներս, դու ունես ուղիղ կես ժամ՝ հյուրանոց գտնելու,

սափրվելու, թարմ վերնաշապիկ հագնելու և մեր լոբբի ներկայանալու համար: Եթե ուշանաս, կառքը կդառնա դդում, և դու այլևս չես գտնի փոքրիկ Մոխրոտիկին թբիլիսյան ակումբների անհայտությունում,– հանկարծ անսպասելի «բարիացավ» Կատյան:

Չնայած կես ժամից ես ինքս պատրաստ էի, բայց քանի որ հրաշալի հասկանում էի, որ ժամանակը և ճշտապահությունը կանանց համար վերացական և հարաբերական հասկացություններ են՝ Կատյային սպասեցի ոչ թե լոբբիում կանգնած, այլ նստեցի բարի այն անկյունում, որտեղից երևում էր վերելակը, և վիսկի պատվիրեցի: Վայրկյանները հոսում, միախառնվում էին րոպեներին, բաժակիս մեջ զնգզնգացող սառույցը՝ վիսկիին, իսկ Կատյան դեռ չկար: Եթե կանայք գոնե մեկ վայրկյան զգան, թե ինչ է ապրում սպասող տղամարդը, նրանք այլևս երբեք չեն ուշանա: Սկզբում տղամարդն աղոտ հույս է փայփայում, որ գոնե այս անգամ կինը չի ուշանա, քսան րոպե անց հույսը վերջնականապես մարում է՝ տեղի տալով խուլ գրգռվածությանը, երեսուն րոպեից արդեն գալիս է վստահությունը, որ ֆիլմը կամ համերգը կսկվի առանց ձեզ, քառասուն րոպե անց տղամարդն ապարդյուն փորձում է հանգցնել զայրույթի մեծ խարույկի առաջին փոքրիկ կայծերը: Եվ արդեն մեկ ժամ անց՝ այն պահին, երբ նա արդեն ուզում է առյուծի պես մռնչալ, հայտնվում է կինը՝ դիմահարդարման և վարսահարդարման ձեռակերտ գլուխգործոցը: Անմեղ աչքերով նա նայում է տղամարդուն ու հանգիստ ասում. «Սիրելի՛ս, կներես, ես մի քիչ ուշացա: Ամբողջ ժամանակ քո մասին էին մտածում ու չէի կարողանում կողմնորոշվել, թե ինչ հագնեմ, որ քեզ դուր գա»: Ու տղամարդու միջի հսկա, կատաղի առյուծը կամաց-կամաց փոքրանում է ու դառնում պստլիկ փիսո, որը հնազանդ գնում է կնոջ հետևից: Այն կնոջ, որին քիչ առաջ պատրաստ էր պատառ-պատառ անել…

Ես վաղուց արդեն անցել էի «առյուծի ստադիան» և հասել էի «մամոնտի ռեինկառնացիային», երբ բարում նստած տղամարդկանց արձագանքից հասկացա, որ Կատյան մոտենում է:

Ֆիլմերում ամենից շատ սիրում եմ այն պահը, երբ կադրը դանդաղում է, և հանդիսատեսը հասցնում է տեսնել ամեն ինչ: Վիսկիից, ցանկությունից, սպասումից զգայարաններս սրվել էին, և մինչ Կատյան դուրս եկավ վերելակից ու մոտեցավ ինձ, հասցրի նկատել ամեն ինչ. հետևի սեղանին նստած երկու վրացիներն ախորժակով ծպծպացրին լեզուները, կողքի սեղանի երեք գերմանացիները թեև նստած էին «գենդերային հավասարություն, կանանց իրավունքների պաշտպանություն» դեմքի արտահայտությամբ, այնուամենայնիվ, նրանց եվրոպական «պոլիտկոռեկտ» դեմքերին արևելյան լուրջ կրքեր էին խաղում:

– Երբեք այսքան երկար չէի սպասել աղջկա՝ Թբիլիսիում,– ասացի ես,– կներես, բայց ստիպված էի մենակս խմել:

– Լավ, ներում եմ,– լկտիաբար հայտարարեց կաթնագույն քրմուհին:

Երբ նստեցինք տաքսի, նա շշնջաց ականջիս:

– Իմ կարծիքով՝ տաքսիստը հայ է կամ գոնե հասկանում է հայերեն:

– Հետո՞ ինչ,– զարմացա ես:

– Դե, նախազգուշացնում եմ, որ եթե հանկարծ որոշես անպարկեշտ առաջարկներ անել ինձ, այլ լեզվով դա անես:

– Դու մոռանում ես, որ անպարկեշտ առաջարկներն արվում են հատուկ հնչերանգով: Այնպես որ, էական չէ, թե որ լեզվով են դրանք արվում, միևնույն է՝ իմաստը պարզ է և ակնհայտ:

Այդ պահին տաքսու վարորդը, որի ազգային պատկանելությունը դեռևս հարցականի տակ էր, այնպիսի կոպիտ խախտում արեց, որ անմիջապես հասկացա՝ հայ է:

– Ուզում եմ քեզ հետ ճոպանուղի նստել,– հայտարարեց Կատյան:

– Երեկոյան զգեստո՞վ:

– Այո՛: Իսկ հիմա ի՞նչ է, ցերե՞կ է:

Այս կյանքում ամենից դժվարը հաստատակամ «ոչ» ասելն է: Երբ սովորում ես ճիշտ պահին, ճիշտ վայրում և որ ամենակարևորն է՝

ճիշտ առոգանությամբ այդ մի հատիկ բառն արտասանելը, կյանքդ անհամեմատ հեշտանում է: Սակայն, ցավոք, ես մի թուլություն ունեմ. երբ գեղեցիկ կինն ինձ մի բան է խնդրում, չեմ կարողանում մերժել, որքան էլ որ տարօրինակ ու անհեթեթ լինի նրա խնդրանքը: Ու արդյունքում, վատագույն դեպքում ռեստորանում կամ բարում, իսկ լավագույն դեպքում՝ անկողնում հաճելի երեկո անցկացնելու փոխարեն հայտնվում եմ չափազանց անսպասելի վայրերում: Այս անգամ «ոչ» ասել չկարողանալու իմ վատ սովորությունը հանգեցրեց նրան, որ գիշերվա կեսին կիսամերկ գեղեցկուհու հետ հայտնվեցի Թբիլիսիի ճոպանուղու կայարանում: Ու այն պահին, երբ սկսեցի մտածել, որ այնքան էլ վատ միտք չէ Կատյայի հետ միասին սավառնել գիշերային Թբիլիսիի վրայով, շեղաչք մի ճապոնացի արագ խցկվեց ապակեպատ խցիկը: Նրա փոքրիկ մարմնի յուրաքանչյուր միլիմետր օգտագործված էր իբրև ցուցատախտակ՝ բարձր տեխնոլոգիաների վերջին հրաշքների համար: Ձեռքին կապած էր հսկայական ժամացույց, որը ցույց էր տալիս օրը, ժամը, մթնոլորտային ճնշումը, ռադիացիայի աստիճանը, հյուսիսը, հարավը, ջրի մաքրության աստիճանը և մի շարք այլ պիտանի ու անպիտան բաներ: Վզին կախված էր պրոֆեսիոնալ ֆոտոխցիկ, ատամներով բռնել էր Sony տեսախցիկ, իսկ կարճլիկ մատիկներով՝ iPad, iPod, iPhone և անհասկանալի նշանակության մի iՁիբիլ: Եվ որ ամենածիծաղելին է, աճպարարի ճարպկությամբ նա միաժամանակ օգտագործում էր այս բոլոր թվային խաղալիքները:

– Աստվա՛ծ իմ, նայի՛ր ինչ գեղեցիկ է,– բացականչեց Կատյան, երբ ճոպանուղին շարժվեց:– Ես ինձ Մարգարիտայի պես վհուկ եմ զգում, որը ցախավելի վրա նստած՝ շրջում է իր տիրույթներով: Վայ, իսկ դու էլ Վարպետն ես: Չէ՞ որ դու էլ ես գրող:

Սակայն այդ պահին նա ավելի շատ նման էր հետաքրքրասեր աղջնակի, որ իր փոքրիկ քթով կպել էր խցիկի ապակուն և հիացած նայում էր լույսերով ողողված քաղաքին:

Իսկապես որ գեղեցիկ էր: Նստարանից վեր կացա և կանգնեցի Կատյայի կողքին: Նա անսպասելիորեն շրջվեց, գրկեց պարանոցս ու սկսեց դանդաղ համբուրել: Մինչ երանության անդունդը գահավիժելը հասցրի նկատել, որ ճապոնացու փոքրիկ աչքերն այնքան լայն բացվեցին, որ նա նմանվեց շարքային եվրոպացու: Ուշքի եկանք լուսանկարող iPad-ների, iPod-ների, iPhone-ների և անհասկանալի նշանակության iՋիբիլ-ների չխկչխկոցներից. ճարպիկը մեզ հավերժացրել-թվայնացրել էր բոլոր հնարավոր տարբերակներով...

Թբիլիսիում ամենից շատ սիրում էի Շարդենը: Ֆրանսիացի կաթոլիկ միսիոների պատվին անվանված փողոցն անշուշտ մայրաքաղաքի սիրտն էր և գլխավոր զարկերակը: Մի քանի տարի առաջ վերականգնված Մայդանը, ինչպես վրացիներն են անվանում այն, նմանվել էր Ելիսեյան դաշտերին՝ իր բազմաթիվ սրճարաններով, ռեստորաններով, խանութներով և սրահներով:

– Կարո՞ղ ես ինձ բացատրել, թե ինչպես վրացիներին հաջողվեց պահպանել ու վերականգնել իրենց քաղաքի ճարտարապետական-պատմամշակութային դեմքը, իսկ մեր «Վարդագույնը» վերածվեց աղճատված դիմակի,– հարցրեց Կատյան:

– Պատճառը «ռաբիսն» է,– առանց երկար մտածելու պատասխանեցի ես:

– Այսի՞նքն,– չհասկացավ Կատյան:

– Ինչպե՞ս բացատրեմ: Ռաբիսը նստած է մեր ժողովրդի արյան և ուղեղի մեջ արդեն երկար ժամանակ և ներսից քայքայում է մեզ: Գուցե ուրիշ իմաստով, բայց «ռաբիսը» նույնքան վնասներ է տվել մեր ժողովրդին, որքան կոմունիստներն ու նորանկախ Հայաստանի իշխանությունները:

– Այո՛, դա այդպես է,– զարմանալիորեն համաձայնեց ինձ հետ Կատյան,– բայց արի՛ չփչացնենք երեկոն: Պաշտում եմ այս ակումբը. Թբիլիսիի ամենալավ, ամենամոդայիկ ակումբներից մեկն է:

Մենք կանգնել էինք հավաբուն հիշեցնող մի նկուղի մոտ:

– Իսկապե՞ս,– չկարողացա զարմանքս թաքցնել ես:

– Դու տեսքին մի՛ նայիր: Հավատա՛, այստեղ անցկացրած երեկոն դեռ երկար կհիշես,– վստահեցրեց ինձ Կատյան: Սակայն ինձ սարսափելի դուր չեկան նրա ոգևորված ձայնի որոշ երանգներ:

– Ինչո՞ւ ես դու այդքան սիրում այդ հիմար գիշերային ակումբները: Ախր դու խորը, լիքը, վառ անհատականություն ես: Չեմ կարողանում հասկանալ, թե ինչն է քեզ այդքան ձգում այդ գաղջ, մութ ակումբներում, որտեղ անչափահասները փորձում են իրենց սեռական էներգիան տարրալուծել պարի մեջ:

– Օօօ՛, ինչիպիսի բարդ բառեր սկսեց օգտագործել տրամվայի սակավախոս վարորդը, միայն թե աղջկան զրկի իրեն հասանելիք հաճելի երեկոյից: Լավ, բացատրում եմ վերջին անգամ: Չնայած խիստ կասկածում եմ, որ քո պոետական բարձունքից կհասկանաս սովորական մահկանացու կնոջը տանջող վախերն ու կրքերը: Ցանկացած կնոջ անօտարելի իրավունքն է իրեն երջանիկ ու երիտասարդ զգալը: Կանայք, որոնց տարիքը +30 է, հաճախում են ակումբներ ոչ թե այն պատճառով, որ իրենց հաճելի է, երբ իրենց փորձում են քսմսվել կորյակավոր լակոտիկներ, այլ որպեսզի ապացուցեն շրջապատին և առաջին հերթին հենց իրենց, որ իրենք դեռ «ohn-hn են»:

– Ուզում ես ասե՞լ, որ սիրում ես ակումբները…,– ցնցված և հիասթափված սկսեցի ես, սակայն Կատյան ինձ ընդհատեց:

– Բայց լինում են բացառություններ: Օրինակ՝ ես: Ես սիրում եմ ակումբները, որովհետև պարզապես սիրում եմ պարել: Շատ եմ սիրում: Ես այդպես լիցքաթափվում եմ: Ոմանք լիցքաթափվում են մերսումից, մյուսները՝ ազարտային խաղերից, երրորդները՝ խմիչքից կամ սեքսից: Ես լիցքաթափվում եմ պարելուց: Չէ, ստում եմ, սեքսից էլ: Բայց նախ՝ պարելուց, հետո նոր՝ սեքսից:

– Բավական հուսադրող ինֆորմացիա էր,– ասացի ես: Բայց պաշտոնապես հայտարարում եմ, որ ոտք չեմ դնելու այդ առնետանոցը, որը դու անվանում ես Թբիլիսիի ամենալավ ժամանցի վայրը:

Կլիցքաթափվես ուրիշ վայրում և ուրիշ երաժշտության տակ: Եվ ամենակարևորը՝ ուրիշ շրջապատում: Հրավիրում եմ քեզ Թբիլիսիի ամենասովորական ռեստորաններից մեկը: Կտեսնես ոչ միայն ոնց են պարում, այլ նաև ինչպես են երգում +30, +40 և +50 համակրելի, ոչ կորյակավոր տղամարդիկ: Ես քեզ ցույց կտամ իրական, «ոչ գլամուրային» Թբիլիսին:

– Գայթակղիչ է հնչում: Իսկ այնտեղ թեյ տալի՞ս են սառած, սոված քրմուհիներին:

– Ցանկացած տղամարդու պարտականությունն է կերակրել ու տաքացնել կնոջը՝ հատկապես եթե այդ կինն իրենը չէ... Տալիս են, ամեն ինչ էլ տալիս են: Անգամ գինի են տալիս...

Թբիլիսի–Երևան

Առավոտյան ինձ արթնացրեց հեռախոսս: Բանկից էին զանգում՝ հիշեցնելու, որ վարկիս մարման օրն է: Բայց ես ոչ միայն ամսաթիվը չէի հիշում, այլև եթե հարցնեին, թե որ թվականն է, վստահ եմ՝ կդժվարանայի պատասխանել: Փորձեցի վեր կենալ, բայց հասկացա, որ անկարող եմ: Մարմինս պարզապես հրաժարվում էր ենթարկվել: Մի կողմ շպրտեցի հեռախոսն ու նորից քնեցի: Հետո նորից զանգեցին. այս անգամ կինս էր: Ասացի, որ ողջ եմ, ու կրկին փակեցի աչքերս: Երրորդ զանգից հետո, որ աշխատավայրիցս էր, պարզապես անջատեցի հեռախոսը՝ մտքումս հայհոյելով «ռոումինգ» կոչվածը և ընդհանրապես բջջային կապը հորինողներին: Բայց միևնույն է՝ ինձ չթողեցին քնել: Այս անգամ արդեն զանգեց սենյակիս հեռախոսը: Կանացի մի քնքուշ ձայն հայտնեց, որ պետք է հանձնեմ համարս: Նայեցի՝ ժամը տասներկուսն անց էր: Մի կերպ վեր կացա տեղիցս, գտա լոգարանն ու կոտրատված մարմինս հանձնեցի ցնցուղին: Բարեբախտաբար օգնեց: Սկսեցի աստիճանաբար վերադառնալ իրականություն և մտաբերել որոշ բաներ, այդ թվում այն, որ Հայաստանում չեմ: Մտաբերեցի նաև տարեթիվը, ամիսը, անգամ այն, որ օրը երկուշաբթի է: Մի րոպե. ինչպե՞ս թե երկուշաբթի: Չէ՞ որ հենց այդ օրը Վաղինակը պիտի հանդիպեր «Appendix vermiformis» կուսակցության առաջնորդի հետ:

Արագ հագնվեցի և իջա լոբբի: Վերելակի հայելու մեջ նկատեցի, որ պիջակս այնքան փոշոտ էր, կարծես դրանով մաքրել էին հատակը: Աստվա՛ծ իմ, ինչե՞ր էի արել երեկ…

Երբ հանձնեցի համարս և վճարեցի, ժամը մեկն էր: Պարզ էր, որ ինչ էլ անեի, չէի կարող ժամը հինգին լինել Երևանում: Ուրեմն կարելի էր չշտապել, հանգիստ մի բաժակ սուրճ խմել և որոշել

հետագա անելիքս: Հիշեցի, որ առավոտյան անջատել էի հեռախոսս, որ կարողանամ քնել: Միացրի այն և առաջինը զանգեցի Կատյային:

– Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էր հեռախոսդ անջատված,– անհանգիստ տոնով հարցրեց նա,– ժամը տասից զանգում եմ:

– Իսկապե՞ս,– ես չկարողացա թաքցնել ուրախությունս,– դու ինձ զանգե՞լ ես:

– Իհարկե զանգել եմ: Չէ՞ որ պայմանավորվել էինք, որ տասին քեզ արթնացնեմ:

– Իսկ ինչո՞ւ չարթնացրիր:

– Որովհետև հեռախոսդ անջատված էր:

– Կարող էիր գալ սենյակս:

Գծի մյուս ծայրում մի հոգոց լսվեց, ապա Կատյան ասաց.

– Դու իսկապե՞ս ոչինչ չես հիշում: Չէ՞ որ քեզ ասացի, որ մենք մեկնելու ենք առավոտյան ժամը վեցին, նույնիսկ քեզ առաջարկեցի գալ մեզ հետ, բայց դու հրաժարվեցիր: Միայն խնդրեցիր, որ ժամը տասին արթնացնեմ քեզ: Դե, հիշեցի՞ր:

Ես իհարկե չհիշեցի: Բայց դա կարևոր չէր: Կարևորն այն էր, որ նա անհանգիստ էր:

– Մենք երեկ պարե՞լ ենք,– չգիտեմ ինչու մտաբերեցի, որ մենք պարում էինք:

– Այդ մեկը, փաստորեն, հիշում ես: Իհարկե պարել ենք և այն էլ՝ ոնց:

– Ի՞նչ է նշանակում՝ «այն էլ ոնց»:

– Նշանակում է, որ դու փորձեցիր ինձ գրկած պտտեցնել, ու մենք երկուսով փռվեցինք գետնին:

Դե իհարկե: Այս մեկը հիշեցի: Ահա թե ինչու էր պիջակս այդպես փոշոտ:

– Իսկ դու ինձ սիրո՞ւմ ես,– հարցրի:

– Ո՛չ:

Բայցևայնպես, ինչ-որ երջանկություն էր խլրտում ներսումս: Մարմինս ցավում էր, սիրտս խառնում էր, գլուխս՝ պայթում, բայց մեկ է, ներսումս ինչ-որ երջանկություն էր խլրտում:

Խմեցի սուրճս ու մատուցողին խնդրեցի տաքսի կանչել: Մինչ այն կգար, զանգեցի Պանդային: Տվեցի Վաղինակի հասցեն և խնդրեցի գնալ նրա բնակարանն ու այնտեղից զանգել ինձ (Վաղինակի բնակարանում ոչ միայն հոսանք չկար, այլև հեռախոս, իսկ բջջային նա պարզապես չուներ): Պանդայից ես իհարկե հեշտ չպրծա: Նա սկսեց հարցուփորձ անել ինձ: Նախ հարցրեց, թե որտեղ եմ եղել այս երկու օրը, ում հետ եմ եղել, ինչ եմ արել ու նման բաներ: Ես, բնականաբար, չպատասխանեցի: Հետո փորձեց ճշտել, թե որտեղ եմ հիմա: Ես ընդամենը ասացի, որ Երևանում չեմ: Վերջում միայն Պանդան հետաքրքրվեց, թե ով է Վաղինակը և ինչու հեռախոս չունի: Այստեղ ես հասկացա, որ հիմարություն եմ արել՝ դիմելով նրան: Պատկերացրի, թե ինչ կլինի, եթե նա հանկարծ խոսակցության բռնվի Վաղինակի հետ, և վերջինը պատմի մեր ծրագրերի մասին: Էլ չեմ ասում, որ եթե հանկարծ պատգամավորության թեկնածուն առաջարկի նրան խմել, ու նա համաձայնի: Պատկերն է՛լ ավելի ամբողջական դառնալու համար պատկերացրի, որ հարգարժան «բոմժերն» այդ պահին Վաղինակի բնակարանում են: Մի խոսքով, Պանդային կամ ավելի ճիշտ՝ ինձ, հետաքրքիր կյանք էր սպասվում:

Բախտորոշ այդ զանգը հնչեց մոտ մեկ ժամից՝ այն պահին, երբ ես անցնել էի Հայաստան-Վրաստան սահմանի վրացական հատվածը, հասել հայկականին, և հայ սահմանապահը ստուգում էր անձնագիրս:

– Դու հո չե՞ս ցնդել,– լսեցի Պանդայի ձայնը,– այս ո՞ւր ես ինձ ուղարկել:

– Ի՞նչ է պատահել,– հարցրի ես:

– Ի՞նչ պիտի պատահի, այստեղ դիակներ են:

– Ի՞նչ դիակներ,– ես լրջորեն անհանգստացա և բարձրացրի ձայնս:

Սահմանապահը թողեց անձնագիրս և ուշադիր նայեց դեմքիս:

– Դե դիակ չասեմ, ի՞նչ ասեմ: Այստեղ չորս հարբած մարդիկ են, երեքը՝ տղամարդ, մեկը՝ կին,– շարունակեց Պանդան:

– Հիմար, այդպիսի կատա՞կ կանեն,– գոռացի ես ու անջատելով հեռախոսը՝ մեղավոր հայացքով նայեցի սահմանապահին:

Նա մի քիչ երկմտելով՝ վերադարձրեց անձնագիրս: Ես հեռացա անցակետից ու նորից զանգեցի Պանդային:

– Կարո՞ղ ես նորմալ բացատրել, թե ինչ է այդտեղ կատարվում:

– Բացատրեմ,– ասաց Պանդան,– այս պահին ես գտնվում եմ մի բնակարանում, որն ինձ հիշեցնում է դամբարան, և իմ առջև բացվում է հետևյալ տեսարանը. տղամարդու երեք դիակ կա խոհանոցում: Այն, որ նրանցից մեկը վերարկուով է, կարելի է հասկանալ, որովհետև այստեղ դամբարանային ցուրտ է, բայց թե ինչու է մյուսը կիսամերկ, ես չեմ կարողանում հասկանալ: Երրորդ տղամարդու դիակն այս պահին սեղանի տակ է: Կար նաև մի կին, որն ինձ տեսնելով՝ փախավ պատշգամբ՝ գոռալով, որ ես ԿԳԲ-ից եմ: Ուրիշ ի՞նչ է քեզ հետաքրքրում:

– Սպասի՛ր,– զարմացա ես,– այդտեղ չո՞րս հոգի են: Իսկ որտե՞ղ է Վաղինակը:

– Ես ի՞նչ իմանամ՝ սրանցից որն է Վաղինակը: Մի բան կարող եմ ասել հաստատ՝ նա չէ, ով այս պահին պատշգամբում է:

Ես խնդրեցի Պանդային չանջատել հեռախոսը և «դիակներից» մեկին հարցնել, թե որտեղ է Վաղինակը:

Պարզվեց, որ պատգամավորության թեկնածուն արդեն մեկ ժամ է՝ բացակայում էր: Տեսակետ կար, որ նա գնացել է խանութ և տեսակետ կար, որ նա գնացել է վարսավիրանոց: Ես խնդրեցի Պանդային մնալ բնակարանում այնքան, մինչև տանտերը կվերադառնար: Նա իհարկե չհամաձայնեց: Ես երկար համոզեցի, և ի վերջո կանգ առանք այն տարբերակի վրա, որ նա կսպասի մուտքի մոտ: Նստեցի մեքենաս և սլացա Երևան (որքանով որ հնարավոր էր սլանալ ծակ ռադիատորով): Արդեն հասել էի Ալավերդու կողմերը, երբ զանգեց հեռախոսս: Պանդայի համարն էր, բայց խոսողը Վաղինակն էր:

– Որտե՞ղ ես,– ասաց նա,– երկու օր է՝ քեզ եմ սպասում:

Ձայնը սթափ էր, կանոնավոր: Մի՞թե իսկապես նա չի խմել՝ զարմացա ես: Փորձեցի արդարանալ, որ շտապ գործ է եղել, և մեկնել եմ Վրաստան: Ասացի, որ չեմ հասցնի Երևանում լինել մինչև պայմանավորված ժամը:

– Մի՛ անհանգստացիր, ես ամեն ինչ կանեմ,– չափազանց ինքնավստահ նետեց նա,– միայն ինձ ասա, թե որտեղ է դրանց գրասենյակը:

– Ավելի լավ է՝ հետաձգենք հանդիպումը: Ես կզանգեմ նրանց մամուլի խոսնակին ու մի բան կհորինեմ:

– Կարիք չկա,– պնդեց Վաղինակը,– ես կգնամ, և ամեն ինչ լավ կլինի: Պարզապես ասա՛ ինձ հասցեն:

Ես տվեցի հասցեն, այնուհետև ասացի.

– Ես Երևան կհասնեմ մի երեք-չորս ժամից. դու որտե՞ղ կլինես:

– Տանը, ուրիշ որտե՞ղ:

– Դե լավ, ուրեմն կհանդիպենք քեզ մոտ: Ի դեպ, չես կարծո՞ւմ, որ ժամանակն է բջջային հեռախոս պահել:

– Ո՛չ, չեմ կարծում,– ասաց նա և անջատեց Պանդայի հեռախոսը:

Վերջ, մտածեցի ես, գործը դեռ չսկսած՝ կարելի է ձախողված համարել: Դե իհարկե, այսպես էլ պետք է լիներ: Ուրիշ ի՞նչ կարելի էր սպասել, երբ Վաղինակի պես «զապոյիստը» և ինձ պես թուլակամ մեկը միասին գործ են բռնում: Ինչպես կասեր Վասյաներից մեկը՝ «ծո հըբը քեզի պե՞տք էր ըդքան խմել»: Եվ իսկապես, ենթադրենք լավ արեցի, որ գնացի Թբիլիսի, բայց մի՞թե պարտադիր էր այնքան խմել, որ մոռանամ գործերս: Եվ Կատյան էլ, եթե չեմ սխալվում, անընդհատ հիշեցնում էր մեր գրազի մասին: Գրազի, որը կարելի է պարտված համարել: Դե ուրեմն գնա Երևան ու շարունակիր խմել: Կարող ես անգամ «զապոյ մտնել»: Ընկերն էլ կա, տեղն էլ կա՝ Վաղինակը և նրա բնակարանը:

Մինչև Երևան հասնելն առնվազն մի տասը տեղ կանգնեցի, որպեսզի ջուր ավելացնեմ ծակ ռադիատորի մեջ: Խեղճ մեքենա: Այն ազնվորեն ծառայում էր ինձ արդեն երեք տարի, մինչդեռ ես երեք

անգամ էլ նրան արհեստավորի մոտ տարած չկայի: Ինչե՞ր միայն չէին եկել իմ փոքրիկ «Ռենոյի» գլխին... Մի անգամ Ղարաբաղից վերադարձի ճանապարհին մեքենայի շարժիչն անջատվեց և ոչ մի կերպ չէր միանում: Ես մի ժամ մնացի ճանապարհին, մինչև մի վարորդ չօգնեց ինձ. պարզվեց՝ պոկվել էր ինժեկտորի ինչ-որ լար: Վարորդն այն ամրացրեց մեկուսիչ ժապավենով և ասաց, որ Երևան հասնելով փոխեմ, որովհետև անպայման նորից կպոկվի: Դա մեկ տարի առաջ էր, և ես մինչև հիմա չէի փոխել այդ լարը: Մի անգամ էլ թեթև բախվեցի մի տաքսու, և մեքենայիս դիմացի շիթը մի կողմից պոկվեց ու կախվեց գետնին: Տաքսու վարորդի հետ մի կերպ կապեցինք այն, և մինչև հիմա շիթն այդպես կապված էր:

Բայցևայնպես, այս անգամ էլ, իմ հավատարիմ «Ռենոն» ինձ բարեհաջող տեղ հասցրեց:

Ճիշտն ասած՝ Վաղինակի մոտ գնացի միայն նրա համար, որ արձանագրեմ այս պատմության ավարտը, ներողություն խնդրեմ նրանից իր «նախագահական» ծրագրերն այդչափ նսեմացնելու և փաստորեն ձախողելու համար ու հրաժեշտ տամ:

Նա տանը մենակ էր: «Բոմժերը» չկային: Նստած էր խոհանոցի սեղանի մոտ, նույն տեղում, նույն դիրքով՝ դիմացը մի շիշ օղի և երկու բաժակ (երկրորդը հավանաբար ինձ համար էր): Սակայն երբ մոտեցա, նավթի լամպի լույսի տակ տեսա մի բոլորովին այլ կերպար: Էլեգանտ սանրվածքով, ոսկեզօծ ակնոցներով, թանկարժեք կոստյումով և վզին՝ վերնաշապիկի տակ փայլուն մի «ժուժու» կապած. կարծես բոլորովին ուրիշ մարդ լիներ:

– Այս ի՞նչ կերպարանափոխություն է,– զարմացած հարցրի ես:

– Ինչեր չես անի հանուն պատգամավորի մանդատի,– ծիծաղեց նա,– նստի՛ր, նստի՛ր, մի բաժակ խմենք:

Ես մեքենայաբար ենթարկվեցի: Նստեցի, լուռ խմեցինք մի բաժակ, այնուհետև երկրորդը: Չէի համարձակվում որևէ բան հարցնել: Երրորդ բաժակից հետո միայն Վաղինակը խոսեց:

– Դե ինչ, կարող ես շնորհավորել ինձ. կարելի է ասել, որ հիմա ես կուսակցական եմ: Անդամատոմս դեռ չունեմ, բայց դա կարևոր չէ: Կարևորն այն է, որ ինձ խոստացված է տասներորդ հորիզոնականը «Appendix vermiformis» կուսակցության համամասնական ցուցակում: Միայն ափսոսում եմ, որ քեզ լսեցի ու այդչափ ցածր գնահատեցի ինքս ինձ: Համոզված եմ, որ այդ սրիկան հինգերորդին էլ կհամաձայներ:

– Բայց ինչպե՞ս,– շփոթված հարցրի ես,– ինչպե՞ս դա քեզ հաջողվեց:

– Դե արդեն ասացի՝ մեծ զոհողության գնով: Ստիպված էի համաձայնել անդամակցել նրանց կուսակցությանը: Դժվար էր մերժելը, պետք է տեսնեիր, թե ինչպես էր նա խնդրում: Բայց պետք է ասեմ, որ հաջողության դափնիների կեսը քոնն են: Դու շատ ճիշտ տեղից էիր բռնել՝ այդ քո «մեդիա հոլդինգի» գաղափարով: Անշուշտ դեր խաղաց նաև փողը: Իսկ մնացածն ընդամենը տեխնիկայի հարց էր: Չէ՞ որ ես քեզ ասացի՝ հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ:

Մեր մամուլի ազատությունը

Մեր խմբագրությունը հինգ տարեկան էր: Հինգ տարի առաջ այս օրը մենք առաջին մամլո ասուլիսը կազմակերպեցինք մեր ակումբում: Դա 2006 թվականին էր:

Ժամանակները մի քիչ տարբեր էին: Ասել, որ երկրում բացակայում էր խոսքի և մամուլի ազատությունը՝ իհարկե ճիշտ չէր լինի: Միայն թե դա հենց այն էր, ինչ ասում էր տպագիր մամուլը՝ առանց հասկանալու կամ չուզենալով հասկանալ պարադոքսի ողջ խորությունը: Ասել, որ երկրում իշխանությունները չէին վերահսկում հեռուստատեսությունը և այստեղ բացակայում էր գրաքննությունը, նույնպես ճիշտ չէր լինի, բայց դա էլ հենց այն էր, ինչ պնդում էին անխտիր բոլոր հեռուստաալիքները՝ թքած ունենալով իրականության վրա:

Տպագիր մամուլում ասվում էին այլ բաներ ևս. իշխանությունների բոլոր օղակների և բոլոր նրանց մասին, ովքեր իշխանության մեջ էին կամ կապ ունեին իշխանության հետ: Նախագահի և նրա թիմի մասին, իշխող կուսակցության և նրա ղեկավարների մասին, խորհրդարանի և խորհրդարանականների մասին, դատական համակարգի և դատավորների մասին, հավասարապես, ինչպես նշված մարդկանց ընտանիքների, նրանց հարազատների և մերձավորների մասին: Ասվում էին վատ բաներ:

Բոլոր հեռուստաընկերություններն անխտիր իրենց հերթին պնդում էին այլ բաներ. պնդում էին, որ երկրում անողոք պայքար է տարվում անօրինականությունների դեմ, պնդում էին, որ երկրից արագ տեմպերով վերանում են կաշառակերությունն ու հովանավորչությունը, պնդում էին, որ երկրում սրընթաց տեմպերով զարգանում է տնտեսությունը, որ ժողովուրդը հավատում և վստահում է իշխանություններին: Մի խոսքով՝ միայն լավ բաներ:

Եվ, փաստորեն, թերթերը ասում էին, որ երկրում չկա մամուլի ազատություն, իսկ հեռուստատեսությունը պնդում էր, որ չկա գրաքննություն:

Բայց դա չէր ամենազավեշտալին: Ամենազավեշտալին այն էր, որ պարադոքսի ողջ խորությամբ հանդերձ և թքած ունենալով իրականության վրա՝ երկրում իսկապես չկար մամուլի ազատություն, և չկար մամուլի գրաքննություն: Որովհետև չկար մամուլ:

Ի՞նչ նպատակի պիտի ծառայի մամուլն ընդհանրապես և ի՞նչ նպատակի պիտի ծառայի մամուլն այն հասարակության մեջ, որտեղ ամեն ինչ կարգին չէ: Որ հասարակությունը տեղեկացվա՞ծ լինի: Անշուշտ: Բայց ոչ թե տեղեկացված լինի այն բաների մասին, ինչը գտնվում է տվյալ լրատվամիջոցի տերերի հետաքրքրության շրջանակ, այլ առհասարակ այն ամենի մասին, ինչը կարևոր է: Բայց դա բավական չէ: Մամուլը միայն տեղեկատվության աղբյուր չէ: Որովհետև տեղեկատվությունը, պատասխանելով մի քանի կարևոր հարցերի՝ ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, չի պատասխանում ավելի կարևոր հարցի՝ ինչո՞ւ: Հետևաբար մամուլը պիտի այնպես անի, որ հասարակությունը ստանա իր համար կարևոր հարցերի սպառիչ պատասխանները՝ ինչո՞ւ եղավ այսինչ բանը, կարո՞ղ էր արդյոք չլինել, ի՞նչ է սպասվում հետո և այլն: Բայց սրանք պետք է լինեն ոչ թե տվյալ լրատվամիջոցի տերերին ձեռնտու, այլ իրական պատասխանները:

Բայց դա էլ բավական չէ: Մամուլը նաև պիտի դաստիարակի, պիտի խրախուսի, պատժի, ոգևորի, պիտի առաջնորդի և այլն: Սա՝ ընդհանրապես:

Իսկ անառողջ հասարակության մեջ մամուլն ունի երկու գլխավոր գործառույթ՝ տալ հիվանդության ախտորոշումը և առաջարկել դեղատոմսը: Եվ անել դա անընդհատ, մինչև հասարակության առողջացումը: Այլապես սխալ չի լինի ասել, որ մամուլ չկա, եթե անգամ երկրում հրատարակվում է հարյուր անուն թերթ և հեռարձակվում է հարյուր հեռուստաալիք:

Ինչո՞ւ էին 2006 թվականին մարդիկ կարդում այսինչ թերթը և դիտում այնինչ ալիքը: Ճիշտ նույն պատճառով, ինչ նրանք

կարդում էին մյուս թերթերը և դիտում էին մյուս ալիքները: Ընտրության բացակայության պատճառով: Տպագիր մամուլը, որ ուներ խիստ սահմանափակ տպաքանակ և հետևաբար՝ խիստ սահմանափակ թվով ընթերցողներ, չէր վերահսկվում իշխանությունների կողմից հենց այդ պաճառով և, իհարկե, խոսքի ազատության որոշակի իմիտացիա ստեղծելու նպատակով, արդյունքում գրեթե ամբողջությամբ հայտնվել էր իշխանություններից «նեղացածների» կամ «ռևանշիստների» ձեռքին և զբաղված էր բացառապես իշխանություններին փնովելով՝ հաճախ անգամ դրականը ներկայացնելով որպես բացասական: Հեռուստատեսությունը, որի լսարանն էր երկրի ողջ բնակչությունը գումարած Սփյուռքը, խստորեն վերահսկվում էր իշխանությունների կողմից հենց այդ պատճառով և ներկայացնում էր երկրում տեղի ունեցող բացառապես դրականը՝ հաճախ անգամ բացասականը ներկայացնելով որպես դրական: Արդյունքում ընթերցողը որ թերթն էլ գներ (չնչին բացառություններով), հանդիպում էր միևնույն մաղձին, և հեռուստադիտողը որ ալիքն էլ միացներ (դարձյալ չնչին բացառություններով), լսում էր միևնույն դիֆերամբները:

Եվ ուրեմն այդ ժամանակ «ռևանշիստներն» անընդհատ պնդում էին, թե Հայաստանում չկա խոսքի ազատություն: Անհասկանալի էր մի քիչ: Երբ դու կարող ես ասել, որ չկա խոսքի ազատություն, ուրեմն ինչպե՞ս չկա խոսքի ազատություն: Չէ՞ որ չի կարող չլինել այն, ինչը կա:

Ես ստիպված եմ հիշել մի պատմություն:

Մի օր Երևան-Մոսկվա չվերթի ինքնաթիռում կողքիս նստած մի կին բողոքում էր, թե ինքնաթիռում օդ չկա: Նրա հագին ջրասամույրի կամ ինչ-որ ուրիշ կենդանու մորթուց մուշտակ էր, գլխին՝ ջրասամույրի կամ ինչ-որ ուրիշ կենդանու մորթուց գլխարկ, որի տակից երևում էին չգիտես ինչու՝ նարնջագույն մազերը, իսկ ես կոնյակ էի խմում: Գուցե պարզապես շո՞գ է, փորձեցի հետաքրքրվել տիկնոջից, բայց նա հավանաբար վիրավորվեց և խեթ նայեց ինձ

ու տափաշշիս: Բայց հետաքրքիրը դեռ առջևում էր: Տիկինը կանչեց ուղեկցորդուհուն և ասաց, որ ինքնաթիռում օդ չկա, և ինքը պահանջում է, որ իրեն տեղափոխեն ուրիշ նստատեղ: Ուղեկցորդուհին, բարեբախտաբար, հումորով աղջիկ էր և քաղցրիկ ժպիտով հարցրեց՝ «ուրիշ նստատեղ՝ ուրի՞շ ինքնաթիռում»: Տիկինը, սակայն, չհասկացավ հումորը, կոպտեց քաղցրիկ ուղեկցորդուհուն և պնդեց, որ իրեն տեղափոխեն ուրիշ տեղ նույն ինքնաթիռում՝ հեռու հարբեցող մարդկանցից: «Հարբեցող մարդն», իհարկե, ես էի, բայց դա չէր կարևորը, կարևորն ուղեկցորդուհու հաջորդ պատասխանն էր. «Գուցե հանե՞ք ձեր մուշտակը, տիկի՛ն, բոլոր ուղևորներն այն արդեն տեսան»: Սա վերջնականապես հունից հանեց ջրասամույրի կամ ուրիշ կենդանու մորթուց մուշտակով և գլխարկով ու չգիտես ինչու՝ նարնջագույն մազերով տիկնոջը, և նա պահանջեց, որ կանչեն օդանավի հրամանատարին:

Այս պատմությունը ես ամեն անգամ հիշում էի, երբ ասում էին, որ Հայաստանում խոսքի ազատություն չկա: Գուցե հանեիք ձեր մուշտակնե՞րը, այնուամենայնի՛վ:

Իհարկե, խոսքի և մամուլի ազատությունը մեզանում կայացած չէին, բայց ո՞վ էր աղմկում այդ մասին: Այն լրատվամիջոցները, որոնք աղմկում էին, իրապես սահմանափակումներ ունեին խոսքի ազատության առումով, բայց նրանց նպատակը ամենևին էլ մամուլի ազատությունը չէր, և նրանք նույնպես ընդամենը պատվեր էին կատարում: Եվ նրանց սահմանափակողները բոլորովին էլ իշխանությունները չէին: Համենայնդեպս՝ ներկա:

Ներկա իշխանությունները սահմանափակում էին հեռուստաընկերությունների ազատությունը: Քիչ էր մնում ասեի՝ լա՛վ էլ անում էին: Անտարակույս, լավ չէին անում, բայց, այնուամենայնիվ, եկե՛ք պատկերացնենք, թե ինչ կլիներ, եթե այն մարդիկ, ում ձեռքի տակ էին ժամանակի շատ թերթեր, ձեռքի տակ ունենային նաև հեռուստատեսություններ, և այդ հեռուստատեսությունները ղեկավարեին այնպիսի մարդիկ, որպիսիք ղեկավարում էին օրվա շատ թերթերը:

Ես մի անգամ առիթ ունեցել եմ առնչվելու, ասենք՝ մասնագիտորեն, նման մի ղեկավարի հետ: Այդ ժամանակ նա մի թերթի խմբագիր էր (ի դեպ, հիմա պատրաստվում էր պատգամավոր դառնալ «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի ցուցակով), իսկ ես աշխատում էի մի թանգարանում՝ որպես տնօրեն: Եվ ահա թերթում, որի խմբագիրն էր նա, հրատարակվեց մի հոդված, որում, ի թիվ այլ մեղադրանքների, նշվում էր, որ թանգարանը, որի տնօրենն էի ես, ցուցանակ չունի: Թանգարանի շքամուտքի ուղիղ վերևում կախված էր և միշտ էլ կախված է եղել և հիմա էլ կախված է երկուքառակուսիմետրանոց մարմարե մի ցուցանակ: Ես այդ մասին տեղյակ պահեցի խմբագրին և, ի՞նչ եք կարծում, ի՞նչ պատասխանեց նա. «Թղթակիցը, երևի չի նկատել»: Ահա այսպես: Չմոռանամ ասել, որ այդ թղթակիցը հետո սկսեց լուսաբանել ներքաղաքական իրադարձությունները:

Հիմա եկե՛ք պատկերացնենք, թե ինչ կլիներ, եթե մի հեռուստաընկերություն ղեկավարեր նման մի խմբագիր, և թղթակիցները չնկատեին ցուցանակները: Եվ շարունակեին պատվեր կատարել՝ այս դեպքում ունենալով հարյուրապատիկ ավելի մեծ լսարան և այդ լսարանին հրամցնեին այն, ինչ պատվիրում էին իրենց: Իսկ որ այդպես էր լինելու, դժբախտաբար, կասկածից վեր էր:

– Ուրեմն մամուլի ազատություն՝ հանուն ինչի՞:

Մեր խմբագրությունը հինգ տարեկան էր: Մենք քիչ էինք, շատ չէինք: Մի տասը-տասներկու հոգի, ովքեր միանման էին մտածում ամենակարևոր բաների մասին: Մասնագիտական առումով և ընդհանրապես: Օրինակ, որ պետք չէ կեղծել, պետք չէ ստել, պետք չէ քծնել, պետք չէ բամբասել, պետք չէ վախենալ և այլն: Թե՛ մասնագիտական առումով, թե՛ ընդհանրապես:

Մենք հրատարակում էինք մի լրատվամիջոց, որը պատկանում էր մեզանից յուրաքանչյուրին, մեր ընթերցողներից յուրաքանչյուրին և առհասարակ՝ յուրաքանչյուրին, ով հարգում էր ճշմարտությունը և հարգում էր ազատությունը:

Անընդհատ մեզ փորձում էին համոզել, որ Հայաստանում չի կարող անկախ լրատվամիջոց լինել: Չի կարող լինել լրատվամիջոց, որն ի սկզբանե ծախված չէ կամ առնվազն որևէ պահի չի ծախվելու:

Պատկերացրե՛ք թանգարանի պահակի, ով հսկում է, որպեսզի չգողանան թանգարանում պահվող արժեքները:

Կամ մի հավաքարարի, ով մաքրում է քաղաքի մայթերը, որպեսզի դրանք մաքուր լինեն:

Ու մի դայակի, ով խնամում է երեխային, որպեսզի նա մեծանա:

Այդ մարդկանց վճարում են: Թանգարանի պահակին վճարում են նրա համար, որ նա պահպանում է թանգարանի արժեքները, հավաքարարին վճարում են, որ նա մաքուր պահի մայթերը, դայակին վճարում են, որ նա խնամի երեխային: Արդյոք սա նշանակո՞ւմ է, որ այս մարդիկ ծախված են:

Այլ բան է, որ պահակին վճարեն և պահանջեն, որ նա երբեմն աչք փակի, երբ թանգարանի աշխատակիցները թռցնում են թանգարանում պահվող արժեքները:

Եթե հավաքարարին վճարեն նրա համար, որ նա հավաքի մայթի աղբը և թափի այն ինչ-որ մեկի տանը:

Եթե դայակին վճարեն, որ նա երեխային սովորեցնի հետաքրքիր հայհոյանքներ:

Անընդհատ մեզ փորձում էին համոզել, որ Հայաստանում չի կարող անկախ լրատվամիջոց լինել: Չի կարող լինել լրատվամիջոց, որն ի սկզբանե ծախված չէ կամ առնվազն որևէ պահի չի ծախվելու:

Իհարկե, չի կարող: Եվ մենք էլ, անտարակույս, անկախ չէինք՝ այնքանով, որքանով կախված էինք ճշմարտության, բարոյականության, հայրենասիրության և մարդասիրության մեր պատկերացումներից:

Եվ մենք էլ անտարակույս ծախված էինք և պատրաստ էինք ամեն վայրկյան ծախվել՝ նրան, ով ուզում է պահպանել արժեքները, մաքուր պահել ու մեծացնել մեր փոքրիկ երկիրը:

Մենք փորձում էինք պահակ լինել, հավաքարար ու դայակ:

Մեր խմբագրությունը հինգ տարեկան էր: Ինչեր միայն չէր տեսել մեր խմբագրությունը, ովքեր միայն չէին եղել այստեղ:

Հինգ տարի առաջ այս օրն առաջին ասուլիսը տեղի ունեցավ մեր մամուլի սրահում: Այն ժամանակ լրատվական գործունեությամբ զբաղվելուց ու թերթ հրատարակելուց բացի մենք ունենինք այլ հետաքրքիր ծրագրեր ևս, որոնք սակայն չկարողացանք կյանքի կոչել: Ուզում էինք ստեղծել մի ակումբ, որը հավաքատեղի կդառնար լրագրողների ու քաղաքական գործիչների համար: Որտեղ այս մարդիկ կարող էին շփվել իրար հետ, ճանաչել իրար, անկաշկանդ մթնոլորտում քննարկել իրենց հետաքրքրող և հասարակությանը հուզող հարցերը, բանավիճել, ուր կարող էին թերթ կարդալ, երաժշտություն լսել, խմել: Մի խոսքով, ակումբ՝ իր դասական իմաստով, ուր պիտի բախվեին տեսակետներ ու զարկվեին բաժակներ: Եվ պետք է ասեմ, որ այս ամենի համար մենք ստեղծել էինք բոլոր պայմանները: Անգամ մի կատու էինք պահում, որը, կարծում էինք, կկլանի մարդկային բարդույթները և կօգնի մարդկանց իրենց ազատ զգալ:

Հետո ես հաճախ էի ինձ հարց տալիս, թե ինչու գաղափարը չիրականացավ ամբողջապես: Եվ մտածում էի, որ պատճառը հենց մարդկային բարդույթներն էին, որոնք կատուն փաստորեն չկարողացավ կլանել: Ակումբային մթնոլորտին տրվեցին և այստեղ իրենց լավ զգացին միայն այն քաղաքական գործիչներն ու լրագրողները, ովքեր իրենց արածների ու գրածների համար վախենալու ոչինչ չունեին, ովքեր մշտապես անկեղծ ու մաքուր էին եղել թե՛ գործընկերների, թե՛ հանրության, թե՛ իրենք իրենց առջև: Իսկ այդպիսիք քիչ էին: Մնացածներն այստեղ իրենց պարզապես լավ չէին կարող զգալ: Խնդիրն այն է, որ մեր քաղաքական և լրատվական դաշտում (համոզված եմ՝ այլ ոլորտներում ևս) ընդունված բան էր այսպես ասած «ետևից խոսելը», «տակ փորելը», «գլխին սարքելը»: Այս կեղտոտ երևույթները դարձել էին այնքան սովորական,

որ ոչ ոքի այլևս չէին զարմացնում: Եվ ինչպես կարող էին իրար «տակ փորող», իրար «գլխի սարքող», իրար «ետևից խոսող» մարդիկ հանգիստ խղճով հավաքվել միևնույն վայրում: Իհարկե չէին կարող:

Սա փորձառուների մասով: Իսկ նրանք, ովքեր նոր էին մտնում լրատվական կամ քաղաքական դաշտ և դեռ չէին հասցրել թրծվել վերոնշյալ երևույթների մեջ, վախեցած լինելու աստիճանի կաշկանդված էին ու բարդույթավորված:

Ինչպիսին երկրում տարվող քաղաքականությունն էր, այնպիսին էլ քաղաքական գործիչներն էին, ինչպիսին երկրի մամուլն էր, այնպիսին էլ մամուլի մարդիկ էին: Բացառությունները, ցավոք, այնքան քիչ էին, որ մեր ակումբում իրար գլխի չհավաքվեց անգամ երկու տասնյակ մարդ:

Ի՞նչն էր այս ամենի պատճառը: Ինչո՞ւ քսան տարեկան անկախ երկրում չձևավորվեց ազատ մտածող ու արտահայտվող ակզբունքային, համարձակ ու անկաշկանդ մարդկանց այդ շերտը:

Հաջորդը „Լևոն Մեծ„ դաշինքն է

«Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքը իմ (արդեն թերևս հանգիստ խղճով կարելի է ասել՝ մեր) ավանտյուրայի ցուցակում երկրորդն էր: Սակայն պատճառն այն չէր, որ այս քաղաքական ուժը կամ նրա առաջնորդը նախորդից ավելի լավն էր: Բոլորովին: Պարզապես, երբ քաղաքականության մեջ (գուցե ոչ միայն) համադրում ես ստորը և ճղճիմը՝ ուզած թե չուզած նախապատվությունը տալիս ես առաջինին: Այն գոնե զզվելի չէ:

Եվ ահա ես դարձյալ պիտի սուբյեկտիվ լինեմ և արտահայտեմ իմ հակակրանքը հանդեպ մեր ցուցակում տեղ գտած հաջորդ քաղաքական ուժի և նրա առաջնորդի: Եվ ինչ խոսք, պիտի փորձեմ հիմնավորել այն (չգիտեմ, թե որքանով դա ինձ հաջողվեց նախորդ դեպքում):

Այստեղ ես ուզում եմ ձեզ պատմել մի փոքր պատմություն:

Սրանից քսաներեք տարի առաջ, այսինքն՝ 1988 թվականին, մոտավորապես այս օրերին մենք մի քանի համադասարանցիներով «Պոպլավոկում» էինք: Կողքի սեղանի շուրջ նստած էին Ղարաբաղյան շարժման առաջնորդներից մի քանիսը՝ հինգ կամ վեց հոգի: Այդ հինգվեց հոգին որոշ ժամանակ լուռ էին, որովհետև ուտում էին: Սեղանի կենտրոնում իրար վրա շարված «անխնա» բուրում էին «Պոպլավոկի» հայտնի լահմաջոները: Մենք էլ էինք լուռ, և մենք էլ էինք լահմաջո պատվիրել, բայց ի տարբերություն հարևան սեղանի՝ չէինք ուտում, իսկ լուռ էինք, որովհետև շունչներս պահած սպասում էինք, որ ժողովրդի այդ ժամանակվա կուռքերն ինչ-որ բան խոսեն, ու մենք ինչոր բան լսենք: Բարեբախտաբար, լռությունը երկար չտևեց: Շարժման առաջնորդները վստահաբար քաղցած էին, և նրանց լռությունը տևեց ճիշտ այնքան, որքան պահանջվեց, որ վերջանան սեղանի լահմաջոները: Ավելի ճիշտ, ոչ թե

վերջանան, այլ գրեթե վերջանան: Սեղանի կենտրոնում՝ ափսեի մեջ, մնացել էր մեկ հատիկ լահմաջո, որը շատ խղճուկ տեսք ուներ:

Առաջնորդներն սկսեցին խոսել. ցածրաձայն ինչ-որ բան էին քննարկում՝ մերթընդմերթ հայացք գցելով վերջին լահմաջոյին: Որոշ ժամանակ անց մոտեցավ մատուցողուհին և այնքան փութաջանորեն սկսեց մաքրել սեղանը, որ հսկա կրծքերը քիչ մնաց՝ դուրս պրծնեին գոգնոցի տակից: Բայց կարևորը դա չէր. կարևորը մնացած վերջին լահմաջոն էր, որը, հավանաբար, սառել էր և իսկապես շատ խղճուկ տեսք ուներ՝ այն աստիճան, որ մատուցողուհին որոշեց այն տանել: Տանե՞լ: Ի՞նչ տանել: Ո՞վ դա նրան թույլ կտար: Անմիջապես հինգ թե վեց ձեռք վայր իջան լահմաջոյի վրա և պատառ-պատառ արին այն...

Հետո նույն կերպ պատառ-պատառ արվեց երկիրը: Եվ դեռ շարունակում է պատառ-պատառ արվել:

Ինչո՞ւ ես հիշեցի այս դեպքը: Որովհետև ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել, ամեն ինչ պետք է այլ կերպ լիներ, բայց չեղավ: Եվ խոսքն ամենևին այն մասին չէ, որ վերջին լահմաջոն պատառ-պատառ արած այդ մարդիկ չկարողացան հասարակություն կառուցել, չկարողացան տնտեսություն կառուցել, չկարողացան տեր կանգնել պատերազմում տարած մեր հաղթանակին, ավելին՝ ջլատեցին հասարակությունը, քանդեցին տնտեսությունը և ռազմաճակատից տուն տեղափոխեցին պատերազմը՝ փորձելով հաղթել սեփական ժողովրդին: Խոսքը սրա մասին չէ, որովհետև սա ընդամենը խոսում է թույլ ու բարոյազուրկ իշխանության մասին:

Նրանք արժեզրկեցին անկախության գաղափարը և կոտրեցին ժողովրդի մեջ պայքարի ոգին: Խոսքը սրա մասին է, և սա է ամենամեծ ստորությունը ապագա սերունդների հանդեպ:

Բայց սա դեռ ամենը չէր: Այս մարդկանց երկրորդ գալուստը (իշխանությունից զրկվելուց տասը տարի անց) նոր ողբերգություն բերեց իր հետ: Մեր անկախ պետականության պատմության մեջ առաջին անգամ հեղաշրջման փորձը հանգեցրեց

մարդկային զոհերի: Ոմանք ասում էին, որ դա իշխանությունների ձեռքի գործն էր: Ես կարծում էի, որ դա այդպես չէր: Իշխանություններին, բնականաբար, պետք էր մեղադրել, որովհետև նրանք չկարողացան խուսափել զոհերից, որովհետև նրանք ընդունակ էին ժողովրդի դեմ հանել վայ-օլիգարխների ստահակ թիկնապահներին, որովհետև նրանք ընդունակ չեղան սովորեցնել հրամանատարին և զինվորին, որ չի կարելի կրակել սեփական ժողովրդի վրա: Բայց իշխանություններին ոչ մի դեպքում չէր կարելի մեղադրել նրանում, որ նրանք հրահանգ են տվել կրակել ժողովրդի վրա: Որովհետև նրանք պարզապես չէին կարող նման հրահանգ տալ: Ո՛չ երկրորդ նախագահը, ո՛չ երրորդը նման հրահանգ տալ պարզապես չէին կարող: Հենց միայն նրա համար, որ նրանք բավականաչափ խելացի էին՝ հասկանալու, որ այս ամենը վաղ թե ուշ իրենց դեմ էր շուռ գալու:

Նման հրահանգ չէր կարող տալ նաև առաջին նախագահը, եթե այդ պահին լիներ իշխանություն: Բայց չլինելով իշխանություն՝ նա կարող էր հրահանգել իր մոլորյալներին՝ գնալ մինչև վերջ, այնքան, մինչև իրենց վրա կկրակեին՝ շատ լավ իմանալով, թե ովքեր էին դուրս գալու ժողովրդի դեմ: Եվ նա դա արեց: Իսկ թե ինչու արեց, կարծում եմ՝ պարզ էր:

Առաջին նախագահը նույնպես բավականաչափ խելացի մարդ էր՝ հասկանալու համար, որ ինքն իշխանությունը պարզապես չէր կարող վերադարձնել: Բայց նա նաև հիշաչար և նենգ մարդ էր. իսկ ի՞նչ կարող է անել հիշաչար և նենգ մարդը, ով նաև բավականաչափ խելացի է, և ով նաև իշխանությունից վտարված նախագահ է, և ով պատմության մեջ պիտի մնար իբրև պարտված և թույլ նախագահ: Նա պիտի հասներ նրան, որ իրեն հաջորդող իշխանությունները պատմության մեջ մնային իբրև իրենից ավելի վատը:

Ես չեմ կարծում, որ դա այդպես է, բայց չէ՞ որ կան շատերը, ովքեր այդպես են կարծում: Ուրեմն կարելի է ասել, որ առայժմ դա նրան հաջողվում էր:

Եվ ահա, 2011 թվականի աշնան վերջին նրա գլխավորած կուսակցությունների դաշինքը պատրաստվում էր հերթական խորհրդարանական ընտրություններին և պետք է ասել, որ բավականաչափ մեծ ախորժակ ուներ:

Ինչպես արդեն ասացի, մեր ավանտյուրայի ցուցակում այս քաղաքական ուժը երկրորդն էր: «Appendix vermiformis» կուսակցության համամասնական ցուցակում Վաղինակն արդեն ամրագրել էր իր տեղը: Հիմա հերթը «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքինն էր:

Նախորդ դեպքում մենք գործ ունեինք իշխանությունը ներկայացնող կուսակցության հետ, մինչդեռ «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքն իրեն հռչակել էր արմատական ընդդիմություն: Ու չնայած այստեղ էլ չկար ներքին ժողովրդավարություն, և որոշումները կայացվում էին մեկ մարդու կողմից, այդ մարդը չափից ավելի խելացի էր, և նրան խաբելն այնպես հեշտ չէր լինի, ինչպես մենք արեցինք «Appendix vermiformis» կուսակցության դեպքում:

Կային նաև ուրիշ խոչընդոտներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այս քաղաքական ուժի թիկունքում, ի տարբերություն նախորդի, կար ժողովուրդ, և այս քաղաքական ուժի մեջ, կրկին ի տարբերություն նախորդի, կային քաղաքական դեմքեր: Հետևաբար ցուցակը թեպետ կազմվում էր առաջնորդի կողմից, լուրջ վերահսկողության տակ էր, և պատահական մարդ այնտեղ մտցնելը բավականաչափ բարդ էր:

Ի՞նչ էր մտածում այս ամենի մասին Վաղինակը: Չէ՞ որ այս քաղաքական ուժի հետ նա լավ ծանոթ էր: Գուցե նա՞ գտներ սրանց ցուցակի բանալին:

Բայց ամեն ինչ այլ կերպ եղավ: «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի նախընտրական ցուցակի բանալին ինձ օգնեց գտնել իմ ընկեր Անդրեասը: Ավելի ճիշտ՝ նրա գրած մի հոդվածը, որը մեր վերլուծաբանը սկսում էր այսպես. «Բոլո՞րդ եք հիշում հոր, երեք որդիների և ցախավելի պատմությունը: Այո, այն պատմությունը,

որ մարդուն ուսուցանում է առաջին հայացքից շատ հասարակ մի բան՝ հնարավոր չէ ցախավելը կոտրել, եթե նրա շյուղերը կապված են միմյանց, և հակառակը՝ շյուղերը դյուրությամբ կոտրվում են հատիկ-հատիկ: Կուսակցական ցուցակներ կազմելու մեր ժամանակներում այս հեքիաթը բավականին լուրջ ու խորհրդավոր նշանակություն է ձեռք բերում: Հատկապես խոշոր և միջին միավորումների պարագայում»:

Այնուհետև Անդրեասը հիշեցնում էր, որ «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքում 18 կուսակցություն ու կազմակերպություն կա, հայտնի ու նշանավոր մարդիկ, նաև՝ հավակնոտ երիտասարդներ և հարցնում՝ ի՞նչ անել:

«Իհարկե, այնպիսի մի վիճակ, որ ստեղծվում է ընդամենը ցուցակ կազմելու պատճառով, պիտի հաղթահարելի լինի: Այլապես ի՞նչ կստացվի՝ չորս տարի շարունակ փողոցում լինել միասին, միասին կրել բոլոր զրկանքները, միասին արժանանալ հիրավի ու անիրավ քննադատությունների, միասին գնալ իշխանությունների հետ երկխոսության, առաջնորդի հրահանգով միասին գնալ տուն և միասին գալ միտինգի, միասին քնել նույն վրանի տակ ու հիմա ինչ-որ ցուցակի համար պառակտվե՞լ: Չէ, դա լինելու բան չէ: Էն ցախավելի պատմությունն էլ մի կողմից է նախազգուշացնում՝ չի կարելի»,– շարունակում էր Անդրեասը:

Ի՞նչ նկատի ուներ իմ ընկերը և ի՞նչ կարելի էր քաղել նրա վերլուծությունից մեր գործի համար:

Առաջին նախագահի երկրորդ հայտնությունից հետո ստեղծված քաղաքական այս ուժը խորհրդարանական ընտրությունների շեմին հայտնվել էր չափազանց բարդ իրավիճակում, որովհետև այստեղ միջինից բարձր դերակատարություն ունեցող բոլոր անձերը՝ գրեթե առանց բացառության, ցանկանում էին տեղ գտնել դաշինքի ցուցակի անցողիկ հորիզոնականներում: Իսկ այդպիսիք շատ էին: Արմատական ընդդիմության դիրքերից հանդես եկող այս դաշինքը ստեղծման պահից այնքան էր ուռճացել, որ տեղ չէր



1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

մնացել թերևս միայն մեկից պակաս անդամ ունեցող կուսակցությունների և կազմակերպությունների համար: Եվ բոլորը՝ դարձյալ գրեթե առանց բացառության, առաջնորդվում էին սեփական շահով, որը ոչ այլ ինչ էր, քան խորհրդարանական մանդատը: Բայց ո՛չ խորհրդարանը, ո՛չ էլ «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի ցուցակն առաձգական չէին, և բոլորի համար այստեղ տեղ չէր կարող գտնվել: Սա արդեն դաշինքի ներսում առաջացրել էր լուրջ բախումներ, որոնք կարող էին հանգեցնել քաղաքական այս ուժի պառակտմանը:

Ահա սա՛ կարելի էր հասկանալ մեր վերլուծաբանի հոդվածից ու նաև՝ գտնել հարցի հնարավոր լուծումը: Իսկ լուծումն այդ հետևյալն էր. «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակ կարելի էր թափանցել՝ օգտվելով այստեղ տիրող խառնաշփոթից:

Իմ մտածածը բազմաքայլ կոմբինացիա էր: Նախ պետք էր առաջարկել դաշինքի անդամ բոլոր այն կուսակցություններին և կազմակերպություններին, որոնց թեկնածուները ռեալ շանսեր չունեին՝ ցուցակում անցողիկ տեղեր զբաղեցնելու, իբրև իրենց թեկնածու ներկայացնել Վաղինակին: Փոխարենը նրանց կարելի էր խոստանալ երկու բան. ասենք՝ դրսի, դիցուք՝ ԱՄՆ-ի աջակցությունը և, ինչ խոսք՝ գումար:

Հետո արդեն անհրաժեշտ կլիներ հնարավորինս հավաստի մի լեգենդ հորինել: Դիցուք, Վաղինակն այս տարիների ընթացքում ԱՄՆ-ում հաստատել է լուրջ կապեր իշխող կուսակցության վերնախավի հետ և նրանց կողմից գործուղվել հայրենիք՝ այստեղ նպաստելու Միացյալ Նահանգների ժողովրդավարական գաղափարների տարածմանը: Առաջարկվում է փոխշահավետ գործարք: Այդ գաղափարների տարածման համար նա խորհրդարան է անցնում՝ իբրև տվյալ կուսակցության թեկնածու, իսկ դրա դիմաց տվյալ կուսակցությունը ստանում է ԱՄՆ իշխանությունների աջակցությունը:

Գաղտնիք չէր, որ յուրաքանչյուր խորհրդարանական ընտրությունից առաջ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանը հանդիպումներ էր ունենում խոշոր քաղաքական ուժերի հետ: Հարկավոր էր այնպես անել, որ մինչև այդ տրամաբանությամբ դեսպանը հանդիպեր «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի առաջնորդի հետ, Վաղինակն արդեն հանդես եկած լիներ իր առաջարկով: Այսինքն՝ հանդիպած լիներ դաշինքում ընդգրկված մանր կուսակցությունների ու կազմակերպությունների ղեկավարների հետ և նրանց վստահեցներ, որ իր առաջարկն ընդունելու դեպքում ԱՄՆ դեսպանը դաշինքի առաջնորդի հետ հանդիպման ժամանակ որոշ ակնարկներ կանի՝ կոնկրետ իրենց սատարելու վերաբերյալ: Քանի որ դեսպանը նշված հանդիպման ժամանակ անպայմանորեն խոսելու էր ժողովրդավարական գաղափարների տարածման մասին, սա հետագայում կարելի էր վերագրել իբրև նախապես ձեռք բերված պայմանավորվածության արդյունք:

Իսկ ինչ վերաբերում էր փողին, ապա, ինչպես «Appendix vermiformis» կուսակցության պարագայում, այստեղ էլ պետք էր ասել, որ գումարը (այս դեպքում իհարկե ոչ թե երկու հարյուր հիսուն, այլ ասենք՝ հիսուն հազար դոլար) նրանց հաշվին կփոխանցվի ցուցակների հրապարակման հաջորդ իսկ օրը:

Բայց այսքանը դեռ բավական չէր, որ գործը գլուխ գար: Քաղաքական այս ուժի առաջնորդի և ղեկավարների գլխում անշուշտ կարող էր հարց առաջանալ, թե ով է այդ խորհրդավոր մարդն, ում այդպես միահամուռ պաշտպանում են բոլոր մանր կուսակցությունները: Ուրեմն հաջորդ քայլով պետք էր անել հետևյալը. եթե Վաղինակը ճիշտ էր ասում և իսկապես ժամանակին մտերիմ հարաբերությունների մեջ էր եղել քաղաքական այս ուժի հոգևոր հայրերի հետ, ապա հիմա ճիշտ պահն էր հանդիպել նրանց և հայտարարել իր վերադարձի մասին: Ավելի ստույգ՝ հանդիպել նրանցից մեկին: Խոսքը, որքան էլ որ զարմանալի թվա, ոչ թե առաջնորդի մասին էր, այլ մեկ ուրիշի,

ով իշխանափոխությունից հետո, վերջին տասնչորս տարիներին եղել էր ստվերում, բայց ում ազդեցությունն այստեղ պակաս էր թերևս միայն առաջնորդի ազդեցությունից: Այսպես ասենք՝ «գորշ կարդինալ», ում Վաղինակը պետք է որ ճանաչեր: Վերջինիս ոչ մի հեքիաթ պետք չէր պատմել, պարզապես պետք էր հանդիպել և խոսել քաղաքականության մասին:

Մի խոսքով, ինչու չէ, կարող էր և ստացվել:

Հին սերերի կենացը

Զանգահարեցի Վաղինակին: Ես նրան մի հեռախոս էի տվել և բացատրել, որ գոնե մեր գործի համար այն անհրաժեշտ է: Բայց, ինչպես երևում է, չէի կարողացել համոզել: Նա չպատասխանեց զանգերին: Ստիպված էի գնալ նրա բնակարանը: Երկու օր նրան չէի տեսել ու մի քիչ անհանգիստ էի:

Բայց, ինչպես պարզվեց՝ առայժմ անհանգստանալու բան չկար: Պատգամավորության թեկնածուն, թեև թունդ խմած էր, բայց կարծես իրեն վատ չէր զգում: Ես սկզբում չհասկացա, թե ինչու էր նա խոհանոցից տեղափոխվել հյուրասենյակ:

Այստեղ մի իսկական հրավառություն էր, ավելի ճիշտ՝ մոմավառություն. մոմերն ամենուրեք էին: Մի քանիսը նա ամրացրել էր առաստաղից կախված ջահի վրա, մնացածները պահարանի վրա էին, պատուհանագոգերին, անգամ՝ դաշնամուրին: Սեղանին շարված էին էկզոտիկ մրգեր, տարբեր քաղցրավենիքներ, կոնյակ և շամպայն, իսկ կենտրոնում դրված էր հսկա մի ծաղկաման, մեջը՝ ճերմակ վարդեր: Երբ ներս մտա, Վաղինակը դրանցից հոտ էր քաշում:

– Չեմ կարող պնդել, որ հենց քեզ էի սպասում,– ինձ տեսնելով՝ դժգոհ ասաց նա:

– Դրա համար կարելի է պատասխանել հեռախոսազանգերին. չէ՞ որ ես քեզ հեռախոս եմ տվել և խնդրել ուշադիր լինել,– արդարացա ես:

– Մոռացել էի,– չոր նետեց Վաղինակը:

Ես շրջվեցի, որ հեռանամ, բայց նա կանգնեցրեց ինձ:

– Սպասի՛ր, ես լավ կոնյակ ունեմ:

– Բայց չէ՞ որ դու ուրիշի էիր սպասում:

– Այո՛, մեկին, ում մի ժամանակ սիրում էի: Մնա՛, կծանոթացնեմ հետը:

Ես մնացի: Խմեցի Վաղինակի հետ մի քանի բաժակ կոնյակ (ինքը խմում էր իր օղին), հետո չգիտեմ ինչու՝ ուզեցի դուրս գալ պատշգամբ:

Վաղինակի տան պատշգամբում կանգնած՝ ես մտածում էի իմ հին սերերի մասին: Նրանցից մեկը մի ժամանակ ապրում էր այս նույն փողոցում՝ այս նույն շենքում: Դա վաղուց էր. մի ամբողջ կյանք է անցել դրանից, ու հիմա ես շատ բաներ չեմ հիշում: Հիշում եմ սակայն, որ այն ժամանակ էլ սիրում էի կանգնել պատշգամբում: Ես դուրս էի գալիս Աղայան փողոցի այս նույն շենքի պատշգամբն ու շփվում մի ճնճղուկի հետ, որն ապրում էր մոտակայքում: Նա հաճախ էր գալիս այստեղ: Ես նրան հացի փշրանքներ էի տալիս, իսկ ճնճղուկը, չգիտես ինչու, տխուր էր: Նա, հավանաբար, մենակ էր, և նրան, հավանաբար, ուրիշ ճնճղուկները չէին հասկանում: Բայց նա ուտում էր իմ տված հացի փշրանքները: Ես նրան չէի մոտենում այնքան, որ ստիպված լիներ թռչել, թեպետ գիտեի, որ ինձանից չէր վախենում: Եվ ինքն էլ գիտեր: Եվ ես կանգնում էի քիչ հեռու ու նայում, թե ինչպես էր նա ուտում իմ տված հացի փշրանքները:

Ու ես մտածում էի, թե որտեղ է իմ այն սերը, որն ապրում էր այս շենքում: Մտածում էի, թե որտեղ է իմ ճնճղուկը: Նայում էի դիմացի շենքերի տանիքներին ու պատկերացնում, թե որքան մենակ էր իմ ճնճղուկը ու գուցե քաղցած, ու գուցե մրսած, ու գուցե սառած, ու գուցե վախենում էր ուրիշ ճնճղուկներից:

Ու նաև մտածում էի ուրիշ բաների մասին էլ: Ես սիրում էի պատշգամբում կանգնած մտածել ուրիշ բաների մասին էլ: Ու գիտեի, որ ես էլ էի քաղցած, ես էլ էի մրսած, սառած ու ես էլ էի վախենում մարդկանցից: Այդպես լինում է, երբ կանգնում ես սիրածդ աղջկա շենքի պատշգամբում, ուր քո ճնճղուկը չկա: Ու տխրում էի:

Ես գիտեի, որ մարդիկ ու ճնճղուկները պիտի ապրեն, որ աշխարհում ոչ ոք չվախենա ոչ ոքից: Այդպես չի լինում հավանաբար, և հազիվ թե լինի, բայց, այնուամենայնիվ, մարդիկ ու ճնճղուկները

պիտի ապրեն, որ աշխարհում ոչ ոք չվախենա ոչ ոքից: Ես վախենում էի մարդկանցից, ոչ թե որովհետև նրանք կարող էին վնասել ինձ, այլ վախենում էի մարդկանցից, որովհետև նրանք կարող էին վնասել իրենց: Եվ իմ ճնճղուկն էլ, գիտեի, չէր վախենում ճնճղուկներից, որովհետև նրանք կարող էին վնասել իրեն, այլ վախենում էր, որովհետև կարող էին վնասել իրենք իրենց:

Հետո ես մտածում էի, որ մարդիկ ու ճնճղուկները կարող են քաղցել ու մրսել, բայց պիտի ապրեն, որպեսզի աշխարհում ոչ ոք չքաղցի ու չմրսի: Այդպես չի լինում հավանաբար և հազիվ թե լինի, բայց, այնուամենայնիվ, մարդիկ ու ճնճղուկները պիտի ապրեն, որ աշխարհում ոչ ոք չքաղցի ու չմրսի:

Ու նաև մտածում էի, որ մարդիկ ու ճնճղուկները կարող են տխրել, բայց պիտի ապրեն, որ աշխարհում ոչ ոք չտխրեցնի ոչ ոքի: Այդպես չի լինում գուցե, միայն թե արժե ապրել դրա համար:

Դե իսկ անցած սերերը… Մենք ցավեցրել ենք նրանց, նրանք ցավեցրել են մեզ, ու հազարավոր այսպիսի պատշգամբներ են եղել ու կան աշխարհում ու կշարունակեն լինել անպայման: Եվ եթե պատշգամբի բազրիքին հենված՝ մենք ընտրել ենք կյանքը, ապա այն նույնպես կշարունակվի:

– Ի՞նչ ես արձանի պես կանգնել, արի՛ խմենք,– ներսից ձայն տվեց Վաղինակը:

Իսկապես, ճիշտ ժամանակն էր խմելու: Ես մտա հյուրասենյակ, նստեցի սեղանի մոտ ու լցրեցի բաժակները: Նա ում սպասում էր Վաղինակը, դեռ չէր եկել:

– Մեր հին սերերի կենացը,– ասացի:

– Դո՞ւ էլ հիշեցիր նրանց:

Ես ոչինչ չասացի: Վերցրի վերարկուս և հեռացա…

Իմ կարծ խե՞լքը, թե՞ Վաղինակի ցնդաբանությունը

Գործի մասին Վաղինակի հետ խոսեցի հաջորդ օրը: Նա չափազանց երջանիկ տեսք ուներ. կարելի էր ենթադրել, որ երեկվա հանդիպումը ոչ միայն կայացել էր, այլև կայացել էր: Դա պետք է որ օգտակար լիներ մեր գործին: Ապագա պատգամավորը կանգնած էր պատուհանի մոտ, մի ձեռքում՝ հայելի, մյուսում՝ մկրատ և իրեն հատուկ նյարդային, կտրուկ շարժումներով հարդարում էր մորուքը: Ես մի որոշ ժամանակ հետևեցի նրան, հետո մանրամասն պատմեցի մտահաղացմանս մասին և սպասեցի, թե ինչպես կարձագանքի: Վաղինակի արձագանքը բավական տարօրինակ էր:

– Մի քանի օր,– ասաց նա:

Ես զարմացած նայեցի նրան:

– Մի քանի օր ստիպված պիտի լինեմ մարդավարի չխմել,– բացատրեց Վաղինակը,– չէ՞ որ քո ծրագիրը ենթադրում է առնվազն հինգ-վեց հանդիպում:

Ահա թե ինչն էր նրան մտահոգում: Չնայած բողոքելու իրավունք ես չունեի: Խմած թե սթափ՝ նա կարծես թե անթերի էր կատարում գործի՝ իրեն վերապահված մասը: Բայց, ամեն դեպքում, փորձեցի հետաքրքրվել, թե ինչ կարծիքի է գաղափարի մասին ընդհանրապես: Նրա պատասխանը կրկին ինձ զարմացրեց.

– Այնքան խառն է ու անհասկանալի, որ կարող է աշխատել:

– Իսկ ի՞նչ ես մտածում հին ծանոթիդ հետ հանդիպելու վերաբերյալ,– նկատի ունեի գորշ կարդինալին:

Նա որոշ ժամանակ չպատասխանեց: Ստիպված էի սպասել, մինչև ավարտեր աջ այտմորուսի հատվածը, որից հետո նոր միայն ասաց.

– Այդ մարդուն ես ճանաչում եմ, վստահ եմ՝ նրան կարելի է համոզել:

– Իսկապե՞ս,– ես մի փոքր զարմացա,– իսկ ի՞նչ համոզել և ինչո՞ւ ես այդպես վստահ:

– Համոզել, որ ուզում եմ վերադառնալ քաղաքականություն: Իսկ թե ինչու եմ վստահ, որովհետև, ասացի արդեն՝ նրան ճանաչում եմ:

– Գուցե, այնուամենայնիվ, մանրամասնե՞ս,– տեղի չտվեցի ես,– չէ՞ որ ընդհանուր գործ ենք անում, և ես պետք է իմանամ, թե ինչն ինչոց է:

Հետևեցին մկրատի մի քանի նյարդային ելևէջներ, որից հետո նա պատասխանեց.

– Պարզապես ես գիտեմ ոչ միայն այդ մարդու, այլև նրանց բոլորի քաղաքական հիվանդության ախտորոշումը:

– Եվ ո՞րն է այդ ախտորոշումը:

– Վախը:

– Վա՞խը: Վախը ումի՞ց:

– Նրանք էլ չգիտեն, թե կոնկրետ ումից:

Վաղինակը վայր էր դրել մկրատը և վերցրել էր ածելին: Ես ստիպված էի մի պահ դադարեցնել հարցերս՝ մտահոգություն ունենալով, թե հանկարծ կկտրի վիզը: Բայց ուրիշ մտահոգություն էլ ունեի: Ինձ թվում էր, թե նա կրկին ցնդաբանում է: Ուստի սպասեցի մի որոշ ժամանակ և խնդրեցի հստակեցնել, թե ինչ նկատի ունի:

– Դա վերացական վախ է,– բացատրեց նա,– նրանք վախենում են մարդկանցից, ում չեն ճանաչում: Իրենց տերերից: Իսկ այդ տերերը տարբեր են: Նրանք նստած են Մոսկվայում, Վաշինգտոնում, Լոնդոնում, Թել Ավիվում: Այդ տերերը միշտ էլ եղել են: Տերերն են նրանց բերել իշխանության, տերերն են նրանց զրկել իշխանությունից: Ու մշտապես պահել են սրանց վախի մեջ: Ու հիմա էլ բավական է՝ սրանք լսեն որևէ ուժային կենտրոնի անուն, այդ վախը կրկին գլուխ է բարձրացնում: Հասկանո՞ւմ ես:

– Այնքան էլ չէ, բայց կարող ես շարունակել,– անկեղծորեն ասացի ես:

– Մինչև իշխանության գալը սրանք որոշ ժամանակ անցկացրին Մոսկվայի «Մատրոսսկայա տիշինա» բանտում, հետո անտեսանելի թելերով կապվեցին Թել Ավիվի հետ, հետո ուղեղների լվացման թերապիաներ անցան Լոնդոնում, իսկ վերջում նրանց աքացի տվեց Վաշինգտոնը: Հասկանո՞ւմ ես,– կրկնեց նա:

Չեմ կարող պնդել, թե հասկանում էի: Բայցևայնպես, սա ավելի շատ նման էր երևակայական ինչ-որ բանի, քան ցնդաբանության: Այսինքն՝ մտահոգվելու կարիք չկար: Վաղինակը կարող էր երևակայել որքան ուզում էր, դա գործին չէր խանգարի: Իսկ եթե նա ճիշտ էր ասում, և իմ կարճ խելքի պատճառով նրան չէի հասկանում, ապա ավելի լավ:

Ամեն դեպքում մենք պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը նա կհանդիպի հարգարժան «գորշ կարդինալի» հետ:

Կատյան կատաղում է

Երբ դուրս եկա Վաղինակի մոտից, հրաշալի եղանակ էր: Որոշեցի մի քիչ զբոսնել: Մի տեսակ տխուր էի: Հոգուս խորքում կերած-խմած մի չաղլիկ որդ այս ու այն կողմ էր սողում ու ներսս տակնուվրա անում: Անընդհատ մտածում էի Կատյայի մասին: Մտածում էի, թե ինչպես պատահեց, որ ես՝ կյանք տեսած, տարբեր գույների ու համերի կանանց վայելած փորձառու տղամարդս, այսպես կորցրել էի գլուխս: Փորձում էի հասկանալ Կատյայի հանդեպ տածած իմ զգացմունքի «անատոմիան»: Սակայն զգացմունքն այդպիսին է, նրան չի կարելի պառկեցնել վիրահատական սեղանին ու նշտարիկով բզբզել: Այդպես ինքդ քեզ ես ցավեցնում: Որ առանց Կատյայի չէի կարողանում, պարզ էր: Պարզ էր, որ նա ինձ պետք էր: Պետք էր՝ ապրելու, գրելու, գուցե անգամ խմելու համար: Այո, անգամ խմելու: Ես խմում էի երջանկությունից, երբ նա կողքիս էր ու կարոտից, երբ հեռու էր: Բայց պարզ էր նաև, որ նա ինքն առանց ինձ հրաշալի ապրում էր:

Եվ հանկարծ զգացի, որ եթե հենց հիմա, հենց այս պահին չտեսնեմ նրան, ինձ հետ վստահաբար մի վատ բան կպատահի: Զանգեցի բջջայինին: «Բաժանորդն անհասանելի է: Խնդրում ենք փորձել մի փոքր ուշ»,– հնչեց անտարբեր ձայնը: Որքա՞ն ուշ, գուցե այդ ուշն արդեն շա՞տ ուշ կլինի, ու ինձ մի վատ բան կպատահի, ու ես նրան այլևս չեմ տեսնի: Տանել չէի կարողանում, երբ զանգահարում էի Կատյային, ու նրա հեռախոսն անջատված էր լինում: Խելագարվում էի: Անհանգստությունից, կարոտից, խանդից, նրան այլևս երբեք չտեսնելու վախից:

Ցավոք, աշխատանքի բերումով նա հաճախ էր «անհասանելի» լինում, ու իմ «պսիխոզի» համար լայն հորիզոններ էին բացվում: Սակայն այս անգամ բախտս բերեց. անհանգստության մութ ալիքը

չհասցրեց սրտիս խորքից հանել խանդի ու վախի տիղմը: Բջջայինս զանգեց: Նա էր.

– Զանգել էիր: Ինձ հաղորդագրություն եկավ:

– Զանգել էի: Բայց վատ սովորությանդ համաձայն՝ հեռախոսդ անջատված էր:

– Արի՛ չխոսենք վատ սովորություններից, լա՞վ: Կարծես թե ես քո անթիվ-անհամար վատ սովորությունների հանդեպ բավական հանդուրժող եմ: Ու բացի այդ, այսօր կշտամբանք, նվվոց, քննադատություն, բարոյախրատական դասախոսություններ լսելու տրամադրություն չունեմ: Հստակ, կառուցողական առաջարկներ ու առողջ մտքեր եթե ունես, շարունակենք զրույցը, եթե ոչ՝ ես արդեն հագել եմ Վիննի Թուխով իմ «պիժամիկը» ու պատրաստվում եմ քնել,– անսպասելի ագրեսիվ հարձակում գործեց Կատյան:

– Ունեմ,– արդեն նրա ագրեսիայի նոպաներին սովոր՝ հանգիստ տոնով պատասխանեցի ես:– Հրաշալի եղանակ է: Մեր վերջին հանդիպման ժամանակ նկատեցի, որ մի քիչ գիրացել էիր: Այնպես որ, հանի՛ր «Վիննի Թուխին» քո թմբլիկ մարմնից ու արի զբոսնենք: Ասում են, որ երեկոյան զբոսանքը ցելյուլիտի դեմ պայքարելու լավագույն միջոցներից է:

Ես լսեցի, թե ինչպես գծի մյուս ծայրում Կատյան շնչահեղձ եղավ ցասումից: Տիրեց քար լռություն: Այդպիսի կատարյալ լռություն սովորաբար լինում է ամպրոպից առաջ: Բայց ինձ անակնկալ էր սպասվում:

– Որտե՞ղ ենք զբոսնելու, որ ցելյուլիտս մաշեցնեմ,– մեղր ձայնով ու շերբեթ առոգանությամբ հարցրեց Կատյան:

Միայն թե գիտեի, որ այդ հրեշտակային ձայնն ինձ սպառնող մեծ վտանգի առաջին ազդակն էր. հրաշալի իմանալով Կատյային՝ գիտեի նաև գլխիս գալիքը: Բայց նրան տանից դուրս հանելու ոչ մի ուրիշ տարբերակ չունեի:

– 20 րոպեից՝ Կասկադում,– պատասխանեցի ես ու այդ պահին հասկացա, որ Կատյային սիրում եմ նաև նրա ֆանտաստիկ անկանխատեսելիության համար: Նա անկանխատեսելի էր

ինչպես բոլոր՝ Խաղաղ, Ատլանտյան, Հնդկական ու էլի չգիտեմ որ օվկիանոսները՝ միասին վերցրած: Նրա փոխարեն մեկ ուրիշ կին նեղացած ճնճղուկի պես կփքվեր ու մի շաբաթ ստիպված կլինեիր երդվել բոլոր դավանանքների աստվածներով, որ նա գեր չէ, որ Վեներա է և այլն: Իսկ Կատյան որոշեց գալ ու տեղում ինձ «սատկացնել»:

– Բարի երեկո, բարեկա՛զմ երիտասարդ,– ավելի շուտ ֆշշացրեց, քան ասաց Կատյան, երբ հանդիպեցինք Կասկադի աստիճանների մոտ:

– Դու շա՞տ էիր շտապում այստեղ գալիս,– հարցրի ես՝ ուշադիր զննելով նրան:

– Ինչո՞ւ:

– Մոռացել ես հագնվել: Ես ասացի «Վիննի Թուխին» հանի, բայց չէի կարծում, որ պետք է հիշեցնեմ նաև, որ հագնվես՝ ապավինելով քո խոհեմությանը:

Կատյայի հագին, այնուամենայնիվ, շորեր կային: Սակայն շատ ուշադիր նայելու դեպքում միայն կարելի էր տեսնել մանրադիտակային ջինսե շորտերը, և կարճլիկ սպիտակ շապիկը: Ի հակադրություն մինիմալիստական հագուստին՝ ոտքերին զինվորական մեծ կոշիկներ էին:

– Հատուկ եմ մոռացել հագնվել: Հուսով եմ՝ տղամարդկանց հիացական և կանանց թունոտ հայացքները քեզ կապացուցեն, որ իմ ճկուն, ձիգ մարմնի վրա ոչ մի ավելորդ գրամ չկա, ու ցելյուլիտով էլ չեմ տառապում: Դու ինձ մահացու վիրավորեցիր: Չնայած ինքս եմ մեղավոր. քրմուհիները չպետք է շփվեն տրամվայի անտակտ, անտաշ վարորդների հետ: Սոցիալական խտրականությունն իրականում շատ ճիշտ բան է. հիմա եմ հասկանում:

Կատյան իսկապես կատաղած էր: Հանուն արդարության պետք է նշեմ, որ հրաշալի տեսք ուներ: Մենք գարեջուր վերցրինք ու ոտքով բարձրացանք Կասկադի ամենավերջին հարթակը: Աստիճաններին նստած՝ գարեջուր էինք խմում ու լռում:

Ինձ համար շատ կարևոր է, երբ մարդու կողքին կարողանում ես լռել: Այնպես լռել, որ ո՛չ դու, ո՛չ նա անհարմարություն չզգաք: Ուզում էի գրկել Կատյային, բայց նրա հայացքից հասկացա, որ այսօր ոզնուց էլ փշոտ է և դեռ չի ներել իմ խորամանկությունը:

Բավական ժամանակ անցավ, մինչ նա խախտեց լռությունը:

– Վաղինակդ ինչպե՞ս է: Իր քաղաքական կուսությունը վաճառե՞ց:

– Աճուրդը դեռ ընթացքում է: Ինչո՞ւ հանկարծ հիշեցիր Վաղինակին:

– Լսի՛ր, դու կարծես այնքան էլ մեծ չես: Սկլերոզի նախանշաններդ ինձ դուր չեն գալիս: Մոռացե՞լ ես արդեն մեր գրազի մասին:

– Քնում, արթնանում՝ միայն դրա մասին եմ մտածում: Հա, ի դեպ, քանի որ քո պարտվելն անխուսափելի է, ավելի լավ է մտածես, թե սրտիկիդ հանձման արարողության օրն ինչ ես հագնելու:

– Երկար, կարմիր զգեստով տոնելու եմ իմ հաղթանակն ու քո պարտությունը: Գրազի տակ ես մնալու: Չե՛ս կարող,– հանգիստ պատասխանեց Կատյան:

– Ես այդ օրը կսափրվեմ ու նոր շապիկ կհագնեմ,– երազկոտ շարունակեցի ես՝ ուշադրություն չդարձնելով Կատյայի հակահարվածին:– Լավ, հանուն այդ առիթի նոր գուլպաներ էլ կգնեմ: Սկզբում շամպայն կխմենք, հետո մի քիչ տանգո կպարենք, դե իսկ հետո…

– Դե իսկ հետո ես կզանգահարեմ 1-03, որ քո լկտի դիակը գան, հավաքեն-տանեն: Խոստանում եմ, եթե այսպես շարունակես, երկար չես ապրի: Բախտ նայողը փոքր ժամանակ քեզ չի՞ զգուշացրել, որ կյանքիդ այս հատվածում շատ զգույշ լինես,– շատ դանդաղ, շատ հստակ, կատաղությունից զնգացող ձայնով ասաց Կատյան:

Հասկացա, որ գրեթե հասել եմ այն եզրագծին, որից հետո նա անվերահսկելի էր դառնում:

– Չէ՛, մի երիտասարդ, սիրուն գնչուհի թաթս զննեց ու ասաց, որ 2011 թվականին շատ հետաքրքիր հանգամանքներում կգտնեմ իմ մեծ սերը:

Ինձ թվում էր, թե Կատյան ճիգեր էր անում, որ իրեն տիրապետի.

– Դու հասկանո՞ւմ ես, որ մեր հարաբերություններն ապագա չունեն: Ու ոչ մի գնչուհի էլ պետք չէ այդ պարզ իրողությունը կանխատեսելու համար:

– Կատյա՛, Կատենկա, Կատյուշա… Իսկ դու գիտե՞ս, որ սերը բավական էգոիստական զգացում է: Չի մտածում ո՛չ անցյալի, ո՛չ ապագայի մասին: Միայն ներկայի:

– Ո՞ւմ է պետք այն սերը, որին պիտի կերակրես սրտիդ արյունոտ կտորներով: Որը երջանկություն չի բերում, միայն ցավ,– այլևս չկարողանալով զսպել իրեն՝ գոռաց Կատյան:

Ես ապշեցի: Կա՛մ ես կանանցից ընդհանրապես գլուխ չէի հանում, կա՛մ Կատյան նույնպես ինձ սիրում էր: Թեև կանանցից ինքը սատանան գլուխ չի հանում, էլ ուր մնաց՝ ես: Բայց նա այդ օրը շատ տարօրինակ էր իրեն պահում: Առկա էին սիրահարված կնոջ բոլոր նախանշանները: Միայն թե կոնկրետ նրա պարագայում սխալվելը շատ հեշտ էր: Պահվածքը կարող էր, ասենք, գերհոգնածության կամ անքնության հետևանք լինել: Պետք էր շատ զգույշ վարվել: Որոշեցի ուրիշ կողմից մոտենալ:

– Պարզ է, որոշել ես ինձ թողնել: Ուզում ես ետ կանգնել գրազից: Դե, ի՞նչ արած: Կանայք պարտավոր չեն պահել խոստումները,– հիասթափության և տղամարդկային գերազանցության թեթևակի երանգ հաղորդելով ձայնիս՝ ասացի ես:

Կատյայի համար ամենամեծ վիրավորանքն անազնվության մեջ մեղադրանքն էր: Իսկ եթե դրան ավելանում էր նաև գենդերային ենթատեքստ, ապա նա ընդհանրապես կապից փախչում էր: Նա համոզված էր, որ կանայք ավելի հավատարիմ, վեհ, ուժեղ, պարտաճանաչ ու իրենց խոսքի տեր արարածներ են, քան տղամարդիկ: Լավ իմանալով նրա թույլ կետերը՝ ես նենգաբար հարվածել էի դրանց: Կարճ միացումն իրեն երկար սպասեցնել չտվեց:

– Ե՞ս: Թողնե՞մ: Քե՞զ,– Կատյան շարունակում էր գոռալ:– Ուշադի՛ր լսիր ինձ, ավելի ուշադիր, քան քո ծեր գնչուհուն:

– Երիտասարդ: Երիտասարդ գնչուհուն,– ուղղեցի ես:

– Այն օրը, երբ Վաղինակի պատգամավորական մանդատը կդնես իմ սեղանին, ես կպառկեմ քո մահճակալին կամ բազմոցին: Պա՞րզ է: Իսկ հիմա ես գնում եմ տուն: Ու դու ինձ չես ճանապարհելու: Դու այսօր բավական երկար չարաշահեցիր իմ համբերությունը: Ես շատ հեռու եմ ամենագութ ու համբերատար Մայր Թերեզայի կերպարից: Մղոններով հեռու եմ: Չա՛ո,– պոռթկաց կիսամերկ ցունամին ու սրընթաց իջավ Կասկադի աստիճաններով:

Ես անգամ նրան կանգնեցնելու փորձ չարեցի: Թեև կասկածում եմ, որ կհասցնեի: Մնացինք ես, գարեջուրը ու իմ հոգու խորքի չաղլիկ որդը, որ նորից արթնացավ ու սկսեց խլրտալ…

Ոստիկաններն ու սափրագլուխները

Քաղաքական այս ուժի՝ «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի շատ կողմնակիցներ առիթը բաց չէին թողնում ասելու, որ մեր պետությունը վերածվել է ոստիկանապետության, և որ մենք ապրում ենք ոստիկանապետությունում:

Արդյոք նրանք իրավացի՞ էին:

Լրատվամիջոցներում պարբերաբար տեղեկատվություն էր հայտնվում այն մասին, որ, ասենք, Հյուսիսային պողոտայի տարածքում ոստիկանության օպերլիազորները հարձակվել են առաջիկա հանրահավաքի իրազեկման մասին թռուցիկներ բաժանող «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի ակտիվիստ երիտասարդների վրա, ապա նրանց բերման ենթարկել Կենտրոնի ոստիկանություն:

Ես մի բան միայն գիտեի. հանրապետության առաջին նախագահն արդեն երկրորդ սերունդն էր «աղավաղում»: Երկրի վիճակով մտահոգ գիտակից ու համարձակ շատ երիտասարդների նա օգտագործում էր սեփական նպատակների համար:

Դա իհարկե չէր կարելի թույլ տալ: Միայն թե, ի սեր Աստծու, ոչ երիտասարդներին ձերբակալելով: Մի՞թե հենց դա չէր հանգեցրել նրան, որ այդ երիտասարդներն այնքան էին լկտիացել, որ վարկաբեկում ու սևացնում էին բոլոր նրանց, ովքեր իրենց կողմնակիցը չէին, անգամ մտավորականներին, անգամ պատերազմի հերոսներին: Առաջին նախագահի դաստիարակությունն էր, ինչ խոսք, բայց իշխանություններն ավելի մեղավոր էին: Ախր չէր կարելի ձերբակալել. ձերբակալելով նրանց ավելի ինքնավստահ ես դարձնում, ստիպում ես նրանց հավատալ, որ իրենք իսկապես լուրջ բան են անում, որ իրենցն իսկապես պայքար է:

Բայց դե փաստ էր, որ երիտասարդ ակտիվիստներին իսկապես ձերբակալում էին ու տանում ոստիկանական բաժանմունքներ:

Միայն թե «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի կողմնակիցները նաև հայտարարում էին, որ այդ երիտասարդներին ծեծի էին ենթարկում նույն ոստիկանական բաժանմունքներում: Ես իհարկե նրանց չէի հավատում: Նրանց խոսքն ինձ համար պարզապես վստահելի չէր: Բայց նշեմ նաև, որ առանձնապես չէի հավատում մեր ոստիկանության շատ աշխատակիցների պարկեշտությանն ու մարդկայնությանն էլ: Չէի կասկածում, որ նրանք ընդունակ էին մարդ ծեծելու, համենայնդեպս, ժամանակին դա եղել է նրանց գործելաոճի բաղկացուցիչ մասը: Բայց ախր ժամանակները փոխվել էին, ու ես ուզում էի հասկանալ տրամաբանությունը: Չէ՞ որ երիտասարդներին բերման էին ենթարկել Հյուսիսային պողոտայի մոտակայքից և ոչ թե Հայաստանի մի հեռավոր շրջանի մի գյուղաքաղաքի «կլուբի» մոտից: Չէ՞ որ երիտասարդներին բերման էին ենթարկել Երևանի Կենտրոնի և ոչ թե կրկին մի հեռավոր մարզային քաղաքի կամ ավանի ոստիկանություն:

Չէ՞ որ ոստիկանները, եթե անգամ անպարկեշտ էին ու անմարդկային, չէին կարող ընդհանրապես անուղեղ լինել և չգիտակցել, որ եթե ծեծի ենթարկեն երիտասարդներին, ապա այդ մասին անպայման կիմանային: Կիմանային իրենց ղեկավարները: Ոմանք անշուշտ կասեն, որ հենց նրանց հրահանգով էլ դա արվում էր: Բայց մի րոպե, այդ ղեկավարները, եթե անգամ նրանք էլ բռի էին ու անմարդկային, նույնպես չէին կարող անուղեղ լինել և չգիտակցել, որ եթե հրահանգեն ծեծի ենթարկել երիտասարդներին, ապա այդ մասին անպայման կիմանային: Կիմանային իրենց ղեկավարները, այսինքն՝ իշխանությունները: Ոմանք, անշուշտ, կասեն, որ իշխանությունները շատ լավ գիտեին, և հենց նրանց հրահանգով էլ դա արվում էր: Բայց ևս մի րոպե՝ իշխանությունները, եթե անգամ բռի էին ու անմարդկային, հո չէի՞ն կարող այն աստիճանի անուղեղ լինել, որ հրահանգեին ծեծել երիտասարդներին՝ չգիտակցելով, որ այդ մասին անպայման կիմանային: Կիմանար մամուլը: Ոմանք կարող են ասել, որ իշխանությունները թքած ունեին

մամուլի վրա, բայց այստեղ ես առավել ևս չեմ համաձայնի, որովհետև նրանք չէին կարող չգիտակցել, որ եթե իմանար մամուլը, կիմանային նաև հասարակությունը և միջազգային կառույցները, և եթե անգամ հասարակության վրա իշխանությունները թքած ունեին, ապա միջազգային կառույցների դեպքում…

Ինչպես ասացի վերևում, ես չէի կասկածում, որ մեր ոստիկանները ընդունակ էին մարդ ծեծելու, որովհետև ժամանակին դա եղել է նրանց գործելաոճի բաղկացուցիչ մասը:

Այստեղ շեղվեմ մեր պատմությունից և անդրադառնամ մի մարդու, ով, ըստ իս, մեր երկիրը մի շրջան իսկապես վերածել էր ոստիկանապետության:

Երբ այդ մարդը Հայաստանի ներքին գործերի նախարարն էր, ես աշխատում էի ռադիոյում: Դա իննսուներեք թվականին էր կամ իննսունչորս: Իմ ռեպորտաժներից մեկում, որ երեկոյան Երևանի մասին էր, ես գրել էի՝ «Փողոցներում ամենուր կարելի է հանդիպել շների՝ բառի բուն և փոխաբերական իմաստով»: Հետո ինձ ասացին, որ այդ մարդը լսել էր այդ ռեպորտաժը և զայրացել: Ինձ աշխատանքից ազատելը, ինչը տեղի ունեցավ այդ ռեպորտաժի հեռարձակումից քիչ ուշ, ես իհարկե չկապեցի նախարարի հետ, բայց զղջացի, որ վերոհիշյալ ռեպորտաժում չէի ասել մի քանի կարևոր բաներ: Ազատել՝ ազատել:

Ընդհանրապես իմ ռեպորտաժներում ու գրքերում ես մարդկանց չեմ վիրավորում: Անգամ ամենաարժանիներին: Իհարկե, ասում եմ նրանց մասին ճշմարտությունը, բայց չեմ վիրավորում: Հիմա, սակայն, ուրիշ բանի մասին եմ ուզում խոսել:

Իննսուներեք, իննսուն չորս ու նման թվականներին, երբ այդ մարդը ներքին գործերի նախարար էր, ոստիկաններն ավելի լկտի էին, քան 2011-ին՝ օլիգարխների թիկնապահները: Ասում են՝ այդ մարդն արմատախիլ արեց հանցավորությունը Հայաստանում: Իհարկե, դա այդպես չէ, բայց եթե նույնիսկ այդպես լիներ, երևան եկավ մի նոր երևույթ՝ ոստիկանապետությունը:

Այդ մարդը, ում մասին ես խոսում եմ, 2011-ին Հայաստանում չէր: 2011-ին նրան չափազանց կարոտած մարդիկ ասում էին, որ մենք հիմա ապրում ենք ոստիկանապետությունում:

Ո՛չ, հարգելի տիկնայք և պարոնայք, ոստիկանապետությունում մենք ապրում էինք այն ժամանակ, երբ ոստիկանապետը ձեր չափազանց կարոտած մարդն էր, և այն զազրելի բաները, որ երևան եկան հետագայում, նրա ստեղծած հսկա մեխանիզմի դետալներն էին ընդամենը: Բնականաբար, ոստիկանական այլասերված համակարգ մենք ունեցել ենք նաև Խորհրդային Միության շրջանում, բայց «ոստիկանապետությունը»՝ որպես այդպիսին, գոյություն է ունեցել հենց ա՛յդ մարդու օրոք: Հայտնի բան է, որ այն ոստիկանները, ովքեր աշխատել են նաև նրա օրոք, հետագայում երդվում էին այդ մարդու արևով և երանի էին տալիս այն ժամանակներին, ժամանակներ, երբ տիրում էր ոստիկանական ամենաթողությունը, երբ ոստիկանին թույլատրվում էր ամեն ինչ:

Անարդար էր, որ նրանք, ովքեր այդ մարդու իշխանության տարիներին լինելով նրա մերձավորների շրջապատում՝ չեն բողոքել նրա կամայականությունների դեմ, 2011-ին մեր պետությունը կոչում էին «ոստիկանապետություն»: Մեր ոստիկանական համակարգն անշուշտ դեռ շատ հեռու էր լավը լինելուց, ոստիկանին դժվար էր վստահել, բայցևայնպես, ասել, որ մենք ապրում էինք ոստիկանապետությունում՝ անարդար էր:

Այ ուրիշ բան, եթե ասեին, որ մենք ապրում ենք սափրագլուխների երկրում: Դրան կարելի էր համաձայնել, որովհետև մեր իրականության անբաժանելի մասն էին դարձել «սափրագլուխ» կոչվածները:

Կան մարդիկ, ովքեր տեսակով զինվոր են: Խոսքը սովորական զինվորի մասին չէ, այլ բնատուր ուժեղ, խիզախ և ազնիվ մարդկանց, ովքեր, սակայն, իրենք նախաձեռնող չեն և կարող են միայն հրաման կատարել: Ինչպես սովորական զինվորի պարագայում, այս տեսակի զինվորի պարտականությունը ևս հրամանը ճիշտ կատարելն է:

Այս զինվորները չափազանց կարևոր են ազգի և պետության համար՝ թե՛ խաղաղության, թե՛ պատերազմի պայմաններում: Պատերազմի ժամանակ նրանք լինում են ռազմաճակատի ամենակարևոր կետերում՝ պաշտպանելու պետությունը և ազգը, խաղաղ պայմաններում նրանք պետք է լինեն պետության ուժային կառույցներում՝ պաշտպանելու պետության և քաղաքացու անվտանգությունը: Երկու դեպքում էլ, սակայն, նրանք հրաման կատարողներ են և պարտավոր են անվերապահորեն կատարել հրամանները:

«Սափրագլուխները», մեծամասամբ, ոչ այլ ոք էին, քան վերը նկարագրված զինվորները: Մեր իրականությունն էր նրանց դարձրել «սափրագլուխ»: Նրանք հիմնականում զինվորներ էին այն մարդկանց մոտ, ովքեր մեծ հաշվով թքած ունեին թե՛ ազգի, թե՛ պետության վրա և հետապնդում էին զուտ սեփական շահը: Եվ այդ շահը պաշտպանելու համար վարձում էին զինվորների, ովքեր դառնում էին «սափրագլուխներ»: Որովհետև պետությունը հոգ չէր տանում, որ այդ զինվորները լինեին ճիշտ տեղում:

Իսկ նրանց պարտականությունն ընդամենը հրաման կատարելն էր:

5 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

արի ու տար խմի։

Հրաման տվողները կամ օլիգարխը, ծերունին և կովը

Իսկ ովքե՞ր էին այդ հրաման տվողները: Այստեղ ես ուզում եմ դարձյալ շեղվել ու պատմել ձեզ մի պատմություն: Ճիշտ է, դրա հավաստիության վերաբերյալ ոչ մի երաշխիք չունեմ, բայցևայնպես:

Ուրեմն մի անգամ Հայաստանի՝ այսպես կոչված օլիգարխներից մեկը Երևան-Սևան մայրուղու վրա փորձարկում է իր նոր «Բենթլին»՝ վեց հարյուր ձիաուժ հզորությամբ շարժիչով: Նրա կողքին նստած է լինում թիկնապահներից մեկը, իսկ հետևից գալիս են ևս մի քանիսը՝ երկու «Մերսեդեսներով»:

«Բենթլին» օլիգարխի համար արժեցել էր մի քանի հարյուր հազար դոլար: Բայց ի՞նչ փույթ: Ի՞նչ էր այդ գումարն այն կշռի ու հեղինակության դիմաց, որ այս մեքենան տվել էր նրան:

Եվ հենց այդ փորձարկման ժամանակ «Բենթլիի» արագությունը օլիգարխը հասցնում է ժամում երկու հարյուր հիսուն կիլոմետրի: Նրան դա բոլորովին չի անհանգստացնում, մինչդեռ թիկնապահը՝ սարսափահար դեմքով, երկու ձեռքով կառչած կողային ապակու վերևի բռնակից, արագ-արագ թարթելով աչքերը, հանկարծ փոքրիկ մի վերելքից հետո գոռում է.

– Զգույշ, կո՛վը:

Առջևում՝ տասնհինգ-քսան մետր հեռավորության վրա, մայրուղու վազանցման գծին, իսկապես կանգնած է լինում մի բեժ կով և հանգիստ արածում է մայրուղին կիսող հատվածում աճած խոտը: Մայրուղու առաջին գծով դանդաղ ընթանում է մի մեքենա, որը, ինչպես և կովը, աննկատ էր մնացել նախորդող վերելքի պատճառով: Իսկ ճամփեզրին կանգնած է լինում մի ծերունի, որին էլ, ըստ երևույթին, պատկանում էր կովը: Ինչևէ, հարկավոր էր կտրուկ արգելակել, ինչը և անում է օլիգարխը: Ահռելի արագությամբ սլացող ծանր մեքենան, ճիշտ է, կարողանում է կտրուկ

դանդաղեցնել ընթացքը, բայց կանգ առնել նման կարճ տարածության վրա ի վիճակի չի լինում: Լինելով հմուտ վարորդ՝ օլիգարխն անմիջապես հաշվարկում է, որ ունի երեք տարբերակ՝ բախվել վազանցման գծին կանգնած կովին, խուսափել կովից և բախվել առաջին գծով ընթացող ու կովին խիստ անժամանակ հավասարված մեքենային և կամ խուսափել երկուսից էլ՝ անցնելով մայթեզրով, որտեղ կանգնած էր ծերունին: Հմուտ վարորդ լինելուց բացի, օլիգարխը նաև մեքենաների գիտակ էր և կայծակնային արագությամբ էլ գիտակցում է, որ առաջին երկու տարբերակներն ընտրելու դեպքում՝ այսինքն բախվելով կովին կամ մեքենային, իր մի քանի հարյուր հազար դոլար արժողությամբ «Բենթլին» խիստ կվնասվի: Եվ նա ընտրում է երրորդ տարբերակը:

Ծերունին, ըստ ամենայնի, չի հասցնում ըմբռնել իրավիճակը և մնում է անշարժ, մինչև որ հսկա մեքենայի հարվածից պարզապես թռչում է մինչև ճանապարհամերձ ձորակը: Երկրորդ մեքենան կանգ չի առնում՝ շարունակելով ճանապարհը: Կովը շարունակում է անվրդով արածել: «Բենթլին» վերջապես արգելակում է ծերունու հետ բախման կետից քիչ այն կողմ: Նրա ետևում կանգնում են մյուս թիկնապահների մեքենաները: Օլիգարխն իջնում է, մանրազնին ուսումնասիրում թեթևակի վնասված շիթը:

– Շատ բան չի եղել, շե՛ֆ,– ասում է թիկնապահը:

– Դու որ լինեիր ղեկին, կլիներ:

– Ճիշտ եք ասում:

– Գնացինք:

– Չտեսնե՞նք՝ ինչ եղավ այն մարդը:

– Ո՞վ, չոբա՞նը,– օլիգարխը մի պահ մտածում է,– լավ, տեսնենք:

Բոլորով իջնում են ճամփեզրի ձորակը, ուր անջուր առվակի մեջ պառկած է լինում ծերունին՝ մի կողմում ընկած ձեռնափայտը, մյուս կողմում՝ լայնեզր գլխարկը: Ծերունու աչքերը բաց են լինում, լսվում է անկանոն, ծանր շնչառությունը: Օլիգարխը կանգնում է գլխավերևում, նողկանքով նայում դեմքին ու հանկարծ ոտքով հարվածում:

– Ուրեմն չե՞ս սատկել: Ինչո՞ւ տիրություն չես անում կովերիդ:

Ծերունին փորձում է ինչ-որ բան ասել, բայց չի կարողանում:

Օլիգարխը նորից է հարվածում, այս անգամ՝ ավելի ուժեղ, այնուհետև հարվածներ են հասցնում թիկնապահները: Ծերունին սկսում է մղկտալ ցավից:

– Պետք է վերանորոգես մեքենան,– հայտարարում է օլիգարխը,– գիտե՞ս որքան արժե «Բենթլին»: Ես այն նոր էի գնել:

Ծերունին դարձյալ փորձում է խոսել, դարձյալ չի կարողանում, ապա մի անասելի ճիգ գործադրելով՝ երկարում է ձեռքը, վերցնում ընկած ձեռնափայտը և ամբողջ ուժով հարվածում օլիգարխի ծնկին: Հարվածն ըստ ամենայնի ցավոտ է լինում, որովհետև օլիգարխը երկու ձեռքով բռնում է ծունկն ու գոռում: Ապա կտրուկ շարժումով գոտկատեղից հանում է ատրճանակն ու պահում ծերունու գլխի ուղղությամբ: Թիկնապահը փորձում է խանգարել.

– Պետք չէ՛, շե՛ֆ:

Բայց շեֆը չի լսում նրան, միայն թե փոխում է որոշումը և կրակում ոչ թե գլխին, այլ ոտքին: Ապա կռանում է, բռունցքով մի քանի հարված տալիս և նոր միայն հանդարտվում: Բայց ոչ վերջնականապես. երբ բարձրանում է մայրուղի ու կրկին տեսնում վնասված շիթը, դարձյալ կատաղում է և սկսում կրակել, այս անգամ՝ կովի վրա: Կրակում է այնքան, մինչև կենդանին անշնչացած փռվում է գետնին: Հետո նոր միայն նստում է մեքենան և միացնում շարժիչը:

– Թողեք ես քշեմ, շեֆ,– խնդրում է թիկնապահը,– դուք նյարդայնացած եք:

– Ո՞վ է նյարդայնացած,– կատաղած գոռում է շեֆը:

– Կներե՛ք:

«Բենթլին» շրջադարձ է կատարում՝ տրորելով այն խոտերը, որ չհասցրեց արածել կովը և սլանում Երևանի ուղղությամբ...

Մատ՝ ձիով

Զմռան առաջին ուրբաթն էր: Մենք խմբագրությունում շախմատ էինք խաղում: Փոքրիկ մրցաշար էինք կազմակերպել, որին Պանդայից ու Անդրեասից բացի ներկա էին նաև Կոստոն, Աֆոն և Վոլոդյան: Հիմա որ ասեմ, թե այս երեքն իմ ընկերներն էին, դուք կմտածեք, թե ես լուրջ չեմ վերաբերվում «ընկերություն» հասկացությանը: Մտածեք՝ ինչ ուզում եք, նրանք իսկապես իմ ընկերներն էին: Այս մարդկանց միակ թերությունն այն էր, որ շատ վատ էին շախմատ խաղում (իհարկե՝ իմ համեմատ): Բայց եթե հաշվի առնենք, որ Պանդան ու Անդրեասն էլ առանձնապես ուժեղ չէին (դարձյալ՝ իմ համեմատ), ապա նրանց համընդհանուր այս թերության վրա կարելի էր շատ էլ չկենտրոնանալ:

Ուրբաթօրյա շախմատն ու խմելը ոչ միայն սիրված զբաղմունք էին մեր խմբագրությունում, այլև ապահովում էին չափազանց կարևոր բաներ: Բայց ամեն ինչի մասին՝ հերթով. ուրեմն՝ նախ այն մասին, թե ինչու է պետք խմել ուրբաթ օրերը: Ինձ թվում է, որ երբեք ինքդ քեզ հետ այնքան ազնիվ չես, որքան ուրբաթ օրերը: Ավելի ճիշտ՝ այդպես մի անգամ, երբ կրկին ուրբաթ էր, ասաց իմ բարեկամ բարմենը, եթե չեմ սխալվում՝ չորրորդ բաժակը լցնելով:

Բայց դա վաղուց էր: Վերջին չորս տարիներին մենք ուրբաթ օրերը սկսում և ավարտում էինք մեր խմբագրությունում: Եվ ուրիշ խմբագրակազմերին էլ խորհուրդ էինք տալիս անել նույնը: Այսինքն՝ ոչ մեր խմբագրությունում, որովհետև, չնայած մեր դռները բաց էին բոլորի առջև, խմիչքը կարող էր բոլորին չբավականացնել:

Ուրեմն, ինչո՞ւ էինք մենք այդպես անում և ինչո՞ւ էինք ուրիշներին էլ խորհուրդ տալիս այդպես անել: Որովհետև մենք անկեղծության չտեսնված պակաս ունեինք, եթե անգամ մեզ թվում էր, թե ոչ մի կեղծ բան չէինք անում: Եվ երբ ուրբաթ օրերը սկսում ու ավարտում

էինք գինով, այդ ընթացքում անկեղծանում էինք միմյանց հետ: Իսկ երբ անկեղծանում էինք միմյանց հետ, ազնվանում էինք ինքներս մեզ հետ, և դա անշուշտ նշանակում էր, որ յուրաքանչյուր հաջորդ օր ավելի ազնիվ էինք լինելու:

Եթե չեք հավատում, փորձեք խմել ուրբաթ օրերը և կհամոզվեք: Իսկ եթե չեք հավատում, որ մեզ չտեսնված պակասում է անկեղծությունը, ուրեմն, առավել ևս, հետևեք իմ խորհրդին:

Դե իսկ ինչ վերաբերում է շախմատին, ապա այն ապահովում էր մեր խմբագրության կենսունակությունը՝ այլ առումով: Կարելի է առանց երկմտելու այսպես ասել՝ շախմատը կարգավորում էր անվնաս անցումը մեր սթափ առօրյայից դեպի անսթափ առօրյան և՝ հակառակը:

Բայցևայնպես, 2011-ի ձմռան այդ առաջին ուրբաթ օրը ես պարտվում էի պարտիա պարտիայի ետևից: Ուշք ու միտքս ուրիշ տեղ էր: Նույն պահին տեղի էր ունենում Վաղինակի հանդիպումը «գորշ կարդինալի» հետ, ում գրասենյակ Վաղինակին տարել էի ինքս: Պայմանավորվել էինք, որ հանդիպման ավարտին նա կզանգահարի (Վաղինակը սկսել էր երբեմն-երբեմն օգտվել հեռախոսից): Պետք է ասեմ, որ ապագա պատգամավորը հարբած էր: Բանն այն է, որ դարակազմիկ այս հանդիպումն անընդհատ հետաձգվում էր: Նախորդ ուրբաթ օրվանից այն տեղափոխվել էր նախ երկուշաբթի, ապա՝ երեքշաբթի ու հետո նոր՝ ուրբաթ: Պաշտոնական պատճառն այն էր, որ «գորշ կարդինալը» ճնշման տատանումներ ուներ և տանից դուրս չէր գալիս: Չգիտեմ՝ որքանով էր դա համապատասխանում իրականությանը: Համենայնդեպս, առաջին երկու հետաձգումներին Վաղինակը դիմացել էր՝ ցուցաբերելով անկոտրում կամք. խմել էր ընդամենը օրական մեկ շիշ: Բայց վերջին հետաձգումից հետո կատաղել էր և եռապատկել չափաբաժինը: Հետո երբ պարզվեց, որ այդ օրը հանդիպումը վերջապես կկայանա, Վաղինակն այնքան էր խմած, որ արդեն ես էի փորձում համոզել, որ այն կրկին հետաձգենք: Սակայն նա անդրդվելի էր: Հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ՝ ասում էր նա…

Անդրեասը ձիով «շախ» էր հայտարարել Կոստոյին և սպասում էր նրա պատասխան քայլին: Դիրքն ակնհայտորեն հօգուտ Անդրեասի էր, և նրա առավելությունն այնքան մեծ էր, որ կասկած չէր հարուցում: Բայց ամենակարևորն այն էր, որ եթե նա հաղթում էր այս պարտիան, ապա հաղթում էր մրցաշարը: Խաղացողների գլխավերևում կանգնած էր Պանդան: Նա այդ պահին ամրապնդված էր երկրորդ հորիզոնականում, և Անդրեասի հաղթանակը նրան զրկում էր մրցաշարը հաղթելու բոլոր հնարավորություններից: Կասկածից վեր էր, որ Պանդան ինչ-որ չարաճճիություն է պլանավորում: Ես հո նրան լա՞վ էի ճանաչում: Անհնար էր, որ որևէ բան վերջում նա «հարամ» չաներ: Եվ ահա Պանդան վերցրեց կոնյակի շիշը և ասաց.

– Հարգելի՛ մրցակիցներ, առաջարկում եմ մեկական բաժակ խմել, նոր շարունակել:

Մրցակիցները, բնականաբար, չառարկեցին: Չառարկեցին նաև մյուսները: Պանդան սկսեց հերթով լցնել բաժակները և այդ ընթացքում շախմատի խաղատախտակի վրայից թռցրեց Անդրեասի խաղաքարերից մեկը: Նա այնքան ճարպկորեն արեց դա, որ նկատեցի միայն ես: Բոլորը շրխկացրին բաժակները, խմեցին և վերադարձան խաղին: Ամեն ինչ գուցե բարեհաջող անցներ, եթե Պանդան թռցրած չլիներ Անդրեասի հենց այն խաղաքարը, որով նա «շախ» էր հայտարարել՝ ձին: Պարզ էր, որ սկանդալ էր հասունանում: Միայն թե ինչ եղավ հետո, ես չիմացա, որովհետև հենց այդ պահին զանգեց հեռախոսս:

– Վաղինակն է,– ասաց Վաղինակը,– կարո՞ղ ես գալ իմ ետևից:

Ես ինքնամոռաց ինձ դուրս գցեցի խմբագրությունից:

Նրան գտա մի մեծ ստվարաթղթե տուփ գրկած՝ մայթեզրին ինձ սպասելիս:

Արգելակեցի նրա մոտ և ինքս բացեցի մեքենայի դուռը: Նա դժվարությամբ տեղավորվեց առջևի նստատեղին, տուփը դրեց ծնկներին և ասաց.

– Ինձ արա՛գ հասցրու տուն. երկու ժամ՝ է չեմ խմել:

– Ի՞նչ է այս տուփի մեջ,– անկախ ինձանից հարցրի ես, որովհետև բոլորովին ուրիշ բան պիտի հարցնեի:

– Առաջնորդի գիրքը:

– Ի՞նչ:

– Ավելի ճիշտ՝ գրքերը՝ անգլերեն թարգմանությամբ: Ես պետք է դրանք բաժանեմ մեր ամերիկացի բարեկամներին: «Գորշ կարդինալը» խնդրեց:

– Ուրեմն դու կարողացա՞ր նրան համոզել: Բայց ինչպե՞ս քեզ դա հաջողվեց:

– Ես արդեն ասել եմ՝ հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ: Իսկ հիմա արագացրու՛, եթե ես չխմեմ ևս տասը րոպե, կդադարեմ գոյություն ունենալ:

Միջանկյալ մտորումներ կամ մարդատյացներն ու „դուքյանչիները„

Դեկտեմբերի 14-ն էր, օրը՝ չորեքշաբթի: Խմբագրությունում՝ գրասեղանիս առջև նստած՝ աչքի էի անցկացնում օրվա լրահոսը: «20 տարի առաջ այս օրը կյանքից հեռացավ Անդրեյ Սախարովը»՝ կարդացի վերնագրերից մեկում ու չգիտեմ ինչու սկսեցի մտածել, թե ովքեր են մերօրյա մարդասերները:

Ես կարող եմ տալ մի քանի անուն ընդամենը, բայց այդ անունները ձեզ ոչինչ չեն ասի:

Մեր հասարակության մեջ առկա խնդիրներից գուցե ամենալուրջը մարդասիրության բացակայությունն էր: Հենց նման հասարակությունում է, որ օր առաջ պիտի ի հայտ գային իրական մարդասերները: Մինչդեռ օր օրի ավելանում էին մարդատյացները:

Ովքե՞ր էին մերօրյա մարդատյացները: Ես կարող եմ տալ բազմաթիվ անուններ, ու բոլորին դուք հրաշալի կհիշեք:

Ո՞ւր կարող է գնալ հասարակությունը, երբ մարդկային հարաբերությունները կառուցված են ծառայամտության, վախի, նախանձի ու չարության վրա: Այնտեղ, ուր գնում էր մեր հասարակությունը: Այն է՝ դեպի մարդատյացություն:

Դուք իհարկե կարող եք ասել, որ պատճառն այն է, որ երկրում չէր գործում օրենքը, որն էլ հենց մարդասիրության թիվ մեկ երաշխավորն է: Եվ դուք հարյուր տոկոսով ճիշտ կլինեք:

Այդ օրերին մեր պետության նախագահը, ելույթ ունենալով ինչ-որ տեղ, ասել էր հետևյալը.

«Մեր նպատակադրումներում այսօր առանձնապես կարևորվում է ժամանակին համահունչ հասարակության կայացումը, որտեղ ժողովրդավարությունն ու օրենքի գերակայությունը հանրային ու անձնական կյանքի ամենօրյա նորմեր են, գրված, բայց նաև

չգրված նորմեր, որ շատ հաճախ գործում են որպես սովորույթ, ավանդույթ կամ ընդունված վարվելակերպ: Գաղտնիք չէ, որ սա տևական ու հետևողական աշխատանք է պահանջում. ոչ միայն պետության, օրենքների, այլև հասարակական գիտակցության վերափոխում է ենթադրում»:

Ոչինչ չէր կարող վերափոխվել, նախագահ (կամ պարոն «speechwriter»), քանի դեռ Դուք թույլ էիք տալիս, որ երկիրը տնօրինեին մարդատյացները: Եթե նայելով Ձեր շուրջը, Դուք չէիք տեսնում ու տարբերում այդ մարդկանց, նշանակում է՝ առավել ևս իրավունք չունեիք ասելու այն, ինչ ասում էիք՝ ինչ-որ տեղերում ելույթ ունենալով:

Հասարակական գիտակցության վերափոխումը քայլեր է պահանջում, և առաջին քայլը պիտի աներ իշխանությունը:

Դուք շատ լավ հիշում եք մեծ մարդասեր Անդրեյ Սախարովին:

Առջևում խորհրդարանական ընտրություններ էին: Իշխող կուսակցության ցուցակով քանի՞ մարդատյացներ էին անցնելու Ազգային ժողով և պատգամավորի մանդատով պաշտպանված՝ շարունակելու իրենց լկտի ու ամենաթող կյանքը: Այդպիսիք անպայմանորեն կլինեին:

Կլինեին նաև չարիքի քիչ ավելի փոքր տեսակը մարմնավորող պատգամավորներ: Ես նրանց ասում եմ «դուքյանչիներ»: Նրանք հիմա էլ կային մեր խորհրդարանում: Փորձեք աչքի անցկացնել չորրորդ գումարման Ազգային ժողովի կազմը: Հարյուր երեսունմեկ մարդուց բաղկացած ցուցակ, որը մինչև վերջ նայելու համար ձեզանից իհարկե ժամանակ կպահանջվի: Բայցևայնպես, կարծում եմ, դուք չեք ձանձրանա, հենց միայն այն պատճառով, որ բավականաչափ հումոր կա այդ ցուցակում: Չեմ ուզում օրինակներ բերել՝ մարդկանց չվիրավորելու համար: Որովհետև, գիտեք, գուցե շատերը, ում կենսագրություններն աչքի անցկացնելով՝ այդքան զավեշտի ես հանդիպում, իրականում վատ մարդիկ չէին: Ասենք, ես չգիտեմ՝ այսինչ պատգամավորը, ով մասնագիտություն էր ձեռք

բերել ինչսունինը տարեկանում կամ մեկ ուրիշը, ով իր ողջ պատգամավորական գործունեության ընթացքում միայն կոճակի տեղն էր կարողացել գտնել, ինչպիսի հայր էր, ինչպիսի ընկեր, ինչպիսի բարեկամ, ինչպիսի հարևան, վերջապես՝ ինչպիսի մարդ էր իրականում: Չգիտեմ, դրա համար էլ չեմ ուզում նրանց վիրավորել՝ մատնացույց անելով նրանց կերպարի ողջ զավեշտականությունը: Բայց և հարյուր երեսունմեկ պատգամավորներից քանիսի՞ն կարելի էր առանձնացնել, ովքեր իրենց հենց այդ նույն կերպարով, իրենց նկարագրով, իրենց կենսագրությամբ, իրենց պրոֆեսիոնալիզմով խորհրդարանի անդամ լինելու արժանի էին:

Այս իրադարձություններից մի քանի ամիս առաջ իտալացի բարեկամիս ընթրիքի էի հրավիրել Երևանի ռեստորաններից այն մեկը, որն առավել լավ է բնութագրում մեր ռեստորանային կուլտուրան: Հասկացաք, թե ինչպիսի ռեստորանի մասին է խոսքը: Եվ ահա կողքի սեղանի մոտ նստած էին Ազգային ժողովի երկու պատգամավորներ: Չեմ կարող ասել, որ նրանք իրենց վատ էին պահում: Նստած էին իրենց համար և իրենց համար ուտում էին: Միակ արտառոցն այն էր, որ այդ մարդիկ անընդհատ նայում էին շուրջը, այդ թվում՝ և մեր սեղանի կողմը, ու մի տեսակ անհանգիստ բան կար նրանց հայացքում, կարծես ուզում էին հասկանալ, հո սխալ բան չե՞ն անում, որ իրենց համար նստած են ու իրենց համար ուտում են: Եվ ահա, դուրս գալիս իտալացի բարեկամս չգիտեմ ինչու շնորհակալություն հայտնեց նրանց: Երբ հետաքրքրվեցի, թե ինչու է շնորհակալություն հայտնում, նա զարմացավ և ասաց՝ ինձ թվաց ռեստորանի վարիչն է:

Իրոք, մերօրյա օրենսդիրների մեծամասնությունը շատ ավելի լավ ռեստորանի վարիչներ, այսպես ասած՝ «դուքյանչիներ» և «ցեխավիկներ» կարող էին լինել, ինչի մեջ ոչ մի վատ բան չկա, միակ անհասկանալին այն էր, թե ինչու էին նրանք խորհրդարանում…

Մի՛ ասեք, թե յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր իշխանություններին

Դեկտեմբերի 14-ն էր, օրը՝ չորեքշաբթի: Խմբագրության իմ աշխատասենյակում նստած՝ ես մտածում է մեր ձեռնարկած գործի շարունակության մասին:

Առայժմ կարծես թե ամեն ինչ լավ էր ընթանում: Առանց լուրջ բարդությունների մեզ հաջողվել էր պայմանավորվածություն ձեռք բերել քաղաքական ուժերից երկուսի հետ: Այդ պայմանավորվածությունն իհարկե նախնական էր, բայց ես գրեթե չէի կասկածում, որ երկուսի ցուցակներում էլ Վաղինակի անունը կլինի:

Իսկ հիմա պետք էր գնալ առաջ և ճանապարհներ գտնել՝ դեպի մյուս չորս քաղաքական ուժերի ցուցակները: Այդ ուժերն էին՝ «Իշխանություն՝ ամեն գնով», «Ինքնըստինքյան», «Ամերիկյան ժառանգություն» և «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունները:

Քանի որ քայլերի հերթականությունը կազմելիս ես առաջնորդվում էի բացառապես հակակրանքներով և ոչ թե համակրանքներով, հիմա կանգնել էի բարդ խնդրի առջև՝ ո՞ր կուսակցությունը պիտի լիներ հաջորդը՝ «Իշխանություն՝ ամեն գնո՞վը», թե՞ «Ինքնըստինքյանը»: Այսինքն՝ սրանցից որն էր ավելի վատը: «Դուքյանչիների» պակաս երկուսում էլ չկար, բայց ահա մարդատյացների առումով առաջինը, ինչ խոսք, հավասարը չուներ: Ընդ որում, սրանց ինչսուն տոկոսին «կուսակցականացրել էր» անձամբ հանրապետության նախագահը: Ու քանի որ նա նաև այս կուսակցության առաջնորդն էր, ես ստիպված եմ իմ այս պատմության մեջ կրկին անդրադառնալ նրան:

Ինչո՞ւ էր նախագահն իր կուսակցությունը լցնում տարատեսակ անմարդկային, անբարոյական, անհայրենիք ու անգրագետ

մարդկանցով, նախագահի ինչի՞ն էին պետք նրանք: Պատասխանը մեկն էր՝ իշխանությունը պահելու համար: Հենց այս մարդիկ էին, որ ընտրությունների ժամանակ ապահովում էին իշխող կուսակցության հաղթանակը՝ միջոցների մեջ ամենևին խտրականություն չդնելով: Այսինքն՝ կաշառելով, գնելով, խաբելով, սպառնալով, ահաբեկելով, ճնշելով: «Տեղային իշխանիկները» ստանում էին հստակ հանձնարարություն՝ իրենց տարածքում ընտրությունների ժամանակ ապահովել այսքան ձայն: Դիցուք՝ քսան հազար: Հետո նրանք իրենք էին հանձնարարում իրենց տարածքի այսպես ասած՝ «անունով տղերքին» արդեն թաղերում ապահովել այսքան ձայն: Դիցուք՝ երկուհազարական: Սրանք էլ իրենց հերթին հանձնարարում էին իրենց նազիր-վեզիրներին կոնկրետ բակերից բերել այսքան ձայն: Դիցուք՝ երկուհարյուրական: Սրանք էլ գործի էին դնում իրենց «վեցանոցներին»՝ նրանց վրա դնելով դիցուք՝ քսանական ձայն ապահովելու պարտավորություն: Շղթայի բոլոր օղակները վերջում, ինչ խոսք, խրախուսվում էին. «վեցանոցները» իրավունք էին ստանում շրջելու «անունով տղերքի» հետ և օգտվելու նրանց բարիքներից, «անունով տղերքը»՝ տեղային իշխանիկների հետ, վերջիններն էլ՝ կուսակցական ղեկավարների և անձամբ՝ նախագահի:

Իշխանությունը պահելու այլ տարբերակ նախագահը չուներ: Ինչպե՞ս կարող էր ժողովուրդը վստահել իշխանություններին մի երկրում, ուր մի մասի ստացած նվազագույն աշխատավարձը չէր համապատասխանում միջին սպառողական զամբյուղին, մյուսները կքված էին հարկային բեռի տակ, մնացածների՝ դրսում գտնվող հարազատներից ստացած գումարներն էլ ոչ մի կերպ չէին հասնում ամենօրյա թանկացումների ետևից:

Նախագահը նաև վերոնշյալ «բաշիբոզուկների» վրա չհենվելու և չօգտագործելու տարբերակ չուներ, որովհետև այդ պարագայում սրանց վրա կարող էին հենվել և նրանց օգտագործել ուրիշները:

5 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

Ի՞նչ էր տեղի ունենում արդյունքում. բարոյալքվում ու ստրկանում էր ժողովրդի մի ահռելի հատված: Մոտավորապես նույնքան մարդ, որքան ձայն որ ստանում էր իշխող կուսակցությունը:

Գիտեք, ես հեռու եմ նման պարզունակ մտածողությունից, թե քանի որ նախագահը պետության խորհրդանիշերից է, չի կարելի նրա մասին ասել վատը: Սա մեկ, և երկրորդ՝ ես համաձայն չեմ նաև նրա հետ, որ յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր իշխանություններին: Բացատրեմ, թե ինչու. եթե ժողովրդի մեջ կա անգամ մեկ տոկոս, որը համարձակորեն և հիմնավորված ասում է, որ նախագահը վատն է, որ իշխանությունները վատն են, բայց և պատրաստ է օգտակար լինել նախագահին և իշխանություններին, որպեսզի նրանք կա՛մ դառնան լավը, կա՛մ հեռանան, դեռ ամեն ինչ կորած չէ:

Սա նորմալ բան է, և շատ պետություններ իրենց կայացման ճանապարհին նման փուլեր են անցել: Մենք նույնպես կանցնենք, և ինչպես վերևում մի տեղ արդեն առիթ ունեցել եմ ասելու, եթե երեսուն կամ հիսուն տարի հետո ինչ-որ մեկը կարդա այս գիրքը, նրան կարող է պարզապես ծիծաղելի թվալ մեր օրերի իրականությունը…

Իշխանություն՝ ամեն գնով կամ Պողոսի մեկ ու կես ժամը

Եվ ուրեմն, մեր ավանտյուրայում հաջորդն «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցությունն էր: Հիմա որ ես ասեմ, թե այստեղ ունեմ բազմաթիվ մտերիմներ, անգամ՝ ընկերներ, ընդ որում՝ նույնիսկ ամենավերին օղակներում, դա ձեզ անշուշտ տարօրինակ կթվա: Չէ՞ որ ես խիստ բացասաբար էի արտահայտվում քաղաքական այս ուժի մասին:

Ուրեմն ովքե՞ր էին իմ այդ մտերիմները, և ինչո՞ւ էին նրանք իմ մտերիմները:

Դժվար է բացատրել: Կա մարդկանց մի տեսակ, որը հստակ գիտակցում է, որ ինքը լուրջ անելիք ունի այս կյանքում: Եվ ոչ միայն ունի, այլև պետք է անի: Ամե՛ն գնով: Անելիքի լրջության չափն իհարկե տարբեր է, բայց նույնն է հաստատակամությունը: Այս մարդիկ երբեք օդի մեջ չեն խոսում, օդում չեն սավառնում, օդ չեն կրակում: Նրանց համար գուցե առանձնապես կարևոր չեն բարձր արժեքները, վեհ գաղափարները: Նրանց համար ընդամենը կարևոր է իրենց ճիշտ ուղուց չշեղվելը, և դա քիչ բան չէ: Այս մարդիկ երբեք միջակություններ չեն լինում և որտեղ էլ դրսևորվեն՝ մինչև վերջ չեն դավաճանում իրենց տեսակին: Դիցուք, դրսևորվելով իշխանությունում՝ նրանք կոնֆլիկտի չեն գնում իրենց շրջապատի սրիկաների հետ, բայց և գլուխները չեն կախում նրանց առջև, առավել ուժեղներն անգամ կարողանում են օգտագործել նրանց:

Բազմաթիվ նման մարդիկ կային իշխող կուսակցությունում, և նրանց մի մասի հետ, ինչպես ասացի, ես մտերիմ էի: Բայց, անտարակույս, մտերիմներիս և առավել ևս՝ ընկերներիս ներքաշել մեր ավանտյուրայի մեջ ես չէի պատրաստվում:

Ուրեմն ի՞նչ անել: Հայտնի էր մի բան՝ իշխող կուսակցության ցուցակը կազմվում էր ըստ քվոտաների: Ամենամեծ քվոտան, բնականաբար, ուներ նախագահը: Քվոտաներ ունեին նախագահի, այսպես ասենք՝ աջ և ձախ ձեռքերը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, ուժային կառույցների որոշ ղեկավարներ, օլիգարխները, հին կուսակցականները: Մանր-մունր քվոտաներ ունեին նաև ուրիշները: Եվ հենց այդ ուրիշների ուղղությամբ էլ ես մտածում էի:

«Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցությունում կար մեկը, ինչպես ընդունված է ասել՝ «հին գել», ով բավականաչափ, ազդեցություն ուներ կուսակցության ներսում, բնականաբար ուներ նաև քվոտաներ: Նրան ես ճանաչում էի հանգամանքների բերումով: Կարևոր չէ, թե նա ով էր: Նրա նմաններն իշխող կուսակցությունում էլի կային, և հիմա եթե ես ասեմ՝ Պողոս, դուք հանգիստ կարող եք հասկանալ՝ Պետրոս:

Ուրեմն՝ Պողոս: Ինչպես ասացի, ես նրան ճանաչում էի հանգամանքների բերումով: Կարծում եմ, թե ձեզ կհետաքրքրի, թե ինչ հանգամանքների մասին է խոսքը: Ամեն դեպքում պատմեմ:

Նրա հետ ծանոթացել էի մեր խմբագրության մամուլի սրահում ունեցած իր ասուլիսի ժամանակ: Ասուլիսից հետո մեկական բաժակ կոնյակ էինք խմել միասին և մեկական խոսք փոխանակել: Եվ ահա դրանից ոչ շատ ժամանակ անց, երբ մեր լրատվամիջոցը կանգնած էր ֆինանսական խնդիրների առջև, ինձ զանգահարեց իշխող կուսակցության լրատվական դաշտի պատասխանատուներից մեկը և ասաց, որ Պողոսն ուզում է հանդիպել հետս: Հանդիպեցինք, ու Պողոսն ինձ արեց հետևյալ առաջարկը. ինքն ապահովում է մեր լրատվամիջոցի մեկ տարվա լիարժեք ֆինանսավորումը, իսկ ես պարտավորվում եմ այդ մեկ տարվա ընթացքում հրապարակել ինձ տրամադրվող նյութերը: Ես, զուտ հետաքրքրասիրությունից դրդված, հարցրի, թե ինչ նյութերի մասին է խոսքը, և ում դեմ են դրանք ուղղված լինելու: Եվ ի՞նչ եք կարծում՝

ի՞նչ պարզվեց: Պողոսի թիրախն իր իսկ քաղաքական թիմի ներկայացուցիչ էր՝ Պետրոսը: Ես քաղաքավարի հրաժարվեցի, և նա խնդրեց, որ խոսակցությունն ամեն դեպքում մեր մեջ մնա: Վստահեցրի, որ ոչ ոքի այդ մասին չեմ ասի, բայց հնարավոր է՝ անդրադառնամ դրան իմ գրքերից մեկում: Պողոսը ծիծաղեց, և հանդիպումն այդքանով ավարտվեց: Որոշ ժամանակ հետո հասկացա, որ նրան, այնուամենայնիվ, հաջողվել է հասնել նպատակին. լրատվամիջոցներից մեկը սկսել էր հեղեղվել Պետրոսին վարկաբեկող նյութերով: Հետո մի անգամ ևս առիթ ունեցա հանդիպելու Պողոսին: Պետական կառույցներից մեկի ամանորյա ընդունելության ժամանակ նա ինձ մոտեցավ՝ կոնյակի բաժակը ձեռքին: Ես օղի էի խմում: Հետաքրքրվեց մեր լրատվամիջոցի վիճակով, մի քիչ խոսեց քաղաքականությունից, իսկ վերջում շնորհակալություն հայտնեց, որ ես պահեցի խոսքս և հիշեցրեց, որ կարող է շատ հարցերում օգտակար լինել ինձ: Ես էլ իմ հերթին հիշեցրի, որ հնարավոր է՝ անդրադառնամ այս ամենին իմ գրքերից մեկում: Նա ծիծաղեց ու հեռացավ: Ահա այսքանը:

Եվ հիմա դարձյալ ես հիշել էի Պողոսին: Նրան հանգիստ խղճով կարելի էր ներքաշել խաղի մեջ և բավականաչափ հիմքեր կային մտածելու, որ նա կարող էր նպաստել մեր ավանտյուրայի հաջող ելքին:

Զանգահարեցի առավոտյան ժամը իննին և ասացի, որ ուզում եմ հանդիպել մի շատ կարևոր գործով:

– Ցավդ տանեմ, խաշի եմ,– ասաց Պողոսը,– ժամ ու կեսից զանգի, կպայմանավորվենք:

Զանգեցի մի ժամ ու կեսից:

– Ցավդ տանեմ, նարդի եմ խաղում, կարո՞ղ ես ժամ ու կես էլ սպասել:

Սպասեցի ևս մի ժամ ու կես ու կրկին զանգեցի:

– Հենց նոր խորովածը բերեցին, ուտեմ ու ժամ ու կեսից զանգեմ, լա՞վ, ցավդ տանեմ:

Ես համբերատար սպասեցի ևս մի ժամ ու կես, բայց նա չզանգեց: Ստիպված կրկին ինքս զանգեցի:

– Մոռացել էի, ցավդ տանեմ, եկել ենք բաղնիք մի քիչ գոլորշահարվենք: Սրանք թողնում են որ մարդու գլխին խելք մնա, «պոդոժդի, Նատաշա»:

Մի խոսքով, այդ օրն այդպես էլ չհանդիպեցինք: Հանդիպեցինք հաջորդ օրը: Ընդ որում՝ նա ինքը զանգահարեց և հրավիրեց ինձ իր աշխատավայր: Բայց ես ասացի, որ ուրիշ տեղ հանդիպելը գերադասելի է, քանի որ խոսակցությունը խիստ գաղտնի է, իսկ ես մանկուց վախեցել եմ «ժուչկներից»: Դա բնականաբար ասացի գործին ավելի լրջություն հաղորդելու համար ու մտածում էի, որ նա չի համաձայնի, բայց զարմանալիորեն եղավ հակառակը:

– Ինձ մոտ «ժուչկներ» չկան, բայց որ ասում ես՝ արի ուրիշ տեղ հանդիպենք:

Պայմանավորվեցինք Հրազդանի ձորի ռեստորաններից մեկում: Ես ավելի շուտ էի եկել և մուտքի մոտ սպասում էի նրան: Պողոսը չուշացավ: Նա իջավ իր ծառայողական մեքենայից, քայլեց իմ կողմը, բայց հանկարծ ինչ-որ բան հիշեց ու վերադարձավ մեքենայի մոտ: Գրպանից հանեց բջջային հեռախոսը, տվեց վարորդին ու ասաց.

– Որ զանգեն, կասես թող ժամ ու կեսից զանգեն:

– Բա որ Ինքը զանգի, շե՛ֆ,– հարցրեց վարորդը:

– Ինքը չի զանգի, էստեղ չի:

Այս խոսակցությունից ես հասկացա մի քանի հետաքրքիր բաներ. նախ, որ Պողոսի համար ժամանակային միակ չափորոշիչը «ժամ ու կեսն» էր, երկրորդ, որ նա վախենում էր ոչ միայն «ժուչկներից» իր աշխատավայրում, այլև վախենում էր, որ կարող են գաղտնալսել անգամ իր հեռախոսը, և երրորդ՝ հասկացա, թե ով էր «Ինքը»: Այսինքն, առանձնապես զարմանալու բան չկար:

Ինչևէ, ներս մտանք և տեղավորվեցինք մի առանձնասենյակում: Նա ասաց, որ քաղցած է և առաջարկեց ճաշել: Ես հրաժարվեցի.

եթե ճաշեինք, պիտի նաև խմեինք, իսկ խմել նրա հետ չէի ուզում: Ասացի, որ միայն սուրճ կխմեմ և անմիջապես անցա գործի:

– Ես մի մեծահարուստ ծանոթ ունեմ: Նա բիզնեսներ ունի Միացյալ Նահանգներում, որոնք ուզում է տեղափոխել Հայաստան:

– Այսինքն տանի՞ք է փնտրում,– ընդհատեց ինձ Պողոսը:

– Ոչ այնքան տանիք է փնտրում, որքան ուզում է ինքը դառնալ իր տանիքը:

– Այսի՞նքն,– զարմացավ նա:

– Պատգամավոր է ուզում դառնալ,– կտրուկ տոնով ասացի ես:

Պողոսն է՛լ ավելի զարմացավ.

– Մեծ չի՞ ախորժակը:

– Նա առաջարկում է մեկ միլիոն դոլար անձամբ ձեզ, մեկ միլիոն դոլար՝ կուսակցությանը և մի քանի միլիոն դոլարի ներդրումներ:

Պողոսն անհանգիստ աջուձախ նայեց: Նա ինչ-որ բան էր ուզում ասել, բայց այդ պահին առանձնասենյակ մտավ մատուցողը: Դրեց սուրճի բաժակները սեղանին և հեռացավ: Պողոսը շարունակում էր անհանգիստ շարժումներ անել: Ես վախեցա, որ նա կհրաժարվի և գրողի ծոցը կուղարկի ինձ: Բայց այդպես չեղավ: Նա որոշ ժամանակ լռեց ու հետո խոսեց. միայն թե տպավորությունն այնպիսին էր, որ նա բարձրաձայն մտածում էր:

– Ես գիտեմ, որ դու լուրջ մարդ ես: Թերթ-մերթ ունես: Մեկ միլիոն՝ ինձ, մեկ միլիոն՝ կուսակցությանը: Կարելի է մտածել: Ներդրումների պահն էլ կա: Կարելի է մտածել:

Ես նրան ասացի, որ մի խնդիր կա ընդամենը՝ իմ ծանոթը վերջին տարիներին բնակվել է ԱՄՆ-ում, ինչին Պողոսը արձագանքեց կարճ.

– Ա՛յ ցավդ տանեմ:

Հետո հարցրեց, թե կարող է հանդիպել այդ մարդու հետ: Ասացի, որ բնականաբար կարող է: Պայմանավորվեցինք, որ հանդիպումը կկայանա հաջորդ օրը՝ նույն ժամին, նույն վայրում: Միայն թե ես ներկա չեմ լինի այդ հանդիպմանը:

Որովհետև արժեքը մեզանում „0„-ն էր

Դե ինչ, պետք էր զբաղվել Վաղինակով: Ձորից ուղիղ գնացի նրա տուն: Պատգամավորության թեկնածուն տանն էր: Տանն էին նաև «բոմժերը»: Ես ներս մտա այն պահին, երբ բոլորը միասին նորոգում էին հին նավթավառը: «Մի՞թե վերջապես դեկտեմբերյան ցուրտը հաղթել էր խմիչքի ազդեցությանը, և Վաղինակը որոշել էր տաքացնել բնակարանը»,– մտածեցի ես: Բայց պարզվեց՝ պատճառն ուրիշ էր: Դա ես հասկացա՝ տեսնելով խոհանոցի լվացարանի մեջ շարված տավարի տոտիկները և գետնին դրված հսկա կաթսան: Մեր բարեկամները խաշի էին պատրաստվում:

Ես խնդրեցի Վաղինակին առանձնանալ:

– Խոսելու բան կա,– ասացի:

Վաղինակը խեթ նայեց վրաս՝ առանց դադարեցնելու գործը: Նրա հայացքն ասում էր՝ եթե դու ուզում ես կանխել խաշային այս զարգացումները, դա քեզ չի հաջողվի:

Մոտեցա սեղանին, վերցրի օղու կիսատ շիշը և սկսեցի մաքուր բաժակ փնտրել: «Բոմժերից» երեքը միանգամից թողեցին նավթավառը և թռան իմ կողմը: Նրանց թվաց, թե ես նորից պատրաստվում եմ թափել 22ի պարունակությունը:

– Ամեն ինչ կարգին է,– հանգստացրեցի նրանց,– ուզում եմ խմել ձեզ հետ:

Նկատեցի Վաղինակի քաջալերող հայացքը, և ինքս լցրեցի բոլորի բաժակները:

– Խմենք տանտիրոջ կենացը,– ասացի:

Հետո հանեցի վերարկուս և սկսեցի օգնել նրանց վերանորոգել նավթավառը: Իրենց երբեմնի երդվյալ հակառակորդի կողմից վերաբերմունքի նման անսպասելի ու անբացատրելի փոփոխությունը «բոմժերին» անշուշտ զարմացրել էր: Նրանք ինձ էին նայում

թերահավատորեն՝ չհասկանալով, թե որն է պատճառը: Մինչդեռ հատուկ պատճառ չկար, պարզապես տրամադրությունս, չգիտեմ ինչու, բարձր էր:

Վաղինակի հետ խոսեցի ավելի ուշ: Պատմեցի նրան վերջին իրադարձությունների մասին և խնդրեցի պատրաստվել հանդիպմանը:

– Եվ, այնուամենայնիվ, պիտի հետաձգես խաշը և առավոտյան չխմես: Վաղը դու մեքենա ես վարելու,– ասացի վերջում:

– Ինչո՞ւ պիտի մեքենա վարեմ,– զարմացավ Վաղինակը:

– Տպավորության համար:

Հետո հրաժեշտ տվեցի հարգարժան հասարակությանը և դուրս եկա: Գնացի խմբագրություն, որ հանգիստ մտածեմ մի քանի կազմակերպչական հարցերի շուրջ: Խնդիրն այն է, որ մեքենայի հարցում ես կատակ չէի անում: Ընդ որում՝ ոչ թե պարզապես մեքենայի, այլ լավ մեքենայի:

Վաղինակին ես ներկայացրել էի իբրև մեծահարուստի, իսկ Հայաստանում մեծահարուստները չէին կարող վատ մեքենա վարել: Ինչո՞ւ միայն մեծահարուստները: Յուրաքանչյուրը, ում ձեռքին երկու կոպեկ փող էր հայտնվում, իր պարտքն էր համարում շրջել թանկարժեք մեքենայով: Եվ պարտադիր պայման էր, որ այդ մեքենայի համարանիշն ունենար հնարավորինս շատ «0»-ներ: Մեր հասարակության մեջ գերիշխող էր հետևյալ կարծիքը՝ որքան շատ «0» կա մեքենայի համարանիշի վրա՝ այնքան «կարգին» մարդ է մեքենայի տերը: Մարդկային արժանիքները մեզանում վաղուց արդեն մարդասիրությունն ու հայրենասիրությունը, քաջությունն ու համարձակությունը, բարությունն ու ազնվությունը չէին, այլ բիրտ ուժը, ծառայամտությունն ու գոռոզությունը: Իսկ արժեքը մեզանում ամենևին էլ հայրենիքը չէր, մարդը չէր, ազատությունը չէր, այլ մեքենան, հեռախոսը ու դրանց համարները: Այսինքն՝ «0»-ն: Արժեքը մեզանում «0»-ն էր:

Բայց ամենասարսափելին այն էր, որ այսպես էր մտածում նաև մեր նոր ձևավորվող սերունդը: Իսկ դա նշանակում էր, որ

«արժեքները» մեզանում մնալու էին նույնը մեկ-երկու տասնամյակ հետո էլ, մնալու էին «0»:

«0»-ներով համար ունեցող մեքենայի վարորդն իրավացիորեն մտածում էր, որ ինքն է դրության տերը: Իրավացիորեն, որովհետև տեսնում էր, որ հասարակությունն իր հետ համաձայն է: Որովհետև տեսնում էր, որ հասարակությունն իրեն հարգանքով է վերաբերվում: Իսկ հասարակությունը մտածում էր, որ եթե այս մարդու մեքենայի համարների վրա այսքան «0»-ներ կան, ուրեմն դա բավական է, որ նրան հարգանքով վերաբերվեն:

Այս «0»-ամոլությունը կարելի էր չարիք չհամարել, եթե այն պարզ ցուցամոլություն լիներ: Բայց, ցավոք, այն դադարել էր ցուցամոլություն լինել և դարձել էր մտածողություն: Ընդ որում, ոչ միայն երիտասարդության շրջանում, կամ ասենք «շոու բիզնեսի» ներկայացուցիչների, կամ՝ տարբեր տրամաչափի գործարարների, ինչը կարելի էր որոշ չափով նորմալ համարել, այլ պետական ու քաղաքական գործիչների, մտավորականների, բարձրաստիճան զինվորականների, անգամ՝ հոգևորականների:

Հանուն արդարության պետք է ասեմ, որ «0»-ներով համարանիշով թանկարժեք մեքենաներ էին վարում նաև իմ ընկեր Պանդան և էլի ուրիշ իմ ընկերներ: Ինչ արած…

Ես իհարկե կարող էի վերցնել նրանցից որևէ մեկի մեքենան, որպեսզի Վաղինակը դրանով գնար հանդիպմանը, բայց չէի ուզում այդպես վարվել: Ավելի լավ տարբերակ կար:

Հաջորդ առավոտյան գնացի ավտոմեքենաների վարձույթով զբաղվող մի ընկերության գրասենյակ և մեկ օրով վարձեցի նրանց կողմից տրամադրվող լավագույն մեքենան՝ ներկայացուցչական դասի մի «Մերսեդես»: Դա ինձ համար իհարկե բավականաչափ թանկ արժեցավ, բայց ինչ արած: Հետո իմ ավտոտնակում գտա վաղուց օգտագործումից դուրս եկած մի հին գերմանական համարանիշ, որ տարիներ առաջ հանել էի Գերմանիայից ներմուծված իմ մեքենայի վրայից: Այն ուներ հետևյալ տեսքը՝ «KK90009»:

Տեղադրեցի համարանիշը «Մերսեդեսի» վրա և գնացի Վաղինակի ետևից:

– Որտեղի՞ց քեզ այս մեքենան,– հարցրեց նա:

– Կարևոր չէ: Միայն թե զգուշ կքշես:

Հետո մանրամասն բացատրեցի, թե ինչ է պետք խոսել Պողոսի հետ, հանձնեցի նրան մեքենան և հաջողություն մաղթեցի:

Երբ էշի տեղ են դնում ընտրողին կամ „Մերսեդեսի„ վախճանը

Հաջողությունը մեզ չէր խանգարի: Մենք այլևս գերազանցում էինք անգամ արդարացված ռիսկի չափը: Մեր ավանտյուրան արդեն ոչ միայն քաղաքական էր, այլև ֆինանսական: Չէ՞ որ աջ ու ձախ գումարներ էինք խոստանում և այն էլ՝ ինչպիսի գումարներ: Ուստի ընթերցողի մոտ կարող է հարց առաջանալ, թե ինչպես էինք պատրաստվում մենք հետո այս ամենի տակից դուրս գալ: Դա, ինչ խոսք, այնքան էլ հեշտ չէր լինելու, բայցևայնպես, կար մի հանգամանք, որ կարող էր աշխատել:

Ցուցակների հրապարակումից անմիջապես հետո Վաղինակը նամակով դիմում էր բոլոր այն մարդկանց, ում հետ գործարքի մեջ էր մտել և հրաժարվում էր ցուցակում իր տեղից: Այսինքն հրաժարվում էր պատգամավոր դառնալուց: Սա ինքնին արդեն այնքան անհավանական մի բան էր, որ մնացած հարցերը մղելու էր երկրորդ պլան: Այն ժամանակ, երբ ուրիշները պատրաստ էին ամեն ինչ տալ պատգամավոր դառնալու համար, ինչ-որ մեկը հրաժարվում էր ցուցակում իր տեղից, որ հարյուր տոկոսով երաշխավորում էր մանդատը: Մի՞թե նման բան մեր երկրում հնարավոր էր: Ու մինչ մարդիկ կփնտրեին այս հարցի պատասխանն ու բնականաբար չէին կարողանա գտնել, Վաղինակն արդեն իր Ամերիկայում կլիներ: Դե, իսկ ինչ վերաբերում է ինձ, եթե ինչ-որ մեկը փորձեր բացատրություն պահանջել, ես կարող էի ասել, որ ինձ խնդրել են ընդամենը միջնորդել, և ես միջնորդել եմ ու հետո կբերեի միևնույն փաստարկը՝ ի՞նչ եք ուզում, մարդը հրաժարվել է պատգամավորությունից:

Բայց, եթե անգամ մենք խնդիրներ էլ ունենայինք, մի՞թե դա էր կարևորը: Մի՞թե այդ խնդիրները կարող էին համարժեք լինել նրան, ինչին մենք կհասնեինք մեր այս ավանտյուրայով:

Եթե իշխանությունը էշի տեղ է դնում ընտրողներին, ապա ինչո՞ւ մենք չէինք կարող նույն կերպ վարվել նրանց հետ:

Փորձենք ավելի պարզ ձևակերպել հարցը:

Ընտրությունները, խոշոր հաշվով, քթի տակ էին: Բայց մինչև 2012-ի գարունը կա՛մ էշը կարող էր սատկել, կա՛մ էշատերը:

Արդեն համարձակություն ունեցանք ասելու, որ էշն ընտրողն էր (այդուհանդերձ, նկատենք՝ ոչ թե ժողովուրդը, ոչ թե հասարակությունը, այլ՝ ընտրողը): Համապատասխանաբար, եթե էշատերը իշխանությունն էր, ապա ո՞ւմ սատկելն էր առավել հավանական մինչև 2012-ի գարունը: Անշուշտ՝ էշատիրոջ: Ինչո՞ւ (չափազանց շատ են հարցերը): Որովհետև իրավիճակն էր այդպիսին: Եվ ըստ այդմ, ի՞նչ պիտի աներ էշատերը, որպեսզի ողջ-առողջ մնար: Պիտի մտածեր իր հոտի մասին: Մի քիչ շատ չէ՞ այլաբանությունը (կրկնակի շատ են հարցերը): Իհարկե, շատ է: Իշու հոտը ո՞րն է՝ կհարցնեք դուք: Բայց, հավատացնում եմ, մեծ չէր տարբերությունը: Մեծ չէր, քանի դեռ մեր իշխանավորները չէին գիտակցում, թե իրենք ում հետ գործ ունեին...

Այնուամենայնիվ, գուցե ուշացած, ներողություն եմ խնդրում կոպիտ լինելուս համար (արդյոք կոպի՞տ կենդանի է էշը):

Սա իշխանությունների մասով: Իսկ ընդդիմությո՞ւնը: Ինչո՞ւ էինք մեր ավանտյուրայով ծաղրում նաև ընդդիմությանը՝ կհարցնեք դուք: Որովհետև ընդդիմությունը ոչ թե պետք է մտածեր, թե ինչպես անի, որ ընտրություններում ավելի շատ ձայներ հավաքի, այլ թե ինչպես անի, որ ընտրողն իրեն մարդ զգա, սեփական կարծիքը և այդ կարծիքն արտահայտելու իրավունք ունեցող մարդ արարած: Եվ հավասարապես պետք է մտածեր, թե ինչպես անի՝ այնքան ուժ ունենալու համար, որ երբ իշխանություններն ընտրողին էշի տեղ դնեն, ինքը չհանդուրժի այդպիսի իշխանություններին:

Մեր իրականությունն այնպիսին էր, որ ուղիղ չորս տարի և վեց ամիս իշխանությունները նախաձեռնում էին այն, ինչ ուզում էին:

Հիմնականում՝ բացասական բաներ: Փառք Աստծու, ամեն ինչ չէ, որ հաջողում էին:

Իսկ ի՞նչ չորս տարի և վեց ամսվա մասին է խոսքը: Դա այն ժամանակահատվածն էր, որն ընկած էր ընտրությունների միջև: Կար ևս վեց ամիս, որոնցից երեքը իշխանություններին անհրաժեշտ էին իշխանություն մնալու համար, մյուս երեքը՝ հանգստանալու: Խոսքն ընտրություններին հաջորդող և նախորդող երեքական ամիսների մասին է: Եվ այնպես էր ստացվել, որ մեր իրականության մեջ միայն այդ վեց ամիսներին էր, որ իշխանությունները ոչինչ չէին նախաձեռնում: Մի կողմ թողնենք ընտրակաշառքները, ասֆալտը, ալյուրը և հինգհազարական դրամները, որոնք, ինչ խոսք, նույնպես նախաձեռնություն էին, և հենց դրանցից էր ամեն ինչ սկսվում: Բայցևայնպես, վերադառնանք միջանկյալ չորս տարի վեց ամիսներին:

Սա էր այն ժամանակահատվածը, երբ իշխանությունները հանդես էին գալիս այնպիսի նախաձեռնություններով, որոնք, եթե հաջողում էին, հետո արդեն ժողովրդի համար, դրանց տակից չափազանց դժվար կամ պարզապես անհնար էր լինում դուրս գալը: Ինչպես վերևում նշեցինք, վերջերս, փառք Աստծու, որոշ բաներ մեր իշխանություններն, այնուամենայնիվ, չէին կարողանում հաջողել: Բայց դրանք զուտ ազգային տարրեր պարունակող հարցեր էին: Դուք անշուշտ կհիշեք «հայ-թուրքական մերձեցումը» կամ «օտարալեզու դպրոցները», որոնք եթե անգամ չձախողեցին էլ, ապա այնպիսի դիմադրության հանդիպեցին, որ կորցրին իրենց սկզբնական իմաստը: Իսկ մնացա՞ծը: Իսկ այն տնտեսական, ֆինանսական, սոցիալական նախաձեռնությունն՞երը, որոնք մնում էին ստվերում այն պարզ պատճառով, որ ժողովուրդը դրանց մասին ոչինչ չէր իմանում: Ժողովրդի քանի՞ տոկոսն էր տեղյակ, թե վերջին ընտրություններից հետո՝ այդ հինգ տարիների ընթացքում, ինչ վարկեր էր վերցրել մեր կառավարությունը: Եվ ո՞վ էր մարելու այդ վարկերը: Ժողովրդի քանի՞ տոկոսն էր տեղյակ, թե

վերջին ընտրություններից հետո՝ այդ հինգ տարիների ընթացքում, ում կողմից և ինչպես էին սեփականաշնորհվել մեր հողի վրա և հողի տակ գտնվող հարստությունները: Եվ ինչ էր լինելու դրանց ճակատագիրը:

Այս ամենը նախաձեռնել էին մեր իշխանությունները: Եվ ինչո՞ւ պիտի չնախաձեռնեին: Չէ՞ որ ընտրողի կողմից նրանք ստացել էին այդ իրավունքը:

Չորս տարի և վեց ամիսն այն ժամանակահատվածն էր, երբ ժողովուրդը պետք է աչալուրջ լիներ և մտածեր, թե ինչպես վարվել այն երեք ամիսներին, երբ իշխանությունները սառեցնում էին իրենց նախաձեռնությունները և զբաղվում ասֆալտ անելով, ալյուր և հինգհազարական դրամ բաժանելով, ընտրություններ կեղծելով: Չորս տարի և վեց ամիսն ու ընտրություններին նախորդող երեք ամիսները հավասարաչափ կարևոր էին: Երկու ժամանակահատվածում էլ ժողովուրդը պետք է հավասարապես աչալուրջ լիներ և խոհեմ: Եվ եթե ժողովուրդը իսկապես աչալուրջ լիներ և խոհեմ, ընտրություններից հետո իշխանությունները կարող էին հանգստանալ՝ որքան սրտներն ուզեր: Բայց արդեն՝ նախկինի կարգավիճակով:

Իշխանությունը, ինչ խոսք, քաղցր բան է: Ուրեմն ի՞նչ էր ստացվում, պետք էր կառչած մնալ դրանից այնքան, մինչև այլևս հնարավոր չլինե՞ր կառչել: Իսկ գուցե կառչել հնարավոր լիներ և՞ս յոթ տարի: Կարևոր չէ՞ր, թե ինչ կլիներ այդ ընթացքում ժողովրդի հետ: Ժողովրդի վիճակը վատ էր և գնալով ավելի էր վատանում: Եվ իշխանությունը ոչ մի կերպ չեր կարողանում փոխել այս իրավիճակը:

Մի նոր շնչառություն էր առել արտագաղթը: Տասը մարդուց վստահաբար յոթը, եթե հնարավորություն ունենար, պատրաստ էր հեռանալ երկրից, և շատերը գտնում էին այդ հնարավորությունը: Եվ իշխանությունն անկարող էր փոխել դեպքերի ընթացքը:

Հիվանդի վիճակն այլևս կայուն ծանր չէր: Եթե այդպես լիներ, իշխանությունը գոնե իրավունք կունենար ասելու, որ չի կարող

թողնել հիվանդին, կարող էր արդարանալ, որ եթե իր փոխարեն ուրիշը գա, կարող է ավելի վատ լինել:

Ես ամեն օր շփվում էի հասարակ քաղաքացիների հետ: Ես լինում էի գյուղերում ու տեսնում գյուղացու կյանքը: Ժողովուրդն այլևս անկարող էր ծայրը ծայրին հասցնել, ես դա տեսնում էի իմ աչքերով, և ոչ ոք չէր կարող ինձ այլ բան ապացուցել:

Մինչդեռ նման պայմաններում իշխանությունը պատրաստվում էր պահել իր իշխանությունը ևս հինգ տարի:

Ահա այս ամենի մասին էի ես մտածում, երբ խմբագրությունում նստած՝ սպասում էի Վաղինակից լուրերի: Նա զանգահարեց մեր բաժանվելուց ուղիղ մեկ ժամ անց:

– Ես տանն եմ,– ասաց,– կարող ես գալ, տանել մեքենան:

– Բայց…,– ես չհասցրեցի տալ հարցս, որովհետև նա անջատեց հեռախոսը:

Շտապեցի Աղայան փողոց: Վաղինակի շենքի մոտ հասնելով՝ առաջին հերթին փնտրեցի մեքենան: Այն իհարկե գտա, բայց ինչ վիճակում: Ետևի ձախ լուսարձակը ջարդված էր, շիթը՝ կախված և թևը՝ ճզմված: Թանկարժեք «Մերսեդեսը» կանգնած էր խեղճացած և կարծես ասում էր՝ այդ ո՞ւմ էիր վստահել ինձ: Դե ինչ, սա կարելի էր կանխատեսել: Ես ինքս ինձ խոստացա, որ չեմ կշտամբի Վաղինակին, եթե նա գործը հաջողած լինի:

Իսկ գործը Վաղինակը հաջողել էր նաև այս անգամ: Նա կարճ կապեց պատմությունը. միայն ասաց, որ իրեն խոստացված է անցողիկ տեղ «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցության համամասնական ցուցակում: Հետո հավելեց արդեն սովորական դարձած իր արտահայտությունը՝ հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ:

Ես փորձեցի մանրամասներ կորզել, բայց նա ցույց տվեց օղու շիշը և ասաց.

– Ավելի լավ է արի՛ խմենք:

– Գոնե ասա, թե ինչպես ես հաջողացրել խփել «Մերսեդեսը»:

– Շան որդին անհաջող էր կանգնեցրել իր մեքենան,– ասաց նա:

– Ո՞վ,– չհասկացա ես:

– Դե այդ մարդը,– ծոր տվեց նա,– ի՞նչ էր անունը… Պողոսը:

– Դու խփել ես Պողոսի մեքենայի՞ն:

– Բա էլ ո՞ւմ:

Ինձ ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան ծիծաղել:

Մենք մի կուշտ ծիծաղեցինք, մի կուշտ խմեցինք, հետո ես վերցրի «Մերսեդեսը» և հեռացա:


17 марта
27 марта
1000 5

Կատյան և ծնունդը

Այդ օրը հայտարարել էի հանգիստ: Ամեն տարի ցանկացած մարդ իր ծննդյան օրից առաջ պետք է «time out» վերցնի: Այդ ժամանակավոր դադարը պարզապես անհրաժեշտ է՝ մեկ տարի ձգվող մրցավազքից թեկուզ շունչ քաշելու, 360 օրից հատիկ-հատիկ օգտակար ու անիմաստ անցկացրածդ օրերը օրացույցում կարմիր ու սև շրջանակներով նշելու համար:

Նստած մտորում էի կյանքի, մահվան, սիրո մասին, երբ խմբագրություն ներս մտավ մի տղա:

– Ինձ խնդրել են սա ձեզ փոխանցել,– արագ-արագ ասաց նա ու ինձ մեկնեց գեղեցիկ փաթեթավորված մի տուփ:

– Ո՞վ է խնդրել,– հարցրի ես:

– Չգիտեմ,– աչքերը թաքցնելով՝ հապճեպ ստեց տղան ու նույնքան հապճեպ ծլկեց:

– Չբացե՛ս, «ժուչոկ» է կամ ռումբ,– նվերը երկար հոտոտելուց հետո հեղինակավոր ձայնով հայտարարեց Պանդան:

Նրա դեմքին ակնհայտ պայքար էր երևում: Պանդաներն ամենահետաքրքրասեր արարածներն են, բայց միևնույն ժամանակ սարսափելի զգուշավոր են: Մեր հայկական Պանդան բացառություն չէր. նա մեռնում էր տուփի պարունակությունը տեսնելու ցանկությունից և միևնույն ժամանակ վախենում էր մորթին խանձելուց: Ես արագ վերջ դրի նրա տանջանքներին: Վերցրի տուփն ու առանձնացա իմ սենյակում: Պանդան այնպիսի դեմքով նայեց վրաս, կարծես հենց նոր իր քթի տակից տարա թարմ, կանաչ, հյութեղ եղեգնի մի ճյուղ:

Նվերն այնքան գեղեցիկ էր փաթեթավորած, որ ձեռքս չէր գնում՝ քանդել այն: Երբ բացեցի տուփը, անմիջապես հասկացա, թե ով է նվերի հեղինակը. յունգայի նկարով սուրճի բաժակ էր:

Կատյան էր… Նա պաշտում էր ջուրը: H^2O-ն նրա համար ընդունելի էր ցանկացած տարբերակով. լիներ լիճ, գետ, ծով, թե սովորական ջրափոս՝ Կատյան անհաղթահարելի ցանկություն էր ունենում ջրի մեջ նետվելու, լողալու կամ գոնե ծայրահեղ դեպքում բոբիկ ոտքերով չմփչմփացնելու: Ուր էլ որ գնում էր, հետը միշտ լողազգեստ էր վերցնում՝ շատ լուրջ հայտարարելով, որ անգամ Սահարա անապատում կարելի է հանդիպել օազիսի: Նման երկաթյա տրամաբանության հետ ես չէի վիճում: Մի անգամ, երբ հերթական անգամ տեսավ ինձ չսափրված, ձեռքով շփեց արծաթափայլ այտս ու ասաց.

– Գիտե՞ս, դու ծեր նավապետի ես նման: Նավապետի, որին քրքրել են կյանքի օվկիանոսը, տաք ու սառը քամիներն ու ծովի աղը: Նավապետի, որն ամեն նավահանգստում մի կին ունի, անթիվ անհամար երեխաներ, որոնց անունները հաճախ շփոթում է: Նավապետի, որին ոչինչ այլևս չի զարմացնում: Ոչինչ, ոչինչ… Այն աստիճան, որ եթե անգամ Լոխ-Նեսի հրեշը սողալով դուրս գա ու փռվի նրա նավի տախտակամածին՝ նա անվրդով բերանից կհանի ծխամորճը և կգոռա յունգայի վրա՝ «Տղա, տախտակամածը լավ չես մաքրել»: Իզուր ես դարձել նավապետ: Ես սիրում եմ յունգաներին՝ ջահել, խենթ, ռոմանտիկ, որոնք գիշերները նստում են նավի քթամասում, նայում լուսնով ողողված ծովին ու թաքուն երազում ջրահարսի մասին: Յունգան դեռ չի կորցրել սիրելու ու երազելու իր կարողությունները:

– Ես կորցրե՞լ եմ:

– Դա նավապետ լինելու գինն է: Բայց ես քեզ կսովորեցնեմ նորից սիրել: Ես քեզ նորից յունգա կդարձնեմ, խոստանում եմ: Այ, կտեսնես: Իսկակա՛ն յունգա:

– Իսկ ես ինչպե՞ս կիմանամ այդ մասին:

– Կիմանաս: Երբ կդառնաս, կիմանաս:

Հիմա նայելով զոլավոր շապիկով, միամիտ աչքերով փոքրիկ նավաստու նկարին՝ հասկացա, որ սա Կատյայի լավագույն նվերն էր ինձ:

Իսկապես, Կատյայի հետ ես երիտասարդանում էի. նրա խենթությունը, կենսունակությունը, կյանքի հանդեպ մեծ սերը վարակիչ էին: Նա նման էր փոքրիկ ատոմակայանի, որն իր ողջ էներգիան օգտագործում էր ցանկացած գնով երջանիկ լինելու համար:

Արագ զանգեցի Կատյային:

– Եթե ես յունգա եմ, այդ դեպքում դո՞ւ ով ես՝ քրմուհի՞, թե՞ ջրահարս:

– Շնորհավորում եմ պաշտոնիդ ցածրացման կապակցությամբ, նախկի՛ն նավապետ: Ծնունդդ շնորհավո՛ր: Քեզ դուր եկա՞վ նվերս:

– Այն կիսատ է:

– Ի՞նչ առումով:

– Ես ուզում եմ, որ այսօր ողջ օրդ ինձ նվիրես, մինչև ուշ գիշեր: Ուզում եմ գիշերվա ժամը 12-ը միասին դիմավորենք, և իմ ծննդյան օրն առաջինը քեզ տեսնեմ:

Լռություն տիրեց, ինձ թվում էր, թե հիմա կհրաժարվի, սակայն նա խոր շունչ քաշեց ու ասաց.

– Լավ, մեկ ժամից քեզ մոտ կլինեմ:

Արդեն մեքենայի մեջ Կատյան, կատվի նման կծկվելով նստատեղին, հարցրեց.

– Ու՞ր ենք գնում:

– Քաղաքից դուրս: Ընկերս որսորդական մի տնակ ունի անտառում:

– Ես անտառ չեմ սիրում, տանել չեմ կարողանում: Այն խոնավ է, մութ ու թաց: Ու ինձ անընդհատ թվում է, թե Հենզելի ու Գրետելի նման կկորցնեմ ետ գալու ճանապարհը:

– Ինչո՞ւ ես դու միշտ հեքիաթներով խոսում:

– Դու մի՛ խաբվիր իմ երրորդ համարի կրծքերին ու շքեղ հետույքին: Իրականում ես դեռ չեմ մեծացել, ես մնացել եմ հեքիաթում: Եթե դա քեզ դուր չի գալիս, կանգնեցրու՛ մեքենան, ես կգնամ տուն,– նեղացած տոնով թեթևակի ճանկռեց ինձ Կատյան:

– Ոտքո՞վ:

– Ոնց էլ չլինի, ճանապարհին մի բարի մարդ ինձ տեր կկանգնի:

– Դու ինձ դուր ես գալիս, այնպիսին, ինչպիսին կաս՝ աշխարհի հեքիաթների ծաղկաքաղում:

– Դու դեմ չես լինի՞, եթե տեղափոխվեմ ետևի նստատեղ ու մի քիչ պառկեմ: Սարսափելի հոգնած եմ:

Ես դեմ չէի: Մինչ մտածում էի արգելակել, Կատյան հենց ընթացքում արագ անցավ մեքենայի ետնամաս ու կուչ եկավ:

– Կարող ես ընթացքում օրորոցային երգել,– գոհունակ մռլտաց նա ու կարծես քնեց:

Երբ հասանք որսորդական տնակի մոտ, ես կամաց բացեցի մեքենայի դուռը, զգուշորեն ձեռքերի վրա վերցրի Կատյային ու ներս մտա: Նա արթնացավ, ուշադիր զննեց շուրջն ու ասաց.

– Մրսում եմ ու սոված եմ: Այս ի՞նչ քարանձավ ես ինձ բերել, հի՛ն մարդ:

– Իբրև տղամարդ՝ ես կլուծեմ տաքանալու խնդիրը: Հիմա կվառեմ բուխարին: Սակայն քարանձավների չգրված օրենքների համաձայն՝ կերակրելն արդեն քո պարտականությունն է:

– Պաշտում եմ, երբ դու լկտիաբար ինձ շահագործում ես:

Կատյան սենդվիչներ պատրաստեց, հենց կրակի մոտ փռեց ընկերոջս հին քնապարկն, ու մենք հարմարավետ տեղավորվեցինք վրան:

– Ի՞նչ ենք խմելու:

– Գինի: Այսօր գինու տրամադրություն ունեմ: Ընդ որում՝ կարմիր,– ասացի ես՝ նրան մեկնելով բաժակը:

– Երանի այսօր ձյուն գա,– անսպասելի ասաց Կատյան:

– Դու ձյուն չես սիրում,– զարմացա ես:

– Այսօր ձյան տրամադրություն ունեմ, ինչպես դու՝ կարմիր գինու: Մտքումս դրել եմ, եթե ձյուն գա, ուրեմն ամեն ինչ լավ կլինի:

– Ի՞նչ ամեն ինչ:

– Ամեն-ամեն ինչ:

Կատյան ուշադիր նայում էր կրակին ու լռում:

– Ինչի՞ մասին ես մտածում,– լռությունը խախտեցի ես:

– Ինչո՞ւ են մարդիկ ծերանում: Ինչո՞ւ: Չէ, ես համաձայն եմ մի գեղեցիկ, անձրևոտ օր մեռնել, բայց չեմ ուզում ծերանալ: Չեմ ուզում ամեն օր տեսնել, թե ինչպես է իմ մարմինն ինձ դավաճանում: Թող էլի մեռնեմ, բայց մեռնեմ երիտասարդ ու գեղեցիկ: Ինչի՞ հնարավոր չէ:

– Դու ուզում ես խախտել բնության օրենքները: Այդպես չի լինում, երիտասարդ ու գեղեցիկ մարդիկ հեշտությամբ կյանքից չեն հեռանա, անպայման կփորձեն պայքարել, ու քաոս կսկսվի:

– Իսկ ինչո՞ւ քո այդ բնության օրենքների համաձայն՝ կանայք ավելի շուտ են ծերանում, քան տղամարդիկ: Ես չեմ ուզում ծերանալ: Սարսափում եմ ծերությունից:

– Կանայք ավելի խոցելի են, ավելի զգացմունքային, ավելի խորը:

– Դու ճիշտ ես: Եթե ես լինեի պատգամավոր, օրինագիծ կառաջարկեի, որով կարգելվեր քառասունն անց տղամարդկանց բաժանվել իրենց կանանցից: Վաղինակիդ ասա, երբ դառնա պատգամավոր, այդ հարցը բարձրացնի:

– Ինչո՞ւ,– զարմացա ես:

– Որովհետև կանայք իրենց ողջ կյանքը, երիտասարդությունը, գեղեցկությունը նվիրում են մի տղամարդու, իսկ քառասունից հետո այդ տղամարդու մոտ, ասացեք խնդրեմ, միջին տարիքի ճգնաժամ է սկսվում: Ինքնահաստատվելու համար նա թողնում է իր հավատարիմ կնոջը, երեխաներին ու գնում երիտասարդ մի դեղնակտուցիկի մոտ: Իսկ հոգնած, հիասթափված ու դժբախտ կինը մնում է միայնակ՝ կոտրած տաշտակի առջև: Որովհետև քառասունում տղամարդ առհասարակ, իսկ երիտասարդ տղամարդ մասնավորապես գտնելը հեշտ չէ, եթե դու Ալլա Բորիսովնայի կամ Լիզ Թեյլորի փողերը չունես:

– Ինչո՞ւ ես կարծում, որ քառասունից հետո կինը շանս չունի, ինչո՞ւ անպայման դեղնակտուցիկները պետք է գան ու տանեն

նրա տղամարդուն: Ինչո՞ւ հենց դեղնակտուցիկները, կարող է հասուն տարիքի մեկ այլ կին լինել:

– Հասկանում ես, եթե տղամարդու համար մենամարտի են բռնվել երկու կին, տղամարդը ֆիզիկապես չի կարող կիսվել: Հոգեպես հանգիստ կարող է: Բայց եթե գործը հասել է պատերազմին, ապա նրանցից միայն մեկն է ավարը տուն տանելու: Եթե հակառակորդը երիտասարդ է ընդամենը, ասենք, ութ տարով, ապա կինը շանս ունի պայքարելու: Այստեղ արդեն կռվի մեջ են մտնում մոտավորապես նույն ինտելեկտի ու գրեթե մարմնի նույն «ամորտիզացիայի» տեր կանայք և կիաղթի նա, ով ավելի փորձառու է: Իսկ տասնութ տարեկան երիտասարդ աղջկա դեմ խաղ չկա: Ո՛չ, չի կարող պայքարել: Չի կարող պայքարել նրա մարմնից եկող կաթնաբույր հոտի, նրա ճերմակատամ զրնգուն ծիծաղի ու լայն բացված, միամիտ աչքերի դեմ: Այդ տարիքի աղջկանից տղամարդը բոլորովին այլ բան է ուզում, այլ մտածելակերպ, այլ վարքագիծ: Ուզում է նրա հետ երիտասարդանալ, հպվել նրան ու հետը տանել կաթնաբույրը: Շանս չունի, չէ՞:

– Ինչո՞ւ ես տխուր բաներից խոսում:

– Որովհետև տանել չեմ կարողանում ծնունդներն ու վախենում եմ ծերությունից: Վայ, արդեն ժամը 12-ից 10 է պակաս: Երազա՛նք պահիր: Բայց հանկարծ ինձ չասես, եթե ասես՝ չի կատարվի:

– Հակառակը, եթե չասեմ, չի կատարվի: Համբուրի՛ր ինձ:

– Դա՞ է քո երազանքը:

– Այս պահին՝ այո՛:

Տնակի հին պատի ժամացույցը 12 անգամ խփեց, բայց ես չէի լսում, որովհետև լսում էի միայն Կատյայի սրտի թակոցը՝ ափիս տակ: Ու նրա կաթնաբույրը, որը հետո դեռ երկար ժամանակ հետապնդում էր ինձ... Իսկ գիշերը ձյուն եկավ, այդ տարվա առաջին ձյունը...

„Ջապոյի„ երկրորդ շրջանը կամ ավելորդ կոպեկը գրպանը չի ծակի

Երբ վերադարձրի ավտովարձույթից վերցրած «Մերսեդեսը», ինձանից բավական մեծ գումար պահանջեցին ջարդված լուսարձակի և վնասված թափքի համար: Բացատրեցին՝ քանի որ վթարի ժամանակ չէի դիմել ապահովագրական ընկերությանը, պետք է ինքս փոխհատուցեի վնասը: Սուսուփուս վճարեցի: Հո չէ՞ի պատմելու նրանց, թե ինչ պայմաններում է եղել վթարը: Բայց «Մերսեդեսի» հերն էլ անիծած: Գլխավորը, որ այն օգտակար էր եղել մեզ մեր գործում: Վաղինակը, փաստորեն, հաջողությամբ էր ավարտել բանակցություններն իշխանական կուսակցության ներկայացուցչի հետ, իսկ դա նշանակում էր, որ սա արդեն երրորդ քաղաքական ուժն էր, որի հետ մենք ունեինք նախնական պայմանավորվածություն: Հիշեցնեմ, որ նման պայմանավորվածություններ մենք արդեն ունեինք նաև «Appendix vermiformis» կուսակցության և «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի հետ: Առաջինն առաջնորդի մակարդակով էր: Այստեղ, ինչպես հիշում եք, մենք խոստացել էինք երկու հարյուր հիսուն հազար դոլար և քսանհինգ տոկոս մի «մեդիա հոլդինգում», որը չկար ու երբեք չէր լինելու: Երկրորդ դեպքում մենք գործ էինք բռնել «գորշ կարդինալի» հետ, ով առաջնորդից հետո երկրորդն էր քաղաքական այս կառույցում: Այստեղ արդեն Վաղինակի անունն էին տվել և նրան երաշխավորել էին դաշինքում ընդգրկված չորս մանր կուսակցությունների ղեկավարներ, որոնց հանդիպել և հմտորեն համոզել էր մեր հերոսը՝ նրանցից յուրաքանչյուրին խոստանալով հիսուն հազարական դոլար:

Դե ինչ, ժամանակն էր առաջ անցնել: Հերթի մեջ էին ևս երեք՝ «Ինքնըստինքյան», «Ամերիկյան ժառանգություն» և «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունները:

Դրանցից առաջինը մեր իրականության ամենապատկերավոր դրսևորումն էր: Լինելով հանրապետության երկրորդ նախագահի նախագիծը՝ այն չէր կարող հաջողության չհասնել քաղաքական ասպարեզում: Երկրորդ նախագահը կարողացել էր իր պաշտոնավարման տասը տարիների ընթացքում հասունանալ իբրև քաղաքական գործիչ այնքան, որ գիտակցեր, որ նախագահական լիազորությունները դադարեցնելուց հետո, եթե ուզում է ժամանակի ընթացքում չզրկվել իր ազդեցությունից, լծակներից և կուտակած հարստությունից, ապա պետք է ունենա քաղաքական հենարան (ի դեպ, մինչ այդ նա պնդում էր, որ իր կուսակցությունն իր ժողովուրդն է): Եվ ահա նա ստեղծել էր «Ինքնըստինքյան» կուսակցությունը: Երկրորդ նախագահը հասցրել էր գիտակցել որոշ այլ կարևոր բաներ ևս: Մասնավորապես, որ իր իշխանության շրջանը երկրում ստեղծել էր մի վիճակ, երբ բոլոր հարցերը՝ ամենափոքրից մինչև ամենամեծը, լուծում էր փողը: Եվ ահա նա իր ստեղծած կուսակցության առաջնորդ էր կարգել Հայաստանի ամենահարուստ մարդուն:

Եվ սկսվել էր մեծ առևտուրը... Մարդկանց առևտուրը:

Ես չեմ ուզում վիրավորել որևէ մեկին, այդ իսկ պատճառով ասեմ, որ չեմ կարծում թե մարդիկ՝ բանվորներ, գյուղացիներ, գործարարներ, բժիշկներ, լրագրողներ, արվեստագետներ, դիվանագետներ, պաշտոնյաներ, անդամակցելով «Ինքնըստինքյան» կուսակցությանը, վաճառվել էին: Բոլորովին, գուցե այդ մարդիկ իսկապես ուզեցել էին օգտակար լինել հասարակությանը և երկրին: Ուրեմն ես չեմ ասում, որ նրանք վաճառվել էին, այլ ասում եմ, որ նրանց գնել էին:

Ես չեմ ուզում վիրավորել նաև կուսակցության առաջնորդին և ասել, որ նա, մարդկանց՝ հասարակ գյուղացուց մինչև ճանաչված մտավորական, տարբեր չափի գումարներ կամ նյութական բարիքներ առաջարկելով, գիտակցել էր, որ գնում է նրանց: Բոլորովին, գուցե նա մտածել էր, որ պարզապես լավություն է անում: Առևտուրը՝ գնելը և վաճառվելը, եղել էր ինքնըստինքյան:



Հոկտեմբեր ֆուտբոլասերների յուրաքանչյուր կիրակի է։

մարտ մայիս

5 | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31

խոնարհ տրամ օրեր։

Ես չեմ ուզում վիրավորել նաև երկրորդ նախագահին՝ նկատի ունենալով նրա ծառայությունները: Անարդար կլինի չարձանագրելը, որ հենց նա էր խփել քաղաքակիրթ և ամուր պետության անդրանիկ մեխը: Բայց և ձախողել էր հետագա կառուցումը՝ տուրք տալով իր և իր շրջապատի՝ պետության և ժողովրդի հաշվին անվերջ հարստանալու անհագուրդ մոլուցքին: Հենց նա էր երրորդ նախագահին ժառանգություն թողել մի հասարակություն, որը գերի էր փողին և իշխանությանը: Եվ հենց նրա ժառանգությունն էր «Ինքնըստինքյան» կուսակցությունը, որը շարունակում էր մարդկանց դարձնել ողորմության սպասող և ողորմությունից կառչած «մանկուրտներ»: Այո՛, հենց «մանկուրտներ»:

Անկախության ողջ շրջանում մեր բոլոր իշխանություններն առաջնորդվել են այն սկզբունքով, որ եթե ուզում ես ունենալ իշխանություն, ապա պետք է ոչ թե մարդկանց համար պայմաններ ստեղծես, որ նրանք ինքնուրույն վաստակեն, այլ պետք է նրանց դարձնես «մանկուրտներ»:

Ահա այսպիսի տխուր բաներ: Բայց ինչ արած, այսպիսին էր մեր իրականությունը 2011-ին և հավանաբար այդպիսին էր մնալու դեռ երկար:

Դե իսկ «Ինքնըստինքյան» կուսակցությունը շարունակում էր ինքնըստինքյան բարգավաճել և ինքնըստինքյան պատրաստվել հաջորդ խորհրդարանական ընտրություններին (ներկա խորհրդարանում այն ուներ բավական պատկառելի ներկայություն): Իսկ կուսակցության առաջնորդը շարունակում էր հարստանալ, և ժողովուրդը շարունակում էր նրանից ողորմության սպասել:

Ես միշտ զարմացել եմ, թե ինչ խղճով է հայաստանցի մարդը «Ռոլս Ռոյս» վարում, եթե անգամ խիղճ չունի, և եթե անգամ ինքը չի վարում, այլ՝ վարորդը:

Ընդունենք, որ մարդն, իր ընդունակություններն օգտագործելով, առանց խաբեության ու կեղծիքի, առանց ուրիշներին «գցելու» ու օրենք խախտելու՝ ժամանակի ընթացքում վաստակել է միլիոններ

ու շարունակում է վաստակել: Եվ ուրեմն կարող է իրեն թույլ տալ մի քանի հարյուր հազար դոլար վճարել և գնել «Ռոլս Ռոյս», կամ «Մայբախ», կամ «Բենթլի»: Եվ իհարկե, իրավունք ունի. ինքը, իր փողերը, իր քմահաճույքները: Ո՞վ կարող է մեղադրել մարդուն այն բանի համար, որ նա սիրում է շքեղություն ու հարմարավետություն:

Բայց նայենք հարցին հակառակ կողմից: Եթե անգամ իսկապես այդ մարդը հարստացել է ազնվորեն, այնուամենայնիվ, որտե՞ղ է նա ապրում, ովքե՞ր են նրա շուրջը:

Ասել, որ մեր երկրում համատարած թշվառություն էր, իհարկե, արդարացի չէ: Հարյուր մարդուց տասը հրաշալի ապրում էին, տասը ապրում էին նորմալ, ևս երեսունը գուցե կարողանում էին ծայրը ծայրին հասցնել: Բայց չէ՞ որ մնում էր դեռ հիսուն տոկոսը, որը պարզապես քարշ էր տալիս իր գոյությունը: Եվ ի՞նչ էր զգում այդ հիսուն տոկոսը, երբ տեսնում էր, թե ինչպես է մի քանի հարյուր հազար դոլար արժողությամբ «Ռոլս Ռոյս»-ը տրորում իր պատռված կոշիկի թողած ոտնահետքերը:

Սա հենց այնպես: Վերադառնանք «Ինքնըստինքյան» կուսակցությանը, որի համամասնական ցուցակ տանող ճանապարհները պետք էր դեռ գտնել:

Ամենամեծ խնդիրն այն էր, որ փողն այստեղ դերակատարություն ունենալ պարզապես չէր կարող: Դրանից կուսակցության առաջնորդն այնքան ուներ, որ հավանաբար ինքն էլ էր կորցրել հաշիվը: Պետք էր մտածել ուրիշ բան, միայն թե ես չգիտեի՝ ինչ: Ասել նրանց, որ կարող ենք ապահովել այսինչ քանակությամբ քվեներ… բայց չէ՞ որ հարկ կլիներ հիմնավորել, թե որտեղից մեզ այդ քվեները: Խոստանալ Միացյալ Նահանգների աջակցությո՞ւնը… սա ևս անիմաստ էր, որովհետև քաղաքական այս ուժը բացառապես այլ կողմնորոշում ու թիկունք ուներ:

Կար միայն մեկ բան, որ կարող էր օգնել: Նախորդ խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Ինքնըստինքյանի» առաջնորդն ամեն ինչ անում էր, որ կուսակցության համամասնական

ցուցակում տեղ գտնեն տարբեր ոլորտներում հեղինակություն վայելող մարդիկ՝ բժիշկներ, արվեստագետներ, մարզիկներ, գիտնականներ: Հենց վերջինի վրա էլ կարելի էր կանգ առնել: Ի՞նչ վատ գիտնական էր Վաղինակը: Հենց միայն այն, որ նա աշխատել էր Մոնթգոմերիի հեղինակավոր համալսարանում և գյուտի հեղինակ էր, լրիվ բավարար էր: Մի խոսքով, կարելի էր փորձել:

Պետք էր տեսնել, թե ինչ կարծիք ուներ այս մասին ինքը՝ մեր հերոսը:

Շտապեցի Աղայան փողոց և մտնելով Վաղինակի բնակարան (նա երբեք չէր փակում դուռը)՝ ականատես եղա հերթական տարօրինակ տեսարանին: Պատգամավորության եռակի թեկնածուն կանգնած էր հյուրասենյակի կենտրոնում՝ մի ձեռքին մուրճ, մի ձեռքին դուր և ուսումնասիրում էր գետնին դրված հսկա կոկոսը:

– Ի՞նչ գործի ես,– հարցրի ես:

– Բացում եմ «զապոյի» երրորդ շրջանը,– պատասխանեց նա՝ հայացքը կոկոսից չհեռացնելով:

– Այսի՞նքն:

Վաղինակը չպատասխանեց. կռացավ, դուրը դրեց կոկոսի վրա և սկսեց մուրճով խփել:

– Ի՞նչ է նշանակում «զապոյի» երրորդ շրջան,– պնդեցի ես:

Նա դադարեցրեց հարվածները և շրջվեց իմ կողմը:

– Կասեմ: Բայց նախ օգնի՛ր ինձ կոտրել այս կոկոսը, որովհետև ինձ մոտ դա փաստորեն չի ստացվում:

– Որովհետև դու դրել ես այն փայտե մանրահատակին: Փորձի՛ր նույնն անել պատշգամբում:

– Ի՛նքդ փորձիր:

Ես վերցրի կոկոսը և դուրս եկա պատշգամբ: Բավական չարչարվեցի, բայց ոչինչ չստացվեց: Ստիպված էի վերցնել կացինը: Կոկոսը ջարդուխուրդ եղավ, և միջի կաթը թափվեց գետնին:

– Այդպես ես էլ կարող էի,– փնթփնթաց Վաղինակը,– տուր այստեղ:

Մենք վերադարձանք հյուրասենյակ, և նա սկսեց դանակով առանձնացնել կոկոսի փափուկ հատվածը:

– Դու այդպես էլ չպատասխանեցիր իմ հարցին,– ասացի նրան:

– Դե ինչ, քեզ՝ իբրև իմ «իմպրեսարիոյի», կբացատրեմ: «Զապոյի» երրորդ շրջանն ունի մի առանձնահատկություն, որը ես եմ բացահայտել:

– Եվ ո՞րն է այդ առանձնահատկությունը:

– Խմիչքի հետ պետք է օգտագործել կոկոս,– բացատրեց նա, և սեղանի վրայից վերցնելով օղու շիշը՝ լցրեց բաժակները:

– Սպասի՛ր, խոսելու բան կա,– ասացի:

– Չեմ կարող,– նետեց նա ու մի շնչով դատարկեց բաժակը:

Ստիպված ես էլ խմեցի ու նոր միայն պատմեցի նրան իմ մտահաղացման մասին:

– Հիմարությու՛ն է,– ասաց Վաղինակը,– կատարյալ հիմարություն:

Ես զարմացած նայեցի նրան:

– Այն, որ մարդը հարուստ է, դեռ չի նշանակում, որ նա կհրաժարվի փողից: Հակառակը, որքան հարուստ՝ այնքան ագահ: Ինչպես ասում են՝ ավելորդ կոպեկը գրպանը չի ծակի: Բացի այդ, կա մի հանգամանք ևս: Ես այդ մարդուն ճանաչում եմ: Նրա հետ առնչվել եմ իննսունականներին, երբ մի անգամ փորձեցի այստեղ բիզնեսով զբաղվել: Համոզված եմ, որ նա ինձ կհիշի և համոզված եմ, որ փողից չի հրաժարվի: Այս անգամ ամեն ինչ թող ինձ վրա:

– Եվ որքա՞ն ես պատրաստվում առաջարկել նրան:

Վաղինակը չպատասխանեց և նորից լցրեց բաժակները:

Տարիներն անցնում են, ես մնում եմ նույնը

Ահա և ավարտվում էր 2011-ը: Թերևս, կարելի էր մի հայացք նետել անցնող տարվան: Ես չգիտեմ, թե ինչպիսին էր այն Երկիր մոլորակի ու մարդկանց համար: Ո՞վ իրավունք ունի խոսելու աշխարհի անունից: Երբ մի տեղ փոթորիկ է, ջրհեղեղ կամ երկրաշարժ, մի՞թե ցավը բոլորինն է: Կամ երբ չկա այդ ամենը, Երկիր մոլորակի բնակչությունը մի՞թե ինքը չի ստեղծում ուրիշ արհավիրքներ: Պատերազմ ու արյունահեղություն:

Ես չգիտեմ, թե ինչպիսին էր տարին իմ հայրենիքի ու իմ ժողովրդի համար: Նախագահն ու կաթողիկոսը անպայման կխոսեն այդ մասին իրենց ամանորյա ուղերձում:

Բայց ես կարող եմ ասել, թե ինչպիսին էր տարին ինձ համար: Դե իհարկե՝ կիսատ: Անգամ ավելին՝ ուրիշ կիսատ բաներին ավելացել էին նաև հարբած ու կիսատ սերը և հարբած ու կիսատ քաղաքականությունը: Որքա՞ն կարելի էր այդպես կիսատ ապրել:

Ամեն տարվա ավարտին ու Նոր տարվա նախաշեմին ես ինքս ինձ խոսք եմ տալիս, որ բավական է, ժամանակն է վերջ տալ այս կիսատությանը և մարդավարի ապրել: Չէ՞ որ դուստրերս արդեն մեծանում են, ու պետք է նրանց ապագայի մասին մտածել: Բայց տարիներն անցնում են իրար ետևից, ու ես մնում եմ նույնը:

Երբ փոքր էի, ծնողներս ինձ ասում էին՝ ուրիշները փող են կուտակում, որ իրենց երեխաները լավ ապրեն, մենք փորձում ենք քեզ գիտելիքներ տալ: Չգիտեմ՝ որքանով դա նրանց հաջողվեց, բայց մի բան ակնհայտ է. ես ինքս ո՛չ փող եմ կուտակում դուստրերիս համար, ո՛չ էլ մտածում եմ նրանց գիտելիք տալու ուղղությամբ: Ես անգամ նրանց դաստիարակությամբ չեմ զբաղվում: Հայրական իմ պարտականությունները նույնն են, ինչ սովորական վարորդի

պարտականությունները՝ ես նրանց տանում եմ դպրոց, երաժշտության կամ ասենք թենիսի ու այնտեղից՝ տուն:

Եվ միայն անընդհատ կրկնվող այս երթուղու ընթացքում եմ ժամանակ գտնում խոսելու նրանց հետ: Եվ ասում եմ նրանց իմ կարծիքով ամենակարևոր բաները. ասում եմ, որ բարի մարդը չի կարող ժլատ լինել, բայց բարի մարդը կարող է նաև խելացի լինել և չթողնել, որ իր շռայլությունը չարաշահեն: Բարի մարդը, որը խելացի չէ, կարող է վախկոտ լինել: Խելացի մարդը, որը բարի չէ, հիմնականում վախկոտ է: Բայց մարդը, որը և բարի է, և խելացի, չի կարող վախկոտ լինել: Մեկ կամ երկու, գուցե երեք անգամ վախը հաղթահարելու խնդիր կլինի, հետո արդեն պարզապես զգույշ եղեք, բայց ո՛չ երբեք վախկոտ: Ձեր շուրջը շատ մարդիկ կան, սովորականից շատ: Պատճառը գուցե ձեր անկեղծությունն է, ձեր անշահախնդրությունն ու առատաձեռնությունը, բայցևայնպես, բոլորը ձեր ընկերները չեն: Ոմանք պարզապես ծանոթներ են, ոմանց կարող եք համարել մտերիմներ, մի քանիսը խաղընկերներ են, կլինեն համախոհներ, շատերն օգտվում են ձեր շռայլությունից, մյուսները՝ քծնում, ուրիշները ծրագրեր են կապում ձեզ հետ, որովհետև դուք անպայմանորեն խելացի եք: Ձեր սիրտը մեծ է, և դուք բոլորին տեղավորում եք այնտեղ: Միայն թե իմացեք, որ մի օր ցավեցնելու են ձեր սիրտը ու հիմիկվանից փորձեք հոգ տանել, որ ցավն ուժեղ չլինի: Եթե մեկը ձեր կողքին է, ասենք՝ դպրոցում, բակում կամ թենիսի խմբակում, ու դուք պիտի ընկերություն չանեք հետը միայն նրա համար, որ նա ձեզանից պակաս խելացի է կամ ավելի քիչ գիտի աշխարհագրություն կամ խիստ անճաշակ է կամ անճոռնի ականջներ ունի կամ թենիս վատ է խաղում, ապա դա առնվազն անազնիվ է: Իհարկե, բարդ կամ անհնար է անխելքին խելացի դարձնել կամ փոխել մեկի ականջները, և գուցե հարկավոր էլ չէ այդպես վարվել, սակայն դա չի նշանակում, որ պետք չէ նրա հետ ընկերություն անել: Իսկ եթե հակառակն է, այսինքն՝ եթե ձեր կողքինը ձեզանից խելացի է կամ համակրելի, ապա թող

ինքը մտածի: Պետք չէ մեծամիտ լինել: Այլ հարց է, երբ ձեր կողքինը չար սիրտ ունի կամ անազնիվ է: Բայց ոչ թե այն առումով, որ նրանց հետ պետք չէ ընկերություն անել: Այլ այն առումով, որ նրանց կարելի է փոխել: Եվ պե՛տք է: Ու ամենակարևորը. շատ-շատերը մտածում են նախևառաջ իրենց մասին, հետո նոր՝ մյուսների. բայց ճիշտը հակառակն է. պետք է նախ մտածել մյուսների, այսինքն՝ բոլորի մասին, հետո միայն՝ ձեր:

Ահա այսպիսի բաներ եմ ասում դուստրերիս, ու հավանաբար դեռ այնքա՜ն բան է մնում ասելու:

Ու տարիներն անցնում են իրար ետևից, ու ես մնում եմ նույնը:

Եվ հիմա էլ, 2011-ի դեկտեմբերի 31-ին՝ Նոր տարուց մեկ ժամ պակաս, ես խմում եմ տարվա վերջին շիշը: Տանն եմ իհարկե, և գոնե սա կարելի էր որոշակիորեն արդարացում համարել:

„Դու ինձ սիրո՞ւմ ես„

2012-ի հունվարի մեկի երեկոն էր: Կյանքը շարունակվում էր, կյանքը մնացել էր նույնը:

Ինչպես և ենթադրում եք, ես գինովցած էի: Չէ՛, ստում եմ, արիստոկրատ «գինովցած» բառը չի կարող ճիշտ պատկերացում տալ իմ վիճակի մասին, այդ պատճառով օգտագործում եմ պլեբեյական «խմած» բառը: Այո, ես տեղը տեղին, կարգին խմած էի: Ու ամենակարևորն այն է, որ դեռ պլանավորում էի էլի խմել: Եվ դա որոշել էի անել Կատյայի հետ: Մնում էր միայն գտնել նրան և բերման ենթարկել՝ նկատի ունենալով այն, որ Կատյան տանել չէր կարողանում ամանորյա իրարանցումը: Ասում էր, որ Ամանորյա տոները, որպես կանոն, դիմավորում է անկողնում՝ համաշխարհային գրականության դասականներից մեկի հետ: Այո, մինչ բոլորը տարի էին ճանապարհում, դիմավորում, Կատյան անվրդով պառկած գիրք էր կարդում:

Աղոտ կասկածներ ունեի, որ անջատել է բոլոր հնարավոր հեռախոսները, սակայն որոշեցի բախտս փորձել: Իզուր, երբեք ոչինչ չեմ շահել. նա անհասանելի էր: Ես անգամ չհասցրի հուսահատվել, քանի որ գլխումս փայլուն միտք ծագեց: Ես կգնամ Կատյայի պատուհանների տակ և կկանչեմ նրան: Գնալով այդ գաղափարն ինձ ավելի էր դուր գալիս: Երբ հասա շենքի մոտ, նրա բնակարանի պատուհաններից թույլ լույս էր երևում: Ինչպես և ենթադրում էի, Կատյան լամպի լույսի տակ հերթական գիրքն էր «կուլ տալիս»:

– Կատյա՛,– բավականին բարձր կանչեցի ես:

Լույսն աղոտ թարթեց: Հստակ պատկերացրի, թե ինչպես է հիմա Կատյան ներքին պայքար մղում ինքն իր հետ. անջատել լույսը և ձևացնել, իբր տանը չէ՞, թե՞ պատասխանել:

– Կատյաաաա՛,– ավելի բարձր գոռացի ես՝ որպեսզի ազատեմ նրան ներքին պայքարից:

Ու նույն պահին էլ կատաղած զանգեց բջջայինս:

– Քեզ ինչ-որ մեկն ասե՞լ է, որ ես ուշագնաց եմ լինում, երբ երեկոյան ժամը 10-ին իմ պատուհանների տակ հարբած, տարիքով տղամարդիկ գոռգոռում են,– կատաղած հարցրեց Կատյան:

– Ինչի՞ց ենթադրեցիր, որ հարբած եմ,– անկեղծորեն զարմացա ես:

– Ի՞նչ ես ուզում,– կարճ կապեց նա:

– Քեզ տեսնել:

– Ես ուրիշ ծրագրեր ունեմ, և դու դրանցում բացակայում ես:

– Լավ, ուրեմն ես կմնամ այստեղ՝ պատուհաններիդ տակ: Կգոռամ, կերգեմ, հետո կցրտահարվեմ: Հետո քո բարեգութ ու բամբասկոտ հարևանուհիներից մեկն ինձ կխղճա, ներս կառնի ու կտաքացնի: Հետ ես կարտասվեմ ու կպատմեմ իմ դժբախտ սիրո մասին, որն այնքան դաժան է իմ հանդեպ, այսինքն՝ քո մասին: Հետո նա ինձ հետ միասին կարտասվի: Իսկ հետո դու կես տարով, չէ, մեկ տարով, կդառնաս սուրճ խմող հարևանուհիներիդ ամենասիրելի թեման «դժբախտ Աննայից» հետո: Կարճ ասած՝ խայտառակ կանեմ:

– Դու գիտե՞ս, որ շանտաժի համար հոդված է հասնում,– ֆշշացրեց Կատյան:

– Բնակարանիդ հարկը և համարը, այլապես «Լուսնակ գիշերը» գնաց…,– անդրդվելի տոնով հայտարարեցի ես:

– Չորրորդ հարկ, տասնութ բնակարան,– ասաց Կատյան այնպիսի տոնով, որ ես սկսեցի կասկածել՝ արժե՞ արդյոք բարձրանալ: Բայց այդքան բանից հետո հաստատ ետ չէի կարող կանգնել: Շանտաժիստները սովորաբար մինչև վերջ են գնում:

Վերելակ չկար: Բարձրացա աստիճաններով՝ փորձելով ուշադրություն չդարձնել սրտիս անկանոն աշխատանքին: Սարսափելի հուզված էի. վերջապես ես տեսնելու եմ Կատյայի «բունիկը»,

ինչպես ինքն էր սիրում ասել: Այսքան ժամանակ նա ինձ նման արտոնություն չէր տվել:

Կատյան սպասում էր ինձ բնակարանի մուտքի մոտ:

– Օoo, ինչպիսի անհամբերություն,– փորձեցի կատակել ես:

– Նե՛րս արի,– եղավ կարճ պատասխանը:

Մարդու մասին երբեք չես կարող ամբողջական պատկերացում կազմել, մինչև չտեսնես, թե որտեղ է նա ապրում, քնում, ճաշում, ինչ գրքերով ու նկարներով է շրջապատված: Չգիտես ինչու, ես վստահ էի, որ Կատյան հենց այսպիսի բնակարանում պետք է ապրեր: Այնպիսի տպավորություն ունեի, որ բազմիցս եղել եմ այդ-տեղ: Երկու սենյականոց փոքրիկ բնակարան էր՝ ծիրանագույն, նարնջագույն երանգներով: Ոչ մի ստանդարտ «եվրո» վերանոր-գում: «Բունիկն» ամբողջովին արևելյան տաք ոճով էր ձևավորած: Ամենուրեք գորգեր էին, կարպետներ, բարձեր, ծղոտից ու փայ-տից պատրաստված կահույք: Ու գրքեր, անթիվ անհամար գրքեր, որոնց ծանրության տակ կքվում էին եղեգնից պահարանները:

– Եթե Վաղինակի հետ ձեռնարկած գործը հանգեցնի նրան, որ ինձ սկսեն հետապնդել, կարո՞ղ եմ քաղաքական ապաստան խնդրել քո բնակարանում,– հարցրի:

– Եվ հավերժ մնալ աստե՞ղ:

– Դե ինչո՞ւ հավերժ: Սկզբի համար մի գիշեր, հետո արդեն կերևա: Ի դեպ, ինչո՞ւ ինձ խմելու բան չես առաջարկում:

– Խնդրեմ: Դու ունես ընտրության հնարավորություն: Մկնդե՞ղ, թե՞ ցիանիդ,– քաղաքավարի մատուցողուհու տոնով սիրալիր առա-ջարկեց Կատյան:

– Ես քեզ կարոտել էի, սարսափելի: Տեղս չէի գտնում: Վերջին անգամ անցյալ տարի էի տեսել: Եթե այսօր չտեսնեի, կսատկեի,– անկեղծորեն ասացի ես:

Կատյան ոչինչ չպատասխանեց, սակայն իմ անկեղծությունից նրա մեջ արթնացած ֆրաու ֆոն Համմեսմարկը՝ համակենտրոնաց-ման ճամբարի ֆաշիստ հսկիչը, հավանաբար նահանջեց:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

– Ամեն դեպքում, դա առիթ չի տալիս, որ գիշերով ներկայացում սարքես պատուհաններիս տակ,– արդեն ավելի հանգիստ տոնով ասաց նա,– տանը ես ոգելից խմիչք չեմ պահում, կարող եմ առաջարկել միայն թեյ կամ սուրճ:

– Ենթադրում էի: Մի՛ անհանգստացիր, ես իմ խմիչքն ինձ հետ բերել եմ,– Եվ ծոցագրպանիցս հանեցի կոնյակով տափաշիշը:

Կատյան գնաց խոհանոց՝ հավանաբար բաժակ բերելու: Այդ պահին խրոխտ քայլվածքով ճաշասենյակ մտավ ահռելի մի կատու: Կարծեմ բրիտանական ցեղատեսակի էր՝ մուգ մոխրագույն շքեղ մորթով և զմրուխտ աչքերով: Եկավ, կանգնեց առաջս, մի քիչ ճոճվեց իր ուժեղ թաթերի վրա ու սկսեց ուշադիր զննել ինձ: Որոշ գիտնականներ պնդում են, որ կատուները տելեպատիկ հատկություններ ունեն: Այդ պահին ես դրանում համոզվեցի, քանի որ ուղեղումս տելետայպի նման մի միտք տպվեց. «Դու նստել ես իմ բազկաթոռին: Երեք րոպե ժամանակ՝ այն ազատելու համար»:

Անկախ ինձանից վեր կացա ու տեղս զիջեցի տարօրինակ կատվին: Բրիտանացին անմիջապես ցատկեց բազկաթոռին, մռութը դրեց հաստ թաթերին և սկսեց նորից զննել ինձ: Ես ինձ զգում էի ինչպես 18 տարեկան մեկը, որ առաջին անգամ եկել է ընկերուհու խստաբարո հոր հետ ծանոթանալու:

«Եթե պահպանես համակեցության կանոնները, յոլա կգնանք»,– այնքան հստակ ասաց գորշ գազանը, որ մարմնովս դող անցավ: Ու քանի որ ինքս չունեմ տելեպատիկ հնարավորություններ, բարձրաձայն հարցրի.

– Եվ որո՞նք են այդ կանոնները:

«Այս տան միակ, անփոխարինելի և անկրկնելի տղամարդը ես եմ: Տղամարդիկ հեռանում են, իսկ ես մնում: Դա առաջինը»,– ուղարկեց պատասխանը կատուն: «Երկրորդ՝ երբեք չես նստում իմ բազկաթոռին: Եվ երրորդ՝ ես տանել չեմ կարողանում գիշերային շըխկուդըխկը: Այցելություններիդ ժամերը և գրաֆիկը կվերանայես: Հիշեցի՞ր»:

– Թա՛թդ տուր, վայրենի՛,– համաձայնեցի ես:

– Այդ ո՞ւմ հետս ես խոսում,– հարցրեց Կատյան՝ բաժակները ձեռքին ներս մտնելով:

– Քո կատվի:

– Բեռլուսկոնիի՞: Եվ ի՞նչ թեմայով,– զարմացավ Կատյան:

– Տղամարդկանց ծանր խոսակցություն էր: Սահմաններն էինք հստակեցնում: Ավելի լավ է՝ մանրամասները չիմանաս: Բայց, կներես, անունը նորից կասե՞ս, նա չներկայացավ:

– Պաշտոնական անունը Բեռլուսկոնի է, բայց կարճ Բասյա ենք ասում: Իտալացի վարչապետի նման սիրառատ է ու կրքոտ: Ահուսարսափի մեջ է պահում բակի բոլոր որձերին: Գիտե՞ս, հսկայական հարեմ ունի: Բայց ի տարբերություն վարչապետի՝ իմ Բասյային փիսիկներն անշահախնդրորեն են սիրում,– հպարտորեն հայտարարեց Կատյան՝ մի կերպ գրկելով գրեթե իր քաշի «փլեյբոյին»:

«Ճիշտ է ասում: Ես էլ նրանց բոլորին հավասար սիրում եմ»,– միջամտեց Բասյան՝ գոհունակ մռութը դնելով Կատյայի ուսին:

– Բայց կարծեմ դու ասում էիր էլդերտերիեր ունես,– հիշեցի ես:

– Չէ, միայն Բասյան է: Շան մասին էլ քեզ վախեցնելու համար էի ասում:

Մտածեցի, որ գորշ Բասյան՝ իր ամբիցիաներով, հսկայական չափերով ու կայացած որձի մաներաներով հաստատ մի քանի անգամ ավելի վտանգավոր է, քան ինչ-որ դժբախտ էլդերտերիեր:

– Հիմա, երբ Բասյայի հետ ծանոթացա, քեզ համար ավելի հանգիստ եմ,– շատ լուրջ հայտարարեցի ես:– Սակայն մենք կարո՞ղ ենք մեր երեկոն միայն երկուսով շարունակել: Մի տեսակ քաշվում եմ քո գազանից:

«Եվ ճիշտ ես անում: Երկար կապրես: Լավ, թույլ եմ տալիս, գնացեք զբոսնեք: Բայց շատ ուշ չվերադառնաք»,– ողորմածաբար թույլ տվեց հրեշը:

– Բասյայից, չգիտես ինչու, բոլորն են քաշվում: Չեմ հասկանում: Լավ, դուք մի քիչ էլ շփվեք, մինչև ես հագնվեմ,– ասաց Կատյան՝ սուզվելով ննջարանի պահարանի մեջ:

Տարօրինակ կենդանու հետ դեմ առ դեմ մնալու հեռանկարն ինձ այդքան էլ դուր չեկավ, սակայն բախտս բերեց, քանի որ Բասյան, իր «հայրական պարտքը» կատարված համարելով, գռմռալով գնաց խոհանոց՝ սնվելու:

– Ասա՛ ուր՞ ենք գնալու, որ իմանամ ինչ հագնել,– լսվեց Կատյայի ձայնը ննջասենյակից:

– Ինձ թվում էր, թե արդեն պատրաստ ես,– հուսահատ հոգոց հանեցի ես:

– Ո՛չ, ես դեռևս կողմնորոշվելու փուլում են: Հավատացնում եմ՝ կանանց պարագայում դա արդեն գործի կեսն է,– հանգստացրեց ինձ Կատյան:

– Ինչո՞ւ է կնոջ համար այդքան կարևոր, թե ինչպես հագնվի: Երբեք չեմ հասկացել,– անկեղծորեն հարցրի ես:

– Սխալվում ես: Կնոջ համար ավելի կարևոր է, թե ինչպես կհանվի: Եվ կախված այն բանից, թե ինչպես կհագնի, պարզի կլինի, թե ով կհանվացնի: Դա մի քիչ բարդ է «Pentium 1» պրոցեսորով աշխատող քո արական ուղեղի համար, բայց ավելի պարզ չեմ կարող բացատրել:

– Հիմա դու հանվելու ենթատեքստով ես հագնվո՞ւմ,– անմիջապես անառողջ հետաքրքրություն ցուցաբերեցի ես:

– Ինչո՞ւ երբ գործը հասնում է անկողնուն, քո «Pentium 1»-ը սկսում է «Apple Macbook»-ից էլ արագ աշխատել:

– Դա տղամարդկանց օրգանիզմի առանձնահատկություններից է, ավելի պարզ չեմ կարող բացատրել,– կրկնեցի ես Կատյայի խոսքերը:– Քանի որ այսօր ամսի 1-ն է, և ժամանցի գրեթե բոլոր հետաքրքիր վայրերը փակ են, առաջարկում եմ գնալ խմբագրություն:

– Իսկ այնտեղ ի՞նչ ենք անելու:

– Կասեմ,– փակագծերը չբացեցի ես:

– Լավ, ինձ միևնույն է, թեև հանգիստ կարող էինք տանը մնալ Բասյայի հետ:

– Այ Բասյաի հետ տանը մնալ ես չեմ ուզում:

Կատյան դուրս եկավ ննջասենյակից (ի վերջո կանգ էր առել ջինսային լուծումի վրա), գնաց խոհանոց, ջերմորեն համբուրեց Բասյայի մեծ գլուխը, ականջին ինչ-որ բան փսփսաց, որից հետո միայն տանից դուրս եկանք:

– Այդ ի՞նչ էիր ականջին փսփսում,– կասկածամիտ տոնով հարցրի ես:

– Զգուշացրի, որ ուշ կվերադառնամ, որ չանհանգստանա:

– Եվ մի՞շտ ես նրան հաշվետվություն տալիս, – զարմացա ես:

– Միշտ: Դու Բասյային զայրույթի պահին չես տեսել:

– Մոտավորապես պատկերացնում եմ, – անկեղծորեն ասացի ես:

Խմբագրությունը մեզ դիմավորեց անցյալ տարվա բույրերով, որոնցում գերիշխում էր ալկոհոլը և ծխախոտը:

– Երբեմն արժե այստեղ օդափոխել,– փոքրիկ կենդանու պես հոտոտելով տարածքը՝ դժգոհ հայտարարեց Կատյան:

– Արժե,– չառարկեցի ես,– թուղթ խաղալ գիտե՞ս:

– Ե՞ս: Ուշադի՛ր ինձ նայիր: Ես խաղում եմ գրեթե բոլոր թղթախաղերը և խմում գրեթե բոլոր խմիչքները՝ ցանկացած տղամարդուց էլ լավ:

– Գրազի վրա խաղա՞նք ու խմե՞նք:

– Ուզում եմ հիշեցնել, որ դու դեռ մի գրազի տակից դուրս չես եկել,– ծիծաղեց Կատյան,– լավ, համաձայն եմ, բայց «ամերիկանկա» ենք խաղում:

– Դա ի՞նչ է,– չհասկացա ես:

– Երբեմն ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ դու ուսանող չես եղել: Գրազի տեսակ է: Ով պարտվում է, կատարում է հաղթողի մեկ ցանկություն: Ցանկացած:

– Համաձայն եմ,– անմիջապես ոգևորվեցի ես:– Ի՞նչ կխմես:

– Թեքիլա:

– Վստա՞հ ես: Թեքիլան միայն հօգուտ ինձ է աշխատելու, և իբրև ազնիվ տղամարդ՝ իմ պարտքն եմ համարում զգուշացնել, որ այդ դեպքում հաստատ կպարտվես: Ուրի՛շ խմիչք ընտրիր,– ազնվորեն զգուշացրի ես:

– Ես կխմեմ մի շիշ թեքիլա, հենց այս սեղանին թղթախախով քամուն կտամ քո ինքնահավան ու ինքնավստահ բմբուլները, հետո քո հարբած լեշը կթողնեմ սեղանի տակ ու ինքնուրույն կգնամ տուն, կգրկեմ Բասյային ու կքնեմ: Հիշեցի՞ր հերթականությունը:

– Բաժանում եմ:

Մենք խմում էինք ու խաղում, խաղում էինք ու խմում: Ես անհանգստացած հայացքներ էի նետում նրա վրա: Ի վերջո, թեքիլան ուժեղ խմիչք է. բազմիցս ականատես եմ եղել, թե ինչպես բավական պնդակազմ տղամարդիկ են գլորվել մեքսիկական այս հրաշքից: Սակայն Կատյան այնպիսի տեսքով էր խմում այն, կարծես բաժակում լիկյոր էր:

– Հաշիվը, խնդրում եմ,– հերթական բաժակը էլեգանտ ժեստով կուլ տալուց հետո, հանգիստ հարցրեց նա:

Ես կախեցի գլուխս: Կատյան իսկապես լավ էր խաղում: Սկզբում մտածում էի՝ թույլ կտամ, որ հաղթի՝ մթնոլորտը ջերմացնելու նպատակով: Սակայն առաջին խաղից հետո պարզ դարձավ. ի՞նչ մթնոլորտ, ի՞նչ բան, մորթիս փրկելու հարցն ավելի արդիական էր:

– Խմբագրությունում ավել ունե՞ք,– հարցրեց Կատյան:

– Ինչի՞դ է պետք,– զարմացա ես:

– Դե, բմբուլներդ հավաքեմ, առավոտյան մարդկանց ոտքերի տակ չընկնի:

– Պարզապես քո բախտն է բերում: Իրականում դու խաղալ չգիտես,– բարկացած ասացի ես, քանի որ տանել չեմ կարողանում պարտությունը ոչ մի սոուսի մեջ՝ լինի դա անձնական հարաբերություններում, թե սովորական թղթախաղում:

– Ահա, հույս ունեիր, որ երկու բաժակ թեքիլայից գլուխս կկորցնեմ, շորերս կպատռեմ, կնետվեմ գիրկդ ու շնչահեղձ կգոռամ՝ վերցրո՛ւ ինձ, հե՛նց հիմա, հե՛նց այս սեղանին,– հեգնեց Կատյան:

«Վերցրու ինձ»-ը նա ասաց այնպիսի պրոֆեսիոնալ դերասանուհու ձայնով և առոգանությամբ, որ ես սկսեցի ծիծաղել:

– Այդ տոնը որտեղի՞ց ես սովորել,– հարցրի ես:

– Գերմանական պոռնոներից,– ծիծաղելով տեղեկացրեց Կատյան:

– Բայց գիտես, սցենարն ինձ դուր եկավ, հատկապես սեղանի պահը:

– Ոչ բոլոր սցենարներն են հասնում կինոարտադրության փուլին,– «հուսադրեց» ինձ Կատյան, ապա խոր հոգոց հանեց և շարունակեց,– Աստվա՛ծ իմ, մի՞թե ես այդքան ծերացել եմ:

– Ինչո՞ւ եկար նման եզրահանգման, այն էլ այդքան անսպասելի,– հետաքրքվեցի:

– Որոշ գիտնականներ պնդում են, որ ինչքան մենք ծերանում ենք, այնքան ուշ է սկսում խմիչքն ազդել մեր օրգանիզմի վրա: Մենք ռուս կոշկակարների չափ խմեցինք, իսկ ես ոչինչ չեմ զգում: Ոչինչ, ոչինչ: Ուրեմն ես ծերացել եմ,– ողբերգական պաթոսով հայտնեց նա ու սպասողական նայեց վրաս՝ բացահայտորեն ակնկալելով ասվածի հերքումը:

– Սցենարի համաձայն՝ հիմա ես պետք է նետվեմ քեզ հանգստացնելո՞ւ: Ասեմ՝ «օհ, ո՛չ, դու ծեր չես, դու չքնաղ ես»: Դու միայն ռեպլիկների հերթականությունն ասա, ես պատրաստ եմ:

– Երբեմն դու անտանելի ես դառնում: Լսի՛ր, գիտես, ես մի երազանք ունեմ: Եվ հաշվի առնելով, որ «ամերիկանկան» պարտվել ես, ուզում եմ՝ այն կատարես:

– Ի՞նչ երազանք է, ասա՛,– անհանգստացա ես: Հաշվի առնելով Կատյայի բնավորությունը՝ նրա երազանքների մասին կարելի էր մոտավոր պատկերացում ունենալ:

– Ես երբեք մարիխուանա չեմ ծխել: Ասում են՝ թռչելու պես մի բան է: Բայց ես միշտ վախեցել եմ վերահսկողությունս կորցնելուց:

Ես քեզ վստահում եմ և ուզում եմ հենց քեզ հետ փորձել, թե այդ ինչ հաճույք է, որ միլիոնավոր մարդիկ դրա գերին են դառնում:

Ես սարսափելի շոյված էի ու հուզված. աղվեսի պես զգուշավոր Կատյան ինձ վստահում էր այնքան, որ պատրաստ էր անգամ մարիխուանա վերցնել իմ ձեռքից: Հասկանալի է, որ ինքս այդ պահին պատրաստ էի նրա ոտքերի մոտ դնել ողջ աշխարհը:

Սակայն նրա ուզածը լուրջ խնդիր էր՝ մի քանի պատճառով: Առաջինը՝ ինձ երբեք առանձնապես չի հետաքրքրել հաճույքի այդ տեսակը: Երկրորդ՝ բնականաբար չունեի կապեր թմրաոլորտում: Եվ երրորդ՝ զուտ էթիկական տեսանկյունից գաղափարն ինձ դուր չէր գալիս: Սակայն Կատյայի նման նախաբանից հետո դժվար էր կեղծ բարեպաշտության դիմակ հագնել և պատմել մարիխուանայի վնասների մասին: Կատյան անմիջապես հասկացավ իմ լռության պատճառները և հիասթափված տոնով ասաց.

– Ես ընդամենը մեկ անգամ փորձել էի ուզում: Բայց եթե չես կարող գտնել, խնդիր չկա, կարող եմ ուրիշ ցանկություն հայտնել:

– 30 րոպեից դու կծխես քո առաջին «խոտային կոկտեյլը»,– ինքնավստահ հայտարարեցի ես՝ հանկարծ հիշելով մի բան: Անցյալ տարի ծանոթներիցս մեկը Կուբայից ինձ ծխախոտ էր նվեր բերել: Ազատության կղզում այդ ծխախոտն օգտագործում են աղքատները. արմավենու տերևների մեջ փաթաթված թութունե փոքրիկ գլանակներն էին, որոնք գարշելի հոտ ունեին ու համ: Դրանց հոտն այնքան անտանելի էր, որ խմբագրությունում ինձ արգելել էին ծխել: Ես հույս ունեի, որ մեկ տարի սեղանիս դարակում մնալուց հետո, դրանք չէին կորցրել իրենց հատկությունը և կօգնեին ինձ այս իրավիճակից պատվով դուրս գալու: Բնականաբար, մարիխուանայի նշույլ անգամ դրանցում չկար, սակայն ես հույս ունեի, որ անփորձ Կատյան չի հասկանա ոչինչ: Ամեն դեպքում որոշեցի դերի մեջ մտնել և մի քիչ չեմուչում անել.

– Իսկ վստա՞հ ես, որ մարիխուանայից հետո «Վերցրու ինձ սեղանին» սցենարը կյանքի չի կոչվի: Մի՛ մոռացիր, որ մենք մեկ ու կես շիշ թնդագույն թեքիլա ենք խմել:

Սակայն նա դեմքի այնպիսի արտահայտություն ընդունեց, որ անմիջապես զղջացի ասածիս համար:

Կես ժամ անց դուրս եկա, մի քիչ սպասեցի փողոցում և վերադարձա՝ կուբայական էժանագին ծխախոտը գրպանումս: Մենք տեղավորվեցինք հատակին: Կատյան անհամբեր նայում էր ինձ: Հետո վերցրեց գլանակը, ագահաբար ներս քաշեց ծուխը և գիտակի տեսքով ասաց.

– Ոչինչ չեմ զգում: Սա՛ էլ ինձ վրա չի ազդում:

– Մի քիչ սպասի՛ր, հիմա կազդի,– հանգստացրի նրան:

Երկու գլանակ ծխելուց հետո Կատյան հանկարծ հայտարարեց, որ գլուխը պտտվում է, և այնպիսի տպավորություն է՝ կարծես օդում է: Այդ պահին դա ինքնաներշնչման փայլուն օրինակ էր: Սակայն ես հիմնավորված կասկածներ ունեի, որ եթե ասեմ Կատյային ճշմարտությունը «կուբայական կոկտեյլի» մասին, խմբագրությունից ողջ դուրս չեմ գա:

– Դու ինձ իսկապե՞ս այդքան վստահում ես,– վերադարձա ինձ հետաքրքրող թեմային:

– Իսկ ի՞նչ զարմանալու բան կա այդտեղ:

– Իսկ դու ինձ սիրո՞ւմ ես:

– Ո՛չ, բայց փոխարենը դու ես ինձ սիրում:

– Որտեղի՞ց գիտես:

– Գիտեմ, որովհետև ես ունեմ իմ սեփական տեսությունը սիրո վերաբերյալ՝ ամրապնդված կյանքի փորձով,– շատ հեղինակավոր հայտարարեց նա:

– Եվ ո՞րն է քո թեորիան: Կկիսվե՞ս ինձ հետ:

– Խնդրեմ: Երբ տղամարդը հարցնում է՝ «Դու սիրո՞ւմ ես ինձ», նշանակում է իսկապես սիրում է: Իսկ երբ անընդհատ ասում է՝ ես սիրում եմ քեզ, նշանակում է սիրում է միայն իր սերը դեպի այդ կինը:

Իրականում սերն ամենօրյա բարդ աշխատանք է: Այն ամեն օր պետք է նորից թխել, ինչպես հացը: Որ հացի պես թարմ ու անուշահոտ լինի: Այն օրը, երբ կհանգցնես թոնիրը ու կդադարես թխել, սերը կհնանա, կբորբոսնի, ու մի օր ստիպված կլինես հին հացի պես շպրտել այն ծիտիկներին, չէ, ագռավներին կերակուր: Պա՞րզ է: Լավ, արդեն առավոտյան ժամը 4-ն է, ես, ինչպես և խոստացել էի, ինքնուրույն տուն եմ գնում,– իր խոսքն անսպասելի ավարտեց Կատյան:

– Դու բավական երկար խաղացիր ինքնուրույն, ազատ և անկախ կնոջ դերը: Չեմ ժխտում, այն իսկապես քեզ սազում է, սակայն հիմա դու արևելյան կնոջ հնազանդությամբ կհագնվես ու կնստես իմ մեքենան: Պա՞րզ է:

– Դա առասպել է, որ արևելյան կանայք հնազանդ են: Արևելքի տղամարդկանց հորինած հերթական առասպելը: Լա՛վ, համոզեցիր,– անսպասելի հեշտությամբ համաձայնեց նա:

Սովորաբար, երբ Կատյայի հետ էի, մեքենան մի ձեռքով էի վարում, քանի որ սովորություն ունեի մյուսով բռնել նրա մատիկները: Այդպես ես ինձ ավելի մոտ էի զգում նրան, այդպես ինձ թվում էր, թե նա իմն է ու ոչ մի տեղ չի փախչի ինձանից: Շենքի մուտքի մոտ Կատյան շրջվեց դեպի ինձ, երկար նայեց աչքերիս ու հարցրեց.

– Դու ինձ սիրո՞ւմ ես:

– Քո թեորիան կանանց վրա չի տարածվո՞ւմ:

Կատյան ոչինչ չպատասխանեց, համբուրեց այտս և դուրս եկավ մեքենայից: Ես լուռ նայում էի, թե երբ կվառվի նրա պատուհանների լույսը: Հույս ունեի, որ կտեսնեմ գոնե նրա ուրվագիծը, սակայն թույլ լուսավորված քառակուսու մեջ երևում էր միայն Բասյայի ահեղ մռութն ու ձյան փաթիլների հետ ներքև իջնող նրա տելեպատիկ միտքը՝ «Վերջին անգամ եմ զգուշացնում, այցելությանդ ժամերը վերանայի՛ր, այլապես ես ստիպված կլինեմ խախտել մեր համաձայնագիրը»:

Օդում նոր թխած հացի անուշ բույր էր տարածված: Զգացի, թե որքան սոված եմ…

Վաղինակն անհետանում է

Սեղանին՝ ոտքերիս աջ ու ձախ կողմերում, դրված էին երկու մոմակալներ՝ անլույս վառվող մոմերով, սեղանի կողքին շարված աթոռներին ինչ-որ մարդիկ էին նստած, հնչում էր հոգեհանգստի երաժշտություն: Կար մեծ հավանականություն, որ ես մահացել էի: Այն, որ զգայարաններիցս որոշները շարունակում էին գործել, դեռ ոչինչ չէր նշանակում: Գուցե հոգուս զգայարաններն էին:

Միայն թե, չգիտես ինչու, մրսում էի, թեպետ ասում են, որ դժոխքում դժոխային շոգ է լինում:

Ճիշտն ասած, երբեք չեմ վախեցել մեռնելուց, բայց ո՞վ կմտածեր, որ պետք է այս աստիճան մրսեմ: Եվ հետո՝ որտեղի՞ց այս սոսկալի գլխացավն ու սրտխառնոցը: Մի՞թե սա այն ամենն էր, ինչ պիտի տանեի հետս երկրային կյանքից: Տրամաբանական հարց էր առաջանում՝ ինչ իմաստ ունի մեռնելը, եթե առավոտները էլի պետք է գլուխդ ցավա, և սիրտդ խառնի:

Ի՞նչ արժե շամպայնը դժոխքում: Ահա երկու շիշ, որ կարծես պատվո պահակ են կանգնած հանգուցյալիս դիակի մոտ: Ի՞նչ կլինի, եթե փորձեմ վերցնել դրանցից մեկը: Ձեռքս զարմանալիորեն ենթարկվեց: Կարծեմ՝ ձախը: Դողալով մոտեցավ շամպայնի կիսալիքը շշին և այնպես կառչեց դրանից, ասես այն հույսի վերջին սյունն էր, որն իր վրա էր պահում կյանքը: Հետո թթու հեղուկը հոսեց մարմնիս միջով՝ փաստորեն իբրև կենդանացնող ջուր:

Եվ ահա թե ինչ պարզվեց. Վաղինակի տան հյուրասենյակում էի, կիսապառկած Վաղինակի բազկաթոռին, ոտքերս՝ Վաղինակի սեղանին: Առավոտ էր. մոմերը՝ ոտքերիս մոտ դրված մոմակալներում, հավանաբար վառվում էին նախորդ գիշերվանից, սեղանի կողքին շարված աթոռների վրա քնած էին Վաղինակի «բոմժերը»:

Իսկ երաժշտությունն ամենևին էլ հոգեհանգստի չէր. Իան Անդերսոնի ֆլեյտայի ձայնն էր ընդամենը, որը վաղուց արդեն ծառայում էր իբրև հեռախոսիս զանգ:

Դե ինչ, պետք էր պատասխանել:

Կինս էր զանգողը: Նա ինձ հիշեցրեց ամսաթիվը և ասաց, որ եթե որոշեմ այս տարի տուն գալ, հետս հաց տանեմ: Ինչպես միշտ՝ նա անկրկնելի էր. ես միշտ զարմացել եմ, թե ինչպես է կատարյալ կնոջ բոլոր տվյալներն ունեցող իմ կինն արդեն քսան տարի հանդուրժում իմ պես ամուսնուն:

Զզվանքով խմեցի շշում մնացած շամպայնը և նայեցի ժամացույցին: Տասնմեկն էր: Փորձեցի մտովի վերականգնել նախորդ գիշերվա իրադարձությունները, բայց՝ ապարդյուն: Չէի հիշում՝ ինչպես եմ բաժանվել Կատյայից, ինչ եմ արել հետո և գլխավորը՝ ինչպես եմ հայտնվել Վաղինակի տանը: Այո, ինչ-որ տեղ շամպայն էի խմում Կատյայից բաժանվելուց հետո: Հիշում էի խորհրդանշական թիվը՝ տասներկուսը, չէ՞ որ հենց այդքան շամպայն գնեցի խանութից՝ նկատի ունենալով, որ 2012 թվականն է: Էլի լավ է, որ 2012 շիշ չառա: Շամպայնների մի մասը՝ հիմնականում դատարկ, ահա սեղանին են, հետևաբար Կատյայից բաժանվելուց անմիջապես հետո եկել եմ այստեղ:

Փորձեցի վեր կենալ և քայլել դեպի լոգարան: «Բոմժերից» մեկը փռված էր հատակին՝ ուղիղ հյուրասենյակի դռան առջև, և ստիպված էի անցնել նրա վրայով: Լվացվեցի սառը ջրով (ասենք՝ տաք չկար էլ), բայց գլխացավս դրանից ավելի ուժեղացավ: Ախր իմ ի՞նչ շամպայնի տարիքն էր... Դեռ ուսանող ժամանակ տղերքի հետ խմած մի քանի շիշ շամպայնը գլխացավ էր առաջացնում, ուր մնաց հիմա: Մի կերպ էի ինձ պահում ոտքի վրա և դողում էի ողջ մարմնով: Պետք էր գնալ տուն, գլխացավի դեղ խմել և մտնել տաք անկողին: Հերն էլ անիծած, թե Նոր տարի չէր:

Բայց մի րոպե, որտե՞ղ էր Վաղինակը: Նա ինչ-որ աչքովս չէր ընկել:

Նորից մտա հյուրասենյակ, բայց այնտեղ միայն «բոմժերն» էին: Վաղինակը չկար նաև խոհանոցում ու ննջասենյակում: Ձանգեցի նրան. հեռախոսն անջատված էր: Այլևս ոչինչ չէի կարող անել, հագա վերարկուս և գնացի տուն:

Մի քանի օր անցկացրի հորիզոնական դիրքով: Տեղիցս վեր չէի կենում անգամ, երբ հյուրեր էին գալիս մեր տուն՝ շնորհավորելու Նոր տարին: Լավ է, որ հունվարի մեկին՝ մինչև հարբեցողությանս սկիզբը, հասցրել էի ընտանիքիս հետ այցելել և շնորհավորել ամենակարևոր մարդկանց:

Երևի վերջին մի քանի տարում այդքան հեռուստացույց չէի նայել և այդքան չէի քնել, որքան այդ մի քանի օրերին: Ու փաստորեն նաև չէի խմում: Եվ երբ մի բաժակ գինի խմեցի Սուրբ ծննդյան օրը, այն անգամ տհաճ թվաց:

Ժամանակ առ ժամանակ զանգում էի Վաղինակին, բայց անօգուտ, նրա հեռախոսը շարունակում էր անջատված մնալ: Աստիճանաբար սկսում էի անհանգստանալ, և երբ արդեն այնքան լավ էի զգում, որ կարող էի տանից դուրս գալ, առաջին հերթին գնացի Աղայան փողոց: Վաղինակի տան դուռը, ինչպես միշտ, բաց էր: Բայց ներսում մարդ չկար: Բնակարանը սովորականի պես ցուրտ էր, մութ ու թափթփված: Դատելով հյուրասենյակում ու խոհանոցում այսուայնտեղ շարված էժանագին օղու դատարկ շշերից՝ Վաղինակը վերջին օրերին կա՛մ չէր խմել, կա՛մ ընդհանրապես այստեղ չէր եղել, և բնակարանը տնօրինել էին «բոմժերը»:

Բայց լրջորեն անհանգստացա, երբ բացեցի հյուրասենյակի պահարանը, որտեղ Վաղինակը պահում էր իր ճամպրուկը, և այն այնտեղ չգտա: Մի՞թե պատգամավորության թեկնածուն մեկնել էր:

Այ թե բան կլիներ: Ես նորից փորձեցի մտովի վերականգնել հունվարի մեկի լույս երկուսի իրադարձությունները: Փաստորեն, երբ արթնացա, Վաղինակն արդեն չկար: Բայց ամբողջ ցավն այն էր, որ չէի հիշում, թե արդյոք նա տանն էր, երբ ես եկա և բերեցի այդ չարաբաստիկ շամպայնները:

Պետք էր գտնել «բոմժերին»: Փնտրեցի նրանց մոտակա բակերում և փողոցներում, բայց ապարդյուն: Նորից վերադարձա Վաղինակի բնակարան, մի քիչ էլ սպասեցի և արդեն պատրաստվում էի մի գրություն թողնել ու հեռանալ, երբ բացվեց դուռը: Նախկին դերասանն էր: Ես արդեն սկսել էի նրանց տարբերել (գուցե որովհետև սկսել էի նմանվե՞լ): Բոմժը երկու ձեռքով ամուր բռնել էր ինչ-որ առարկա: Միայն երբ մութ նախասենյակից մտավ խոհանոց, տեսա, որ մեծ օվալաձև հայելի էր՝ տեղ-տեղ ճաքած գիպսե շրջանակով:

– Տես, թե ինչ եմ գտել. մեկը դրել էր աղբարկղի մոտ: Տարօրինակ մարդիկ են,– նա զգուշորեն տեղավորեց հայելին խոհանոցի սեղանին,– ի՞նչ ես կարծում, սրան որքա՞ն կտան: Կպահեի ինձ, բայց դե տուն չունեմ: Իսկ գուցե նվիրեմ Վաղինակի՞ն: Նա լավ մարդ է:

– Որտե՞ղ է Վաղինակը:

– Ի՞նձ ես հարցնում,– նախկին դերասանը ուշադիր նայում էր հայելու մեջ իր արտացոլանքին,– հետաքրքիր է, ապակի՞ն է կեղտոտ, թե՞ ես այսօր չեմ լվացվել:

– Ուրիշ ո՞ւմ հարցնեմ: Դու ապրում ես Վաղինակի տանը, և քեզ չի՞ հետաքրքրում, թե նրա հետ ինչ է պատահել,– նրա անտարբերության վրա մի փոքր զայրացած՝ նետեցի ես:

– Բայց ես ի՞նչ իմանամ,– տեղի չտվեց «բոմժը»:

– Ե՞րբ ես նրան վերջին անգամ տեսել:

– Քննիչի նման ես խոսում: Ինձ մի անգամ տարել էին ոստիկանություն՝ իբրև վկա: Ահա այնտեղ մի քննիչ կար…

– Այս մի քանի օրերին նա տանը եղե՞լ է:

– Կարծես թե ոչ, բայց ես ի՞նչ իմանամ…

Հասկանալով, որ դերասանից որևէ բան իմանալն անհնար է, հարցրեցի, թե որտեղ են նրա ընկերները:

– Չգիտեմ, երևի շուտով կգան: Դրսում սարսափելի ցուրտ է: Ի՞նչ ես կարծում գիպսի այս ճաքերը կարելի՞ է կպցնել:

Մյուս «բոմժերն» իսկապես շուտով եկան: Չկար միայն գրաքննադատ տիկինը: Ասացին, որ ինչ-որ սիրեկան է գտել և դավաճանել է իրենց: Իսկ Վաղինակից որևէ տեղեկություն չունեին: Միայն վստահեցրին, որ վերջին մի քանի օրը տանը չի եղել: Ես փորձեցի մանրամասներ ճշտել հունվարի մեկի այն գիշերվանից, երբ եկել էի այստեղ Կատյայի հետ հանդիպումից հետո և բերել էի շամպայնները: Այստեղ հետաքրքիր բաներ պարզվեցին. «բոմժերից» մեկը (ճարտարապետը) հիշեց, որ Վաղինակը և ես երկար ժամանակ փակվել էինք խոհանոցում և երբ դուրս եկանք այնտեղից, ինչ-որ արջերի մասին էինք խոսում: Իսկ մյուս «բոմժը» (գիտնականը) ավելացրեց, որ քննարկում էինք, թե որտեղից կարելի է արջի քոթոթ ճարել:

Արջի անունը լսելով՝ հանկարծ սկսեցի ինչ-որ բաներ հիշել: Բայց նախ ասեմ, թե ինչ կապ ունի այստեղ արջը:

Իսկ արջը կապ ունի «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդի հետ: Նրա մասին ես ձեզ արդեն պատմել եմ և անդրադարձել եմ շքեղությունների ու ընդհանրապես ճոխ կյանքի հանդեպ ունեցած նրա մոլուցքին: Բայց չեմ հիշատակել այն, որ մեր երկրում ամենահարուստ մարդկանցից մեկը համարվող այս քաղաքական գործիչն աննկարագրելի սեր ուներ վայրի կենդանիների նկատմամբ, մասնավորապես՝ արջերի: Ասում էին, որ իր դղյակի պարիսպներից ներս նա հատուկ տարածք ուներ՝ նախատեսված սիրելի գիշատիչների համար:

Եվ ահա Նոր տարվա առաջին այդ օրը, շամպայնի հերթական շիշը դատարկելուց հետո, Վաղինակի կամ իմ (այդ մեկը ստույգ չէի հիշում) գլխում միտք էր ծագել՝ Ամանորի առթիվ արջի քոթոթ նվիրել «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդին: Մինչ այդ կամ դրանից հետո (այս մեկն էլ հաստատ չէի հիշում) կարծեմ Վաղինակը զանգեց նրան, որպեսզի շնորհավորի Նոր տարին և պայմանավորվի հանդիպման համար: Խոսակցությունը կարծեմ կայացավ և բավական երկար տևեց, բայց այլ մանրամասներ չէի հիշում:

Սակայն այսքանն էլ բավական էր որոշ բաներ հասկանալու համար: Խնդիրն այն է, որ անմիջապես «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդին զանգելն ու նրա հետ խոսելն այնքան էլ հեշտ գործ չէր: Ասենք, մոտավորապես նույնը, ինչ մեկը վերցնի հեռախոսը և զանգի անմիջապես հանրապետության նախագահին: Նախ պետք էր իմանալ հեռախոսի համարը: Թե որտեղից էինք մենք այն իմացել, դժվար էր ասել: Հնարավոր է, որ իմացել էի ես, ասենք՝ մեր լրագրողներից: Բայց դեռ դա հարցի մի կողմն էր: Որպեսզի այդ մարդը խոսեր իրեն զանգահարողի հետ, պետք է առնվազն նրան շատ լավ ճանաչեր: Վաղինակն ասում էր, որ առաջնորդի հետ իրենք ժամանակին ծանոթներ են եղել: Եթե իրոք այդպես էր, դա որոշ առումով բացատրում էր նաև այն, որ ինչպես ես հիշում էի, նրանց խոսակցությունը բավական երկար տևեց: Այ, եթե հիշեի նաև, թե ինչ էին խոսում... Բայց մի բան փաստ է՝ խոսակցությունը կայացել էր, իսկ դա նշանակում էր, որ ամեն ինչ պետք է որ լավ լիներ: Բայց այդ դեպքում ո՞ւր էր Վաղինակը, ինչո՞ւ էր նա անհետացել:

Եվ հանկարծ մարմնովս սարսուռ անցավ: Դե իհարկե, ամեն ինչ պարզ էր: Վաղինակին առևանգել էին: Հնարավոր էր, որ նա հեռախոսային այդ խոսակցության ընթացքում վիրավորել էր կամ սխալ բաներ էր ասել ծուռթաթերի սիրահարին, և նա էլ իր նազիր-վեզիրներին կարգադրել էր առևանգել ու պատժել Վաղինակին: Այն, որ նա ընդունակ էր նման բանի, կասկածից վեր էր: Ես առանձնապես լուրջ չեմ վերաբերվում ասեկոսեներին, բայց ինչպես ասում են՝ ծուխն առանց կրակի չի լինում: Խոսում էին այն մասին, որ «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդը ոչ միայն սովորություն ուներ իր մոտ բերել և պատժել իրեն նեղացնողներին, այլև պատժելու յուրահատուկ մեթոդներ ուներ: Այդ մեթոդներից մեկն էլ... մարդկանց արջերի վանդակը գցելն էր:

Միջիս սարսուռն ավելի ուժգնացավ: Խե՜ղճ Վաղինակ: Նա ընդամենը ուզում էր ծաղրել մեր իրականությունը, այնինչ դարձավ

այդ իրականության զոհը: Եվ գլխավորը՝ հստակ գիտակցում էի, որ ամեն ինչի մեղավորը ես էի:

Բայց մի րոպե, արդյո՞ք ուշ էր որևէ բան անելը: Ես փորձեցի հաղթահարել երկյուղս և սթափ դատել: Որքան էլ չար մարդ լիներ «Ինքնըստինքյանի» առաջնորդը (իսկ ես, չգիտես ինչու, ներքին համոզում ունեի, որ նա չար մարդ չէր), որքան էլ մեծ լիներ նրա վիրավորվածությունը, միևնույն է՝ հո չէ՞ր կարող առավելագույն պատիժ սահմանել Վաղինակի համար: Ո՛չ, ամենայն հավանականությամբ իմ բարեկամին արջերը չէին կերել: Ուրեմն պետք էր նրան փրկել:

Դրա համար երկու տարբերակ կար. ես կարող էի աղմուկ բարձրացնել (ասենք՝ մամուլում) և կարող էի անաղմուկ դիմել իմ մի ընկերոջը՝ շատ հարգարժան մի մարդու, ով վստահաբար կարող էր օգնել ինձ: Որոշ ժամանակ մտածելուց հետո կանգ առա երկրորդ տարբերակի վրա և արդեն պատրաստվում էի զանգել ընկերոջս, երբ հանկարծ մտքովս մի բան անցավ: Եվ դա եղավ ճիշտ ժամանակին:

Չէ՞ որ Վաղինակն իր հետ վերցրել էր ճամպրուկը: Եթե նրան առևանգել էին, հո չէ՞ր կարող նա այդ պահին ասել՝ մի րոպե սպասե՛ք, վերցնեմ ճամպրուկս: Ոչ, դա անհնար էր: Ուրեմն ի՞նչ էր ստացվում. Վաղինակին առևանգե՞լ էին, թե՞ նա պարզապես փախել էր: Առավոտյան արթնացել էր, հիշել գիշերվա հարբած խոսակցությունը, վախեցել էր, հավաքել իրերն ու շտապել օդանավակայան:

Այո, սա շատ ավելի խելքին մոտ վարկած էր: Բայց միևնույն է՝ որոշ բաներ հարկավոր էր ճշտել: Վերջնականապես հանգիստ լինելու համար ես մեկ անգամ էլ ստուգեցի պահարանը, ապա փնտրեցի Վաղինակի ճամպրուկն այլ հնարավոր տեղերում և համոզվելով, որ այն իսկապես չկա՝ գնացի խմբագրություն: Ուզում էի ճշտել, թե ինչ տեղեկություններ կային «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդի մասին: Մամուլից որևէ բան իմանալ չհաջողվեց,

վերջին տեղեկությունը դեռ նախորդ տարվա էր: Մի քանի զանգեր արեցի լրագրողական շրջանակներին, և պարզեցի, որ հարգարժան օլիգարխն Ամանորն անցկացրել է Հայաստանից դուրս:

Կարելի էր հանգիստ շունչ քաշել, Վաղինակը հաստատ արջերի վանդակում չէր:

Այնուամենայնիվ, նրա՝ փախած լինելու գաղափարն էլ ինձ առանձնապես դուր չէր գալիս, որքան էլ որ այն արժանահավատ էր թվում: Նախևառաջ, նա յուրահատուկ կամուրջ էր իմ ու Կատյայի միջև: Փուլ գար այդ կամուրջը, ես չէի կարող հասնել Կատյային, ով գետի այն ափին էր: Բայց սա դեռ մի կողմ. Վաղինակը նաև իմ համագործակիցն էր կամ ավելի ճիշտ՝ մեղսակիցը: Ինչպե՞ս կարող էր նա ողջ մեղքը թողնել ինձ վրա ու փախչել ճանապարհի կեսից:

Մեր ծանոթության այս երկու ամիսների ընթացքում ես, ճիշտ է, չէի հասցրել լիովին ճանաչել և հասկանալ նրան, բայց մի տեսակ մտերմացել էի հետը: Իր կերպարի ողջ հակասականությամբ հանդերձ՝ ուժեղ և ազնիվ մի բան կար նրա մեջ, որ բնորոշ չէր կեսճամփի ընկերոջը:

Ո՛չ, փախչել բառն այստեղ տեղին չէր: Նա պարզապես հեռացել էր: Ձզվել և հեռացել՝ այնպես, ինչպես հայրենիքից հեռանում էր ողջ ժողովուրդը:

Դուք հեռանում եք, և մեր ոտքերի տակից փախչում է հայրենիքը

Ժողովուրդը հեռանում է, և մեր ոտքերի տակից փախչում է հայրենիքը:

Մենք ուժասպառ ենք այլևս:

Բայց մի՞թե այն օտարը պիտի լինի, որ մեզ ջուր տա: Որ մեզ օգնության ձեռք մեկնի: Եվ հաճախ էլ չմեկնի, որ մենք ստիպված լինենք կառչել նրա ոտքերից:

Ո՛չ, մենք մնում ենք:

Մենք և դուք ամեն ինչ արեցինք և ոչինչ չարեցինք: Մեր և ձեր պայքարի ընթացքը վերածվեց հարմարվողականության և անտարբերության իներցիայի, և դուք կրկին հասաք օտարի դռանը: Ձեր անարձագանք թակոցն արձագանքվեց հայրենիքում, և անկանոն հերթեր գոյացան ուրիշ փակ և բաց դռների առջև: Բայցևայնպես, որքան որ դո՛ւք եք հեռանում հայրենիքից, նույնքան էլ հայրենիքն է հեռանում ձեզանից ու մեզանից: Ու արդեն հեռացել է: Որովհետև հայրենիքը միայն Մասիսը չէ, Արագածն ու Անդոկը չեն կամ էլ Մռավը: Հայրենիքը նաև բանվորն է, որ ընտրակաշառք է վերցնում, երթուղայինի վարորդն է, որ հայհոյում է ծեր կնոջը, երաժիշտն է, որ թուրքերեն է նվագում, դատավորն է, որ անարդար վճիռ է կայացնում, լրագրողն է, որ պատվիրված հոդված է գրում, մեծահարուստն է, որ «բարեգործություն» է անում, ոստիկանն է, որ չի պաշտպանում, բժիշկն է, որ չի բուժում, պատգամավորն է, որ օրենք չի գրում… ու նախագահն է, որ այս ամենը հանդուրժում է կամ չի կարողանում դեմն առնել:

Հեռացե՛ք, եթե ուզում եք, մինչդեռ մենք մնում ենք:

Իմացե՛ք միայն, ուր էլ որ գնալու լինեք, դուք ապրելու եք աշխարհի ոչ ձեր տարածության մեջ: Որովհետև աշխարհում կա

միայն մի տարածություն, ուր ձեր արմատներն են: Եվ անկարելի է կտրվել արմատներից, քանի դեռ դրանք չեն չորացել: Կամ քանի դեռ դրանց չեն չորացրել:

Իսկ մենք կմնանք և կփորձենք թույլ չտալ, որ չորանան կամ չորացվեն արմատները:

Արագած լեռան լանջին՝ Զովասար գյուղից քիչ վերև, կա մի աղբյուր, որին հովիվները Սարի աղբյուր են ասում: Ճերմակ ջուրը ցայտում է աղբյուրից, դառնում առվակ ու հոսում դեպի գյուղ, իսկ հետո՝ չգիտես, թե ուր: Առվակ դարձած Սարի աղբյուրի ջուրն իջնում է լեռան լանջով, ուր արածում է գյուղի նախիրը, և քնած են հովվաշները, ապա կտրում դաշտերն ու մարգագետինները, ուր շողշողում են ցորենի հասկերը, և կծկված են կանաչակապույտ փշերը, ու հետո հասնում է քեռի Մամիկոնի արտը, ուր ապրում են քեռի Մամիկոնի մեղուները և մի խլուրդ:

Ժամանակ առ ժամանակ լինում է այնպես, որ առվակը ցամաքում է: Ու այդժամ տառապում է նախիրը, գլուխները կախում են ցորենի հասկերը, փեթակներից դուրս չեն գալիս քեռի Մամիկոնի մեղուները: Միաժամանակ կատաղում են հովվաշները, զարմանալիորեն ծաղկում են փշերը, և գետնի տակից դուրս է գալիս քեռի Մամիկոնի արտում ապրող խլուրդը:

Հողը, որտեղով անցնում է Սարի աղբյուրի ջրից գոյացող ու ժամանակ առ ժամանակ ցամաքող առուն, այս բոլորինն է՝ նախրինն ու շանը, ցորենինն ու փշինը, մեղվինն ու խլուրդինը: Գուցե մի գառնուկ մոլորվի ու կորի սարերում, գուցե ցորենի մի հատիկ քամին քշի-տանի ուրիշ մի արտ, ու այն ծիլեր տա այնտեղ, գուցե մի մեղու թռչի հեռու-հեռու ու չվերադառնա իր փեթակը: Բայց միևնույն է, սա է նրանց հողը՝ Արագած լեռան լանջին, Զովասար գյուղի մոտ: Միևնույն է, սա է նրանց հողը՝ պարարտ կամ չոր:

Դուք հեռանում էիք, և մեր ոտքերի տակից փախչում էր հայրենիքը:

Հարյուրամյակների կորուստներից հետո մենք վերջապես մի ձեռքբերում ունեցանք: Մեր կորուսյալ հողի մի փոքր հատվածը

մենք միացրինք հայրենիքին: Ղարաբա՛ղը: Թող որ այն չուներ որևէ միջազգային փաստաթղթային ձևակերպում, թող որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների անվերջ հանդիպումները ոչ մի առաջխաղացում չէին գրանցում այսպես կոչված «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում»: Ո՞րն էր վերջին հանդիպումը: Կազանի՞նը:

Ով ինչ ուզում է ասեր, չէր կարելի դժգոհել այդ հանդիպումից: Ավելին՝ հրաշալի կլիներ, որ հետագա հանդիպումներն էլ ունենային սրա ճակատագիրը, մինչև… Քանի որ այդ «մինչևը» մի քիչ բարդ էր, այսպես ասենք. մինչև այն պահը, երբ աշխարհի որևէ Կազանում հանդիպեին Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի նախագահները՝ որևէ Մեդվեդևի միջնորդությամբ, և ստորագրեին մեր ուզած փաստաթղթի տակ: Ինչ խոսք, այս պահին նման բանն անհնար էր: Անհնար կլիներ առաջիկա հինգ տարիներին ևս, գուցե տասը, գուցե քսան: Բայց ի՞նչ էր մեր ուզածը: Չէ՞ որ մեր ուզածն անհասկանալի կարգավիճակով, առանց ազատագրված տարածքների Ղարաբաղը չէր: Ուրեմն ո՞րն էր մեր շտապելու նպատակը:

Կային մարդիկ, ովքեր կարծում էին, որ Ղարաբաղի հարցի չլուծված մնալը խոչընդոտում էր մեր երկրի զարգացմանը: Ինչպե՞ս էր խոչընդոտում: Ղարաբաղի հա՞րցն էր մեղավոր, որ մեր իշխանությունները չէին կարողանում պայքարել երկրի ներսում տիրող համատարած անարդարությունների դեմ, չէին կարողանում նվազագույն կենսապայմաններ ապահովել բնակչության կեսից ավելիի համար, չէին կարողանում և չէին ուզում արդար ընտրություններ անցկացնել…

Մեր ժողովուրդը հիմնականում կարողացել է դիմակայել դրսից եկող անարդարություններին և պահել իր տեսակը: Բայց նաև ներսի անարդարություններին դիմակայելով և այդ տեսակը ուժեղ դարձնելով է, որ մենք կկարողանանք մեկընդմիշտ լուծել մեր խնդիրները:

Եվ նորից եմ ասում, թող էլի բազմաթիվ կազաններ լինեին, պետք էր պահպանել այդ «ստատուս-քվո» կոչվածն այնքան

ժամանակ, մինչև մենք այնքան ուժեղ լինեինք, որ կարողանայինք մեր ստորագրությունը դնել մեր ուզած փաստաթղթի տակ:

Մինչդեռ ինչպե՞ս կարող էինք մենք ուժեղ լինել, երբ դուք հեռանում էիք:

Ո՞րն էր պատճառը, որ մեր պետության նախագահն իրեն թույլ էր տալիս առանց ազգի կարծիքը հաշվի առնելու մերձեցման գնալ ազգի թշնամիների հետ: Ո՞րն էր պատճառը, որ նա իրեն թույլ էր տալիս մեր երկիր հրավիրել մի նախագահի, ում երկիրը կառուցվել է մեր քրտինքից և մեր արյունից պարարտացած հողի վրա: Ո՞րն էր պատճառը, որ մեր պետական այրերը քիչ էր մնում՝ երդվեին թշնամու արևով:

Այս հարցերի պատասխանը մեկն էր. դուք հեռանում էիք, և մեր ոտքերի տակից փախչում էր մեր հայրենիքը:

Փախուստ կամ թե ինչպես է անցնում մեր ապրելու ժամանակը

Իմ ամենասիրելի զբաղմունքն է մեքենայով ճամփորդելը: Միայն թե ես դա միշտ արել եմ միայնակ: Շատերին սա գուցե անմտություն թվա, բայց ես մեքենայով կտրել-անցել եմ Սիբիրը, Ամերիկան, ողջ Եվրոպան:

Միայն թե բոլորովին տարբեր է ընկերովի ճամփորդությունը, բոլորովին տարբեր էր այն խղճուկ հազար կիլոմետրը, որ մենք անցանք ընկերոջս հետ՝ Ուկրաինայում:

Այստեղ այնքան տարօրինակ էր մայրամուտը: Շուրջբոլորը լուսավոր էր և հանկարծ խավարում էր մի ակնթարթում, ու չէիր հասցնում հասկանալ, թե ինչպես դա տեղի ունեցավ: Կարծես ինչ-որ մեկն անջատում էր լույսերը:

Մինչև Յալթա շատ քիչ ճանապարհ էր մնացել, ես ինտենսիվորեն աջուձախ էի շարժում ղեկը, և մեր «Ֆոլքսվագեն»-ը մանևրում էր Ղրիմի անհարթ ոլորաններում:

Կիսաբաց պատուհանից ներս էր թափվում ծովի բուրմունքը: Ընկերս երգում էր ֆիդայիների մասին ինչ-որ երգ և ժամանակ առ ժամանակ կում անում «Պերցովկայի» 22ից:

Մենք ճանապարհին էինք առավոտվանից, կտրել էինք մի քանի հարյուր կիլոմետր և բավականաչափ ժամանակ ունեցել՝ խոսելու ու մտածելու տարբեր բաների մասին: Ուկրաինայի և Հայաստանի ճանապարհների մասին՝ բառի բուն և փոխաբերական իմաստով, Ուկրաինայի նարնջագույն հեղափոխության, անհեղափոխություն Հայաստանի և ընդհանրապես հեղափոխությունների մասին, ժողովրդավարության սլավոնական, հայկական մոդելների և ընդհանրապես ժողովրդավարության մասին, ուկրաինական, հայկական և ընդհանրապես ազգային-ազատագրական շարժումների

մասին, Սև ծովի ուկրաինական, հայկական ափերի և ընդհանրապես ծովերի մասին, ուկրաինական, հայկական և ընդհանրապես արվեստի և գրականության մասին, ուկրաինուհի, հայ և ընդհանրապես կանանց և էլի շատուշատ բաների մասին:

Ես արդեն առիթ ունեցել եմ ասելու, որ ընկերների հարցում կյանքն իմ հանդեպ շռայլ էր գտնվել: Ու նրանցից յուրաքանչյուրի մասին պատմելով՝ վստահաբար ասել եմ, որ անտարակույս, նա է լավագույնը:

Ո՛չ, լավագույնը Մուշեղն էր, որովհետև թերևս միայն նա էր մնացել աշխարհում, ումից ես չէի ամաչում սովորել: Սովորել, թե ինչպես է պետք ուժեղ ու միաժամանակ բարի լինել, սովորել թե ինչպես է պետք հանդուրժող ու անհանդուրժող լինել, սովորել, թե ինչպես է պետք սիրել հայրենիքն ու մարդկանց: Ահավասիկ, նա նստած էր կողքիս ու երգում էր ֆիդայական մի երգ ու խմում էր «Պերցովկայի» շշից: Մուշեղը ֆիդայի էր՝ ազատության ու արդարության հարատև պայքարի հասարակ մարտիկ և առաջնորդ: Ավելին ես նրա մասին չգիտեմ, միայն գիտեմ, որ նա շարունակելու էր մնալ այդ պայքարի նվիրյալ, իսկ այդ պայքարն այդպես էլ մնալու էր հարատև:

Մենք մի քանի օրով թողել էինք մեր հայրենիքն իր խնդիրներով, թողել էինք մեր խնդիրները հայրենիքում և եկել էինք այստեղ՝ համայն Ռուսիո ամենագեղատեսիլ զբոսավայրը: Ինչո՞ւ:

Երբեմն թվում է, թե բոլոր հարցերի պատասխանը, ավելին՝ լուծումը, «Պերցովկայի» այս շշում է: Խմի՛ր ու երգի՛ր, և պատասխանը՝ լուծումը կհառնի ինքնաբերաբար՝ մասամբ այս շշից, մասամբ՝ հոգուցդ:

Հետո անպայմանորեն կառաջանան նոր հարցեր, որոնք կպահանջեն նոր լուծումներ: Հետո նորից ու նորից: Արդյո՞ք կյանքը հարցերի և պատասխանների, խնդիրների և լուծումների հավերժական պայքարը չէ նաև: Ընդ որում, երկու դեպքում էլ պայքարը երկուստեք է: Կյանքը քեզ առաջադրում է խնդիրներ, դու փնտրում

ես լուծումները, դու տալիս ես կյանքին հարցեր, և այն փնտրում է պատասխանները:

Ես, օրինակ, հիմա փախել եմ թե՛ մեկից և թե՛ մյուսից. ես հիմա չունեմ ո՛չ հարցեր, ո՛չ պատասխաններ: Համոզված եմ՝ ընկերս նույնպես: Մենք հիմա Ուկրաինայի մութ ճանապարհներին երգում ենք մեր երգերը և խմում ենք մեր օղին: Եվ կռիվ ենք տալիս ճամփեքի հետ, երգի հետ, օղու հետ: Կռիվ ենք տալիս աշխարհի հետ, մեր հայրենիքի հետ, մարդու և նրա բնության հետ, մեր ստացված ու չստացված սերերի հետ: Մենք կռիվ ենք տալիս ինքներս մեզ հետ:

Ե՞րբ ենք մենք հասկանալու, որ զուգահեռաբար անցնում է մեր կյանքը: Որ անցնում է մեր ապրելու ժամանակը:

Մենք մոռանում ենք, որ մեր աշխատանքին, մեր հանգստին, մեր մտածելուն, մեր երազելուն, մեր պայքարելուն ու մեր հանձնվելուն, մեր ուրախություններին ու տխրություններին, մեր հաղթանակներին ու պարտություններին, մեր ձեռքբերումներին ու կորուստներին, մեր սիրելուն ու սեր փնտրելուն, մեր սիրելիներին փայփայելուն ու դավաճանելուն, մեր ոգևորությանն ու ձանձրույթին, մեր ջուր կամ գինի խմելուն, մեր հաց, բանջար, միս կամ ձկնկիթ ուտելուն, մեր հոդացավերին ու գլխացավերին, մեր միանման կամ տարբեր օրերին, մեր միապաղաղ ու բուռն գիշերներին, մեր տեղում նստելուն կամ ճամփորդելուն, մեր սպասելուն ու չսպասելուն, մեր կրկնելուն ու էլի կրկնելուն, մեր անցյալը հիշելուն կամ մոռանալու տալուն, մեր ապագային լավատեսորեն, հոռետեսորեն կամ փիլիսոփայորեն նայելուն, մեր սիրելի երգերը լսելուն, մեր Նարեկացի ու Էքզյուպերի կարդալուն, մեր ծառ տնկելուն ու ծաղիկ տրորելուն, մեր ծուռ նստելուն ու շիտակ խոսելուն, մեր քննադատելուն, ինքնաքննադատելուն ու քննադատվելուն, մեր թաքնվելուն ու հրապարակ դուրս գալուն, մեր եկեղեցի գնալուն, իսկ հետո մի լավ հարբելուն, մեր սկզբի մասին մտածելուն, մեր վերջին սպասելուն ու երբեմն այս ամենից մեր հոգնելուն զուգահեռ անցնում է մեր ապրելու ժամանակը…

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

Օգնության է գալիս քոթոթը

Մեր խմբագրությունն ինձ դիմավորեց այնպես, կարծես վերադարձել էի ոչ թե հնգօրյա հրաշալի ճամփորդությունից, այլ ասենք՝ աքսորից: Երկարուձիգ գրկախառնություններին հետևեցին երկար-բարակ պատմություններ՝ իմ բացակայության ընթացքում մեր աշխատավայրում ու երկրում տեղի ունեցած իրադարձությունների մասին, ինչից հետո Կոստոն բացարձակ անտարբեր նետեց.

– Հա՛, մոռացա ասել. քեզ ինչ-որ տարօրինակ մարդ էր հարցնում, ինչ-որ Վաղինակ:

Վաղինակ... Չնայած այս մի քանի օրերի ընթացքում ես ամեն կերպ փորձում էի չհիշել նրան, չմտածել նրա մասին, չեմ կարող ասել, թե դա ինձ մոտ ստացվում էր: Փորձում էի ինքս ինձ համոզել, որ անտարբեր եմ, բայց հիարկե դա այդպես չէր, նախ, որովհետև վիրավորվածությունս ծայրաստիճան էր, ու հետո էլ ինձ ներշնչել էի, որ ի սկզբանե հիմար բան էինք ձեռնարկել և այն ինչ եղավ, մեր, ավելի ճիշտ՝ իմ հիմարության հատուցումն էր: Բացի այդ, Յալթայում որոշում էի կայացրել այս վերջին ամիսները պարզապես ջնջել կենսագրությունիցս և Հայաստան վերադառնալով՝ կտրուկ փոխել կյանքս՝ անգամ չխմել, անգամ մոռանալ Կատյային: Կհաջողվեր դա, թե ոչ, փաստորեն անհասկանալի մնաց:

Վաղինակի անունը լսելով՝ չգիտեմ, թե հետս ինչ կատարվեց: Չեմ հիշում, թե ինչպես ինձ դուրս նետեցի խմբագրությունից ու ինչպես հասա Աղյան փողոց:

Չկայացած դավաճանը նստած էր հյուրասենյակի սեղանի մոտ: Մենակ: Սեղանին դրված էր «Զոլոտոյե կոլցո» օղու երեք լիտրանոց այն շշերից, որոնց հին խմողներն ասում են՝ «Թևդ մտնեմ», և որոնք, ըստ իս, վաղուց արդեն պետք է դուրս եկած

լինեին արտադրությունից: Շշի շրջակայքում թափթփված էին կոկոսի կրծած կեղևներ: Ես մոտեցա ու կանգնեցի Վաղինակի գլխավերևում:

– Դու ի՞նչ է՝ ո՞ղջ ես,– հարցրի:

– Դժվար է միանշանակ ասել,– պատասխանեց նա՝ առանց վրաս նայելու:

– Որտե՞ղ էիր:

– Ինչպե՞ս թե որտեղ… Բայց սպասի՛ր, նույն հարցը ես պետք է քեզ տամ:

Ես մի պահ հապաղեցի, ապա որոշեցի ուղիղ հարցնել.

– Մենք դադարեցնո՞ւմ ենք մեր… Չգիտեմ էլ ինչ ասել՝ մեր համագործակցությունը:

Այստեղ Վաղինակը բարձրացրեց գլուխը և նայեց աչքերիս:

– Ինչո՞ւ ես այդպես որոշել:

– Ուրիշ ի՞նչ պիտի որոշեմ, երբ դու անհետացել ես գործի կեսից:

Նա շարունակում էր նայել աչքերիս մեջ՝ կարծես փորձելով գնահատել՝ ես եմ ավելի խմած, թե ինքը:

– Եթե մի բան էլ դադարել էր այս ընթացքում, ապա դա եղել է իմ խմելը: Ահա լրացնում եմ բաց թողածը,– ցույց տվեց «Թևդ մտնեմ»-ը,– արդեն երրորդ օրն է: Բայց լյարդս ինչ-որ լավ չէ:

– Որտե՞ղ էիր,– կրկնեցի հարցս:

– Ուրիշ որտե՞ղ պիտի լինեի. Արաբստանում էի:

– Որտե՞ղ:

– Միացյալ Արաբական Էմիրություններ: Դուբայ: Աշխարհի ամենասարսափելի տեղերից մեկը: Պատկերացնո՞ւմ ես՝ խմիչք այնտեղ չեն վաճառում:

– Ի՞նչ էիր անում Դուբայում,– ապշած հարցրի ես:

– Ինչպե՞ս թե ինչ: Սպասիր, դու այդ օրը խմած էիր…,– նա որոշ ժամանակ մտածեց ապա շարունակեց,– դու իսկապե՞ս ոչինչ չես հիշում:

Ես անմեղսունակ հայացքով նայեցի նրան:

– Դե… ինչպես ասեմ,– կմկմացի:

– Փաստորեն չես հիշում: Քեզ հակացուցված է շամպայն խմելը, բարեկա՛մս: Չէ՞ որ մենք այդ օրը շամպայն էինք խմում:

– Պատմի՛ր,– անհամբեր ասացի ես:

– Գուցե խմես, հետո՞:

Առանց իմ պատասխանին սպասելու, Վաղինակը վեր կացավ, դանդաղ քայլեց դեպի խոհանոց և քիչ անց վերադարձավ՝ ձեռքին օղու մի բաժակ: Դրեց այն սեղանին, բայց չլցրեց: «Մի րոպե»՝ ասաց, կրկին դուրս եկավ հյուրասենյակից ու մտավ զուգարան:

– Դու իսկապե՞ս ոչինչ չես հիշում,– գոռաց նա այնտեղից:

Ես չպատասխանեցի:

– Պետք է ասեմ, որ դու այնքան էլ բարեխիղճ գործընկեր չես,– շարունակեց Վաղինակը,– այն, ինչը քեզ ձեռնտու չէ, դու չես հիշում: Ինչպես ասում էր Օստապ Իբրահիմովիչը…

Ես չիմացա, թե ինչ էր ասում Մեծ կոմբինատորը, որովհետև այդ պահին Վաղինակը քաշեց զուգարանակոնքի ջուրը (Աղայան փողոցի բնակարանի զուգարանում ևս դեռ խորհրդային ժամանակաշրջանն էր): Սպասեցի, մինչև նա վերադարձավ հյուրասենյակ և որևէ առարկություն չընդունող տոնով ասացի.

– Եթե դու վերջապես չբացատրես, թե ինչ է տեղի ունենում, ես կգնամ:

– Լավ, լավ,– տեղի տվեց նա,– մի՛ խեղդիր հեղափոխությունը՝ դեռ օրորոցում:

Հետո պատմեց: Պատմեց հետևյալը. 2012 թվականի հունվարի մեկի լույս երկուսի գիշերը, տասնմեկերորդ շիշ շամպայնը խմելուց հետո Վաղինակը զանգահարում է «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդին և շնորհավորում նրա Նոր տարին: Առաջնորդը սկզբում «տեղը չի բերում» Վաղինակին, մինչև որ նա հիշեցնում է շուրջ քսան տարի առաջվա որոշ մանրամասներ: Հետո ծավալվում է բավական ջերմ խոսակցություն: Զրուցակիցները հիշում են անցյալը, հուզվում, անգամ հեռակա կարգով խմում են

միմյանց կենացը: Եվ հենց այստեղ էլ Վաղինակը ցանկություն է հայտնում հյուր գնալ առաջնորդին և նվիրել նրան հիմալայական արջի մի քոթոթ: Սակայն պարզվում է, որ առաջնորդը թարսի պես Երևանում չէ, Դուբայում է և այնտեղ է մնալու ևս մի քանի օր: Վաղինակը հայտարարում է, որ այդ դեպքում ինքը կգնա Դուբայ: Երբ խոսակցությունն ավարտվում է, մենք տեղափոխվում ենք հյուրասենյակ և շարունակում ենք ոգևորված խմել: Ես, փոխանակ ետ պահեմ Վաղինակին անմիտ այս մտահաղացումն իրականացնելուց, հակառակը՝ հայտարարում եմ, որ ինքս էլ եմ գնում նրա հետ: Մենք սկսում ենք քննարկել, թե որտեղից կարելի է արջի քոթոթ ճարել: Այս ամենը բավական երկար է տևում, և արդյունքում ես հոգնում եմ ու անսպասելի քնում: Վաղինակը փորձում է արթնացնել ինձ, բայց՝ ապարդյուն: Ստիպված հավաքում է իրերը և դուրս գալիս տանից: Տաքսի է նստում և գնում օդանավակայան: Այստեղ նրան հիասթափություն է ապասվում, պարզվում է, որ դեպի Դուբայ առաջիկա ուղիղ չվերթը միայն երկու օրից է: Բայց Վաղինակն իրեն չի կորցնում. առաջին իսկ չվերթով մեկնում է Մոսկվա, այնտեղից էլ, ինչպես ինքն է ասում՝ Արաբստան: Այստեղ՝ հենց օդանավակայանում, Վաղինակը բախվում է «արաբստանյան ալկոհոլային տաբուին»: Բայց իսկական կինոն սկսվում է ավելի ուշ: Վաղինակը նախ գտնում է այն հյուրանոցը, ուր բնակվելիս է լինում «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդը և վերցնում մի սենյակ: Ապա խնդրում է իր մոտ կանչել մենեջերին: Սրան մեր բարեկամը հարցնում է, թե արդյոք ճի՞շտ է, որ այս հյուրանոցում «չէ» բառը չկա և դրական պատասխան ստանալով՝ պատվիրում է մի արջի քոթոթ ճարել: Պատվերը կատարելու համար, սակայն, հյուրանոցի ղեկավարությունից պահանջվում է բավական երկար ժամանակ՝ ուղիղ մեկ ժամ: Մեկ ժամ անց աղիողորմ ոռնոցով սենյակ է մտնում փոքրիկ ծուռթաթը՝ կաշեթոկը վզից կապված: Թե որքան է վճարում Վաղինակը կենդանու համար, չի հրապարակվում: Եվ դա կարևոր էլ չէ (մեր բարեկամը, ինչպես արդեն

նշվել է, ունի բավականաչափ խնայողություններ), կարևորն այն է, որ դրանից ևս տասնհինգ րոպե անց արջուկը հայտնվում է արդեն հյուրանոցի մեկ այլ համարում, որը պատկանում է «Ինքնըստինքյան» կուսակցության առաջնորդին: Ծուռթաթի հետևից համար է մտնում Վաղինակը: Հետևում են ջերմագույն գրկախառնություններ (ընդ որում՝ թե՛ մարդ-մարդ, թե՛ մարդ-կենդանի ձևաչափերով), որից հետո սկսվում է կերուխումը (արաբստանյան ալկոհոլային տաբուն հարգարաժան հայ օլիգարխի վրա բնականաբար չի տարածվում): Այն տևում է մեկ օր, մեկ գիշեր: Ավելի ստույգ, այդքան տևում է Վաղինակի համար, որովհետև հենց այդքան է պահանջվում մեր բարեկամից, որ նա խոստում կորզի հարգարժան օլիգարխից՝ ունենալ անցողիկ տեղ «Ինքնըստինքյան» կուսակցության համամասնական ցուցակում:

– Այնպես որ, ամեն ինչ կարգին է: Հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ,– եզրափակեց Վաղինակն իր պատմությունը,– միայն թե լյարդս է ինչ-որ սկսել անհանգստացնել:

Ամերիկապաշտները

Ես մի ծանոթ ունեի՝ Վիկտոր անունով, ում չէի տեսել մի հարյուր տարի: Հավանաբար նա Ամերիկայում էր: Դպրոցական տարիներին մենք միասին հաճախում էինք պատանի լրագրողների խմբակ: Վիկտորը չափազանց ակտիվ տիպ էր: Պարապմունքների ժամանակ նա անընդհատ հարցեր էր տալիս դասվարներին և հյուրերին, մտնում նրանց հետ բանավեճերի, հաճախ՝ վիճաբանությունների մեջ, իսկ պարապմունքներից հետո կպչում էր դասընկերներին՝ մեզ, ու պոկ չէր գալիս: Նրա խոսակցության հիմնական թեման Ամերիկան էր՝ այն ամենը, ինչ վերաբերում էր Ամերիկային: Նա միշտ հետը պարապմունքների էր բերում «Wahsington Post», «The Wall Street Journal», «New York Times» ամերիկյան թերթերի հին համարներ, և անկախ նրանից, թե ինչ թեմայով էր դասը, պայուսակից հանում էր թերթը և ասում՝ տեսե՛ք, թե ինչ են գրում այս մասին Ամերիկայում: Դեռ խորհրդային ժամանակներ էին, և Վիկտորի այս ամերիկյան քարոզչությունը կարող էր վտանգավոր լինել իր իսկ համար: Բարեբախտաբար, մեր խմբակի ղեկավարը կարգին կին էր և մատների արանքով էր նայում այս ամենին: Մի անգամ Վիկտորը հրավիրեց ինձ իրենց տուն, ավելի ճիշտ՝ իր սենյակ: Ես ապշած էի. սենյակի անկյունում նիկելապատ երկար ձողից կախված էր Միացյալ Նահանգների դրոշը, պատերին ամենուրեք փակցված էին Ամերիկան խորհրդանշող տարատեսակ պաստառներ, նկարներ, ամսագրերից պոկված էջեր, ես հաշվեցի ազատության արձանի ուղիղ տասնհինգ տարբեր չափերի մանրակերտներ, որոնք դրված էին հնարավոր բոլոր տեղերում: «Ահա, սա իմ Ամերիկան է»,– հպարտությամբ հայտարարեց Վիկտորը՝ գրպանից հանելով «Wrigle՛s» մաստակի տուփը: Նա խնամքով բացեց այն, դուրս քաշեց տուփի միջի հինգ ծամոններից մեկը և որոշ ժամանակ

մտածելուց հետո կիսեց այն ու կեսը մեկնեց ինձ: Ավելի ուշ նա պատմեց, որ բարեկամներ ունեն ԱՄՆ-ում, և իրենք էլ պատրաստվում են շուտով մեկնել, սպասում են, որ Մոսկվայում հաստատվի վիզան: Ահա այսպիսի ամերիկապաշտություն:

Հայերիս մեջ եղել են և կան բազմաթիվ ամերիկապաշտ մարդիկ: Վստահաբար, ուրիշ ազգերի մեջ էլ: Դրանում ոչ մի վատ բան չկա, անշուշտ, որովհետև ԱՄՆ-ը իսկապես հրաշալի պետություն է, և այն կարելի է նույնիսկ պաշտել: Բայցևայնպես, ինչո՞ւ ես հիշեցի Վիկտորին: Ես ուղղակի պատրաստվում եմ շարունակել իմ պատմությունը և անցնել հաջորդ քաղաքական կուսակցությանը, որի համամասնական ցուցակում դեռ պիտի տեղ գտներ Վաղինակը: Եվ այդ կուսակցությունը կոչվում էր «Ամերիկյան ժառանգություն»:

Այն ընդհանուր առմամբ դրական քաղաքական ուժ էր, և այնտեղ հավաքված էին հիմնականում դրական նկարագիր ունեցող մարդիկ: Մարդիկ, ովքեր անձնական շահը ստորադասում էին հասարակության շահից, ովքեր պատրաստ էին պայքարել և պայքարում էին հասարակության և մարդու իրավունքների համար, մարդիկ, ովքեր ունեին մաքուր կենսագրություն: Այս ամենի հետ սերտ աղերսներ ուներ, բնականաբար, նաև կուսակցության առաջնորդը:

Ուրեմն ինչո՞ւ ես չէի հավատում և չէի վստահում այս մարդկանց և այս քաղաքական ուժին:

Որովհետև այն ամենը, ինչ նրանք անում էին, հայերեն չէր: Որովհետև նրանք անգլերեն, ավելի ճիշտ «ամերիկերեն» էին մտածում և վարվում: Եվ ժողովրդի հետ էլ նրանք խոսում էին «ամերիկերեն»:

Նույնն է, թե զավակիդ դաստիարակես օտար լեզվով, որպեսզի նա լավ մարդ դառնա: Ցավոք, մենք ունեինք և ունեցել էինք այդ փորձը: Խորհրդային տարիներին շատ ծնողներ իրենց զավակներին դաստիարակում էին ռուսերեն, իսկ հիմա դա անում էին անգլերեն: Եվ սա պարզ քաղքենիություն չէր, և դառնում էր մտածողություն: Վտանգավոր մտածողություն, որովհետև այսպես

մտածող ծնողները համոզված էին, որ իրենք ոչ մի սխալ բան չէին անում: Ես միշտ ընդամենը մեկ բան եմ ասել նրանց. պատահական չէ, որ Աստված մարդկությունը բաժանեց ժողովուրդների: Աստված մարդկանց դրեց իրենց տեսակների մեջ, որպեսզի մարդկությունը միօրինակ չդառնա, քանզի հակադրություններն են պահպանում կյանքը, իսկ միօրինակությունը կործանում է այն: Իր տեսակից կտրվելով՝ մարդը գուցե դառնա ավելի խոհեմ, բայց երբեք չի դառնա ավելի լավը, որովհետև չի լինի ազատ, քանզի իրական ազատությունը հենց քո տեսակի մեջ մնալու և այդ տեսակը պահելու մեջ է:

Ինչևէ, վերադառնանք «Ամերիկյան ժառանգություն» կուսակցությանը, որը հայաստանյան քաղաքական ասպարեզում էր արդեն հինգ տարի և այդ հինգ տարիների ընթացքում հասցրել էր բավականաչափ հեղինակություն ձեռք բերել հասարակության ընդդիմադիր հատվածի առավել քաղաքակիրթ շերտի մոտ: Այդ հեղինակությունը պետք է որ նրան ապահովեր հինգ տոկոս, ճիշտ այնքան, որքան բավական էր խորհրդարանում արդեն իսկ ունեցած մանդատները պահելու համար: Այլ հարց էր, թե ինչի շնորհիվ էր քաղաքական այս ուժը ձեռք բերել վերոնշյալ հեղինակությունը: Գաղտնիքը բացառապես ամերիկյան մոդելի հասարակական-քաղաքական տեխնոլոգիաներն էին, որոնցով առաջնորդվում էր (եթե չասենք ուղղորդվում էր) կուսակցության առաջնորդը՝ ամերիկյան արժեքներ կրող մի մարդ, ով ծնվել, մեծացել և ուսում էր ստացել հենց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Նախ, նա կուսակցությունը համալրել էր չվարկաբեկված, բանիմաց, համարձակ և նվիրյալ մարդկանցով: Երկրորդ, նա կարողանում էր լավագույնս օգտագործել այդ մարդկանց՝ կուսակցության վարկանիշը բարձրացնելու նպատակով: Այդ մարդիկ մշտապես ճիշտ պահին ճիշտ վայրում էին: Իսկ ճիշտ պահն ու վայրը վերաբերում էին այնպիսի իրադարձությունների, որոնք հետագայում անպայմանորեն հասարակական հնչեղություն էին ստանալու: Մարդու իրավունքների

ոտնահարում, խոսքի ազատության սահմանափակում, էկոլոգիական խնդիրներ և այլն… Իհարկե, ողջունելի և գնահատելի է քաղաքական գործիչների մտահոգված լինելը նման խնդիրներով և նրանց ներգրավվածությունը ցանկացած աղմկահարույց իրադարձության, միայն թե ցավոք դա միտված էր և նպաստում էր ավելի շատ կուսակցության վարկանիշի բարձրացմանը, քան հենց բուն խնդիրների լուծմանը:

Մի խոսքով, ինչպես ասացի վերևում, ես առանձնապես չէի վստահում քաղաքական այս ուժին, ինչին նպաստում էր ևս մեկ հանգամանք, որի մասին մոռացա ասել. եթե հավատալու լինեինք բոլորովին վերջերս տարածված 22ուկներին (իսկ 22ուկները մեր իրականության մեջ երբեք անտեղի չէին լինում)՝ «Ամերիկյան ժառանգություն» կուսակցությունը խորհրդարանական ընտրությունների էր գնալու մեկ այլ կուսակցության հետ դաշինքով կամ միասնական ցուցակով: Այդ կուսակցությունը ստեղծվել էր բոլորովին վերջերս և կոչվում էր «Ամերիկյան դեմոկրատներ»: Կուսակցության կորիզն էին կազմում «Լևոն Մեծ» դաշինքից հեռացած մարդիկ, ովքեր, չնայած վերոնշյալ դաշինքի մյուս անդամների համեմատ՝ բավական առողջ քաղաքական դեմքեր էին, բայցևայնպես, այս միությունը, իմ մեջ գոնե, ավելի էր արմատականացնում էր այն կասկածը, որ սույն նախագիծը կազմված և ուղղորդված էր դրսից:

«Ամերիկյան ժառանգություն» և «Ամերիկյան դեմոկրատներ»: Իսկ ի՞նչ վատ բան կա ամերիկյանի մեջ՝ կհարցնեք դուք:

Իմ կողմից շատ հարգված մի վերլուծաբան (ոչ մեր կայքի) այդ օրերին մի հոդված էր գրել, որին ես կուզեի որոշ հղումներ անել:

Նա «Ամերիկյան ժառանգություն» կուսակցության առաջնորդի համեմատում էր հայտնի ֆիլմի հերոս Ֆորեսթ Գամփի հետ (բարու խորհրդանիշ) և գրում. «Եթե արևմտյան տեխնոլոգիան բարու ճանապարհն է, որի մասին խոսում է նա, ուրեմն թող մեր երկրում, որը տառապում է մաղձից ու տոտալ ատելությունից, հաղթի Գամփի փիլիսոփայությունը: Եթե ամերիկացիները ցանկանում են,

որ Հայաստանում կոտրվի իշխող կուսակցության մենաշնորհը, որպեսզի ձևավորվի ավելի հավասարակշռված կառավարություն, ուրեմն թող այդ փիլիսոփայությունը մեզանում հաղթի... Եթե Գամփի փիլիսոփայությունը մեզ ազատելու է օլիգարխների բռնությունից, ուրեմն թող այն հաղթի»: Այնուհետև վերլուծաբանը համեմատություն էր անցկացնում մեզանում առկա մեկ այլ երևույթի հետ, որը վերաբերում էր ռուսական ազդեցությանը և նկատում, որ՝ «Ռուսաստանը բացահայտ կերպով ներդնում է սեփական ազդեցության գործակալներին և սապոգով առաջ տանում իր քաղաքականությունը»: Վերլուծաբանը հավելում էր, որ երբ իշխանական կուսակցության նախընտրական ցուցակներում հայտնվում են մարդիկ, ովքեր քարոզում են ռուսական քաղաքականությունը և պնդում, որ Ռուսաստանը մեր տերն է, առանց որի մենք չենք կարող, սա չի գնահատվում որպես արտասահմանյան գործակալների գործողություններ, իսկ Արևմուտքի փորձը՝ բարելավել պետական կառավարման համակարգը, համարվում է միջամտություն մեր ներքին գործերին:

Կարծում եմ՝ կհամաձայնեք, որ չափազանց կուռ տրամաբանություն է: Եթե մենք վերջիվերջո ստիպված ենք ընտրություն կատարել, և այդ ընտրությունը ռուսական հոռի և արևմտյան քաղաքակիրթ մոտեցումների միջև է, ապա ինչո՞ւ կանգ չառնել վերջինի վրա:

Մենք ստիպված էինք ընտրություն կատարել՝ սա էր ամենամեծ ողբերգությունը: Բայց մենք նախևառաջ ազգ ենք, հետո նոր՝ հանրություն:

Եթե մեր հանրային խնդիրների լուծումը հնարավոր էր ոչ հեռու ապագայում, ապա նույնը չէր կարելի ասել մեր ազգային խնդիրների մասին: Այո, Արևմուտքը պատրաստ էր օգնել մեզ լուծել մեր հանրային խնդիրները: Պատրաստ էր օժանդակել մեզ նյութապես և, գուցե անշահախնդրորեն, փոխանցել մեզ իր ժողովրդավարական արժեքները: Սակայն ինչո՞ւ մենք համառորեն չէինք

1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31

ուզում հասկանալ, որ Արևմուտքը թքած ուներ այն ամենի վրա, ինչը կապված էր մեր ազգային գաղափարների և իղձերի հետ: Եվ Արևմուտքին ապավինելու դեպքում մենք ստիպված էինք լինելու խաչ քաշել մեր ազգային խնդիրների լուծման վրա՝ կորցնել Լեռնային Ղարաբաղը և մոռանալ Արևմտյան Հայաստանի մասին: Անշուշտ, մեր ազգային գաղափարների և իղձերի վրա մեծ հաշվով թքած ուներ նաև Ռուսաստանը: Բայցևայնպես, Արևմուտքի հետ պայքարում իր աշխարհաքաղաքական շահը հետապնդելով՝ Ռուսաստանին ձեռնտու էր մեր ազգային գաղափարների առկայությունը, և այս իրավիճակը շարունակելու էր անփոփոխ մնալ դեռ երկար ժամանակ: Անազնիվ էր, ինչ խոսք: Բայց մի՞թե անազնիվ չէր Արևմուտքը: Մի՞թե անազնիվ չէր Ամերիկան՝ մեզ առնչվող իր մտադրություններում: Թող չվիրավորվեն «անազնիվ» բառից: Հրաշալի ԱՄՆ պետությունը, որ խորհրդանշում և մարմնավորում է ազատությունը և որ ապաստան է տվել միլիոնավոր մեր հայրենակիցների, անշուշտ, չի արժանացել նրան, որ անազնիվ համարվեն մեզ վերաբերող իր մտադրությունները: Բայցևայնպես, այդ ազատության մասին էր հենց խոսքը: Ամերիկան շատ լավ գիտեր ազատության արժեքը: Մանավանդ այն ազատության, որը ձեռք է բերվել արյան գնով: Մենք ունեինք այդ ազատությունից մի փոքր կտոր և դրա համար ստիպված ենք եղել շատ արյուն թափել: Եվ նորից կթափեինք, եթե հարկ լիներ պաշտպանել այդ ազատությունը…

Աստվածները հավանաբար ցնդել են

Երեկոյան ժամը տասն էր, երբ բոլորը ցրվեցին՝ ինձ մենակ թողնելով խմբագրությունում: Շաբաթ օր էր, Պանդան պատրաստել էր իր հայտնի ճաշը, մենք խմել էինք մի լավ ու զվարճացել: Միջոցառմանը ես հրավիրել էի նաև Վաղինակին՝ ուզում էի վերջապես ծանոթացնել նրան մերոնց հետ: Հատկապես՝ Անդրեասի: Ես հիմարություն էի ունեցել՝ նրան պատմելու մեր ավանտյուրայի մասին: Անդրեասը, սակայն, չէր հավատացել իմ պատմությանը, ավելին՝ չէր հավատացել Վաղինակի գոյությանը: Որպեսզի ապացուցեի, դիմել էի Պանդային և պահանջել էի, որ նա հաստատի, որ Վաղինակը գոյություն ունի: Սրիկան չէր հաստատել: Ես նրան հիշեցրել էի, որ ինքը եղել է Վաղինակի տանը:

– Ինչ որ «բոմժերի» հիշում եմ,– ասել էր Պանդան,– բայց Վաղինակի՝ ոչ:

Ահա այսպիսի սրիկա: Մինչդեռ Անդրեասը Անդրեաս չէր լինի, եթե այսքանից հետո չխայթեր.

– «Բոմժերի» կուսակցությո՞ւն ես ստեղծում. ի՞նչ կա որ, լավ միտք է:

Վաղինակն իհարկե չեկավ: Իսկ Անդրեասի խայթոցը չէր կարող անհետևանք մնալ: Եվ ահա, երբ բոլորն արդեն գնացել էին, և ես մենակ էի մնացել խմբագրությունում, տեղի ունեցավ հետևյալը:

Իմ աշխատասենյակում էի (այն գտնվում է խմբագրության երկրորդ հարկում), երբ լսեցի, թե ինչպես է բացվում մուտքի դուռը: Մտածեցի՝ մերոնցից մեկն ինչ-որ բան է մոռացել և վերադարձել է: Մի քիչ սպասեցի, հետո տեսնելով, որ ոչ ոք չի բարձրանում վերև՝ ինքս իջա առաջին հարկ: Մամուլի ասուլիսների սրահում սեղաններից մեկի մոտ տեղավորվել էր մի մարդ. հանգիստ նստել էր իր համար՝ թևերը սեղանին, գլուխը՝ թևերին հենած և ամենայն

հավանականությամբ պատրաստվում էր քնել: «Բոմժ» էր իհարկե, բայց՝ ինձ անծանոթ: Կանգնեցի գլխավերևում և թփթփացրի ուսին: Թշվառը դանդաղ բարձրացրեց գլուխը և արհամարհանքով նայեց վրաս: Ես ոչինչ չասացի և սպասեցի մինչ ինքը կխոսի: Բայց «բոմժը» չէր պատրաստվում դա անել: Շարունակեց որոշ ժամանակ նայել վրաս, ապա կրկին գլուխը դրեց ձեռքերին՝ ընդունելով նախկին դիրքը:

– Հետո՞,– հանգիստ հարցրի ես:

Ի՞նչ պատասխաներ, որ լավ լիներ.

– Թո՛ղ քնեմ,– նետեց:

Ես փորձեցի կոպիտ չլինել:

– Հո դու փորձանք չե՞ս, ա՛յ մարդ, դու՛րս արի այստեղից:

– Ասացի՝ թո՛ղ քնեմ,– կրկնեց նա և շրջեց գլուխը հակառակ կողմը:

Այստեղ ես չդիմացա, և քաշեցի նրա թևքից:

Նա վերջապես բարձրացրեց գլուխը, բայց այս անգամ ինձ նայեց ոչ թե արհամարհական, այլ տխուր հայացքով:

– Դրսում ցուրտ է,– ասաց:

Ես խղճացի նրան: Բայց ոչինչ անել չէի կարող: Պետք է ինքս դուրս գայի և բնականաբար չէի կարող թողնել նրան խմբագրությունում: Մի պահ մտածեցի և ասացի.

– Տե՛ս, երկու տարբերակ կա. Կա՛մ ես հիմա քեզ ուժով հանում եմ այստեղից, կա՛մ տալիս եմ հազար դրամ, և դու կամավոր հեռանում ես:

«Բոմժը» մտածեց մի քիչ, ապա ասաց.

– Երկու: Երկու հազար դրամ:

Ահա և Անդրեասի «նավը»: Ինչևէ, ճանապարհեցի «բոմժին», փակեցի խմբագրությունը և ուղևորվեցի Վաղինակի մոտ: Ցուրտ էր իսկապես: Ես նայում էի Հյուսիսային պողոտայի սրճարանների ապակիներից ներս անհոգ ու տաքուկ տեղավորված մարդկանց և մտածում «բոմժի» մասին, ում դուրս արեցի փաստորեն:

Ի՞նչ պիտի աներ նա իր «հալալ քրտինքով» վաստակած այդ երկու հազար դրամով:

Վաղինակին գտա նավթի լամպի պատրույգը նորոգելիս: Երբ մտա հյուրասենյակ, նա ուշադրություն չդարձրեց վրաս և շարունակեց իր գործը:

– Ինչո՞ւ չեկար,– չոր նետեցի ես:

– Գործ էի անում,– նա ցույց տվեց լամպը:

Հասկացա, որ անիմաստ է այդ թեմայով խոսելը և ընդամենը ասացի:

– Իմ ընկերների համար դու դարձել ես Կառլսոնը:

– Այսի՞նքն:

– Կաս և չկաս: Ես Մանչուկի պես ամեն օր պատմում եմ քո մասին, բայց բոլորին թվում է, թե դու իմ երևակայության արդյունքն ես:

– Ուրեմն, թող այդպես էլ լինի: Թող ես մնամ քո երևակայության արդյունքը: Մանավանդ, որ այս ամենը շատ նման է դրան:

– Չե՞ս կարծում, որ մենք անցնում ենք բոլոր հնարավոր սահմանները:

– Դու ի՞նչը նկատի ունես,– Վաղինակը ավարտեց գործը և վառեց լամպը:

– Մեր ձեռնարկած գործն իհարկե:

– Ախ ա՛յդ…

Հետաքրքիր է, ուրիշ ի՞նչ կարող էի նկատի ունենալ: Չնայած հնարավոր է՝ «բոլոր սահմաններն անցնելը» նա վերագրել էր խմելուն:

– Ես երբեմն մտածում եմ՝ արդյո՞ք մենք սա իսկապես անում ենք հասարակության համար, թե՞, այնուամենայնիվ, ինքներս մեզ:

– Ի՞նչ տարբերություն: Մեզ համար անելով անգամ՝ մենք անում ենք հասարակության համար: Մեծ բան պետք չէ, ընդամենը պետք է հասկանալ, որ հասարակության շահը շատ ավելի կարևոր է, քան սեփականը: Նրանք, ովքեր դա գիտակցում են, չափազանց քիչ են: Սեփական շահով առաջնորդվողները հարյուրապատիկ ավելի են:

Այսինքն ստացվում է, որ մի մարդը հարյուր մարդու պետք է փորձի համոզել, որ սեփական շահն անհրաժեշտ է ստորադասել հասարակության շահին: Այն պարզ պատճառով, որ այդպես ավելի լավ կլինի հենց իր համար: Ես կարծում եմ՝ մենք հենց դա ենք անում:

Ես հարյուր տոկոսով համաձայն էի Վաղինակի հետ: Ակամա հիշեցի իմ ամենասիրելի ֆիլմերից մեկը, որը կոչվում է «Աստվածները հավանաբար ցնդել են», և հարցրի ապագա պատգամավորին՝ արդյոք նա տեսել է այն: Պարզվեց, որ ոչ:

«Աստվածները հավանաբար ցնդել են»՝ մի այսպիսի սիրուն ֆիլմ կա, որը պատմում է աշխարհի ամենաբարի մարդկանց՝ բուշմենների մասին: Այդ փոքրիկ ցեղախումբը չգիտեմ թե որքան ժամանակ ապրում է աֆրիկյան Կալահարի անապատում՝ բացարձակապես չգիտակցելով, թե ինչ բան են քաղաքակրթությունը և չարությունը: Անջուր Կալահարիում նրանք ջուր են հայթայթում բոլորի համար, որս են անում բոլորի համար, կացարան են սարքում բոլորի համար: Յուրաքանչյուրն ապրում է բոլորի հոգսերով և բոլորի ուրախություններով: Բուշմենները հասկացել են մի բան, որ եթե յուրաքանչյուրը մտածի միայն իր մասին և անտեսի մնացածին, աստվածները կսկսեն զայրանալ, և իրենց երջանիկ կյանքը շուտով կվերջանա, որովհետև, երբ լավ է մի քանիսի համար, իսկ մնացածի համար՝ վատ, դա արդար չէ: Եվ ահա մի օր երկպտուտակ մի օդանավ է անցնում բուշմենների երկնքով, և կոկակոլայի մի ապակե շիշ է ընկնում օդանավից: Փոքրիկ բուշմենները չեն հասկանում անծանոթ իրի իմաստը և օգտագործում են՝ ինչպես պատահի. մեկը՝ որպես մուրճ, մյուսը՝ որպես իլիկ, երրորդը՝ որպես սուլիչ: Եվ քանի որ շիշը լինում է միակը, մի օր պարզվում է, որ այն խիստ անհրաժեշտ է միաժամանակ ամենքին: Բոլորն ուզում են այն իրենց մոտ պահել և որքան հնարավոր է՝ երկար, անգամ՝ միշտ: Իսկ քանի որ այդպես չի կարող լինել, բուշմեններն իրենց պատմության մեջ առաջին անգամ վիճում են և նույնիսկ խփում իրար: Կոկակոլայի շիշը դառնում է իսկական պատուհաս: Կի անունով

բուշմենը որոշում է տանել շիշն աշխարհի ծայրը և նետել այն: Նա ճանապարհ է ընկնում ու շուտով դուրս գալիս Կալահարի անապատից ու հայտնվում մարդկանց երկրում: Այստեղ Կին բախվում է մարդկանց երկրում տիրող բարքերին, տեսնում, թե ինչպես են այստեղ մարդիկ ապրում, վարվում ու մտածում: Մի քանի շաբաթ անցկացնելով այստեղ՝ նա տեսնում է մարդկանց կյանքն իր բոլոր դրսևորումներով: «Հավանաբար աստվածները ցնդել են»,– եզրակացնում է Կին, նետում կոկա-կոլայի շիշն անդունդը՝ մտածելով, թե դա է աշխարհի ծայրը և վերադառնում իր ցեղախմբի մոտ...

– Իսկ ե՞րբ պետք է մեր Աստվածն էլ զայրանա, որ մենք էլ՝ մարդկանց երկրի բնակիչներս, ձերբազատվենք կոկա-կոլայի մեր շշերից: Եվ գիտակցենք վերջապես, որ հասարակության շահը պետք է գերադասել սեփական շահից: Որովհետև, երբ լավ է մի քանիսի համար, իսկ մնացածի համար՝ վատ, դա արդար չէ,– հարցրեցի Վաղինակին:

– Մի օր կլինի դա անպայման,– հանգիստ պատասխանեց նա:

– Լավ, թողնենք դա. ինչո՞ւ նորություն չկա մեր գործից:

– Ինքս եմ զարմանում...

Թե ինչպես մենք խցկվեցինք հերթական ցուցակը

Նորությունը եղավ երկու օր անց: Փետրվարի 13-ն էր, օրը՝ երկուշաբթի: Ես նոր էի եկել խմբագրություն և խմում էի իմ առավոտյան առաջին բաժակ սուրճը, երբ զանգեց «Իմ անունն է Ար-Ամ» հասարակական կազմակերպության գործավարուհին և ասաց.

– «Ամերիկյան ժառանգություն» կուսակցության առաջնորդն այսօր գալու է մեր գրասենյակ:

Բայց ես ձեզ չեմ պատմել դեռ այս ամենի նախապատմությունը:

Այն բանից հետո, երբ մենք առնվազն նախնական պայմանավորվածություն էինք ձեռք բերել առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած վեց ծանրակշիռ քաղաքական ուժերից չորսի հետ («Appendix vermiformis» կուսակցություն, «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինք, «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցություն, «Ինքնըստինքյան» կուսակցություն), մեզ մնացել էր նույնն անել ևս երկու՝ «Ամերիկյան ժառանգություն» և «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունների հետ:

Եթե հիշում եք, քաղաքական ուժերի ընտրության հերթականությունը մենք կազմում էինք հետևյալ սկզբունքով՝ բացասականից ոչ բացասական: Կամ, ինչպես պնդում էր Վաղինակը՝ չափազանց բացասականից քիչ բացասական: Ես, օրինակ, կուսակցություններին գնահատելիս առաջնորդվում էի պարզ տրամաբանությամբ՝ նրանց գաղափարների և ծրագրերի բացասական և դրական կողմերը, այդ գաղափարների և ծրագրերի իրագործման պրոցեսի բացասական և դրական միտումները և կուսակցական առաջնորդների դրական և բացասական նկարագրերը: Կամ ավելի պարզ՝ որքա՞ն բացասական բան է արել կամ կարող է անել տվյալ քաղաքական ուժն ազգի և պետության համար և՝ որքա՞ն դրական: Ըստ այդմ,

հաջորդ երկու կուսակցությունները, որոնց մենք առայժմ չէինք անդրադարձել, իմ պատկերացմամբ, մեծամասամբ տեղավորվում էին դրական նկարագրի մեջ: Սա ավելի էր բարդացնում մեր գործը: Մի բան է խաբել վատ մարդուն, այլ բան՝ լավ մարդուն: Խղճի խայթը չէ այնքան խնդիրը, որքան ձախողվելու վտանգը: Կամ գուցե՝ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Որովհետև հենց այդ խղճի խայթը կարող է մատնել քեզ:

Բայցևայնպես, մեր ավանտյուրան ամբողջական չէր լինի, եթե մենք դրա մեջ չներգրավեինք նաև հաջորդ երկու քաղաքական ուժերին: Նախ հերթը «Ամերիկյան ժառանգություն» կուսակցությանն էր: Ուրեմն ի՞նչ էր պետք անել, որպեսզի մենք խաբեինք նրանց՝ առանց խղճի խայթ զգալու, կամ խղճի խայթ զգալով՝ խաբեինք այնպես, որ չբռնվեինք:

Որո՞նք էին «Ամերիկյան Ժառանգություն» կուսակցության համամասնական ցուցակ տանող ճանապարհները: Այս հարցի պատասխանը գտնելու համար նախևառաջ անհրաժեշտ էր հասկանալ, թե ինչպես էր կազմվում այդ ցուցակը՝ կուսակցության առաջնորդը դա անում էր ինքնուրո՞ւյն, թե նրան այս հարցում «օգնում էր» արևմտյան երկրներից մեկի դեսպանատունը մեր պետությունում: Նկատի առնելով այն հանգամանքը, որ սույն քաղաքական ուժը որոշել էր ընտրությունների գնալ մեկ այլ նորաստեղծ, բոլորովին չճանաչված, սեփական ընտրազանգված և ռեսուրսներ չունեցող, բայց դրա փոխարեն ակնհայտորեն վերոնշյալ դեսպանատան աջակցությունն ունեցող քաղաքական ուժի հետ, կարելի էր ենթադրել, որ ցուցակն, այնուամենայնիվ, կազմվում էր առաջնորդի կողմից ոչ միանձնյա որոշմամբ: Բացի այդ, ուսումնասիրելով «Ամերիկյան ժառանգության» նախորդ համամասնական ցուցակը, որով նրանք գնացել էին նախորդ խորհրդարանական ընտրություններին, պարզ էր դառնում, որ ցուցակում այդ ժամանակվա դրությամբ հանրությանը քիչ հայտնի դեմքեր էին: Նրանք փաստորեն կարողացել էին այդ ցուցակով հավաքել հինգ տոկոսից ավելի, այսինքն՝ անցնել Ազգային ժողով, որտեղ էլ հինգ տարիների ընթացքում նախկինում

անհայտ այդ մարդիկ կարողացել էին իրենց այնպես դրսևորել, որ ոչ միայն լայն ճանաչում էին ձեռք բերել, այլև հարգանք էին վայելում հասարակության որոշ շրջանակներում: Ակնհայտ էր, որ այս ամենի շնորհիվ կուսակցությունն ի վիճակի էր ինքնուրույն հաղթահարել խորհրդարան անցնելու համար անհրաժեշտ հինգտոկոսանոց շեմը: Ոստի ի՞նչ կարիք կար ցուցակ մտցնել ուրիշ մարդկանց, ընդ որում՝ ոչ սեփական կուսակցությունից: Ի՞նչը պետք է ստիպեր կուսակցության առաջնորդին հրաժարվել փորձված թիմակիցներից և ապավինել նոր մարդկանց: Հարցի պատասխանը գոնե ինձ համար միանշանակ էր: Ցուցակը կազմվում էր մասամբ ԱՄՆ դեսպանատան անմիջական մասնակցությամբ, մասամբ հավանությամբ և մասամբ, այսպես ասած, աչքը շոյելով: Մեր պարագայում մենք պետք է նկատի ունենայինք վերջինը: Այսինքն՝ Վաղինակին պետք էր ներկայացնել մի կերպարով, որը, ցուցակում ընդգրկվելու դեպքում կշոյեր ամերիկացիների աչքը:

Այս ամենը ծանրութեթև անելուց հետո Վաղինակը և ես կանգ առանք հետևյալ տարբերակի վրա (վերջին շրջանում Վաղինակն այնպես էր ոգևորվել մեր խաղով, որ ոչ միայն առանց փնթփնթալու օգնում էր ինձ, այլև ինքն էր հաճախ հանդես գալիս նախաձեռնողի դերում): Նախ պետք էր շուտափույթ կերպով հիմնել մի հասարակական կազմակերպություն, որն իբր նպատակ ուներ Հայաստանում տարածել ամերիկյան արժեքները: Այնուհետև պետք էր այդ ՀԿ-ի անունից մեկ երկու ակցիաներ կազմակերպել, որոնք կստանային հասարակական հնչեղություն: Հետո արդեն պետք էր կազմակերպել ՀԿ-ի «նախագահ» Վաղինակի և «Ամերիկյան ժառանգություն» կուսակցության առաջնորդի հանդիպումը: Այս ամենի իրագործումը մեծ դժվարությունների հետ կապված չէր: Միակ խնդիրը ժամանակի սղությունն էր:

Նախ պետք էր համապատասխան անվանում գտնել մեր հասարակական կազմակերպության համար: Երկար մտորումներից հետո մենք գտանք այն: «Իմ անունն է Ար-Ամ»: Ահա այսպես

կոչեցինք մեր կազմակերպությունը: Գաղափարը Վաղինակինն էր: Կարծում եմ՝ դժվար չէ կռահել, թե որն էր սրա իմաստը: Սակայն բացի Սարոյանի հանդեպ մեր տածած սիրուց այն ուրիշ իմաստ էլ ուներ՝ կապված անվանման վերջին բառի հետ: Մենք դիտմամբ էինք այդ տեսքով գրել այն՝ «Ար-Ամ», ինչը կարելի էր բացել որպես «Արմենիա-Ամերիկա»:

ՀԿ-ի գրանցումը մեզանից երկար ժամանակ չխլեց. մենք դիմեցինք մի իրավաբանական ընկերության, որն իր վրա վերցրեց ամբողջ գործը: Այնուհետև մեկ ամսով մի ներկայանալի գրասենյակ վարձեցինք քաղաքի կենտրոնում, մեկ ամսով պայմանագրային աշխատանքի ընդունեցինք գեղեցկադեմ մի գործավարուհու, ստեղծեցինք մեր ինտերնետային կայքը, և սկսեցինք մտածել հիմնականի մասին, թե ինչ աղմկահարույց ակցիաներ կարելի է կազմակերպել, որ մեր ՀԿ-ի անունը սկսի շրջանառվել:

Այդ օրերին Երևանում տեղի էր ունենում մի իրադարձություն, որն իր վրա էր սևեռել ողջ հասարակության ուշադրությունը: Վտանգի տակ էր մայրաքաղաքի կենտրոնում գտնվող հերթական կանաչ տարածքներից մեկը:

Երևանը վաղուց արդեն վերածվել էր քաղաք-դամբարանի: Այսինքն՝ ինչպես երկիրն էր, այնպես էլ մայրաքաղաքը: Այնպիսի տպավորություն էր, որ անկախությունից ի վեր մեր բոլոր իշխանություններն առաջնորդվում էին հետևյալ սկզբունքով՝ եթե երկրի տարածքի իննսուն տոկոսը քարուքռա է, ապա ինչո՞ւ պիտի տարբերվի մայրաքաղաքը: Ոչ, սիրելի՛ ժողովուրդ, բերեք Երևանն էլ հնարավորինս կանաչազրկենք, որպեսզի պատկերն ամբողջական դառնա: Սկսեցին Երևանի անտառներից, անցան այգիներին, հիմա էլ հասել էին պուրակներին: Իշխանություններին, ինչ խոսք, հասկանալ կարելի էր: Երևանում հյուրանոցների, սրճարանների, ռեստորանների, «խանութ-բուտիկների» համար այլևս տեղ չէր մնացել: Հո օդում չէ՞ին կառուցելու: Ո՞րն է ավելի կարևոր՝ ծա՞ռը, թե՞ բիզնեսը: Մի այգի ավելի, մի այգի պակաս,

տասը պուրակ ավելի, տասը պուրակ պակաս, հազար ծառ ավելի, հազար ծառ պակաս…

Ծառ տնկելու փոխարեն ծառ կտրող իշխանությունը չի կարող լավը լինել: Սա արդեն հոգեբանական խնդիր է: Ինչպես ծառի հետ ես վարվում, այնպես էլ ընդունակ ես մարդու հետ վարվել: Իհարկե, ամեն և յուրաքանչյուր դեպքի մասին չէ խոսքը: Իհարկե կան և չեն կարող չլինել գերակայություններ: Միայն թե մեր դեպքում այդպես չէր: Մեր դեպքում գերակայությունը բացառապես բիզնեսն էր:

Բարեբախտաբար ժամանակները փոփոխվում էին և ժամանակների հետ փոփոխվում էր նաև հասարակության գիտակցության մակարդակը: Մարդիկ այլևս հասկանում էին, որ իրենք ունեն ոչ միայն շնչելու իրավունք, այլև չհամաձայնելու իրավունք, ըմբոստանալու իրավունք, պայքարելու իրավունք՝ անգամ ժամանակին այնքան երկրորդական թվացող հարցում, ինչպիսին ապօրինի ծառահատումն էր:

Ձևավորվել էին երիտասարդ բնապահպան-ակտիվիստների խմբեր, որոնք ժամանակ առ ժամանակ ոտքի էին ելնում անարդարությունների դեմ: Նման մի խումբ 2012-ի փետրվարին պայքարում էր Երևանի կենտրոնական պուրակներից մեկում ծավալվող ապօրինի շինարարության դեմ: Ստացվել էր այնպես, որ պայքարը բավականաչափ ընդլայնվել էր և դադարել էր սոսկ բնապահպանական լինելուց: Բնապահպան-ակտիվիստներին էին միացել հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ՝ հասարակ քաղաքացիներ, մտավորականներ, ընդդիմադիր քաղաքական գործիչներ: Ոմանք՝ անկեղծորեն, ոմանք՝ բան ու գործ չունենալուց, ոմանք էլ՝ սեփական շահը հետապնդելով: Բայց դա չէր կարևորը: Կարևորն այն էր, որ հասարակությունն այլևս հստակ գիտակցում էր, որ չի կարելի թույլ տալ իշխանություններին անել այն, ինչ ուզում են:

Դե ինչ, ժամանակն էր, որ բնապահպան-ակտիվիստներին միանար նաև «Իմ անունն է Ար-Ամ» հասարակական կազմակերպությունը:

Նախ մենք ՀԿ-ի անունից մի հայտարարություն պատրաստեցինք, որում մասնավորապես ասվում էր, որ Հայաստանի և ԱՄՆ-ի քաղաքացիական հասարակությունների մերձեցման ջատագով մեր կազմակերպությունը պատրաստ է իր ողջ ներուժը ներդնել՝ սատարելու ապօրինությունների դեմ պայքարող ակտիվիստներին: Ապա հոգ տարանք, որ այս հայտարարությունը հրապարակվի երևանյան բոլոր լրատվամիջոցներում: Հաջորդիվ պատրաստեցինք թռուցիկներ, որոնցում կոչ էինք անում իրենց քաղաքի մասին մտահոգ բոլոր քաղաքացիներին միանալ պուրակում պայքարող մարդկանց: Հավաքեցինք մեկ տասնյակ ուսանողների, որոնք ստանձնեցին թռուցիկների տարածումը քաղաքով մեկ: Այնուհետև սկսեցինք մեր ՀԿ-ի անունից մամուլում հրապարակել հոդվածներ, որոնք պատմում էին նախորդ դարի ամերիկյան և եվրոպական բնապահպանական շարժումների արձանագրած հաջողությունների մասին:

Այսքանը բավական էր, որ «Իմ անունն է Ար-Ամ» հասարակական կազմակերպության մասին սկսեին խոսել տարբեր հասարակական քաղաքական շրջանակներում, ինչ էլ հենց մեզ պետք էր: Կարելի էր այլևս ուղիներ փնտրել «Ամերիկյան ժառանգություն» կուսակցության առաջնորդի հետ Վաղինակի հանդիպման համար: Հաշվի առնելով իմ ունեցած լայն կապերն այս կուսակցության հետ՝ ես դարձյալ որոշեցի անել նույնը, ինչ արել էի նախկինում. ներկայանալ իբրև միջնորդ և կազմակերպել այդ դարակազմիկ հանդիպումը: Կապվեցի «Ամերիկյան ժառանգության» խորհրդարանական խմբակցության իմ ծանոթ պատգամավորներից մեկի հետ և ասացի նրան, որ իրենց առաջնորդի հետ ցանկանում է հանդիպել իմ բարեկամը՝ «Իմ անունն է Ար-Ամ» հասարակական կազմակերպության նախագահը, և ինձ խնդրել է միջնորդել: Պատգամավորը խոստացավ օգտակար լինել: Անցավ մեկ շաբաթ, բայց պատգամավորից ձայն-ծպտուն չկար: Ես նորից կապվեցի նրա հետ և հետաքրքրվեցի իմ խնդրանքի ընթացքով: Ասաց, որ փոխանցել է այն առաջնորդին: Հետո անցավ ևս մեկ

շաբաթ ու կրկին՝ ոչ մի նորություն: Եվ ահա ես արդեն հույսս կտրել էի, և մտածում էի այլ ճանապարհներ փնտրելու մասին, երբ եղավ անսպասելին:

Փետրվարի 13-ն էր, օրը՝ երկուշաբթի: Ես նոր էի եկել խմբագրություն և խմում էի իմ առավոտյան առաջին բաժակ սուրճը, երբ զանգեց «Իմ անունն է Ար-Ամ» հասարակական կազմակերպության գործավարուհին և ասաց.

– «Ամերիկյան Ժառանգություն» կուսակցության առաջնորդն այսօր գալու է մեր գրասենյակ:

Դե ինչ, դա նման էր նրան: Նա առհասարակ հետաքրքիր մարդ էր: Բայց է՛լ ավելի հետաքրքիր էր՝ իբրև քաղաքական գործիչ: Ամերիկացիները կասեին՝ «extraordinary»: Դա այն է, երբ, ասենք, քաղաքական գործիչը կարող է առավոտյան մի բան որոշել, այդ մասին հայտարարություն անել, ներկայացնել որոշման դրդապատճառները, բացատրել-համոզել, որ ճիշտն այդպես է, հետո երեկոյան փոխել որոշումը, այդ մասին հայտարարություն անել, ներկայացնել որոշումը փոփոխելու դրդապատճառները, բացատրելիամոզել, որ ճիշտն այդպես է, հետո հաջորդ առավոտյան… Մի խոսքով՝ հասկացաք:

«Ամերիկյան Ժառանգություն» կուսակցության առաջնորդը հայտնի էր նաև իր աննախադեպ, քաղաքական գործչին ամենևին ոչ բնորոշ ջերմությամբ, որը նա տածում էր հանդեպ իրեն պատահած ցանկացած քաղաքացու, անկախ նրանից ճանաչում էր վերջինին, թե ոչ: Թե որքանով էր նա անկեղծ, գիտեր միայն ինքը, բայց դա չէր կարևորը, կարևորն այն էր, որ նրան հաջողվել էր կոտրել մեր հասարակության մեջ արմատացած այն կարծրատիպը, որ երբ անծանոթ մարդիկ փողոցում ժպտում և բարևում են միմյանց, ուրեմն առնվազն խելագար են: Սա քիչ բան չէր, հավատացե՛ք: Եվ սա նրա քաղաքական գործունեության ամենամեծ նվաճումն էր գուցե:

Եվ ուրեմն, «Ամերիկյան Ժառանգություն» կուսակցության առաջնորդն ինքը եկավ մեր գրասենյակ՝ հանդիպելու Վաղինակին: Թե ինչպես անցավ հանդիպումը, ես չեմ կարող պատմել,

որովհետև ինքս ներկա չէի: Մեքենայիս մեջ նստած՝ սպասում էի հանդիպման ավարտին: Մեքենաս կայանել էի գրասենյակի առջև, որը մենք վարձել էինք կենտրոնի նորակառույց շենքերից մեկում, որտեղ գտնվում էին տարբեր ընկերությունների պատկանող տասնյակ ուրիշ գրասենյակներ:

Հանդիպումը բավական երկար տևեց՝ մոտ երկու ժամ: Ես ոչ մի կերպ չէի կարողանում հասկանալ, թե ինչ էին այդքան երկար խոսում նրանք: Արդեն սկսել էի անհանգստանալ, երբ շենքի ապակեպատ դռնից տեսա Վաղինակին և մեր հյուրին: Այստեղ էլ հասկացա ուշացման պատճառը: Քաղաքի կենտրոնում գտնվող գրասենյակային շենքը խիստ մարդաշատ էր, և մեր հյուրն իր պարտքն էր համարում բարևել և մի երկու խոսք փոխանակել բոլորի հետ:

Ինչևէ, երբ Վաղինակին վերջապես հաջողվեց ճանապարհել նրան, ես խնդրեցի ներկայացնել հանդիպման մանրամասները:

– Առանձնապես ոչինչ,– անտարբեր ասաց նա,– առաջարկում էր ինձ մտնել իրենց կուսակցություն:

– Ինչո՞ւ են քեզ բոլորն առաջարկում մտնել իրենց կուսակցություն:

Վաղինակը թոթվեց ուսերը.

– Ես քեզ ասել եմ բազմիցս. հարբած քաղաքականությունը ձախողման ենթակա չէ:

– Եվ ի՞նչ, համաձայնեցի՞ր,– շարունակեցի ես:

– Համաձայնեցի, բայց պայմանով, որ կուսակցություն մտնելով՝ մտնեմ նաև խորհրդարան:

– Իսկապե՞ս: Իսկ նա՞:

– Ժամանակ խնդրեց՝ մտածելու:

«Ամերիկյան ժառանգություն» կուսակցության առաջնորդին մտածելու և որոշում կայացնելու համար պահանջվեց ևս մեկ շաբաթ: Մեկ շաբաթից Վաղինակն իմացավ, որ այս քաղաքական ուժի համամասնական ցուցակում ինքը վեցերորդն է:

Թե ինչպես ես „դուրս պրծա„

Գարունը ես ստիպված եղա դիմավորել խմելով: Տարին նահանջ էր, փետրվարի 29-ի երեկոյան մեր կայքի վերջին լուրն ավետում էր, որ՝ «Երևանում այս գիշեր և մարտի 1-ին ժամանակ առ ժամանակ սպասվում են տեղումներ, գիշերը՝ ձնախառն անձրև, ցերեկը՝ անձրև: Հնարավոր է քամի 10-12մ/վրկ, գիշերային ժամերին՝ տեղ-տեղ մերկասառույց: Գիշերը կլինի 0 աստիճան, ցերեկ...» Բայց ցերեկն ինձ չէր հետաքրքրում:

Այնպես էի ուզում գարունը դիմավորել Կատյայի հետ: Թեկուզ ցուրտ, թեկուզ ձնախառն անձրև ու քամի, թեկուզ մերկասառույց՝ այնպես ուզում էի քայլել Կատյայի հետ, դրսում սպասել ժամը տասներկուսին ու արձանագրել օրացույցային գարնան գալուստը:

– Աստվա՛ծ իմ, որքան կարճ ժամանակ պահանջվեց, որպեսզի ես քեզանից քանդակեմ իմ ուզած արձանիկը,– ծիծաղելով ասաց Կատյան, երբ ես զանգահարեցի նրան և ներկայացրի մտահաղացումս:

– Այսի՞նքն,– չհասկացա ես:

– Երբ մենք նոր էինք ծանոթացել, դու կարծր գրանիտ էիր, ու ես հույս չունեի, որ քեզանից քանդակ կստացվի: Բայց արի ու տես, որ ինձ հաջողվեց: Դու պարում ես, ճոպանուղի ես նստում գիշերվա կեսին, հիմա էլ ուզում ես գարունը դիմավորել փողոցում:

– Գրանիտե ռոմա՞նտիկա:

– Գուցե: Միայն թե ես ստիպված եմ մերժել:

– Բայց...

– Ո՛չ մի բայց:

Ահա այսպես: Իր ոճով: Ի՞նչ էր մնում ինձ անել այսքանից հետո:

Իհարկե «դուրս պրծնել», ինչպես կասեր վայայներից մեկը: Ի՞նչ է դա նշանակում՝ կհետաքրքրվեք դուք: Կարճ ասած՝ դա այն է, երբ գիտակցաբար հասնում ես մի այնպիսի աստիճանի, որ ինքդ քեզ չհարգես: Հավանաբար դա հոգեվիճակ է: Կարևոր չէ՝ ուրախ ես, թե տխուր, հարուստ ես, թե աղքատ, նեղացած ես աշխարհից, թե խենթի պես սիրում ես աշխարհը, երբեմն լինում է այնպես, որ ուզում ես «դուրս պրծնել»: Լինում է չէ՞ այնպես, որ հոգնում ես ուրիշների սխալներն ուղղելուց, ուրիշների ձեռքը բռնելուց: Մի անգամ էլ ինքդ ես ուզում սխալվել, ինքդ ես ուզում, որ բռնեն ձեռքդ ու ասեն՝ այս ի՞նչ ես անում:

Բայց հանուն արդարության՝ պետք է ասել, որ միայն Կատյան չէր պատճառը: Այնքան բան էր կուտակվել այս մի քանի ամիսների ընթացքում… Կատյայի մերժումը հավանաբար ընդամենը վերջին կաթիլն էր:

Խոհանոցում կես շիշ ծիրանի օղի էր աչքովս ընկել: Այն դատարկելու համար ինձանից պահանջվեց կես ժամ: Հետո դուրս եկա խմբագրությունից, մտա մոտակա սրճարանը և կոնյակ պատվիրեցի: Խմեցի կարծեմ երեք բաժակ: Չորրորդ բաժակը պատվիրելով՝ սկսեցի նայել շուրջս և գնահատել իրավիճակը:

Անկյունի սեղանի մոտ նստած էին ուսանողական տարիքի երեք աղջիկներ և թեյ էին խմում: Հավանաբար ընկերուհիներ էին: Մյուս անկյունում նստած էին քիչ ավելի մեծ տարիքի երկու աղջիկներ, որ հավանաբար նույնպես ընկերուհիներ էին և խմում էին գարեջուր: Իսկ անմիջապես իմ կողքի սեղանի մոտ նստած էին ուրիշ երկուսը, որ ինչ-որ կոկտեյլ էին խմում: Սրանք ևս հավանաբար ընկերուհիներ էին:

Ես միշտ զարմացել եմ մի օրինաչափությունից. ընկերուհիները միշտ իրար նման են լինում: Ես նկատի ունեմ ոչ թե բնավորությունը, մտածողությունը, աշխարհայացքը, որովհետև այս ամենի նմանությունն ինքնին հասկանալի է, այլ ընդամենը տեսքը: Եթե ընկերուհիներից մեկը չափազանց գեղեցիկ է, ապա մյուսը կամ

մյուսները նույնպես չափազանց գեղեցիկ են, եթե պարզապես գեղեցիկ է, ապա մյուսներն էլ պարզապես գեղեցիկ են, եթե պակաս գեղեցիկ է, ապա մյուսները՝ նույնպես, և այսպես շարունակ: Գուցե հենց այս դեպքի համար է ասված՝ «նմանը զնմանին կգտանե»:

Ինչևէ, իմ կողքի սեղանի շուրջ նստածները, որ կոկտեյլ էին խմում, առանց երկմտելու կարելի է ասել՝ գեղեցկուհիներ էին: Եվ ինչպես հաճախ է լինում նման դեպքերում՝ շիկահեր և սևահեր: Նրանք խոսում ու ծիծաղում էին չափազանց բարձր՝ իրենց վրա կլանելով սրճարանի ողջ արական (ինչո՞ւ միայն) հասարակության ուշադրությունը:

Անկյունի սեղանի մոտ նստած երկու աղջիկները, որ գարեջուր էին խմում, այսպես ասենք՝ գրավիչ էին: Ի տարբերություն նախորդների, նրանք ավելի համեստ էին իրենց պահում՝ չէին աղմկում, չէին քրքջում, բայց անընդհատ հայացքներ էին նետում այս ու այն կողմ:

Ուսանողական տարիքի աղջիկները, որ նստած էին մյուս անկյունում և թեյ էին խմում, այսպես ասենք՝ գեղեցկուհիներ չէին: Նստած էին իրենց համար՝ մի տեսակ վախվորած, խոսում էին շշուկով, նայում էին բացառապես մեկը մյուսին ու խմում էին իրենց թեյը: Կարծում եմ՝ չափազանց երկար էին համոզել նախ՝ իրենք իրենց, ապա՝ մեկը մյուսին, որ երեկոյան ժամը տասին կարելի է ընկերուհիներով սրճարան գնալ, և ահա եկել էին:

Ես որոշ ժամանակ մտածեցի, ապա կանչեցի մատուցողին և խնդրեցի շամպայն ուղարկել նրանց: Մատուցողը՝ նիհարակազմ, բարձրահասակ ու կարմիր այտերով, վստահաբար անփորձ մի պատանի, նայեց աղջիկների կողմը և երեք անգամ ճշտեց՝ արդյո՞ք հենց այդ սեղանը նկատի ունեմ: Զարմանալու բան իհարկե կար: Միայն թե նրա կարծիքն ինձ չէր հետաքրքրում: Ես պնդեցի, որ գնա և կատարի իմ պատվերը, բայց այդքանով չսահմանափակվեցի. երբ մատուցողը՝ շամպայնով ու երկարոտն բաժակներով

սկուտեղը ձեռքին, մոտեցավ աղջիկներին և հայտարարեց՝ ձեզ հյուրասիրում են, ես էլ իմ հերթին մի օդային համբույր ուղարկեցի նրանց կողմը: Հետո արդեն պետք էր տեսնել, թե ինչ կատարվեց, նկարագրելը մի քիչ դժվար է: Ուսանողուհիներն այնպիսի արագությամբ վեր կացան, հագան վերարկուները և դուրս թռան սրճարանից, ասես երկրաշարժ եղավ:

Մատուցողը մի պահ սկուտեղը ձեռքին շվարած մնաց տեղում (նա դեռ չէր հասցրել շիշն ու բաժակները դնել սեղանին), ապա հարցական նայեց ինձ: Ես մատով ցույց տվեցի մյուս անկյունում նստած աղջիկների կողմը, ովքեր գարեջուր էին խմում: Բայց մատուցողը տարակուսեց և նախ մոտեցավ ինձ:

– Տա՛ր,– կոպտորեն կարգադրեցի ես:

– Ախր…,– նա ինչ որ բան էր ուզում ասել, բայց հավանաբար չհամարձակվեց և անվստահ քայլեց անկյունում նստած աղջիների կողմը: Նրանք անկասկած նկատել էին քիչ առաջ տեղի ունեցածը: Ես չլսեցի, թե ինչ ասացին աղջիկները, բայց մի բան պարզ էր. նրանց մերժումն ամենևին էլ քաղաքավարի չէր: Մատուցողը լուտանքների արժանացած զինվորի պես զգաստ կանգնել էր և լսում էր նրանց: Հետո, երբ նորից մոտեցավ ինձ, նկատեցի, որ նրա կարմիր այտերը է՛լ ավելի էին կարմրել:

– Ասացին, որ… Ասացին, որ ինքս խմեմ: Բայց ես չեմ կարող,– կմկմաց նա,– հիմա ի՞նչ անեմ այս շամպայնը:

Ես անվրդով ցույց տվեցի կողքի սեղանը, որի մոտ նստած էին գեղեցկուհիները՝ շիկահերն ու սևահերը, և կոկտեյլ էին խմում: Մատուցողը սուսուփուս ենթարկվեց և սկուտեղը ձեռքին՝ մոտեցավ աղջիկներին: Սրանք գուցե ընդունեին շամպայնը, եթե այն այդքան երկար ճամփորդություն կատարած չլիներ: Մինչդեռ հիմա մի այնպիսի հայացքով նայեցին ինձ, որի բովանդակությունն ավելի լավ է՝ բառերով չարտահայտեմ:

– Հետո՞,– ասաց աղջիկներից մեկը՝ շիկահերը:

– Առաջարկում եմ խմել գարնան կենացը,– ասացի ես:

Շիկահերը «ճպպացրեց» և ցուցադրաբար շրջեց գլուխը: Մինչ-դեռ սևահերը ժպտաց ինձ ու թեթևակի բարձրացրեց կոկտեյլի բաժակը: Քանի որ դեռ երիտասարդ տարիքում ես լրջորեն ուսումնասիրել էի շիկահերների և սևահերների ֆենոմենների տարբերությունը, ամենևին չզարմացա երկու ընկերուհիների հակասական այս պահվածքից: Բայց դիմեցի կրկին շիկահերին:

– Առաջարկում եմ ընդունել այս շամպայնը՝ իբրև գարնան ավետիս:

– Ուուո՜ւֆ…– ծոր տվեց նա:

– Մենք շամպայն չենք խմում,– ասաց սևահերը՝ շարունակելով ժպտալ,– կներեք:

Դե ինչ, ստիպված էի ընդունել պարտությունս: Վճարեցի խմածս չորս բաժակ կոնյակների և չխմված ու եռակի մերժված շամպայնի համար և դուրս եկա սրճարանից:

Ժամանակը ոչ մի կերպ չէր անցնում, մինչև կեսգիշեր դեռ երկու ժամից ավելի կար: Մտածում էի՝ ում հետ շարունակել խմելը: Պանդայի «հավեսը» չունեի, ծերուկ Անդրեասն այս ժամին տանից դուրս չէր գա, վասյաներն էլ գնացել էին Իռլանդիա՝ համերգների: Որոշեցի այցելել Վաղինակին:

Քայլելով գնացի Աղայան փողոց և մինչ վերև բարձրանալը մտա Վաղինակի շենքի առջևի խանութ-կրպակը՝ օղի գնելու: Վաճառողուհին հաշվարկ էր անում սեղանի ետևում: Նա բարձրացրեց գլուխը և ինձ տեսնելով՝ ասաց.

– «Աբսոլյուտ» չունեմ: Տե՛ս սառնարանում ինչ կա:

Բացեցի սառնարանը, և առաջին բանը, որ աչքովս ընկավ՝ շամպայնի շշերն էին: Չգիտեմ՝ նորից ինչ բզեզ խայթեց ինձ: Հավաքեցի բոլոր շշերը՝ կարծեմ չորս հատ, ու մոտեցա վաճառուղուհուն:

– Շամպայ՞ն,– զարմացավ նա,– ինչ որ առի՞թ կա:

– Իհարկե կա: Գարուն է գալիս:

Վաճառողուհին դադարեցրեց հաշվարկը և նայեց վրաս՝ չկարողանալով թաքցնել հուզմունքը: Նա կանանց այն տեսակից էր,

ովքեր ոչ մի կերպ չեն հաշտվում այն փաստի հետ, որ իրենց լավագույն տարիները մնացել են նախորդ հարյուրամյակում:

– Ինչպիսի՜ ռոմանտիզմ…,– ասաց նա և լայն ժպտաց ճակատին կախված վառ կարմիր մազափնջի տակից:

Ես էլ իմ հերթին ժպտացի նրան նույնքան լայն ժպիտով և լկտիաբար հարցրի:

– Գուցե միանա՞ք:

Նրա վառ կարմիր շուրթերը դողացին.

– Խանութը պիտի փակեմ…

Պետք էր տեսնել Վաղինակի դեմքը, երբ մենք մտանք ներս: Սենյակում վառվող միակ մոմի աղոտ լուսավորության տակ նա կարծես փորձում էր հասկանալ՝ արդյոք իր առջև տեսի՞լք է: Հետո, երբ համոզվեց, որ տիկինն, այնուամենայնիվ, իրական է, անդրադարձավ տոպրակի պարունակությանը՝ շամպայնի շշերին, որոնք ես անշտապ շարեցի սեղանին: Այս կրկնակի ցնցմանը նա ակնհայտորեն պատրաստ չէր, ողբալի հայացքով նայում էր դեմքիս և կարծես ասում՝ ո՞ր մեղքիս համար:

Հերթը տիկնոջն էր: Պետք է որ նա պակաս ցնցված չլիներ: Չեմ կարծում, որ նա սպասում էր հայտնվել մութ բնակարանում և դա դեռ բավական չէ, այնտեղ տեսնել մի երկրորդ տղամարդու: Ես մտածում էի, որ նա անմիջապես կշրջվի և կհեռանա, դեռ մի բան էլ կարող է պատմություն սարքել: Բայց տիկինը չարդարացրեց իմ սպասելիքները:

– Ինչպիսի՜ ռոմանտիզմ… Շամպայն՝ մոմի լույսի ներքո,– շշնջաց նա, ապա պայուսակից «բոնբոներկայի» մի տուփ հանեց և ավելացրեց,– սա էլ իմ կողմից:

Դե ինչ, երեկոն խոստանում էր հետաքրքիր լինել: Առաջին շիշը մենք դատարկեցինք պոեզիայի հնչյունների ներքո: Տիկինն արտասանում էր: Ընդ որում, սկզբում արտասանեց հայ դասականների ստեղծագործություններ, ապա անցավ սեփական գլուխգործոցներին: Երկրորդ շիշն ուղեկցվեց ռուսական ռոմանսներով, որոնք,

պետք է խոստովանել, վաճառողուհին բավական լավ էր երգում: Իսկ ահա երրորդ շիշը բացելուց հետո նա վեր կացավ և հայտարարեց.

– Առաջարկում եմ խմել «բրուդերշաֆտ»:

Ես առանց երկար-բարակ մտածելու վերցրի բաժակս և նույնպես ոտքի ելա: Բայց պարզվեց՝ ինձ հիասթափություն էր սպասվում: Տիկինն առանց իմ կողմը նայելու մոտեցավ Վաղինակին: Նրանք խմեցին՝ թևերը խաչաձևած, ապա հետևեց կարճատև, բայց պինդ մի շրթհամբույր:

Ես ստիպված էի այդ երեկոյի ընթացքում հերթական անգամ ընդունել պարտությունս: Բայց դա արեցի հնարավորինս արժանապատիվ ձևով: Դատարկեցի այն, ինչ մնացել էր շամպայնի 22ի տակ և հրաժեշտ տալով նորակազմիկ զույգին՝ քայլեցի դեպի դուռը:

Վաճառողուհին վազեց հետևիցս և կանգնեցրեց շեմի մոտ:

– Չե՞ս նեղանում, փոքրի՛կս, այնպես չէ՞:

Երբ դուրս եկա Վաղինակի շենքից և նայեցի ժամացույցին, գարնանից պակաս էր հինգ րոպե: Օդերևութաբանները չէին սխալվել. ցուրտ էր, քամի ու ձնախառն անձրև: Բայց արդեն հետաքրքիր չէին ո՛չ եղանակը, ո՛չ էլ անգամ գարունը: Մի սարսափելի դատարկություն էր համակել ինձ, և միակ բանը, որ ուզում էի, այն օղով լցնելն էր: Քայլերս անկախ ինձանից տարան «Ալեքսանդրի փաբ»: Նստեցի կանգնասեղանի մոտ և օղի պատվիրեցի: Խմեցի այնքան, մինչև հասկացա, որ այլևս չեմ կարող խմել: Այն, ինչ մնացել էր գիտակցությունիցս, մի խելացի բան հուշեց ինձ: Որ այսքանով կարելի է գործն ավարտված համարել. ես որոշել էի «դուրս պրծնել» և արդեն դա արել էի, ինչպես հարկն էր:

Բայց պարզվեց՝ օրվա կուլմինացիան դեռ առջևում էր: Արդեն ուզել էի հաշիվը և պատրաստվում էի վեր կենալ, երբ տեսա, թե ինչպես մի աղջիկ մտավ փաբ: Կանգնեց շեմին, զննեց սրահը, ապա դանդաղ մոտեցավ սեղաններից մեկին, հանեց մուշտակը և նստեց: Մինչ մատուցողուհին կմոտենար, նա պայուսակից հանեց երկու թանկարժեք բջջային հեռախոս, ոսկեջրած

պորտսիգար և մեքենայի բանալիներ ու այդ ամենը ցուցադրաբար դրեց սեղանին:

Ես որոշեցի ոտքս կախ գցել: Խնդրեցի բարմենին հաշվի փոխարեն մի բաժակ էլ լցնել և հայացքս բացահայտ կերպով ուղղեցի աղջկան: Շատ էլ լավիկն էր, բայց մի տեսակ արհեստական բան կար մեջը՝ տիկնիկային: Այդ տիպի աղջիկների տեսնելիս ես միշտ մտածում եմ՝ չափից ավելի գեղեցիկ են, որպեսզի իսկապես գեղեցիկ լինեն: Ի՞նչ էր անում նա այստեղ. այս փաբն ակնհայտորեն նրա տեղը չէր: Որոշեցի մոտենալ և պարզել: Գրեթե հարյուր տոկոսով համոզված էի (մանավանդ հաշվի առնելով երեկոյի անհաջողությունների շղթան), որ նա ինձ գրողի ծոցը կուղարկի: Երբ վեր կացա տեղիցս, զգացի, որ մի կերպ եմ ոտքի վրա կանգնում: Այնուամենայնիվ, չհապաղեցի, ճոճվելով քայլեցի աղջկա սեղանի մոտ և առանց թույլտվություն հարցնելու նստեցի:

Որքան էլ որ զարմանալի է, ինձ չվռնդեցին: Աղջիկը զարմացած նայեց դեմքիս, բայց ոչինչ չասաց: Փոխարենը խոսեցի ես. սկսեցի անտիկ Եգիպտոսից՝ կարծեմ նրան համեմատելով Նեֆերտիտիի հետ, հետո անցա միջնադար և հիշեցի Ջոկոնդային (վերջերս մի տեղ կարդացել էի, որ պատմաբանները փորձել են պարզել, թե ովքեր են ամենահանրահայտ կանայք, ում քաղաքակրթությունը ճանաչել է դեմքով, և առաջին հորիզոնականը կիսել են հենց այս երկուսը), չմոռացա Վերածննդի շրջանի մեկ այլ գեղեցկուհու՝ դեռատի Լուկրեցիա դի Բուտիին, ում մեր օրերում մենք կարող ենք տեսնել իր ամուսնու՝ Ֆիլիպո Լիպպիի կտավներում, Սիմոնետա Վեսպուչիին, ում այդքան հանճարեղ կերպով պատկերել է Բոտիչելլին իր «Գարունը» և «Վենեռայի ծնունդը» ստեղծագործություններում և իհարկե՝ Մարգարիտա Լուտիին, ում կերպարով է մեզ ներկայանում մեծն Ռաֆայելի Սիքստինյան Տիրամայրը: Այնուհետև անցա 19–20-րդ դարեր, հիշեցի իմպրեսիոնիստների պատկերած ամենատարբեր կանանց և հասել էի կարծեմ դերասանուհի Ժաննա Սամարային՝ Ռենուարի համանուն կտավից, երբ ինձ ընդհատեցին.

– Գուցե խմե՞նք, ես հյուրասիրում եմ:

Մերօրյա գեղեցկուհին չսպասեց պատասխանիս և կանչեց մատուցողին:

Խմեցինք մի քանի բաժակ, խոսեցինք էլի տարբեր բաներից (ընդ որում՝ կրկին հիմնական զեկուցողը ես էի), այնուհետև դուրս եկանք «Ալեքսանդրի փաբից»:

Հետո, ճիշտն ասած, լավ չեմ հիշում, թե ինչ եղավ: Ավելի ճիշտ, չեմ հիշում, թե ինչ եղավ գիշերը՝ ժամը մեկից մինչև առավոտյան տասն ընկած ժամանակահատվածում: Որովհետև այն ինչ եղավ ժամը տասին, համոզված եմ՝ կհիշեմ ամբողջ կյանքումս:

Ժամը տասին, երբ բացեցի աչքերս, նախ տեսա ճերմակ առաստաղը, որը թվում էր, թե ուր որ է՝ շուռ կգա գլխիս: Հետո անկախ ինձանից շրջվեցի դեպի ձախ ու տեսա պատուհանից ներս թափվող մարտյան արևը: Ժպտացի՝ դարձյալ անկախ ինձանից, մի քիչ նայեցի գարնան այդ առաջին արևին ու այդպես ժպտացող դեմքով էլ նորից շրջվեցի, այս անգամ՝ դեպի աջ: Եվ անմիջապես էլ ժպիտը սառեց դեմքիս: Կողքիս պառկած էր ահռելի չափերի մի շուն (ինչպես պարզեցի ավելի ուշ՝ սենբերնար):

Առաջին բանը, որ մտքովս անցավ՝ այն էր, որ երազ եմ տեսնում: Փակեցի աչքերս, բացեցի՝ շունը տեղում էր: Երկրորդ անգամ կրկնեցի նույնը, բայց էլի պատկերը չփոխվեց. կենդանին փռել էր իր հսկա շեկ մարմինը մահճակալին, վարդագույն, լոզոտ լեզուն կախել ցած ընկած ծնոտից և խոշոր, շեղ աչքերը հառել վրաս:

Ասել, որ շներից վախենում եմ ընդհանրապես, ճշմարիտ չի լինի, բայց ասել, որ չվախեցա այդ պահին՝ առավել ևս սուտ կլինի: Իսկ որ գլխավորն է, չգիտեի ինչ անել. անշարժ պառկե՞լ, բայց որքա՞ն, փորձել սիրաշահե՞լ շանը, ասենք՝ շոյել, իսկ եթե դա նրան դուր չգար, և շան որդին կծե՞ր, շան տեղ չդնել և վե՞ր կենալ, իսկ եթե նրան այստեղ պահա՞կ էին դրել… Բայց ո՞վ: Եվ ահա այստեղ միայն առաջացավ թվում է թե՝ ամենատրամաբանական հարցը, որն, ինչ խոսք, ի սկզբանե պիտի առաջանար. որտե՞ղ եմ:

Մտովի վերականգնեցի նախորդ օրվա իրադարձությունների շարանը, որն ընդհատվեց «Ալեքսանդրի փաբում»: Այդտեղից հետո չէի հիշում, թե ինչ էր եղել: Մի խոսքով, այդպես անշարժ պառկած, փորձում էի վերականգնել հիշողությունս, երբ բացվեց ննջասենյակի դուռը և սկուտեղը ձեռքին՝ ներս մտավ մի աղջիկ: Նրան տեսնելով՝ անմիջապես հիշեցի նախորդ օրվա գեղեցկուհուն: Հագին լոգարանի ճերմակ խալաթ էր, գլխին սրբիչ էր կապած, բայց միևնույն է՝ ճանաչեցի:

– Արթնացե՞լ ես,– հարցրեց նա մի տեսակ «մուննաթով»,– իսկ ես ուզում էի քեզ արթնացնել: Ահա, սուրճ եմ բերել, դու պետք է խմես ու գնաս, արդեն ուշ է:

– Որտե՞ղ եմ,– հարցրի ես՝ դեռևս չհամարձակվելով շարժվել:

– Ինչպե՞ս թե որտեղ. իմ տանը:

– Իսկ ի՞նչ է այստեղ անում այս շունը:

– Քեզ է հսկում:

– Իսկ ես ի՞նչ եմ քեզ արել, որ նա ինձ հսկում է:

– Հենց այն է, որ ոչի՛նչ չես արել…

Հեղափոխություն՝ առանց հեղափոխության

Եվ այսպես, մեր քառամսյա հարբեցողությունից հետո Հայաստանի ներքաղաքական կյանքը հասել էր մի հանգրվանի, որ այլևս պայթյունավտանգ էր: Ես ամենևին չեմ չափազանցնում: Ամեն պահի խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերը կարող էին հրապարակել իրենց համամասնական ցուցակները: Իսկ դրանցից հինգում («Appendix vermiformis» կուսակցություն, «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինք, «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցություն, «Ինքնըստինքյան» կուսակցություն, «Ամերիկյան ժառանգություն» կուսակցություն) պետք է լիներ Վաղինակի անունը: Եվ ոչ թե պարզապես ցուցակներում, այլ ցուցակների անցողիկ տեղերում: Իսկ դա, անշուշտ, նշանակում էր, որ կարճ ժամանակ անց լրագրողներն աղմուկ էին բարձրացնելու:

Բայցևայնպես, մեր խաղը դեռ ավարտված չէր: Մնացել էր մի քաղաքական ուժ, որի հետ մենք դեռևս ոչ մի պայմանավորվածություն չունեինք: Խոսքը «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցության մասին էր:

Քաղաքական այս ուժի հասցեին վատ բան ասել՝ կնշանակի գործ ունենալ անմիջապես Անդրեասի հետ: Կամ ավելի ճիշտ՝ Անդրեասի գրչի, որն անշուշտ ավելի, զորեղ է, քան նրա հաղթանդամ մարմինը: Բանն այն է, որ իմ ընկերը հենց այս կուսակցության անդամ էր: Բայցևայնպես, ես ստիպված էի հաշվի չառնել սույն հանգամանքը:

Իմ ու Վաղինակի ավանտյուրան ամբողջական չէր լինի, եթե մենք դրա մեջ չներքաշեինք բոլոր ծանրակշիռ քաղաքական ուժերին անխտիր, և ամբողջական չէր լինի այս պատմությունը, եթե այն շրջանցեր «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությանը: Այն ևս մեր ամոթալի իրականության մի մասն էր,

և եթե մենք որոշել էինք ծաղրել այդ իրականությունը, ապա պիտի անեինք դա՝ առանց բացառությունների:

Համոզված եմ՝ գրքի այս հատվածը կարդալով՝ Անդրեասը խոժոռելու է դեմքը, միայն թե ես նրան կասեմ հետևյալը՝ թող բավարարվի նրանով, որ այս պատմության մեջ ես իր կուսակցությանն անդրադառնում եմ վերջինը: Եթե հիշում եք, քաղաքական ուժերի հերթականությունը կազմելիս ես առաջնորդվում էի բացասականից դրական վերաբերմունքի սկզբունքով, և եթե «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությանը թողել եմ վերջում, ուրեմն այն համարում եմ պակաս բացասական կամ ավելի դրական (ով ինչպես կնախընտրի), քան նախորդները: Այնուամենայնիվ, չեմ կարող ասել, թե ես հիացած էի այս կուսակցության գործունեությամբ:

Թեմայից քիչ շեղվելով՝ մի պատմություն պատմեմ:

Ինսունականների կեսերին ես հաճախ էի լինում Ռուսաստանում: Փող աշխատելու նպատակով: Պետք է ասեմ, որ ավելի հաճախ դա ինձ մոտ չէր ստացվում, բայց դրա մասին չէ խոսքը: Մի անգամ Սամարայում մի հայ, ում հետ գործ էի անում, փողի փոխարեն ինձ տվել էր կոշիկի մի խմբաքանակ, կարծեմ՝ երկու հարյուր զույգ, որն իրացնելու համար գնացել էի քաղաքի տոնավաճառներից մեկը: Այստեղ էլ ծանոթացա մի մարդու հետ, ում կերպարը հետագայում ինձ մտորումների բազմաթիվ առիթներ տվեց:

Կոպիտ դիմագծերով, միջահասակ, թիկնեղ տղամարդ էր, անունը՝ Միեր: Նախկին բռնցքամարտիկ էր, որ հիմա բիզնեսով էր զբաղվում: Մի քանի առևտրի կետեր ուներ տոնավաճառում, որտեղ իրացնում էր տարբեր ապրանքներ, այդ թվում՝ հագուստ և կոշիկ: Հենց նրա հետ էլ գործ բռնեցի՝ մոտը թողնելով երկու հարյուր զույգ կոշիկը: Շաբաթական երկու-երեք անգամ գալիս էի այստեղ՝ վերցնելու վաճառված ապրանքի գումարը: Եվ ստացվեց այնպես, որ բավական ժամանակ էի անցկացնում տոնավաճառում և ականատես լինում հետաքրքիր բաների:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Ռուսաստանում ծաղկում էր մանր դրամաշորթությունը կամ ավելի ընկալելի՝ «ռեկետը», որն իր առավել վառ դրսևորումն էր գտնում հենց այդօրինակ առևտրի գոտիներում: Տարատեսակ հանցավոր խմբավորումներն առևտրականներից պահանջում էին պարբերաբար գումարներ վճարել, այլապես սպառնում էին դաժան հաշվեհարդարներով: Եվ մարդիկ գերադասում էին հնազանդվել ու հարմարվել այս վիճակին, հակառակ դեպքում ստիպված կլինեին առևտրի փոխարեն ամեն օր կռիվներ անել: Միակ բացառությունը Միերն էր, ով ոչ միայն ինքը չէր վճարում դրամաշորթներին, այլև այնպես էր արել, որ այդ արտոնությունից օգտվեն նաև տոնավաճառում աշխատող մյուս հայերը: Պատմում էին, որ նա անցել էր ամենահիսկական քաոսի միջով՝ բազմաթիվ կռիվներ, ծեծուջարդ, կրակոցներ: Ընդ որում, ողջ այդ ընթացքում շատ քիչ հայեր էին կանգնել նրա կողքին, և Միերը դիմակայել էր դրամաշորթներին գրեթե միայնակ: Բայց սա դեռ ամենը չէր: Ռուսական հանցավոր խմբավորումների հետ հարցերը կարգավորելուց հետո տարատեսակ մանրումեծ խնդիրներ էին առաջացել այլ ազգերի հետ՝ ազերի, չեչեն, տաջիկ, եղել էին բազմաթիվ բախումներ, որոնցից նույնպես Միերը դուրս էր եկել հաղթանակած:

Արդյունքում ստեղծվել էր մի իրավիճակ, որ հայերին տոնավաճառում ոչ մի ուրիշ ազգ չէր նեղացնում, բացի... հայերից:

Այստեղ անցկացրած մի քանի շաբաթների ընթացքում ես ինքս ականատես եղա, թե ինչպես են մեր հայրենակիցները խաբում իրար, շորթում ու գողանում իրարից, դավադրություններ կազմակերպում իրար դեմ:

Իսկ որտե՞ղ էր Միերը՝ կհարցնեք դուք: Եվ ձեր հարցը չափազանց տեղին կլինի:

Մի օր ես երկար զրուցեցի Միերի հետ: Նստել էինք տոնավաճառի խորովածանոցներից մեկում (բնականաբար, այն հայի էր պատկանում) և օղի էինք խմում: Նա այդպես էլ չկարողացավ բացատրել ոչ մի բան: Կամ գուցե ես չհասկացա...

Ինչո՞ւ հիշեցի այս պատմությունը: Որովհետև կարծում եմ՝ Միերի կերպարը ոչ հեռավոր աղերսներ ունի այն կուսակցության հետ, որի մասին շարունակելու եմ խոսել:

«Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը, իր ողջ կենսագրության ընթացքում իր ողջ ներուժն ուղղել էր արտաքին անարդարությունների դեմ պայքարին, մեծամասամբ հաջողել այդ պայքարում, բայց ահա ներքին պայքարում ոչ մի կերպ չէր կարողանում հասնել հաջողության: Եվ չէր կարողանում բացատրել, թե ինչու է այդպես: Կամ գուցե ես չէի հասկանում:

Լինելով ծայրահեղ գաղափարական, չափազանց սկզբունքային և բավականաչափ կազմակերպված կուսակցություն՝ քաղաքական այս ուժը վաղուց արդեն պետք է ոչ թե ընդամենը դերակատարություն ունենար Հայաստանի ներքաղաքական կյանքում, այլ լիներ առաջատար դիրքում՝ կա՛մ իշխանության, կա՛մ ընդդիմության: Մինչդեռ իրավիճակը բոլորովին այլ էր. թե՛ իշխանություն, թե՛ ընդդիմություն եղած ժամանակ կուսակցությունը երկրորդ դիրքերում էր:

Նորանկախ Հայաստանի ամբողջ պատմության մեջ չի եղել մի քաղաքական ուժ, որը կկարողանար, այսպես ասենք, տեր կանգնել ժողովրդին: Պատահական չէր, որ ես հիշեցի Միերի պատմությունը:

Մեր ժողովրդին միշտ էլ փորձել են խժռել օտարները: Եվ եթե մենք այսպես թե այնպես կարողացել ենք դիմակայել, դա եղել է միերների շնորհիվ: Բայց մեր ժողովուրդը, ցավոք, հակում ունի նաև ինքն իրեն խժռելու: Եվ այստեղ արդեն միերները չեն կարողանում ոչինչ անել: Չի եղել մի ուժ, որը տեր կկանգներ ժողովրդին և թույլ չէր տա, որ մենք ներսից քայքայվենք:

Այդ ուժը, կրկնեմ, կարող էր լինել «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը, միայն թե առայժմ դա այդպես չէր:

Այստեղ հասկանալիորեն առաջ է գալիս երկու հարց. նախ՝ ի՞նչ կարող էր անել այս քաղաքական ուժը, որ չէր անում: Եվ երկրորդ՝ ինչո՞ւ չէր անում:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31

Առաջին հարցին պատասխանելու համար, անհրաժեշտ է դիտարկել, թե ինչն էր խանգարում մեր երկրի բնականոն զարգացմանը: Կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ ովքեր էին խանգարում:

Սխալ կառավարումը, անշուշտ երկրի բնականոն զարգացման հիմնական խոչընդոտներից էր, բայց ոչ միակը: Կար ոչ պակաս կարևոր խոչընդոտ: Այդ խոչընդոտը մարդիկ էին: Մարդիկ, ովքեր երկիրը պատկերացնում էին իբրև գոմ, իսկ ժողովրդին՝ իբրև ոչխարների հոտ: Նրանք զբաղված էին բացառապես հոտը կթելով, ընդ որում դա անում էին ոչ սեփական, այլ իրենց կթվորների ձեռքերով: Բայց ամենամեծ ցավն այն էր, որ իշխանություններն այս մարդկանց ոչ միայն հանդուրժում էին, այլև քաջալերում: Իսկ այդպես էին վարվում, որովհետև կախում ունեին նրանցից: Նման պայմաններում այս չարիքի դեմ պայքարելու գործը պիտի ստանձներ այն ուժը, որն ուներ ոչ միայն բավարար կամք, այլև հաջողելու ներուժ:

Ահավասիկ, վերը տրված առաջին հարցի (ի՞նչ կարող էր անել «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը, որ չէր անում) պատասխանը:

Իսկ թե ինչու չէր անում՝ սա արդեն բոլորովին այլ հարց է:

Ես չգիտեմ, թե որքանով կհամաձայնի ինձ հետ իմ ընկեր Անդրեասը և մյուս «հեղափոխական» ընկերներս, բայց միևնույն է՝ պիտի ասեմ իմ կարծիքը:

2012 թվականի գարնանը, հավասարապես, ինչպես և դրան նախորդող տասնութ երկարուձիգ տարիներին (այն պահից, երբ զինադադարի փուլ մտավ ղարաբաղյան պատերազմը) «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը մի հոգեվիճակի մեջ էր, որը ժողովրդական լեզվով կոչվում է «մանթրաշ»: Սույն հոգեվիճակը ժամանակ առ ժամանակ փոխարինվում էր մեկ այլ՝ «մանթրաշից դուրս գալու» հոգեվիճակով, որին սակայն անմիջապես էլ հաջորդում էր «մանթրաշը»:

Հասկանալու համար, թե որոնք էին սրա պատճառները, արժե մի հպանցիկ հայացք նետել տարեգրությանը:

«Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը լրջագույն դերակատարություն ունեցավ պատերազմում տարած մեր հաղթանակում: Սակայն զինադադարին հետևեց հեղափոխականների առաջին «մանթրաշը»: Նրանք պատերազմից տուն վերադարձան քաղաքացիական հագուստով և քաղաքական գաղափարներով: Նրանք համարեցին, որ պարզապես կատարել են հայրենիքի հանդեպ իրենց պարտքը և իրենց արածի դիմաց ոչինչ չպահանջեցին հայրենիքից: Խնամքով թաքցրին զինվորական համազգեստներն ու ինքնաձիգները՝ պատրաստ անհրաժեշտ պահին նորից հանել դրանք, և լծվեցին քաղաքական պայքարի: Մինչդեռ նույնը չէր այլոց պարագայում: Մարտի դաշտից վերադարձած շատ զինվորներ և հրամանատարներ մտածեցին, որ հայրենիքը պարտք է իրենց և փոխհատուցում պահանջեցին: Իսկ օրվա իշխանությունները գտան այդ մարդկանց «ճիշտ» օգտագործելու ձևը: Արդյունքում կարճ ժամանակում Հայաստանում ձևավորվեցին ռազմաֆեոդալական կարգեր, և այստեղ էլ դրվեցին մեր պետության հետագա անարդար ընթացքի հիմքերը:

Հեղափոխականները փորձեցին դուրս գալ «մանթրաշից»՝ լծվելով անարդարությունների դեմ քաղաքական պայքարի: Ցավոք, դա երկար չտևեց: 1994-ի վերջին եղավ երկրորդ «մանթրաշը», որը ձգվեց շուրջ չորս տարի: Այս տարիները կուսակցությունն անցկացրեց կասեցված, հալածված և բանտարկված:

1998-ին Հայաստանում եղավ իշխանափոխություն, որում, սակայն, «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը դերակատարություն չունեցավ: Բայց հնարավորություն ստացավ ոչ միայն վերականգնել իր գործունեությունը, այլև պարզ դարձավ, որ նրա կասեցումը և այն մեղադրանքները, որոնց հիման վրա ձերբակալվել էին մի շարք կուսակցականներ, անհիմն էին: Դուրս գալով կասեցումից և բանտերից՝ կուսակցությունը փորձեց դուրս գալ նաև «մանթրաշից»:

Գուցե դա նրան հաջողվեր, եթե չլիներ մի հանգամանք. նախ կուսակցությանը տրվեցին կառավարական լծակներ, իսկ ավելի ուշ՝ այն մտավ կառավարական կոալիցիայի մեջ՝ ստանալով նախարարական մի քանի պորտֆելներ և բազմաթիվ մանրումիջին պաշտոններ: Ինչպես ասում են՝ «նավից՝ պարահանդես»: Հերթական «մանթրաշն» անխուսափելի էր:

Որոշ ժամանակ անց, համակերպվելով իշխանություն լինելու փաստին, կուսակցությունը կրկին հայտնվեց և մի քանի տարի անցկացրեց «մանթրաշից» դուրս գալու հոգեվիճակում:

Իսկ վերջին՝ չորրորդ, «մանթրաշը» կուսակցությանը համակեց 2009-ին, երբ ազգային խնդիրների վերաբերյալ նախագահի հետ ունեցած տարաձայնությունների պատճառով, ստիպված եղավ դուրս գալ կոալիցիայից և դառնալ ընդդիմություն: «Մանթրաշային» այս վիճակը շարունակվում էր մինչ օրս:

Բայց կուսակցության ամենամեծ խնդիրն այլ էր: Հայրենիքում ծավալած գործունեության ողջ ընթացքում այն այդպես էլ չկարողացավ շահել ժողովրդի լայն զանգվածների վստահությունը:

Մի անգամ «Ինքըստինքյան» կուսակցության առաջնորդը (արջերի սիրահարը) «հեղափոխականների» հասցեին ասաց մի բան, որը, կարծում եմ, չափազանց դիպուկ էր. ««Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունը միշտ ունի 10-15 տոկոս. դրանք պապենական ձայներ են»:

Հիրավի, քաղաքական այս ուժը այդպես էլ մնաց ժողովրդի այն փոքր մասի հույսին (ես կարծում եմ, որ վերոնշյալ տոկոսներն առնվազն կրկնակի չափազանցված են), որն այսպես թե այնպես տոգորված է ազգային գաղափարներով, որն այսպես թե այնպես հպարտ է, արդարամիտ և ընդվզող: Ես իհարկե չեմ ասում, որ մյուսների մեջ չկան այդպիսիք, միայն թե կան մարդիկ, ում մեջ պետք է արթնացնել գիտակցությունը և կան մարդիկ, ում մոտ դա արյան մեջ է:

Հեղափոխականները, սակայն, ոչ մի կերպ չկարողացան հասանելի և հասկանալի լինել մյուսներին…

Բոլոր դեպքերում հարցերը լուծում է փողը

Ես շատ երկար մտածեցի, թե ինչ կարելի է անել՝ Վաղինակին «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցության ցուցակ մտցնելու համար: Բայց այդպես էլ որևէ խելքը գլխին բան չգտա:

Անգամ մի տեսակ վիրավորական էր. մյուս կուսակցությունների դեպքում ամեն ինչ ընթացավ այդքան սահուն, իսկ ահա հասնելով «հեղափոխականներին»՝ մենք ուղղակիորեն կանգնել էինք փակուղու առջև: Փաստորեն, «հին ընկերները» լավ էլ դավաճանում են:

Արդեն համարյա հիասթափվել էի և անգամ մտածում էի վարվել շատ պարզ՝ առանց այլևայլությունների: Մտածում էի բացեիբաց խնդրել «հեղափոխականներին» Վաղինակին ընդգրկել իրենց ցուցակում՝ հետագայում ինքնաբացարկ հայտնելու պայմանով: Ի՞նչ կա որ. լինելով գաղափարական և կարևորը՝ «ընկերական» կուսակցություն՝ նրանք կարող էին և չմերժել ընկերոջ խնդրանքը:

Բայց անմիջապես էլ հրաժարվեցի այդ մտքից:

Ուրիշ տարբերակ չէր մնում, քան ապավինել Վաղինակին:

Այն պատմական գիշերվանից հետո (իմ «դուրս պրծնելու») ես նրան չէի տեսել: Անցել էր երեք օր: Պետք էր այցելել պատգամավորության՝ դեռևս հնգակի թեկնածուին:

Աղյան փողոց հասնելով՝ նախ մտա փոքրիկ խանութը՝ օղի գնելու և մեր սիրելի վաճառողուհուն տեսնելու: Սակայն նա այնտեղ չէր: Նրա փոխարեն վաճառասեղանի ետևում կանգնած էր մի երիտասարդ աղջիկ: Սառնարանից վերցրի մի շիշ օղի և մոտեցա նրան:

– Որտե՞ղ է տիկին...– ես փորձեցի հիշել նրա անունը, բայց ապարդյուն:

– Տիկին Գայանե՞ն,– օգնեց ինձ վաճառողուհին,– ես նրա դուստրն եմ:

– Իսկապե՞ս,– զարմացա ես:

– Ճիշտ է, ես այնքան էլ նման չեմ մորս,– «խունջիկ-մունջիկ» ասաց աղջիկը՝ ձեռքով հարդարելով մազերը:

– Իսկ որտե՞ղ է մայրդ,– հարցրի:

– Հիվանդացել է: Երեք օր առաջ շատ ուժեղ թունավորվել էր: Բայց հիմա արդեն դեպի լավն է գնում:

Ես վճարեցի օղու համար և դուրս եկա:

Վաղինակը նստած էր պատշգամբում: Այստեղ էր տեղափոխել հյուրասենյակի փոքրիկ սեղանը և մի կոտրված բազկաթոռ, թիկնել էր դրա վրա և ոտքը դրել պատշգամբի բազրիքին:

Ես տոպրակի միջից հանեցի «Աբսոլյուտի» շիշը:

– Ի՞նչ ես արել խեղճ կնոջը,– հարցրի:

– Ի՞նչ կին:

– Գայանեին:

– Ի՞նչ Գայանե,– Վաղինակը մի պահ մտածեց, ապա հավանաբար մտաբերեց,– հա, վաճառողուհո՞ւն... Չգիտեմ, քո գնալուց հետ ես քնեցի, իսկ երբ արթնացա, նա արդեն չկար: Իսկ ի՞նչ է պատահել:

– Առանձնապես ոչինչ: Նա թունավորվել է: Բայց մի՛ անհանգստացիր, հիմա դեպի լավն է գնում: Միայն թե ի տարբերություն ինձ՝ քո բախտը բերել է:

– Ինչո՞ւ է իմ բախտը բերել:

– Որովհետև դու արթնացել ես քո տանը և գլխավորը՝ մենակ:

Ես պատմեցի, թե ինչպես էի նույն առավոտյան արթնացել շան կողքին: Ծիծաղեցինք մի քիչ, այնուհետև անցա գլխավոր խնդրին:

– Ինչպե՞ս ես վերաբերվում հեղափոխականներին,– հարցրի:

– Շատ զգույշ,– առանց մտածելու պատասխանեց Վաղինակը:

– Իսկ ավելի լուրջ,– պնդեցի ես:

– Ավելի լավ է՝ արի խմենք,– Վաղինակը փորձեց «ցրել» խոսակցությունը:

Բայց ես գործնականորեն էի տրամադրված:

– Խոստանում եմ մինչև լույս հետդ խմել, եթե մենք գտնենք ինձ հուզող հարցի պատասխանը:

– Ո՞րն է քեզ հուզող հարցը. թե ինչպես եմ ես վերաբերվում հեղափոխականների՞ն:

– Ո՛չ: Թե ինչպես քեզ մտցնել հեղափոխականների ցուցակ:

– Ախ, դու նկատի ունես կուսակցությա՛նը:

– Վերջապես կռահեցիր:

Վաղինակը իջեցրեց ոտքերը պատշգամբի բազրիքից և չգիտես ինչու զգաստ նստեց:

– Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք հանգիստ թողնենք նրանց: Ճիշտն ասած՝ դա միակ քաղաքական ուժն է, ում ես չէի ուզի խաբել,– ասաց նա:

– Հնարավոր է, որ ես էլ եմ քեզ պես մտածում: Բայց մենք մինչև վերջ ազնիվ չենք լինի, եթե տուրք տանք համակրանքներին: Բացի այդ, ես կարծում եմ, որ քաղաքական այդ ուժը, որին մենք ուզում ենք խնայել, այս իրականության մի մասն է, և անպայմանորեն ունի մեղքի իր բաժինը, որ մենք հիմա ապրում ենք նման իրականությունում:

– Եվ ո՞րն է նրանց մեղքը:

– Որ մինչև հիմա հեղափոխություն չեն արել:

Վաղինակը կտրուկ շարժումով վեր կացավ տեղից և սեղանի վրայից վերցնելով իր դատարկ բաժակը՝ գնաց ներս: Նկատեցի, որ նա նիհարել էր: Այսինքն ուրիշ ի՞նչ պիտի լիներ: Ես անդրադարձա, որ այս ողջ ընթացքում նրան երբևէ չեմ տեսել մարդավարի սնվելիս: Առհասարակ, Վաղինակի «զապոյը» շատ տարօրինակ էր ընթանում և մեծ հաշվով չէր համապատասխանում դասական «զապոյի» չափանիշներին: Դասական «զապոյը» տատանումներ չի ընդունում. քչից շատ, այնուհետև՝ աստիճանական նվազեցում: Մինչդեռ մեր բարեկամը խմում էր այնքան անկանոն, որ անգամ հարգարժան «բոմժերը» չգիտեին, թե որ օրը որքան լիքը և որքան դատարկ շշեր կարող են ակնկալել: Բացի այդ, «զապոյի» մեջ

գտնվող մարդու միտքը սովորաբար գնալով խամրում է, և անգամ գալիս է մի հանգրվան, երբ մարդը առաջնորդվում է զուտ բնազդով: Մինչդեռ Վաղինակի պարագայում այս օրինաչափությունը ամենևին չէր գործում: Իհարկե, ժամանակ առ ժամանակ լինում էին մթագնումներ, բայց նա շատ արագ կարողանում էր հավաքել իրեն, և նրա միտքը երբեմն այնպես էր փայլատակում, որ անհնար էր պատկերացնել, թե մարդը ամիսներ շարունակ «զապոյի» մեջ է: Եվ հիմա, առավել քան երբևէ, ինձ անհրաժեշտ էր մեր բարեկամի մի վերջին մտքի փայլատակումը:

– Իսկ ի՞նչ կլինի, եթե մենք նրանց էլ փող առաջարկենք,– հարցրեց Վաղինակը՝ լիքը բաժակը ձեռքին վերադառնալով խոհանոցից:

Ես իհարկե մտածել էի այդ մասին: Որքան էլ որ դա ամենապարզունակ տարբերակը լիներ, միևնույն է՝ մենք այլընտրանք չունեինք:

– Միայն թե դա պետք է անես դու: Այստեղ ես լվանում եմ ձեռքերս,– հայտարարեցի անամոթաբար:

Վաղինակը չառարկեց: Ինձ մնում էր միայն կատարել խոստումս և խմել նրա հետ մինչև լույս: Չէ՞ որ մենք գտել էինք հարցի պատասխանը: Թքած, թե ինչ կլիներ հետո: Թքած, թե հեղափոխականները մեզ չէին մերժի:

Կենացներ

Հեղափոխականները չմերժեցին: Նրանք համաձայնեցին Վաղինակին ընդգրկել իրենց համամասնական ցուցակի առաջին տասնյակում, փոխարենը Վաղինակը խոստացավ ֆինանսավորել նրանց նախընտրական քարոզարշավը՝ դրա մեկնարկից անմիջապես հետո կուսակցության հաշվին փոխանցելով մեկ միլիոն դոլար:

Եվ այսպես՝ ժամանակն էր ամփոփելու մեր ավանտյուրան:

Մարտի 21-ն էր, օրը՝ չորեքշաբթի: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների համամասնական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնելու վերջնաժամկետին մնացել էր մեկ օր: Երեկվա դրությամբ հիմնական քաղաքական ուժերից որևէ մեկը դա չէր արել և ըստ իմ ունեցած ստույգ տեղեկությունների՝ անելու էր այդ օրը: Բայցևայնպես, նրանց հետ ձեռք բերած մեր պայմանավորվածությունները հստակ էին և վերջնական: Ըստ այդմ՝ Վաղինակին անցողիկ տեղեր էին խոստացված «Appendix vermiformis», «Իշխանություն՝ ամեն գնով», «Ինքնըստինքյան», «Ամերիկյան ժառանգություն», «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցությունների և «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի համամասնական ցուցակներում: Բոլոր այս քաղաքական ուժերը ժամանակին Վաղինակից պահանջել, ստացել և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին էին ներկայացրել պատգամավորության թեկնածուի գրանցման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում վերջին հինգ տարիներին մշտական բնակության վերաբերյալ տեղեկանք, որը ստանալ մեզ օգնել էր Պողոսը՝ մեր հովանավորը «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցությունից:

Ինչ վերաբերում էր մեր հետագա անելիքներին, ապա ես պատկերացնում էի դրանք այսպես. առաջին հերթին Վաղինակն ամսի 22-ի համար օդանավի տոմս էր գնում: Նույն այդ օրը, երբ ԿԸՀ-ն հրապարակում էր Ազգային ժողովի ընտրություններին առաջադրված կուսակցությունների համամասնական ցուցակները, Վաղինակն ինքնաբացարկի դիմում էր գրում և հանում էր իր անունը բոլոր ցուցակներից: Այնուհետև նա կապվում էր յուրաքանչյուր քաղաքական ուժը ներկայացնող իր հետ անմիջական պայմանավորվածություն ձեռք բերած մարդկանց հետ և գործարքը չեղյալ էր հայտարարում՝ հետևյալ պատճառաբանությամբ. քանի որ իր անունն իր կամքից անկախ տեղ է գտել այլ կուսակցությունների ցուցակներում ևս, ինքը մեծահոգաբար գնում է այդ քայլին, որպեսզի որևէ մեկը սկանդալի մեջ չհայտնվի: Ապա այդպես էլ չկայացած պատգամավորը հավաքում էր ճամպրուկները և հայդա՛ Ամերիկա:

Ահա այսպես՝ կարճ և կոնկրետ:

Իսկ առայժմ մենք Վաղինակի հետ նստած էինք խմբագրության իմ աշխատասենյակում, կոնյակ էինք խմում և սպասում ցուցակների հրապարակմանը: Ու չնայած Կառլսոնը վերջապես բարեհաճել էր հայտնվել, մերոնք այդ մասին տեղյակ չէին: Վաղինակը համաձայնել էր խմբագրություն գալ՝ պայմանով, որ ես որևէ մեկին չասեմ, թե ինքն ով է: Խմբագրության աշխատակիցները, պարբերաբար մտնում էին իմ սենյակ՝ տարատեսակ անիմաստ հարցերով, աննախադեպ բարյացակամությամբ սուրճ ու թեյ էին առաջարկում կամ պարզապես ծիկրակում էին կիսաբաց դռնից՝ փորձելով հասկանալ, թե ում հետ եմ ես կոնյակ խմում առավոտ գիշերով: Պետք է ասեմ, որ իմ գայթակղությունն էլ մեծ էր՝ Վաղինակին ներկայացնելու ընկերներիս, բայց պայմանավորվածությունը մնում էր պայմանավորվածություն:

Մինչև կոնյակի առաջին շիշը դատարկելը ես «օնլայն» գնեցի Վաղինակի տոմսը՝ Երևան-Մոսկվա-Նյու Յորք-Ցինցինատի-Մոնթգոմերի չվերթով:

Մի տեսակ տխուր էր այս ամենը: Ես այնպես էի կապվել Վաղինակի հետ, ասես մենք մանկապարտեզից մինչև հիմա միասին էինք: Մի՞թե նա վաղը մեկնելու էր, և ամեն ինչ ավարտվելու էր: Որքան բան տվեցին ինձ նրա հետ անցկացրած այս մի քանի ամիսները: Ի՞նչ էի ես մինչև Վաղինակի հետ հանդիպումը: Ընդամենը խղճուկ դիտորդ: Չէ՞ որ չլիներ Վաղինակը, ես այդպես էլ հետևելու էի մեր երկրի քաղաքական խաղերին՝ տրիբունայում նստած: Կամ լավագույն դեպքում՝ լրագրողների օթյակում: Իսկ հիմա՞: Պետք է ասեմ, որ հիմա ես ինձանից բավականաչափ գոհ էի…

– «Իշխանություն՝ ամեն գնով» կուսակցությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել իր ցուցակը: Այն հայտնի է,– իմ աշխատասենյակ մտնելով՝ հայտարարեց մեր աղջիկներից մեկը:

Ես խնդրեցի նրան տպել ցուցակը և տալ ինձ: Երբ բերեց թուղթը, սպասեցի, մինչ մի լավ կզններ Վաղինակին ու կհեռանար, ապա դողացող ձեռքով բարձրացրի այն: Բայց ոչ մի կերպ չէի համարձակվում կարդալ: Վաղինակը, որ անտարբեր կում էր անում իր բաժակից, խղճաց ինձ, և ձեռքիցս վերցրեց թուղթը: Ես նայում էի, թե ինչպես է նրա հայացքն ակնոցների տակից սահում ցուցակի վրայով և բռունցքներս սեղմած՝ սպասում: Այն մի քանի ակնթարթը, որ անցավ, ինձ թվաց մի ողջ հավերժություն:

– Ահա՛ և ես,– վերջապես ասաց Վաղինակը չափազանց հանգիստ տոնով,– մարդիկ փաստորեն պահեցին խոստումը, իսկ դուք քննադատում եք նրանց:

Ես չհավատացի և բառի բուն իմաստով խլեցի թուղթը նրա ձեռքից: Բայց մեր բարեկամը ճիշտ էր ասում: Նրա անունը գրված էր սևով սպիտակի վրա՝ ցուցակի երրորդ տասնյակում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ցուցակում անցողիկ էր համարվում անգամ հարյուրերորդ հորիզոնականը, կարելի էր փաստել, որ ապագա խորհրդարանում Վաղինակի տեղն ապահովված էր:

Ես բարձրացրի բաժակս և բացականչեցի.

– Պողոսի՛ կենացը…

Խմեցինք: Ես սկսեցի քայլել իմ փոքրիկ սենյակում և շարունակել մտորումներս: Այո, ես բավականաչափ գոհ էի ինձանից: Եվ ինչո՞ւ պիտի գոհ չլինեի: Փաստորեն ինձ հաջողվեց անել այն, ինչը մինչև հիմա որևէ մեկին չէր հաջողվել. ապացուցել, որ մեզանում քաղաքականություն՝ որպես այդպիսին գոյություն չունի, քաղաքականությունը մեզանում ոչ այլ ինչ է, քան՝ «բազար», և առուծախի առարկա է ամեն բան:

– «Ինքնըստինքյան» կուսակցության համամասնական ցուցակը ևս հայտնի է,– սենյակ մտնելով՝ ասաց մեր աղջիկներից մյուսը:

Նրան ևս խնդրեցի տպել ու բերել ցուցակը: Նա ևս չհեռացավ, մինչև ոտքից գլուխ չչափեց հյուրին: Երբ դուրս եկավ սենյակից, ես անմիջապես մեկնեցի ցուցակը Վաղինակին՝ մտածելով, որ նրա ձեռքը «խերով» է: Դարձյալ հետևեցին հավերժություն թվացող սպասման ակնթարթներ, մինչև որ նա չասաց.

– Այդպես էլ պետք է լիներ, ես նրա վրա չէի կասկածում: Տեսնես ինչպե՞ս է իմ նվիրած քոթոթը:

Ես կրկին խլեցի ցուցակը և սկսեցի կարդալ: Վաղինակն այստեղ առաջին տասնյակում էր: Ուրախությունից քիչ էր մնում շուռ տայի կոնյակի շիշը: Դողացող ձեռքով մի կերպ լցրեցի բաժակները և ասացի.

– Ծուռթաթերի՛ կենացը:

Խմեցինք: Ես անդրադարձա նրան, որ առաջին անգամ եմ կոնյակ խմում Վաղինակի հետ: Որքան օղի ու շամպայն էինք խմել մեր ծանոթության ընթացքում՝ միայն սատանան գիտեր, մինչդեռ կոնյակ խմում էինք առաջին անգամ: Գուցե նաև վերջի՞ն: Այո, մեր քաղաքական հարբեցողությունը կարծես թե ավարտվում էր:

Աշխատասենյակիս դուռը կրկին բացվեց, և սենյակ մտավ մեր երրորդ աղջիկը՝ ձեռքին ինչ-որ թուղթ:

– «Ամերիկյան ժառանգություն» կուսակցությունը հրապարակել է իր ցուցակը, ահա այն:

Նա թողեց թուղթը և դուրս եկավ՝ մինչ այդ նախ մի լավ ուսումնասիրելով Վաղինակին: Վաղինակը վերցրեց ցուցակը: Այս անգամ հուզումնալից սպասումս ավելի կարճ տևեց:

– Ինչպիսի՜ առաջընթաց,– ասաց,– այստեղ ես երեք կետով ավելի վերև եմ:

– Կեցցե՜ Ամերիկան,– բացականչեցի ես,– խմենք միստր Օբամայի կենացը:

Խմեցինք: Այո, մեր քաղաքական հարբեցողությունը մոտ էր իր ավարտին: Բայց ոչ ընդամենը քաղաքական հարբեցողությունը: Ես հստակ գիտակցում էի, որ մեր քաղաքական հարբեցողության ավարտին զուգահեռ ինձ համար պիտի ավարտվեն հարբեցողությունը և քաղաքականությունը՝ առանձին-առանձին և ընդմիշտ: Այս մի քանի ամիսները լրիվ բավական էին մի ողջ կյանքի համար:

Աշխատասենյակիս դուռը թակեցին: Աֆոն էր: Քաղաքավարության առումով մեր խմբագրության աղջիկները բավականաչափ բան ունեին սովորելու տղաներից: Աֆոն էլ, չնայած եկել էր ոչ այնքան հերթական ցուցակի հրապարակման մասին ավետելու, որքան իմ խորհրդավոր հյուրին տեսնելու, բայց գոնե ներս մտնելուց առաջ թակեց դուռը:

– Կուզե՞ք ծանոթանալ «Appendix vermiformis» կուսակցության ցուցակին,– հարցրեց՝ չկարողանալով թաքցնել Վաղինակին ուղղված հայացքը:

Այստեղ ևս առաջին տասնյակում էինք: Ես բարձրացրի բաժակս, որ կենաց ասեմ, բայց հապաղեցի: Չգիտեի ինչ ասել. հո կոյրաղիքի կենացը չէ՞ի խմելու: Չիմանալով ինչ անել՝ դիմեցի Աֆոյին.

– Կենա՛ցդ:

Երբ նա գնաց, անշուշտ չհասկանալով, թե ինչու իր կենացը խմեցին, ես դարձա Վաղինակին.

– Դու պետք է լուսանկարվես մեր կոլեկտիվի հետ:

Նա զարմացած նայեց ինձ.

– Ինչո՞ւ հանկարծ այդպես որոշեցիր:

– Հետո, երբ այս ամենը բացահայտվի, դու կենդանի լեգենդ ես դառնալու: Արա՛ այդ շնորհը իմ սիրելի կոլեկտիվին և լուսանկարվի՛ր նրանց հետ:

Վաղինակը մի պահ մտածեց, ապա ասաց.

– Երբ այս ամենը բացահայտվի, ես կդառնամ ոչ թե կենդանի լեգենդ, այլ խարդախության հոդվածի հատկանիշներով մեղադրվող մեկը, ով գտնվում է հետախուզման մեջ: Որոշի՛ր, թե որքանով է քո սիրելի կոլեկտիվին պետք նման սուբյեկտի հետ լուսանկարը…

Ես իհարկե համաձայն չէի նրա հետ, բայց այլևս չպնդեցի: Հանկարծ մտաբերեցի, որ իմ բարեկամը վաղը մեկնելու է, ու հավանաբար ես նրան այլևս չեմ տեսնելու: Ու մի լուսանկարն ի՞նչ էր, դա էլ չէր մնալու նրանից:

Նորից թակեցին աշխատասենյակիս դուռը: Կոստոն էր այս անգամ:

– Ինձ բաժին ընկավ «Հեղափոխություն՝ առանց հեղափոխության» կուսակցության ցուցակը,– դիմեց նա ինձ՝ աչքի պոչով նայելով Վաղինակին:

Այստեղ ևս ամեն ինչ կարգին էր. անցողիկ տեղն ապահովված էր:

– Դե ինչ, խմենք հեղափոխականների կենացը,– ես բարձրացրի բաժակս,– ավելի ճիշտ՝ հեղափոխության:

Կոստոն ևս խմեց մեզ հետ, մի քիչ սպասեց՝ այն հույսով, որ ես կներկայացնեմ իրեն խորհրդավոր հյուրին ու հեռացավ ձեռնունայն:

Ես բացեցի երկրորդ շիշը: Այնուամենայնիվ, լավ էր, որ մենք կոնյակ էինք խմում: Խորհրդանշական բան կար դրա մեջ. չէ՞ որ կոնյակը քաղաքական խմիչք է: Ավելի ճիշտ՝ հայկական քաղաքական: Եթե Ամերիկայում լինեինք՝ վիսկի կխմեինք: Եվ այստեղ մի միտք ծագեց գլխումս: Գուցե ե՞ս էլ գնամ Վաղինակի հետ Ամերիկա: Ի՞նչ կլինի, որ այնտեղ էլ անենք նույնը, ինչ արեցինք այստեղ: Հաշվի առնելով մեր ահռելի փորձը և այն հանգամանքը, որ խղճուկ Ամերիկայում ընդամենը երկու կուսակցություն է մասնակցում ընտրություններին, ի՞նչ կա որ, կարող ենք հաջողել:

Խմբագրությունում ինչ-որ աղմուկ էր: Ըստ ամենայնի՝ հայտնվել էր Պանդան: Դա, ճիշտն ասած, իմ պլանների մեջ չէր մտնում: Պանդան ճանաչում էր Վաղինակին և տեսնելով նրան այստեղ՝ կարող էր ավել-պակաս բաներ խոսել մերոնց մոտ: Մինչ նա կմտներ սենյակս, ես համենայնդեպս պահեցի կոնյակի շիշը:

Բայց մյուս կողմից էլ, ես արդարացի չէի: Չլիներ Պանդան, ես չէի հանդիպի Վաղինակին, և չէր լինի այս ամենը: Չէ՞ որ նրա (գուցե ամեն դեպքում ի՞մ) անփութության պատճառով էի ես ճանաչում ապագա պատգամավորին: Չէ, հարկավոր էր խմել Պանդայի կենացը:

Ես ինքս բացեցի աշխատասենյակիս դուռը, որ նրան ներս հրավիրեմ: Տեսա, որ աղջիկներն ինչ-որ թուղթ էին տալիս նրան և ինչ-որ բան էին փսփսում: Պարզ էր, որ փսփսոցի թեման իմ խորհրդավոր հյուրն էր, իսկ թուղթը, պարզվեց, «Լևոն Մեծ» կուսակցությունների դաշինքի ցուցակն էր: Պանդան մեկնեց այն ինձ և բարևեց Վաղինակին այնպես, կարծես ամեն օր հանդիպում էր նրան այստեղ:

Ցուցակը տեսնելով՝ ես անմիջապես մոռացա ընկերոջս: Ուզում էի վայրկյան առաջ նայել այն, բայց հիշեցի Վաղինակի «խերով ձեռքը» և մի կերպ զսպելով գայթակղությունս՝ տվեցի թուղթը նրան:

– Yes!,– ասաց նա՝ մի թռուցիկ հայացք նետելով ցուցակին:

Ես խոր շունչ քաշեցի: Եվ քանի որ ամենևին ցանկություն չունեի խմելու Լևոն Մեծի կենացը, բարձրացրի բաժակս և խմեցի Պանդայի կենացը:

Ընծաղիկի բուրմունքը

Ժամանակն էր զանգելու Կատյային: Ես շահել էի գրազը:

«Բաժանորդն անհասանելի է». սովորական իր տեքստը կրկնեց արդեն հարազատ դարձած անծանոթուհին:

– Մի օր ես ջարդուփշուր կանեմ այս աղջկա հեռախոսը, որ գոնե հիմնավորված պատճառներ ունենա անհասանելի լինելու համար,– կատաղած բացականչեցի ես՝ մոռանալով, որ փողոցում եմ:

Կողքովս քայլող մի տղամարդ ցավակցական հայացքով նայեց վրաս ու գլուխը թափ տվեց՝ ի նշան համաձայնության:

Որոշեցի գնալ Կատյայի աշխատավայրի հարևանությամբ գտնվող սրճարանը և այնտեղ սպասել իմ մրցանակին: Երեք բաժակ կոնյակից, տասնհինգ զանգերից և ութ SMS-ներից հետո վերջապես Կատյան հասանելի դարձավ: Ավելի ճիշտ՝ ինքը զանգեց:

– Ու՛ֆ, վերջապես ազատվեցի: Խորհրդակցության էի: Զանգերիդ տեղատարափից ենթադրում եմ, որ շատ կարևոր բան է պատահել:

– Այսօրվա լրահոսին, բնականաբար, չես հետևել:

– Չեմ ուզում ծանրաբեռնել իմ բարձր ինտելեկտուալ ու մայրաքաղաքի լավագույն ոճաբանի կողմից խնամքով հարդարված գլուխը նման հիմարություններով,– նետեց Կատյան:

– Բայց ստիպված կլինես, քանի որ դա անուղղակի կապ ունի քո գլխի հետ: Մտի՛ր մեր կայքը, կարդա լուրերը և նորից զանգի՛ր ինձ, եթե իհարկե դրանից հետո ցանկություն կունենաս: Նա զանգեց հինգ րոպե անց:

– Ե՞վ...,– եղավ նրա անտարբեր պատասխանը կամ, ավելի ճիշտ՝ հարցը:

Անկեղծ ասած, ապասում էի ցանկացած ռեակցիայի՝ հիացմունքի, գովեստի, բարկության, բայց ոչ երբեք այդ լակոնիկ «և»-ին:

Բանն այն է, որ երկար մտածելուց հետո որոշել էի հրաժարվել գրազից: Ես հաղթել էի, և այդքանը բավական էր: Որոշել էի հետագա զարգացումները թողնել Կատյայի հայեցողությանը: Գիտեի, որ հպարտ Կատյան իր արժանապատվությունից ցածր կհամարեր գրազից խուսափելը և կգնար մինչև վերջ: Սակայն ես վաղուց արդեն այն փուլում էի, որ ինձ բոլորովին ուրիշ բան էր պետք նրանից: Ինձ պետք էր իռացիոնալ, չշոշափվող Կատյան: Ինձ պետք էին նրա մտքերը, նրա երազները, նրա հեքիաթները, նրա երևակայությունը: Իսկ ռացիոնալ, շոշափելի մարմինը որքան էլ որ գայթակղիչ էր, ընդամենը բոնուս էր, հաճելի լրացում:

Սակայն Կատյայի այդ անտարբեր և մի քիչ քամահրական «և»-ը ապացույցն էր այն բանի, որ ես կստանամ միայն դատարկ կաղապարը, իսկ Կատյային՝ իսկական, լիքը, խորը Կատյային, մեկընդմիշտ կկորցնեմ: Այդ պատճառով ես ուսիս ետևից քշեցի «թուլամո՛րթ, քեզ խաբեցին» բառերը անընդհատ կրկնող սատանային ու հանգիստ ձայնով ասացի:

– «Եվ» այն, որ ես հաղթել եմ գրազը: Սակայն ազատում եմ քեզ ցանկացած տիպի պատասխանատվությունից: Չեմ ուզում, որ դու զուտ գրազի պայմանը կատարելու համար պահես խոստումդ: Դա ինձ պետք չէ: Ինձ շատ հետաքրքիր էր քեզ հետ, Կատյա՛: Մնա՛ս բարով: Ես այլևս երբեք քեզ չեմ անհանգստացնի:

– Շնորհակալություն: Ինձ էլ էր հաճելի քեզ հետ: Մնա՛ս բարով,– հանգիստ, առանց որևէ ափսոսանքի ասաց Կատյան ու անջատեց հեռախոսը:

Դժվար է բացատրել, թե ինչ զգացի այդ պահին: Կարծես ինչոր մեկը հարվածեց գլխիս «արևային հանգույց» կոչվող հատվածին: Աչքերիս առջև անմիջապես սևացավ, թթվածինս սպառվեց ու անտանելի ցավ զգացի կրծքվանդակիս տակ:

– Ջուր բերե՞մ,– վախեցած ձայնով հարցրեց մատուցողուհին՝ տեսնելով իմ սփրթնած դեմքը:– Բժիշկ կանչե՞մ: Ի՞նչ անեմ:

Բայցևայնպես, չմեռա: Ոչ էլ ուշագնաց եղա: Հիասթափություն, ցավ, զայրույթ, խանդ՝ այս բոլոր զգացումները պատեցին ինձ միաժամանակ ու չթողեցին, որ գիտակցությունս կորցնեմ: Կատյայի ասած «մնաս բարովը» փչացած ձայնասկավառակի պես կրկնվում էր գլխումս:

Սակայն ինչո՞ւ: Ի՞նչ էի արել ես նրան, որ նման պատասխանի ինձ արժանացրեց: Չէ՞ որ իմ կեցվածքն ընդամենը մի նպատակ ուներ՝ ազատել Կատյային գրազի կապանքներից: Ամեն ինչի սպասում էի, բացի այդ չարաբաստիկ «մնաս բարովից»: Սպասում էի, որ Կատյան լուրջ չէր ընդունի, կծիծաղեր վրաս կամ իրեն հատուկ ոճով կասեր, որ իրենից այդքան հեշտ չեմ պրծնի: Մինչդեռ նա վերցրեց և կրկնեց իմ կողմից անխոհեմաբար ասված «մնաս բարով»-ը:

Եվ հանկարծ մի բան անցավ մտքովս. գուցե հենց բարին էլ ա՞յս էր, գուցե հենց սա էլ պետք է լինե՞ր վերջաբանը…

Վերցրի հեռախոսս ու զանգեցի Պանդային: Այո, հենց նրան: Հիմա ինձ օդի ու ջրի պես անհրաժեշտ էր Պանդան՝ իր ցինիզմով, իր հուսալի մեջքով ու մեքենայում պահած կոնյակի հավերժական պաշարով:

Նա ինձ գտավ մեքենայիս մեջ ուժասպառ նստած: Արագ գնահատեց իրավիճակը, ոչ մի ավելորդ հարց չտվեց, գրպանից հանեց տափաշիշը, մեկնեց ինձ ու ասաց.

– Վերականգնողական գրաֆիկը հետևյալն է. սկզբից այս տափաշշի պարունակությունը, հետո՝ օղի, հետո՝ սաունա, հետո՝ աղջիկներ: Խելքի կբերեմ, չանհանգստանա՛ս:

Ուշքի եկա սաունայի փուլում: Սրբիչի մեջ փաթաթված թմբլիկ Պանդան արդեն հասցրել էր զանգահարել «ծանոթ աղջիկներին», և հիմա նրանք բոլորն ակտիվորեն անցնում էին գրաֆիկի առաջին երկու փուլերը՝ ծիծաղելով կոնծում էին, ով՝ կոնյակ, ով՝ օղի: Աղջիկները հիշեցնում էին «Վիագրա» նշանավոր խմբի սեքս-ռումբերին՝ հայաֆիկացված տարբերակով: Պանդան ընդհանրապես գտնում էր, որ կանայք պետք է լինեն շատ և ցանկալի է՝ տարբեր

ճաշակների: Իսկ դրա պատճառն ընդամենը այն էր, որ իր ճաշակն էր փոփոխական:

Մինչ սևաներ, շիկաներ ու կարմրաներ «վիագրուհիները» լիովին կանցնեին ինտեգրման փուլը, Պանդան զբաղված էր իմ վերականգնումով:

– Անգամ ամենագեղեցիկ ոտքերն աճում են հետույքից: Եվ եթե չհասկանաս այս պարզ, ֆիզիոլոգիական ճշմարտությունը, ինքդ կհայտնվես հետույքում,– ասաց նա՝ լցնելով բաժակս:– Ինչի՞ կամ ո՞ւմ համար ես սատկող կարապի կերպարի մեջ մտել: Հավատացնում եմ՝ ոչ մի կին չարժե, որ մենք նրա համար սատկենք:

– Մի՛ խոսիր բաներից, որոնցից ոչինչ չես հասկանում,– փորձեցի թեման փակել ես:

– Ե՞ս չեմ հասկանում: Ե՞ս,– ցնցվեց Պանդան:

– Ես կանանց ռենտգեն ապարատ եմ: Բավական է՝ կես հայացք գցեմ կնոջ վրա ու կարող եմ ասել, թե քանի կիլո է, ինտելեկտի գործակիցը որքան է, ինչ է ուզում այս կյանքից, վերջին անգամ երբ է տղամարդ տեսել ու երբ կտեսնի նորից: Բա, հենց այդպես, իսկ դու ասում ես՝ չեմ հասկանում,– վրդովված մրթմրթած Պանդան:

Բախտս բերեց, քանի որ այդ պահին լողավազանում ջրային բռնոցի խաղացող «վիագրուհիների» բարձր ծիծաղը շեղեց Պանդայի ուշադրությունը, և կանանց խոշոր գիտակը՝ իր ռենտգենի ապարատով հանդերձ, լքեց ինձ:

Այդ պահին բջջայինս զնգաց. sms հաղորդագրություն էր: Կայծակնային արագությամբ բացեցի վիրտուալ ծրարը, սակայն այնտեղ միայն բջջային օպերատորի պաշտոնական հաղորդագրությունն էր (21-րդ դարում մենությունն այն է, երբ հեռախոսիդ հաղորդագրություններ ուղարկում են միայն տարբեր ծառայություններից): Հիշեցի Կատյայի sms-ները՝ հումորային, սկանդալային, ռոմանտիկ, ագրեսիվ՝ ըստ նրա օրվա տրամադրության: «Արթնացել ես վատ տրամադրությամբ, հարևաններիդ տրամադրությունը նույնպես փչացրու»,– սիրում էր ասել

Կատյան, երբ չպատճառաբանված ագրեսիվ sms-ներ էր ուղարկում ինձ: Հազիվ էի ինձ զսպում, որ չզանգեմ նրան ու չգոռամ՝ ինչո՞ւ: Ինչո՞ւ այդպես արեցիր: Քանի՞ տղամարդ գիտես, որ հանուն քեզ, հանուն քո սիրո, պատրաստ են նման խենթության: Միշտ ասում էիր, որ տղամարդու մեջ առաջին հերթին գնահատում ես ասպետությունը, խենթությունը, «յունգայությունը»: Ի՞նչ պատահեց: Գուցե ես չունեմ Պանդայի ռենտգեն ապարատից, բայց հստակ զգացել եմ քո սերը, քո վերաբերմունքը: Դա չես կարող թաքցնել կամ կեղծել: Չէ՞ որ դու էիր ասում, որ սերը միակ բանն է, որը կինը չի կարողանում կեղծել: Տխրությունը, կարոտը, ցավը, հաճույքը, օրգազմը, ցանկացած բան հեշտությամբ կարողանում է, իսկ սերը չի կարողանում՝ ասում էիր: Ուրեմն ի՞նչ պատահեց, Կատյա՛:

Ներքին մենախոսությունս ընդհատեց շիկահերը: Ինքնավստահ, իր գեղեցկությունը գիտակցող աղջկա կեցվածքով մոտեցավ ինձ, մեկնեց օղու բաժակն ու նստեց կողքիս:

– Խնդիրներ ունես: Ընդ որում՝ կնոջ հետ կապված,– պրոֆեսիոնալ գուշակի տոնով հայտարարեց նա:

– Ի՞նչ գիտես: Իմ ճակատի՞ն է գրված, որ խնդիրներ ունեմ, այն էլ՝ կնոջ հետ կապված,– կոպտեցի ես:

– Բա էլ որտե՞ղ,– անկեղծորեն զարմացավ նա: Պետք չէ Ագաթա Քրիստի լինել, հասկանալու համար, որ եթե առողջ, հետաքրքիր տղամարդը երեք հմայիչ աղջիկների վեց երկար ոտքերին նայելու փոխարեն թախծոտ հայացքը չի կտրում իր բջջայինից, նշանակում է՝ «Շերշե լյա ֆամ»:

– Գլուխս պայթում է, խնդրում եմ թո՛ղ ինձ մենակ,– ասացի ես ու անմիջապես էլ զղջացի:

Բայց արդեն ուշ էր, շիկահերը նեղացած դեմք ընդունեց ու հեռացավ:

Ուզում էի ետ կանչել նրան ու ներողություն խնդրել, բայց ալարեցի: Ոչ մի ցանկություն ու եռանդ չունեի: Բացարձակապես: Վերջին անգամ նայեցի բջջայինիս: Սակայն այն համառորեն լռում էր:

– Գրողի ծո՛ցը գնա: Դու էլ, քո հեքիաթներն էլ, քո յունգաներն էլ…,– գոռացի ես ու բջջայինս ջարդուփշուր արեցի դիմացի պատին: Հիմա, երբ նրա զանգին սպասելն այլևս անիմաստ էր, մի տեսակ թեթևացա: Հենց 22ից դատարկեցի օղու կեսը ու գլխիվայր նետվեցի լողավազանը…

Գիշերվա ժամը երեքն էր: Հանկարծ հիշեցի, որ ժամը հինգին պետք է լինեմ Վաղինակի տանը և նրան օդանավակայան տանեմ: Բայց ո՛չ դրա ուժն ունեի, ո՛չ էլ ցանկությունը: Այդ պահին գլխումս մի փայլուն միտք ծագեց: Մի անգամ ես փրկեցի Պանդային ու նրա փոխարեն գնացի օդանավակայան, հիմա նրա հերթն է: Նա այս ամենը սկսել է, թող նա էլ հենց դնի վերջակետը:

Արթնացրի ընկերոջս ու առարկություններ չընդունող տոնով ասացի.

– Հիմա կլվացվես, սուրճ կխմես ու կգնաս օդանավակայան՝ Վաղինակին ճանապարհելու: Այս անգամ քո հերթն է:

– Դու հատուկ ու բացառիկ տաղանդ ունես ամեն ինչ հարամ անելու,– եղավ Պանդայի պատասխանը:

Միասին դուրս եկանք: Պանդան գնաց Աղայան փողոց, ես՝ խմբագրություն: Որոշեցի անգամ չտեսնել Վաղինակին մեկնելուց առաջ, անգամ հրաժեշտ չտալ: Մտածում էի՝ երանի նրան հանդիպած չլինեի ընդհանրապես:

Ինքս ինձ խոստացել էի. վաղվանից նոր կյանք եմ սկսում՝ որտեղ չեն լինելու Վաղինակը և Կատյան: Միայն թե սիրտս ցավում էր: Ոչ թե արագ էր զարկում, ոչ թե ծակում էր, այլ, բառի բուն իմաստով՝ ցավում:

Չտեսնված մութ էր փողոցում: Լուսինը որոշել էր չերևալ այդ գիշեր: Հավանաբար տխուր էր, որովհետև ինքն էլ սիրտ ուներ, անշուշտ: Երևի խմում էր մի տեղ:

Փակեցի մեքենան և քայլեցի դեպի խմբագրության մուտքը: Դռան մոտ մի մարդկային կերպարանք ուրվագծվեց: Մտածեցի՝ «բոմժերից» է: Կուչ եկած նստել էր աստիճանին և քնել՝ գլուխը


H_2O

բազրիքին հենած: Որոշեցի չանհանգստացնել, շրջանցեցի նրան, գրպանիցս հանեցի բանալին ու պատրաստվում էի դուռը բացել, երբ զգացի ձնծաղիկի ծանոթ բուրմունքը: Քարացա տեղումս ու չհամարձակվեցի շրջվել:

– Եկար վերջապես,– հետևիցս լսեցի Կատյայի ձայնը,– հարյուր քառասունութ անգամ զանգել եմ: Դու անհասանելի էր: Խոստացի՛ր, որ էլ երբեք անհասանելի չես լինի: Գիտե՞ս, թե ոնց եմ սառել: Խոստացի՛ր, որ էլ երբեք չես թողնի, սառեմ: Խոստանո՞ւմ ես…

– Խոստանում եմ,– մեքենայաբար կրկնեցի ես:

Վերջի նման մի բան

Գարեջո՞ւր, թե՞ սուրճ, գարեջո՞ւր, թե՞ սուրճ… Մատուցողուհին կանգնած էր կարծես ոչ թե գլխավերևումս, այլ հենց գլխիս վրա ու սպասում էր, մինչ ես կլուծեի այս լրջագույն խնդիրը:

Ես օդանավակայան էի հասել վերջին վայրկյանին, երբ արդեն ավարտվում էր Մոսկվայի չվերթի հաշվառումը, և փաստորեն հասցրել էլ էի հրաժեշտ տալ Վաղինակին: Նա հիմա պետք է որ արդեն օդանավում լիներ:

Իմ բարեկամը մեկնում էր, ու պարզ չէր, թե ինչ էր լինելու հետո:

Գուցե այդ մասին դուք իմանաք իմ հաջորդ գրքից, եթե իհարկե ես այն գրեմ: Իսկ առայժմ, այնուամենայնիվ, հիսուն գրամ օղի…

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

Թե ինչպես ես հայտնվեցի օդանավակայանում ու սխալ մարդու դիմավորեցի, ու դրանով էլ, փաստորեն, սկսվեց այս պատմությունը 5

Վաղինակը և իր բնակարանը, որ տարավ ինձ դեպի մեր ոչ հեռավոր անցյալը 13

Նախընտրական աշուն կամ սրճարաններում գրված ելույթներ 19

Իմ քրմուհին, կամ երբ խառնվում են սերն ու գրազը 23

Ինչքա՞ն կարելի է խմել 33

Քաղաքական ուժերի իրական ու անիրական վարկանիշները, կամ ինչպե՞ս սիրի ժողովուրդը նախագահին 37

Իմ ընկեր Անդրեասը և Պանդայի ճաշը 42

Երբ իրենց խոսքի տերը չեն մեր երկրի շատ բարձրաստիճան պաշտոնյաները կամ պարզապես՝ Ճանճը 45

Վաղինակի «բոմժերը» 53

Ի՞նչ է «զապոյը» կամ Վաղինակի պատմությունը 57

Թե ինչպես ես համոզեցի Վաղինակին դառնալ պատգամավոր 64

Մշկե՞նք մե հադըմ 69

Թե ինչ կլինի, եթե Երկիր մոլորակից վերանա վերջին կինը, կամ սամուրայները մահանում են, բայց չեն հանձնվում 73

Appendix vermiformis 78

Լուծումներ փնտրելիս 90

Թբիլիսի–Երևան 98

Թբիլիսի–Երևան 107

Մեր մամուլի ազատությունը 114

Հաջորդը «Լևոն Մեծ» դաշինքն է 122

Հին սերերի կենացը 132

Իմ կարճ խելքը, թե՞ Վաղինակի ցնդաբանությունը 135

Կատյան կատաղում է 138

Ոստիկաններն ու սափրագլուխները 144

Հրաման տվողները կամ օլիգարխը, ծերունին և կովը 151

Մատ՝ ձիով 154

Միջանկյալ մտորումներ կամ մարդատյացներն ու «դուքյանչիները» 158

Մի՛ ասեք, թե յուրաքանչյուր ժողովուրդ արժանի է իր իշխանություններին 161

Իշխանություն՝ ամեն գնով կամ Պողոսի մեկ ու կես ժամը .. 166

Որովհետև արժեքը մեզանում «0»-ն էր 171

Երբ էշի տեղ են դնում ընտրողին կամ «Մերսեդեսի» վախճանը 175

«Զապոյի» երկրորդ շրջանը կամ ավելորդ
կոպեկը գրպանը չի ծակի 189

Տարիներն անցնում են, ես մնում եմ նույնը 197

«Դու ինձ սիրո՞ւմ ես» 200

Վաղինակն անհետանում է 214

Դուք հեռանում եք, և մեր ոտքերի տակից
փախչում է հայրենիքը 222

Փախուստ կամ թե ինչպես է անցնում մեր
ապրելու ժամանակը 226

Օգնության է գալիս քոթոթը 231

Ամերիկապաշտները 236

Աստվածները հավանաբար ցնդել են 244

Թե ինչպես մենք խցկվեցինք հերթական ցուցակը 249

Թե ինչպես ես «դուրս պրծա» 257

Հեղափոխություն՝ առանց հեղափոխության 267

Բոլոր դեպքերում հարցերը լուծում է փողը 276

Կենացներ 280

Ձնծաղիկի բուրմունքը 287

Վերջի նման մի բան 296

ԱԲԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
Վեպ

Նկարազարդումները՝ **Վազգեն Պահլավունի-Թադևոսյանի (ՎԱԶՕ)**

Խմբագիր՝ **Աիդա Մեսրոպյան**
Հրատ. խմբագիր՝ **Արքմենիկ Նիկողոսյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Արարատ Թովմասյան**
Համակարգչային էջադրումը՝ **Կարինե Սարգսյանի**
Կազմը՝ **Սոնա Թովմասյանի**

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374) 58 76 69
antares@antares.am
www.antares.am